ՍՈՒՇ

Վտանգված ճարտարապետական ժառանգություն

KÜLTÜREL MİRASI KORUMA DERNEĞİ
ASSOCIATION FOR THE PROTECTION OF CULTURAL HERITAGE

ANADOLU KÜLTÜR

ՍՈՒՇ

Վտանգված ճարտարապետական ժառանգություն

Ստամբուլ 2023

Սիրելի Օսման Քավալային...

©Անադոլու Քյուլթուր
Օգոստոս 2023
ISBN: 978-605-5276-25-6

Խմբագիրներ
Մուստաֆա Աքչաօզ
Էլմոն Հանչեր
Արփինե Ասրյան

Ձեկուցողներ
Մուստաֆա Աքչաօզ
Ումութ Ալմաչ
Արտակ Այունց
Դավիթ Դավթյան
Մուրատ Դեմիրլի
Մեսութ Դինլեր
Գիզեմ Դյորթեր
Էլմոն Հանչեր
Արմեն Կազարյան
Դավիթ Քերթմենջյան
Աշոտ Մանասյան
Կարեն Մաթևոսյան
Զաքարյա Միլդանօղլու
Յավուզ Օզքայա
Կարստեն Պալուդան-Մյուլլեր
Ալին Փոնթիօղլու
Նելլի Սմբատյան
Էվա Շարլաք
Գևորգ Տեր-Գաբրիելյան
Սուրեյյա Թոփալօղլու

Լուսանկարներ
Մուստաֆա Աքչաօզ
Ումութ Ալմաչ
Էլմոն Հանչեր
Ալին Փոնթիօղլու
Էվա Շարլաք

Թարգմանություն
Վարդուհի Բալյան

Վերընթերցում
Արփինե Ասրյան
Թամար Նալճը
Վարդուհի Բալյան

Հատակագծի գծագրեր
Մուրատ Դեմիրլի
Սուրեյյա Թոփալօղլու

Դիզայն
Մերյեմ Թանրըքուլու
Սելին Համզաօղլու Ուլուեր

Շապիկ
Մերյեմ Թանրըքուլու

Շապիկի պատկեր
Սուրբ Կիրակոս եկեղեցու հատակագիծ

Քարտեզներ
Google, DigitalGlobe
Google Earth

Տառատեսակ
Sylfaen

Գունային տարանջատում և տպագրություն
Fotokitap

Support to the Armenia-Turkey Normalization Process
EUROPEAN UNION

Տվյալ գնահատման զեկույցի հրապարակումը կատարվել է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին. փուլ 3» (ATNP-3) ծրագրի շրջանակներում: Այս հրապարակման բովանդակության պատասխանատվությունը բացառապես «Անադոլու Քյուլթուր» և KMKD-ինն է («Մշակութային ժառանգության պահպանության ասոցիացիա»), և այն ոչ մի կերպ չի արտացոլում Եվրոպական միության տեսակետները:

Բովանդակություն

Առաջաբան 5
Մեթոդաբանություն 8
Տարոնի (Մուշ) պատմության համառոտ ակնարկ 11
Ռիսկերի վերլուծության մատրիցա 21
Կառույցների գտնվելու վայրը 22
Սուրբ Առաքելոց վանք 23
Մոլլաքյանդի դպրոցն ու գերեզմանատունը 30
Սուրբ Կարապետ վանք 34
Եղրդուտի Սուրբ Հովհաննես վանք 43
Միգրեի բաղնիք 48
Հասպետ ամրոց 52
Սուրբ Մարինե եկեղեցի 56
Քարձորի (Սուվարան) մատուռ 60
Սուրբ Սարգիս եկեղեցի 65
Սուրբ Թովմաս առաքյալ եկեղեցի 70
Էրջան Չեթէի տուն 73
Սուրբ Մարիամ մատուռ և արհեստանոցներ 78
Սուրբ Գևորգ եկեղեցի 81
Սուրբ Սահակ եկեղեցի 84
Մոլլաքյանդի առանձնատուն 89
Դաղդիբի գյուղի մատուռ 94
Սուրբ Կիրակոս եկեղեցի 97
Ալադին բեկի մզկիթ 101
Հաթունի կամուրջ 106
Մեծ Հասքյոյ մզկիթ 108
Մոլլաքյանդի մզկիթ 112
Օզգյորուր ժայռակերտ դամբարան 115
Նորաշենի ջրաղաց 117
Քըզ կամուրջ 120
Յըլդրզլը խան/իջևանատուն 122
Սուլուխի կամուրջ 125
Գրականություն 128
Հապավումներ և բառարան 131

Երախտագիտություն
Վանի Մշակութային Ժառանգության Պահպանման Շրջանային Վարչության տնօրեն պրն. Նեջ-մեդդին Բայհանին, ծրագրի տնօրեն և «Հուշամատյան»-ի գլխավոր խմբագիր պրն. Վահե Թաշճյա-նին, Մոլլաքյանդ գյուղի գյուղապետ պրն. Վեյսի Գյունաշտրին, Երիտասարդ խնայողությունների ասոցիացիայի խորհրդի նախագահ պրն.Սալիհ Յուջեին, պրն. Էրջան Չեթենին, պրն.Դենիզ Քոչ-մենին, պրն.Մուհամմեդ Ֆուրքան Յուջեին, պրն. Բարբշ Սեվենին, պրն. Յուսուֆ Սաչանին, Պրո-ֆեսորի օգնական Ինջի Թյուրքոդլուին։

Նախաբան

Ինչու՞ Մուշ:

Ես առաջին անգամ մեկնեցի Մուշ 1997 թվականին՝ ուսումնասիրելու տեղի գյուղական դպրոցները Ազգային կրթության նախարարության՝ տարրական դպրոցը ութամյա դարձնելու ծրագրի համար: Այն ժամանակ Մուշն ինձ համար խորհրդանշական էր իր անծայրածիր հարթավայրով և վայրի մեղրով, որը ես, խորհրդի շնորհիվ, գնեցի դրա խարխուլ գլխավոր փողոցի խանութներից մեկում: Այն ժամանակ դա մի վայր էր, որտեղ աղջիկներին արգելվում էր դպրոց հաճախել առաջին հինգ (պարտադիր) տարիներից հետո, և որտեղ հաճախ նշվում էր ուսուցիչների սակավության մասին: Մուշը բոցավառ աչքերով երեխաներն էին, որոնք քեզ շրջապատում էին կոտրված պատուհաններով դպրոցներում:

Ես ժամանեցի 2014 թվականին՝ բացահայտելու մի Մուշ, որն ամբողջությամբ փոխվել էր: Ինչպես Օսման Քավալան ասել է 2019 թվականի Եվրոպական հնագիտական ժառանգության մրցանակի ընդունման իր խոսքում, որը նրան շնորհվել է Հնագետների եվրոպական ասոցիացիայի (EAA) կողմից հնագիտական ժառանգության ոլորտում իր բացառիկ ներդրումների և անհատական ջանքերի համար, «Մեր երկրի արևելյան հատվածում հայկական համայնքների կողմից ստեղծված գործերը պատմում էին մի մշակույթի պատմություն, որը դարեր շարունակ ակտիվ է մնացել, առանց ընդհատումների: Երբ 1915-ին հայերը պոկվեցին այս հողերից, այս պատմությունները մնացին առանց լսարանի և լռեցված. նրանցից մի քանիսը փսասվեցին…»: Մուշը լի էր գյուղերով, վանքերով, եկեղեցիներով, ջրաղացներով, բաղնիքներով, բերդերով, տներով, կամուրջներով, գերեզմանատներով. մեծ մասի տեղակայությունը չի նշվել ժամանակակից քարտեզների կամ ճանապարհային նշանների վրա, և անվանափոխվել է… Դրանք կարելի էր գտնել միայն ասեկոսեների միջոցով կամ ուղղություն հարցնելով: Ինչպե՞ս հասա այս Մուշ, որի գոյության մասին իմ առաջին այցելության ժամանակ նույնիսկ տեղյակ չէի:

Ես ժամանեցի 2014 թվականին՝ բացահայտելու մի Մուշ, որն ամբողջությամբ փոխվել էր: 2019 թվականին Հնագետների եվրոպական ասոցիացիայի (EAA) կողմից Օսման Քավալային Եվրոպական հնագիտական ժառանգության մրցանակ է շնորհվել՝ հնագիտական ժառանգության ոլորտում իր բացառիկ ներդրումների և անհատական ջանքերի համար: Մրցանակն ընդունելիս իր խոսքում նա ասել է. «Մեր երկրի արևելյան հատվածում հայկական համայնքների կողմից ստեղծված գործերը պատմում էին մի մշակույթի պատմություն, որը դարեր շարունակ ակտիվ է մնացել, առանց ընդհատումների: Երբ 1915-ին հայերը պոկվեցին այս հողերից, այս պատմությունները մնացին առանց լսարանի և լռեցված. նրանցից մի քանիսը փսասվեցին…»: Մուշը լի էր գյուղերով, վանքերով, եկեղեցիներով, ջրաղացներով, բաղնիքներով, բերդերով, տներով, կամուրջներով, գերեզմանատներով. մեծ մասի տեղակայությունը չի նշվել ժամանակակից քարտեզների կամ ճանապարհային նշանների վրա, և անվանափոխվել է… Դրանք կարելի էր գտնել միայն ասեկոսեների միջոցով կամ ուղղություն հարցնելով: Ինչպե՞ս հասա այս Մուշ, որի գոյության մասին իմ առաջին այցելության ժամանակ նույնիսկ տեղյակ չէի:

Մեր ուղիները ևս մեկ անգամ խաչվեցին, երբ 2006 թվականից հետո սկսեցի պատրաստել Անիի հոյակապ հուշարձանների պահպանության ծրագրերը: 2011 թվականին էր, որ Անադոլու Քյուլթուրը, Հուշարձանների համաշխարհային հիմնադրամը և Սքոթ Ռեդֆորդը (ANAMED) մեկնարկեցին Անիի Խորհրդատվական խորհուրդը՝ սիրելի Օսման Քավալայի ղեկավարությամբ և նախաձեռնությամբ: Խորհուրդը կազմված էր Մշակույթի և զբոսաշրջության նախարարության փորձագետներից, ի լրումն Հայաստանից, Ստամբուլից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից և Հյուսիսային Մակեդոնիայից պահպանության մասնագիտացմամբ ճարտարապետների, շինարար ինժեներների, արվեստի և ճարտարապետության պատմաբանների, ովքեր հանդիպեցին երկօրյա սիմպոզիումի շրջանակներում: Այս հանդիպումը, որտեղ անդրադարձ կատարվեց Անիի պահպանության ծրագրերին և հիմախնդիրներին, առաջինն էր, որ համախմբեց Ախուրյան գետի (Արփաչայ) երկու կողմերի փորձագետներին: Այսպիսով, այն թույլ տվեց նոր բարեկամություններ ձևավորել մեր ընդհանուր մշակութային ժառանգության միջոցով:

2013 թվականին մենք նորից հանդիպեցինք Անիում՝ մեկ այլ համատեղ նախագծի շրջանակներում, որին նոր փորձագետներ միացան Հայաստանից, Ֆրանսիայից, Նորվեգիայից, Թուրքիայից և ԱՄՆ-ից: Այս անգամ իննօրյա դաշտային աշխատանք իրականացրեցինք՝ մոտակա բնակավայրերի, պաշտպանական կառույցների, վանքերի և եկեղեցիների վիճակը հետազոտելու և (տեղում) փաստագրելու: Սրանց կապն Անիին դեռ միջնադարից է՝ քաղաքի ամենափայլուն շրջանից, սակայն մոռացվել են, լքվել և դուրս մղվել «ժամանակակից» քարտեզներից: Հայաստանի և Թուրքիայի պահպանության փորձագետների այս առաջին համատեղ նախաձեռնությունը, ի լրումն հուշարձանների ներկայիս ֆիզիկական վիճակի փաստագրման, կենտրոնացած էր հնարավոր կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերի վրա, որոնք կարող էին իրականացվել այս հուշարձանների պահպանման համար: Այս հետազոտությունը՝ «Անին համատեքստում», վերնագրով, առաջնահերթ աշխատանք էր՝ կառույցները դասակարգելու, ապագա միջամտությունների առաջնահերթությունն որոշելու և դիրքավորելու Անին փոխազդեցությունների պատմական ցանցի կենտրոնում, որը շատ ավելի մեծ էր, քան նախկինում ենթադրվում էր:

Այս հաջող փորձից հետո Թուրքիայի տարբեր պատմական բնակավայրերում «լքված» մշակութային արժեքները պահպանության մասնագետների բազմադիսցիպլինար թիմի հետ ուսումնասիրելու (դրանց ներկայիս ֆիզիկական պայմանները, խնդիրները, առկա և հնարավոր սպառնալիքները և անհետացող արժեքները հասկանալու, այնուհետև հնարավոր միջամտությունների համար առաջնահերթությունների ցուցակ կազմելու և պահպանության սկզբունքների համաձայն դրանց պահպանության վերաբերյալ առաջարկություններ մշակելու) նոր ջանքերի գաղափարը 2014 թվականին մեզ համախմբեց Մշակութային ժառանգության պահպանության ասոցիացիայի (ՄԺՊԱ- KMKD) հարկի տակ: Ահա թե ինչպես ես հայտնվեցի Մուշում «ՄԺՊԱ»-ի՝ Անատոլիայի ճարտարապետական ժառանգության պահպանությանն ուղված առաջին նախագծի համար:

Մուշում՝ մի քաղաք, ուր ես նախկինում այցելել էի ինչպես «ՄԺՊԱ»-ի, այնպես էլ Հայաստանի փորձագետների հետ, բախվեցի մի իրավիճակի, որը կանխատեսել բոլորովին չէի կարող: Ի տարբերություն Անիի, որն իր գագաթնակետին էր հասել միջնադարում և լքվել էր 14-րդ դարից հետո, մեր աչքի առաջ, ինչպես և սիրելի Օսման բեյն էր հիշեցրել, դեռևս կանգուն էին կառույցները, որոնք ստեղծվել էին մի համայնքի կողմից, որ մինչև 1915 թվականը շարունակել է գոյություն ունենալ և իր կերտած հոյակապ գործերով լցնել Մուշի շրջակա լանդշաֆտը: Ես հասա մի Մուշ, որտեղ մի վանքի քարերը հանվել և տեղափոխվել էին՝ նոր շինություններում օգտագործվելու համար, կառույցի քարե բլոկները ապամոնտաժվել էին հենց վերջինիս վրա գյուղ կառուցելու համար, և որտեղ որոշ գյուղեր անհետ կորել էին: Առկա փսասի չափը, բնականաբար, ազդել էր տեղում աշխատող բոլոր փորձագետների վրա: Կարծում եմ՝ այդ պատճառով է, որ «Մուշ»-ի հրատարակությունը երբեք չի իրականացվել մեր ուզած մակարդակի վրա: Տևական ժամանակ էր անցել, ուստի, անհրաժեշտություն առաջացավ մեկ անգամ ևս այցելել նույն վայրերը՝ պարզելու դրանց ներկա վիճակը:

Այդ առումով, «Մուշ»-ի հրատարակությունը, թերևս, ամենակարևորն է այն արգասիքներից, որոնք առաջ են քաշվել և ձևավորվել սիրելի Օսման Քավալայի հեռատեսության, ներդրման և նվիրված ջանքերի շնորհիվ: Մարդ, ով երկար ժամանակ է՝ անարդարացիորեն բանտարկված է Սիլիվրիում և հավատում է երկխոսության, բարեկամության և համագործակցության անհրաժեշտությանը՝ պահպանելու մեր ընդհանուր մշակութային ժառանգությունը (մասնավորապես՝ Անիի ավերակները), որը ձևավորվել է այս շրջանի ժողովուրդների կողմից և արագ անհետանում է:

«Մուշ. Վտանգված ճարտարապետական ժառանգություն»-ը կյանքի է կոչվել որպես հրատարակություն, որտեղ հավաքվել են 2014-2022 թվականների ընթացքում ընդհատումներով արված հետազոտությունների տվյալները: Մենք հավատում ենք, որ այս հրատարակությունը, որը բուռն ջանքերի արդյունք է և սկսել է 2014 թվականին, բայց ավարտին է հասցվել միայն 2022 թվականին, կբարձրացնի Մուշի մշակութային արժեքների տեսանելիությունն ու վերջիններիս վերաբերյալ իրազեկվածությունը, ինչպես նաև կնպաստի դրանց արժեքների ըն-

կալմանը և պահպանման գործընթացին: Հուսով ենք, որ այն նպաստավոր կլինի մարդկանց, շահույթ չհետապնդող կազմակերպությունների և պատմական հուշարձանների պահպանության ոլորտում աշխատող այլ հաստատությունների համար:

Իսմայիլ Ցավուզ Օզքայա
«ՄԺՊԱ»-ի խորհրդի նախագահ

Մեթոդաբանություն

Այս ուսումնասիրությունը, որում դիտարկվում են Մուշի պատմական կառույցները, առաջին հերթին նպատակ ունի գնահատելու նահանգի ճարտարապետական պատմությունը, բացահայտելու վտանգի տակ գտնվող ճարտարապետական կառույցների ներկա դրությունը և գիտական առաջարկների միջոցով նպաստելու դրանց շարունակական գոյությանը: Մենք հավատում ենք, որ այս գիրքը կարող է օգտակար լինել համապատասխան անձանց, հաստատությունների և պահպանության հարցերով զբաղվող խորհուրդների որոշումների կայացման գործընթացում, քանի որ այն պարունակում է տեղեկատվություն բնակավայրերի պատմության, շենքերի պատմության, ճարտարապետական վերլուծության, իրավական կարգավիճակի, ռիսկերի գնահատման և ապագա հնարավոր սցենարների մասին: Հուսով ենք, որ այն կարող է օգնել նաև մշակութային ժառանգությունն ապագա սերունդներին փոխանցելու և իրագեկելու գործում:

Մշո նահանգում են գտնվում համեմատաբար պահպանված որոշ պատմական կառույցներ: Հայտնի է, որ կան վտանգի տակ գտնվող տարբեր և բազմաթիվ պատմական շինություններ (հատկապես Մուշի կենտրոնում, բայց նաև ողջ նահանգում): Հետևաբար, մեր ուսումնասիրությունը կենտրոնանում է Մուշի կենտրոնի և դրա շրջակա գյուղերի վրա՝ ի լրումս ծայրամասային Հասքյոյ (Խասգյուղ), Քորքութ (Թիլ), Բուլանըք և Մալազկերտ շրջանների:

Կառույցի մասին բնագիր տեղեկատվության ոչնչացումը նույնքան կարևոր սպառնալիք է, որքան դրանց հասցված ֆիզիկական վնասը: Եթե կառույցը պատշաճ կերպով չի փաստագրվել, ապա որպես մշակութային ժառանգություն ապագա սերունդներին փոխանցվելիք արժեքները կարող են կորչել: Այդ իսկ պատճառով, 2014 և 2022 թվականներին տարբեր ժամանակաշրջաններ ուսումնասիրող երկարաժամկետ հետազոտության շրջանակներում իրականացվել են դաշտային աշխատանքներ՝ տեղում պատմական շինությունները հետազոտելու նպատակով: Դաշտային աշխատանքի ամենակարևոր ասպեկտը փաստագրման համար կառույցների ճարտարապետական չափումներ կատարելն ու մանրակրկիտ լուսանկարելն էր: Կառուցվածքները հետազոտվել և փաստագրվել են ըստ դրանց պատմական համատեքստի:

Վանի մշակութային արժեքների պահպանման շրջանային վարչության ցուցակները վկայում են, որ Մուշում և դրա շրջաններում մոտ 211 պահպանված, գրանցված պատմական կառույցներ կան: Այս հետազոտությունը և հրապարակումը կենտրոնացել են պահպանման որևէ ծրագրում չներառված, վտանգված կառույցների վրա:

Դաշտային աշխատանքներին նախապատրաստվելու նպատակով կապ է հաստատվել Վանի մշակութային արժեքների պահպանման շրջանային վարչության և այլ համապատասխան տեղական հաստատությունների հետ՝ գրանցված, անշարժ մշակութային արժեքների վերաբերյալ առկա տեղեկություններ հավաքելու համար: Այս հաղորդակցությունների և նախնական հետազոտությունների լույսի ներքո, ինչպես նաև դաշտային աշխատանքների ժամանակային սահմանափակման պայմաններում ծրագրում ընդգրկվեցին միայն առավել վտանգված կառույցները: Այս հրապարակման մեջ փաստագրվել և ներառվել են 28 կառույցներ, որոնք ներկայացնում են Մուշի մշակութային կերտվածքը և կանգնած են առավելագույն վտանգի առաջ: Ցանկանում ենք նաև տեղեկացնել, որ այս հրապարակման մեջ ընդգրկված կառույցներից շատ ավելի կառույցներ կան. հուսով ենք, որ այս ուսումնասիրությունը կնպաստի ապագայում այլ կառույցների փաստագրմանը:

Դաշտային աշխատանքների ընթացքում փաստագրվել են շինությունների ներկայիս պայմանները և դրանց վատթարացումը, ինչպես նաև ուսումնասիրվել է դրանց շրջակայքը: Պատմական հետազոտությունների և դաշտային վերլուծությունների ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, խնդրո առարկա կառույցի ճարտարապետական առանձնահատկությունները, ինչպես նաև դրա պատմությունը, գործառույթ(ները), հարաբերակցությունը շրջակա միջավայրի հետ, ինչպես նաև նյութերի և շինարարության հետ կապված խնդիրներն արձանագրվել են փորձագետների կողմից կազմված աղյուսակներում:

Յուրաքանչյուր կառույցի համար կազմվել են անհատական հաշվետվություններ՝ սկսած կառույցի պատմությունից: Կարևոր էր, որ շենքի բոլոր հայտնի անունները ներառվեն: Փորձ է արվել ներառել արխիվային փաստաթղթերում հայտնաբերված երկլեզու տերմինները՝ ի լրումս բոլոր բնօրինակ անունների, որոնք հնարավոր էր նույնականացնել: Կարծում ենք, որ պատմական ակնարկում, ինչպես նաև շենքերի անհատական պատմական տեղեկագրերում ներառվել են բոլոր հասանելի տվյալները: Ձեռք բերված բոլոր համապատասխան տեղեկությունները և տվյալները օբյեկտիվորեն ներկայացվել են ընթերցողին: Յուրաքանչյուր հաշվետվության պատմության բաժնին հաջորդում է կառույցի ճարտարապետական նկարագրությունը, ներկայիս վիճակի գնահատականը և ռիսկի գնահատման/առաջարկությունների բաժինը: Վերջին բաժնում ուսումնասիրվում են կառույցի առջև ծառացած սպառնալիքները, դրանք նվազագույնի հասցնելու առաջարկությունները և տարբեր սպառնալիքների դեմ կանխարգելիչ մեթոդները: Ճարտարապետական պահպանման մեթոդները նշվել են յուրաքանչյուր կառույցի վիճակի և յուրահատուկության համատեքստում:

Հետազոտությանը մասնակցող փորձագետները համատեղ պատրաստել են ռիսկերի վերլուծության աղյուսակներ, որտեղ յուրաքանչյուր կառույց համարակալված կերպով գնահատվում է մշակութային արժեքի և դրա առջև ծառացած ռիսկերի առաջնահերթության տեսանկյունից: Գրանցվել են արագ և լայնածավալ կերպով քայքայված կառույցները, որպեսզի առաջնահերթություն տրվի ամենաբարձր ռիսկի ենթակա կառույցներին:

Այս ուսումնասիրության մեջ օգտագործված գնահատման համակարգը մշակել ենք Հերբ Սթովելի զեկույցի հիման վրա՝ «Վտանգի պատրաստվածություն. Համաշխարհային մշակութային ժառանգության կառավարման ձեռնարկ» (ICCROM Հռոմ 1998): Յուրաքանչյուր կառույց գնահատվել է «խոցելիության» և «կարևորության» չափանիշներով. «խոցելիությունը» ներառում է տարբեր վտանգներ (կառուցվածքային ձախողում, մուտքի դժվարություն, երկրաշարժ, քամու և անձրևի հետևանքով էրոզիա, հողի ամրություն, ջրհեղեղ և վանդալիզմ), մինչդեռ «կարևորությունը» ներառում է շենքի կարևորությունը որպես մշակութային արժեք (ինքնատիպություն, ինտերիեր, արտաքին տեսք, ամբողջականության պահպանման աստիճանը):

Այս ուսումնասիրությունում գնահատված բոլոր կառույցներին երկրաշարժի վտանգի նույն դասակարգումս է տրվել: Դա պայմանավորված էր Թուրքիայի ակտիվ խզվածքներին Մուշի և դրա շրջակայքի մերձավորությունից. ներառյալ Հյուսիս Անատոլիական և Արևելա Անատոլիական խզվածքի խաչմերուկը: 1300-ական թվականներից սկսած տարածաշրջանը տուժել է բազմաթիվ ավերիչ երկրաշարժերից:

Հետազոտված կառույցներում վատթարացումները տարբերակվում են ըստ փասի չափի և լրջության, ինչպես նաև ապագայում հետագա վատթարացման պատճառ դառնալու հավանականությամբ: Բոլոր վտանգները, որոնց բախվում են շենքերը, դասակարգվել են՝ բացահայտելու համար այն կառույցները, որոնք ամենաշատն են վտանգված՝ պայմանավորված ընթացիկ և ապագա քայքայման աստիճանով/ծավալով:

Հավատում ենք, որ յուրաքանչյուր շենքի համակարգված փաստագրումը, ինչպես նաև խոցելիության և կարևորության համեմատական աղյուսակները կնպաստեն պահպանման և վերանորոգման համար ռեսուրսների բաշխման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում մշակութային արժեքների առաջնահերթությունը որոշելուն:

Գրեթե բոլոր կառույցները, որ այցելել ենք այս ուսումնասիրության շրջանակներում, գրանցված են որպես մշակույթի անշարժ հուշարձաններ: Գրանցման արձանագրությունները հասանելի են բոլոր տեղանքների համար, բացառությամբ երկուսի: Գրանցված, սակայն լրջորեն վտանգված և հրատապ միջամտությունների կարիք ունեցող շենքերի պահպանմանն ու խնամքին օժանդակելու նպատակով պատրաստված այս հաշվետվությունները կփոխանցվեն համապատասխան պահպանության խորհուրդներին՝ միջամտությունների տանող գործընթացը արագացնելու նպատակով: Մշակութային ժառանգության պահպանմանը մասնակցելու պատասխանատվությունը միայն հասարակական կառույցների կամ այս ոլորտում աշխատող մասնագետների

վրա չէ: Պահպանության անհրաժեշտության մասին հանրային իրազեկվածությունը կբարձրանա միայն այնքանով, որքանով այդ մշակութային հարստությունը կընդունվի հասարակության կողմից: Այս նպատակին հասնելու համար մեր զեկույցները տարածվում են առցանց՝ որպես էլեկտրոնային գրքեր:

Հատկանշական, պատմական կառույցների օրրան հանդիսացող տարածքներում (ինչպիսին է Մուշը) բնակվողների վերաբերմունքը պահպանման տեսանկյունից կրիտիկական է: Հավատում ենք, որ տեղական մասշտաբով իրավասու հասարակական կազմակերպությունների և բարեխիղճ անհատների ջանքերը այս խնդրի վերաբերյալ իրազեկվածությունը մեծապես կբարձրացնեն:

Հուսով ենք, որ այս ուսումնասիրությունը կօգնի հանրայնացնել Մուշի մշակութային ժառանգությունը, որը հարուստ և բազմաշերտ մշակութային գոբելենի մաս է կազմում, և այն կմեծացնի ներկայացված կառույցների՝ հանրության համար նշանակության ըմբռնումը:

Մուստաֆա ԱՔՉԱՕԶ
Խմբագիր

Տարոնի (Մուշ) պատմության համառոտ ակնարկ

Բիթլիսի նահանգի զգալի մի մասը, ինչպես այն վարչականորեն սահմանվել էր 19-րդ դարի վերջին, համապատասխանում էր հին հայկական բնակավայրերին՝ Տուրուբերան (հյուսիսում) և Աղձնիք (հարավում): Վաղ շրջանում (IV դ.) այս տարածաշրջանը կառավարվել է բազմաթիվ հայկական իշխանությունների և մելիքությունների կողմից: Տարոնի իշխանությունը, որտեղ իշխում էին Մամիկոնյանները, կառավարում էր Մուշի գավառը՝ Բիթլիսի նահանգի վարչական կենտրոնը, ի հավելումս Սասունի հյուսիսային և Բիթլիսի գավառի արևմտյան հատվածների: Նահանգի հյուսիսային և հյուսիս-արևելյան շրջանները (Գոփ/Բուլանըք և Մանազկերդ/Մալազգիրտ) բաժանված էին Ապահունիքի վասալներ Ապահունիների և Հարքի Մանավազյան իշխանների միջև (Գևորգյան-Փաբուջյան 2012, 467):

Հովհաննիսյանը (2016, 14) ժամանակակից Բիթլիս և Մուշ քաղաքները պատմականորեն և աշխարհագրորեն տեղավորում է հին Բաղեշում (Բիթլիս) և Տարոնում, որոնք միջնադարում եղել են Տուրուբերանի կազմում: Տուրուբերանը կամ Տարոնը եղել է հին Հայաստանի կենտրոնական տարածքներից մեկը և մեծ դեր է խաղացել հայ ժողովրդի պատմության մեջ: Այստեղ էր գտնվում հեթանոսական ժամանակաշրջանում Հայաստանի կրոնական կենտրոնը՝ Աշտիշատը (Դերիք/Յուջեթեփե) (ՀՀՇՏԲ 2001, 57):

Հյուսենը (2016, 46) գրել է, որ Տարոն անունը երեք տարբեր նշանակություն ունի. առաջինը վերաբերում է Մշո դաշտին, որը տարածվում է երեք հազար քառակուսի կիլոմետրի վրա՝ միջին Հայաստանի հարավ-արևելքում (ՀՍՀ 1981, 659; ՀՍՀ 1985, 616-617): Երկրորդ իմաստը այս հարթավայրում զարգացած Տարոնի Իշխանությունն է (ՀՍՀ 1985, 617-618); երրորդն ավելի ընդարձակ տարածք է, որը ներառում է մի շարք իշխանություններ՝ ի լրումս հարթավայրից անդի այլ շրջանների:

Հին Տարոն/Տուրուբերանի հայտնի քաղաքական պատմությունը սկսվում է Ուրարտական ժամանակաշրջանից (Հովհաննիսյան 2016, 14): Տարոն անունը հիշատակվում է ուրարտական և ասորական արձանագրություններում՝ ի թիվս այլ նմանատիպ անուններով շրջանների. սակայն, դժվար է ուրարտական քաղաքներից մեկը Տարոնին համապատասխանեցնել: Ստրաբոնը (XIV, 5) գրում է, որ Թամոնիտիս անվամբ հայտնի շրջանը հայերը գրավել են մ.թ.ա. 2-րդ դարում: Տեսակետներ կան, որ այս շրջանը կարող էր լինել հին Տարոնիտը: Այնուամենայնիվ, Թման - ամրոց Հարավային Հայաստանում, որը ժամանակին պատկանել է Սիրիային - և Թամոնիտիս անունների նմանությունը քիչ հավանական է դարձնում, որ վերջինս որևէ առնչություն ունի Տարոնի հետ (Հյուսեն 2016, 47): Քերթմենջյանը (2014, 6) նշում է, որ հարթավայրում ավելի քան քսան գագաթներ կան, ներառյալ Մուշ քաղաքի պատմական կենտրոնի տակ գտնվողը: Սակայն նա նաև առաջարկում է, որ տարածաշրջանում ուրարտացիների պահպանված հետքերը շատ քիչ են:

Տարոնի և դրա շրջակայքի մասին տվյալները 5-րդ դարից ավելի պարզ են դառնում: Մշո դաշտում կարելի է երկու քաղաքական միավորի մասին խոսել: Դրանցից մեկը Սղկունիքի իշխանությունն է՝ մայրաքաղաք Ողականով (Մերջիմեքքալե), իսկ մյուսը Աշտիշատի ինքնավար կրոնական իշխանությունն է, որը ղեկավարվում է եկեղեցական հիերարխիայի կողմից (Հյուսեն 2016, 47-48): Կենսական բոլոր ասպեկտները, որոնք անփոփոխ են եղել Հին աշխարհից սկսած, փոխվել են 4-րդ դարի սկզբին (301)՝ հայոց թագավոր Տրդատ III-ի կողմից քրիստոնեությունը պաշտոնական պետական կրոն հռչակելուց հետո: Թագավորական զորքի սպարապետ Մամիկոնյանը վերջ դրեց Սղկունիքի իշխանությանը՝ ի պատասխան Տրդատ III-ի դեմ նրանց ապստամբության. արդյունքում Սղկունիքի ողջ հողերն ու ունեցվածքը նվիրաբերվել են Մամիկոնյան ընտանիքին, որը սերունդներ շարունակ եղել է թագավորական բանակի գլխավոր հրամանատարը (Հյուսեն 2016, 49; Խորենացի 1961, 245-247): Աշտիշատի ինքնավար կրոնական իշխանության հողերը տրվել են հայկական եկեղեցուն; արդյունքում Աշտիշատի եկեղեցին դարձավ ամենավաղ հոգևոր կենտրոնը, որը ղեկավարում էին Սուրբ Գրիգոր Լուսարովիչից սերող եպիսկոպոսները (Հյուսեն 2016, 49): Վաղ քրիստոնեական ժամանակաշրջանը ուսումնասիրող հայ պատմաբանները հաստատում են, որ հենց այստեղ է հիմնադրվել առաջին կրոնական կենտրոնը: Ակնհայտ է, որ Տարոնի շրջանը մեծ նշանակություն է ունեցել հայ կրոնական պատմության համար: Սուրբ Գրիգոր Լուսավորչից (240-326) սերող վերջին

հոգևորականի՝ Հայոց պատրիարք Սուրբ Սահակի մահից հետո նրա ողջ ունեցվածքը ժառանգել է դուստրը՝ Սահականուշը: Այսպիսով, Տարոնի դաշտի եկեղեցապատկան կեսը ամուսնության միջոցով միավորվել է Մամիկոնյան հողերի հետ (2016, 49):

Տարոնի շրջանը 6-րդ դարի վերջին անցել է բյուզանդական տիրապետության տակ: Սակայն 640-46 թթ. արաբական արշավանքները Փոքր Ասիայում բյուզանդական ազդեցության անկման պատճառ հանդիսացան: Իշխանական տներից շատերը, որոնք այս ժամանակահատվածում ինչպես արևելքի, այնպես էլ արևմուտքի ճնշման տակ էին, աստիճանաբար կորցրեցին իրենց դիրքը (Գրուսե 2005, 285): Հատկապես նվազեց արաբական խալիֆայության դեմ գործող Մամիկոնյանների ազդեցությունը: Մամիկոնյանները խալիֆայության դեմ ապստամբություններն էին ղեկավարում, ուստի նրանց կառավարման արտոնությունը 8-րդ դարի վերջին տրվեց Բագրատունիների կրտսեր ճյուղին: Հարուն ալ-Ռաշիդ խալիֆայի կողմից Աշոտ Բագրատունին Հայաստանի առաջին իշխան (806-826) նշանակվեց՝ արաբ կառավարիչներին հավատարիմ մնալու պայմանով: Բագրատունիները շարունակեցին իրենց հարաբերությունները խալիֆայության, ինչպես նաև բյուզանդացիների հետ և հիմնեցին Տարոնի իշխանությունը (826-966 թթ.)՝ Մուշ մայրաքաղաքով: Այնուամենայնիվ, Մամիկոնյանների և Բագրատունիների միջև իշխանության համար պայքարը շարունակվեց (Գևորգյան 2012, 468; Մարանչի 2016, 123-124): 7-րդ դարի կեսերին սկսած արաբական գերիշխանությունը ժամանակի ընթացքում թուլացավ ժամանակակից քաղաքական մթնոլորտի հետևանքով և անհետացավ 9-րդ դարի վերջին:

Տարոնի իշխանության հողերը կրկին միացան Բյուզանդիային, երբ վերջինիս բանակը սկսեց իր արշավանքները Հայաստանում (966-968 թթ.); այսպիսով շրջանը10-րդ դարում վերածվեց ռազմական նահանգի (Գրուսե 2005, 483-484): Սասունի Թոռնիկյան իշխանները, որոնք սերում էին Մամիկոնյաններից, վերադարձան տարածք և օգտվեցին այն հանգամանքից, որ այդ ժամանակ բյուզանդացիները խնդիրներ ունեին (Ավդոյան 2016, 89): Այս ժամանակաշրջանում Թոռնիկյանների իշխանությունը մի քանի այլ հողերի հետ միասին վերադարձրեց Սասունն ու Տարոնը: Նրանք շարունակեցին պաշտպանել իրենց դիրքերը այն բանից հետո, երբ բյուզանդացիները պարտություն կրեցին սելջուկներից: Այնուամենայնիվ, 1071 թվականին Մանազկերտի ճակատամարտից հետո Տարոնի տարածքներն անցան սելջուկ թուրքերի տիրապետության տակ. Մամիկոնյանների և Բագրատունիների ընտանիքներն ամբողջությամբ անհետացել էին այդ տարածքներից՝ հողերը Շահ Արմենների իշխանությանը հանձնելուց հետո:

Տարածաշրջանը 16-րդ դարի սկզբին գրավվեց Օսմանյան կայսրության կողմից, որից հետո հայերի և քրդերի միջև սիմբիոզի պատճառով երկար ժամանակ մնաց քրդական իշխանության տակ՝ Բիթլիս կենտրոնով (Գևորգյան-Փաբուջյան 2012, 468): 19-րդ դարի վերջերին կենտրոնական կառավարությունը որոշեց տարածաշրջանը դարձնել ինքնավար նահանգ: Ուստի Մուշ քաղաքը և նրա շրջակայքը Բիթլիսի նահանգի մաս կազմող Մուշի սանջակի գավառ դարձան (2012, 466-510):

Համառոտ հայացք օսմանյան ժամանակաշրջանում Մուշի սանջակին և գավառին

Մուշի սանջակը (նկ. 1) գտնվում էր այն շրջանում, որը ժամանակին կառավարվում էր Տարոնի Մամիկոնյան իշխանական տան կողմից: Մշո դաշտը, որը ոռոգվում էր Արածանի գետով (նկ. 2), պատմական և աշխարհագրական առումով հարմար էր տարածաշրջանի կենտրոնը լինելու համար: Սանջակում ընդհանուր առմամբ ապրում էր 140,555 հայ, որոնք 16,927 տնտեսություններով ապրում էին 339 գյուղերում՝ 299 եկեղեցիներով, 94 վանքերով, 53 ուխտատեղիներով և 135 դպրոցներով, որոնք 5669 աշակերտ ունեին: Մուշի սանջակը բաղկացած էր հինգ գավառից՝ Մուշ, Սասուն, Մանազկերտ, Բուլանըք և Վարթո; այն գրանցվել է որպես 1914-ին հայերի ամենամեծ և միատարր բնակչություն ունեցող տարածաշրջանը (ՀՀՇՏԲ 2001, 57; Գևորգյան-Փաբուջյան 2012, 481):

Մշո գավառը՝ Տարոնի իշխանության հնագույն կենտրոնը, գտնվում էր Կորդուք և Ծիրանկատար լեռների միջև՝ Տավրոսյան լեռնահամակարգի հյուսիսային լանջերին: Ցածր բլուրները, որոնք ծածկված էին կախովի խաղողի այգիներով, պտղատու այգիներով և բարդիներով, ձգվում էին մինչև հովիտը, որտեղ տարածված էին ցորենի, գարու, տարեկանի, բամբակի և թութունի արտերը (Գևորգյան-Փաբուջյան 2012, 467): 1914-ի Մշո դաշտի հետ համընկնող գավառի 103 բնակավայրերի 9067 ընտանիքներում 75623 հայ բնակիչ կար:

Նկ. 1 Բիթլիսի նահանգը 20-րդ դարի սկզբին («Հուշամատյան»-ի արխիվ)



Նկ. 2 Մշո դաշտի հայկական գյուղերը («Հուշամատյան»-ի արխիվ)

Գրանցվել են նաև 113 եկեղեցի, 66 վանք, 66 ուխտատեղի և 87 դպրոց՝ 3057 աշակերտով (Գնորգյան-Փաբուջյան 2012, 481).

Այս ժամանակաշրջանում Մուշը հայերի համար կարևոր կրոնական/հոգևոր կենտրոն էր: Տարոնի կամ Մուշի թեմը Հայ առաքելական եկեղեցուն պատկանող հնագույն կրոնական կառույցներից էր: 14-րդ դարի որոշ արձանագրություններ, որոնք նախաօսմանյան շրջանի են, վկայում են այն մասին, որ Մուշի թեմը որոշումներ կայացնելու կարգավիճակ ուներ: 1902-ին այս թեմին կից 230 գործող եկեղեցի ու վանք կար (Օրմանյան 1913, 283): Օրմանյանի այլ վկայություններ (1913, 283) ցույց են տալիս, որ 20-րդ դարի սկզբին այս թեմի սահմաններում մոտ 3000 կաթոլիկ և 1000 բողոքական հայեր էին ապրում: Կարպատին պատկանող (1985, 174) 1914 թվականի օսմանյան վարչակազմի արձանագրություններից ստացված տվյալները վկայում են, որ Մուշի գավառում կաթոլիկ հայերի թիվը 2699 է, իսկ բողոքականներինը՝ 530: Հայ Կաթողիկե միաբանությունը Մուշի մոտակայքում գտնվող երեք գյուղերում էր՝ Առինջ (Çöğürlü) Ցողունք/Հոդունք (Üçdere) և Նորշեն (Sungu): Բողոքական

հայ համայնքը բնակվում էր Մոկունք (Soğucak), Հունան (Suboyu) և Դիրքավանք (Donatım) գյուղերում (Գևորգյան - Փաբուջյան 2012, 489; Թեոդիկ 1921, 108; Լումա 1897, 169):

Համաձայն 1892 թվականի Բիթլիսի տարեգրության՝ գավառում այդ ժամանակ մահմեդականների թիվը 21,246 էր (11451 տղամարդ և 9795 կին); 32,391 հայ առաքելականներ (18,649 տղամարդ և 13,742 կին); 2449 հայ կաթոլիկներ (1360 տղամարդ և 1089 կին); և 488 հայ բողոքականներ (301 տղամարդ և 187 կին) էին բնակվում գավառում: Հայերը, որոնց ընդհանուր թիվը գերազանցում էր 35,000-ը, գավառի բնակչության մեծամասնությունն էին կազմում (հղում 1):

Գավառի կենտրոնը Մուշն էր: Տեղակայված էր շատ հին բերդաքաղաքի վրա, և պատմիչ Հովհաննես Մամիկոնյանի կողմից հիշատակվել է որպես կարևոր բնակավայր (7-րդ դար): Ուրարտական Մենուա թագավորի (մ.թ.ա. 810-778 թթ.) ժամանակաշրջանի սեպագիր արձանագրություններ են հայտնաբերվել բերդում, որը որոշ ժամանակ եղել է նաև Մամիկոնյան իշխանների սեփականությունը: 20-րդ դարի սկզբին բերդը դեռ կանգուն էր:

Մուշի երկհարկանի կամ եռահարկ տները կառուցված են կա՛մ ժայռաբեկորով և աղյուսով, կա՛մ քարե որմնադրությամբ՝ փորագրություններով զարդարված փայտե պատշգամբներով: Դրանք շարված են Մշո դաշտի եզրին գտնվող բլրի լանջին (նկ. 3-4): Խաղողի այգիների մեծ մասը կախովի են և մինչ օրս գոյություն ունեն: 1914 թվականին քաղաքի 20000 բնակիչները բաշխված էին 12 թաղամասերում: Հայերը բնակչության մեծամասնությունն էին կազմում և հիմնականում բնակվում էին քրիստոնեական հինգ թաղամասերում (Վան-Տոսպ 1916, 8; Սաֆրաստյան 1965, 183):

«Վան-Տոսպ» -ը (1916, 8) և Սաֆրաստյանը 20-րդ դարասկզբին Մուշի պատմական կենտրոնում գտնվող հայկական թաղամասերի և նրանց գործող եկեղեցիների մասին հետևյալ տվյալներն են փոխանցում.

Վերին թաղ (Վերին թաղամաս) ՝ *495 տնտեսություն, 4570 մարդ: Սուրբ Հարություն եկեղեցի.*

Սուրբ Մարինե թաղամաս ՝*374 տնտեսություն, 3460 մարդ: Սուրբ Մարինե եկեղեցի և Սուրբ Գևորգ եկեղեցի:*

Զորի թաղ (Զորաթաղ) ՝*312 տնտեսություն, 2750 մարդ: Սուրբ Աստվածածին եկեղեցի և Սուրբ Մինաս մատուռ:*

Բրուտի թաղ (Բրտի թաղամաս) ՝ *145 տնտեսություն, 1330 մարդ: Սուրբ Սարգիս եկեղեցի:*

Ջիգրաշեն թաղ ՝*50 տնտեսություն, 340 մարդ: Սուրբ Կիրակոս եկեղեցի:*

Գևորգյանը (2012, 489) Մինարա Մահլա թաղամասը ներառում է հայ համայնք ունեցողների կազմում:

Նա առաջարկում է, որ Վերին Թաղում (Վերին թաղամաս) կար 335 հայ տնտեսություն և Սուրբ Հարություն եկեղեցին, 139 հայ տնտեսություն և Սուրբ Սարգիս եկեղեցին՝ Բրուտի թաղում (Բրտի թաղամաս), 287 հայ տնտեսություն, Սուրբ Աստվածածին եկեղեցին և Զորի թաղի Սուրբ Ավետարանիչ եկեղեցին (Զորաթաղ), 289 հայ տնտեսություն, Սուրբ Մարինե տաճարը և Սուրբ Գևորգ եկեղեցին՝ Սուրբ Մարինե թաղամասում, 47 հայ տնտեսություն, Սուրբ Կիրակոս եկեղեցին՝Ջիգրաշեն թաղում: Մինարա մահլայում, որը 400 մահմեդական տնտեսություն ունեցող թաղամաս էր, ուներ 49 հայ տնտեսություն և Սուրբ Ստեփանոս եկեղեցին:

Հայերը ղեկավարում էին այս եկեղեցիները, ինչպես նաև հարակից յոթ կրթական հաստատությունները (2012, 489): Բացի այդ, հայտնի էր, որ քաղաքի 800 խանութներից 500-ը պատկանում էին հայերին: Այս խանութներում վաճառվող ապրանքները հայտնի էին ամբողջ Փոքր Ասիայում (2012, 489):

Քերթմենջյանը (2014, 7) իր զեկույցում ներառում է մանրամասներ բոլոր թաղամասերի և կենտրոնական բնակավայրի քաղաքային հյուսվածքի մասին և տնային տնտեսությունների վերաբերյալ ավելացնում է հետևյալը. «Ընդհանուր առմամբ, Մուշը բաղկացած էր տասներկու թաղամասերից՝ մեծ ու փոքր: Բնակավայրի չափը կարելի էր հասկանալ թաղամասերում տնային տնտեսությունների թվից: Քալեում 500 տնտեսություն կար, Վերին թաղում՝ 350, Բրուտի թաղում՝ 150, Սուրբ Մարինեում՝ 300, Խուրդենցում՝ 50, Հովտում՝ 300, Մինարայում՝ 450, Ջիգրաշենում՝ 5, Դաշտի թաղում՝ 400, Քոթանում՝ 150, Քարի թաղում՝ 700, Սուֆրա թաղում՝ 300: Ավելի փոքր թաղամասերը գտնվում էին քաղաքի արևմտյան



Նկ. 3 Մուշի ավանդական տները («Հուշամատյան»-ի արխիվ)



Նկ. 4 Մուշ քաղաքի համայնապատկեր (Բոդիլ Բյորնի արխիվ)

և հյուսիսային մասերում: Բերդը և Վերին թաղերը բերդի մոտակայքում էին: Կենտրոնում էին Սուրբ Մարինեն, Բրուտի և Խուրդենց թաղերը. բազմաթիվ արհեստանոցներ և առևտրի կետեր ունեին: Մնացած թաղամասերը՝ Թուզի թաղը, Քոթանի և Սուֆրա թաղերը քաղաքի ծայրամասերում գտնվող տնակային թաղամասեր էին:

19-րդ դարի կեսերին Մուշ քաղաքում կար 5 քարաշեն եկեղեցի, 3 մզկիթ, 3 իջևանատուն, բաղնիքներ, բազմաթիվ ջրաղացներ, 400 խանութներ, քաղաքային այլ կառույցներ (նկ. 5): Փողոցներն ու ճանապարհները անկանոն էին և նեղ (Քերթմենջյան 2014, 7): Տները և թաղամասերը դասավորված էին հորիզոնական շարքերով՝ բլրի թեք տեղագրությանը համապատասխանելու համար. այս հատկանիշը քաղաքում դեռ տեսանելի է:

Հայերը՝ այս տարածաշրջանի դարավոր բնակիչները, որ 1516-ին օսմանյան տիրապետության տակ անցան, աշխարհագրության այս տարածքում և իրենց կառուցած քաղաքներում տնտեսական և սոցիալական ծանր պայմաններում էին ապրում: Նրանց թվաքանակը տարածաշրջանում/քաղաքում շարունակաբար նվազում էր 1894-1896 թվականներին տեղի ունեցած իրադարձությունների, այս շրջանին հաջորդած ողբերգական դեպքերի և 1915 թվականի տեղահանության հետևանքով (Գևորգյան-Փաբուջյան 2012, 482):

Մանակերտ / Մանավազակերտ / Մանազիկկերտ / Մանազկերտ

Ըստ հայկական դիցաբանական/պատմական աղբյուրների՝ Մանազկերտ քաղաքը հիմնադրել է Հայոց պետության հիմնադիր Հայկի որդին՝ Մանավազը, և նրա անունով կոչվել է «Մանավազակերտ»: Քաղաքը գտնվում էր Վանա լճից հյուսիս-արևմուտք, Սիփան լեռան ստորոտին, Տուրուբերան նահանգի Ապահունիք գավառում, հարթավայրի վրա, որտեղ բազմաթիվ հովիտներ հատվում են Հարքի (Բուլանըք) և Ապահունիքի սահմաններում:

Բնակավայրը որոշ աղբյուրներում հիշատակվում է Մենուասկերտ անունով: Ենթադրվում է, որ այն ուրարտական քաղաք է, որը հիմնադրել է ուրարտական Մենուա թագավորը (մ.թ.ա. 810-786 թթ.): Հնում այն Արտաշատից մինչև Տիգրանակերտ ձգվող արքունի ճանապարհի կարևոր կենտրոններից մեկն էր: Մանավազակերտը բերդաքաղաք էր և Հարքի մայրաքաղաքը, որը մինչև 4-րդ դարը գտնվում էր Մանավազյանների հրամանատարության ներքո և Ապահունյաց հայկական վարչական իշխանական սահմաններում: 4-րդ դարում



Նկ. 5 Մուշի շուկան, 1912 (Բոդիլ Բյորնի արխիվ)

Մանավազյանների հողերը հայոց թագավորի կողմից տրվել են Աղբիանոսյանների ընտանիքին, իսկ Մանազկերտը արագորեն դարձել է թեմի կենտրոնը: Այս քաղաքում Հովհաննես Օձնեցի կաթողիկոսի գլխավորությամբ տեղի ունեցավ Բյուզանդական եկեղեցուց հայ եկեղեցու անկախացման վերաբերյալ հայասորական նշանավոր ժողովը (725-726 թթ.) (Գևորգյան-Փաբուջյան 2012, 500; ՀՀՇՏԲ 1991, 679-679-4; ՀՍՀ 1981, 210-211): Ողջ միջնադարի ընթացքում ավերված և վերակառուցված այս մեծ, ամրացված բնակավայրը Աբբասյանների ժամանակաշրջանում Փոքր Ասիայի նշանավոր քաղաքներից էր: 8-րդ դարի վերջից մինչև 10-րդ դարը եղել է երկու իրար հաջորդող արաբական խալիֆայությունների մայրաքաղաքը:

Բյուզանդացի պատմիչ Հովհաննես Սկիլիցեսը (11-րդ դար) գրում է, որ Մալազկերտը ամուր և աննկուն քաղաք էր, որը շրջապատված էր հինգ դարպասներ ունեցող սև քարից եռաշար պարիսպներով (Քերթմենջյան 2014, 28; ՀՀՇՏԲ 1991, 679-680; ՀՍՀ 121-19): Սելջուկ թուրքերի և բյուզանդական կայսեր հրամանատարած ուժերի միջև ընթացած Մանազկերտի ճակատամարտը 1071 թվականին այս բնակավայրի ուժեղ ամրակայված պարիսպների առջև է տեղի ունեցել: Մալազգիրտի բերդի վաղ փուլերի վերաբերյալ տարբեր կարծիքներ կան: Ամենաընդունված պատումն այն է, որ քաղաքը կառուցվել է Ուրարտական ժամանակաշրջանում: Այնուամենայնիվ, 1903 թվականի երկրաշարժի հետևանքով առաջացած փսասի, դրան հաջորդած կլիմայական մարտահրավերների



Նկ. 6 Մանազկերտի բերդի հատակագիծը (Լինչ-Օսվալդ, 1901)

և ոչ պատշաճ վերանորոգման գործոնները դժվարացնում են այս ժամանակաշրջանից մնացած բեկորների ճիշտ ուսումնասիրությունը (Դիքմեն-Թորուք 2021, 4527):

Հ.Ֆ.Բ. Լինչի և Օ. Օսվալդի գծած տեղագրական քարտեզը (1901) պատկերում է միջնաբերդը՝ դեպի արևելք և պաշտպանական պարիսպներ, որոնք շրջապատում են քաղաքի մնացած հատվածը (նկ. 6): Հյուսիսում և հարավ-արևմուտքում երկու գերեզմանոցներ կան (նեկրոպոլ): Քաղաքը Շահ-Արմենների իշխանապետության երկրորդ մայրաքաղաքն է եղել: Այն վերակառուցվել է 11-13-րդ դարերում: Այնուհետև այն լքվել է մոնղոլական արշավանքների հետևանքով: Մնայուն պարիսպները, հավանաբար, կապված են 12-13-րդ դարերի սկզբի վերանորոգման և վերակառուցման հետ: Մինչ օրս պահպանվել են միջնադարյան բնակավայրի սև բազալտե պարիսպները:

Էվլիյա Չելեբին (1978, 446-7) 17-րդ դարում այցելել է քաղաք և նկարագրել այն որպես հաճելի օդով և ջրով վայր, որտեղ կա մոտավորապես երկու հազար տուն, մզկիթ, երկու մեդրեսե, փոքրիկ բաղնիք, իջևանատուն, մոտ 50 խանութ և յոթ դպրոց: Նա նաև գրել է, որ բերդի պարիսպները երեք կողմից շատ բարձր էին և դեպի արևելք դարպասունեին, որ բերդը մասամբ ծածկվել է Թեմուրի (Լենկթեմուր) հարձակումներից, և որ կային քարե ջրատարներ (Էվլիյա Չելեբի, 1978, 446-447):

Մանազկերտը, որը հայկական աղբյուրներում որպես գյուղ, ավան կամ բերդաքաղաք էր նշվում, բավականին առաջադեմ էր արհեստագործության և առևտրի մեջ: 1915 թվականին բնակավայրում ապրում էր 5000 մարդ, որոնց մեծ մասը հայեր էին, որոնք աշխատում էին որպես հացահատիկ մշակող, առևտրական և արհեստավոր (ՀՀՇՏԲ 1991, 680): Համաձայն Գևորգյանի (2012, 500-501)՝ 1914-ին 126 տնտեսություն կար՝ 1400 մարդ, որից 945-ը հայ, և բնակավայրից դեպի հարավ գտնվող Սուրբ Աստվածածին կաթողիկե եկեղեցուց զատ, հիշատակել է նաև Սուրբ Սարգիս, Սուրբ Հակոբ, Սուրբ Կարապետ եկեղեցիների մասին: Բացի այդ, նա գրել է 45 աշակերտ ունեցող երկու դպրոցների մասին: «Հուշամատյան»-ում տեղ գտած աղբյուրները հաստատում են քաղաքի կրոնական կառույցների մասին տվյալները: 1903 թվականի մայիսին տեղի ունեցած երկրաշարժի կենտրոնը Սիփան լեռն է եղել և ավերել է բոլոր աղոթատեղերը, բացառությամբ Սուրբ Սարգիս եկեղեցուց (հղում 2): Մալազկերտի ամբողջ գավառում 11931 հայ բնակիչ կար՝ 1386 տնտեսություններում, ինչպես նաև ընդհանուր 39 գյուղերում 25 եկեղեցի, 20 վանք, 35 ուխտատեղի և 527 աշակերտ ունեցող 15 կրթական հաստատություն կար (2012, 501): Այս բնակավայրերի մեծ մասը գտնվում էր Սիփան լեռան հարավում և Բինգյոլ (Բյուրակն) լեռների հարավում տեղակայված հարթավայրում (նկ. 7):

17-18-րդ դարերի հայկական գյուղերի թվաքանակի և ժողովրդագրության վերաբերյալ այլ աղբյուրներից ստացված տվյալները համապատասխանում են 1871, 1872 և 1873 թվականների օսմանյան տարեգրությանը: Սակայն 1898 թվականի Էրզրումի և 1892 թվականի Բիթլիսի տարեգրության տեղեկությունները չեն համապատասխանում Քուինեի (1891, 590) տրամադրած տվյալներին (Դիքմեն-Թորուք 2021, 4528): Ողբերգական իրադարձությունները (1894-1896 թթ.), որոնք հետևանք էին քաղաքում մահմեդական բնակչության թիվն ավելացնելու Օսմանյան կայսրության քաղաքականությանը, նաև «Համիդիեի» գնդերի ժամանումը տարածաշրջան, բնակավայրի հայության զգալի նվազում են առաջացրել: Կարելի է կարծել, որ 1890 թվականից հետո ժողովրդագրական տվյալների անհամապատասխանությունները կարող են այս սարսափելի դեպքերի հետևանք լինել:

Փուլանեղ / Փուլանուխ / Գոփ / Բուլանըք

Բուլանըքը, որտեղ միջնադարում թագավորել են Հարք և Խոռխոռունի նախարարությունները, գտնվում է Մուշից հյուսիս-արևելք՝ Մուրատ (Արածանի) գետի հովտով ձգվող ընդարձակ հարթավայրի վրա: Բնակավայրը բաժանված է Բիլիջան (Բլեջան) լեռներով և աստիճանաբար հայտնի է դարձել որպես Ստորին (Աշաղը) և Վերին (Յուքարը) Բուլանըք: Այս լեռների գագաթների մոտ կան բազմաթիվ լճեր, որոնք բարենպաստ են ձկնորսության համար: Հայտնի է, որ ձկնորսություն կարելի էր անել Բուլանըքից արևմուտք գտնվող Նազիկ, Հաչլը-Բուլանըք և Խազանա լեռների վրա, որոնք իրար շատ մոտ են գտնվում: Տարածաշրջանը բավականին հարուստ է ստորգետնյա պաշարներով: Անասնաբուծությունն ու գյուղատնտեսությունը տարածված տնտեսական գործունեություն են այս հարթավայրում, որը բերրի և փարթամ է, քանի որ ոռոգվում է Արածանի գետով և դրա ոռոգման առվակներով (ՀՀՇՏԲ 1986, 749; Գևորգյան-Փաբուջյան 2012, 501):



Նկ. 7 Մանազկերտի գավառի հայաբնակ գյուղերի տեղանունները («Հուշամատյան»-ի արխիվ)

19-րդ դարի վերջին քառորդում (1884 թ.) Բուլանըքը Բիթլիս նահանգի Մուշի Սանջակի վարչական շրջան դարձավ: Գավառի կենտրոնը (Գոփ) գտնվում էր գորշ նստվածքների կուտակում ունեցող հարթավայրի վրա և ուներ 5000 հայ բնակիչ՝ 500 տնտեսությունում, ինչպես նաև մոտավորապես 100 քուրդ և թուրք բնակչություն (Գևորգյան-Փաբուջյան 2012, 501): Համաձայն 1892 թվականի Բիթլիսի տարեգրության՝ Բուլանըքի 25,456 ընդհանուր բնակչությունից 8567 -ը մահմեդականներ էին, 16,889-ը՝ հայեր: Հայերը գավառի բնակչության մեծամանությունն (66,3%) էին կազմում (Հղում 3): Մյուս բնակիչները քուրդ և չերքես էին:

1909 թվականի տվյալները ցույց են տալիս, որ Բուլանըքի գավառի 60-63 գյուղերից 29-ի բնակիչներն ամբողջությամբ հայեր էին (ՀՀՇՏԲ 1986, 749): Պատրիարքարանի՝ 1914 թվականի բնակչության արձանագրությունների համաձայն՝ Փուլանեղ (Բուլանըք) գավառի 30 հայկական գյուղերում 25053 հայ էր ապրում՝ 3219 տնտեսություններում, ինչպես նաև 29 եկեղեցի, երեք վանք և 575 աշակերտ ունեցող 14 դպրոց կար (նկ. 8): Գավառի կենտրոնում (Գոփ) արձանագրվել են Սուրբ Աստվածածին, Սուրբ Թուխմանուկ եկեղեցիները, ինչպես նաև 80 աշակերտ ունեցող երկու դպրոց (Գևորգյան-Փաբուջյան 2012, 502-503):

Նկ. 8 Բուլանըք գավառի հայաբնակ գյուղերի տեղանունները («Հուշամատյան»-ի արխիվ)

Հայտնի է, որ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը Բուլանըք գավառում երեք գործող վանքեր կային: Այս կառույցներից ոչ մեկը չի պահպանվել: Առաջինը կենտրոնական բնակավայրից հարավ գտնվող բարձր բլուրների վրա գտնվող Սուրբ Դանիել վանքն էր: Գոփին մոտ գտնվելու պատճառով հայտնի էր նաև որպես Գոփավանք: Վանքը, որը երկու մատուռներով և այլ կառույցներով Փուլանեղի թեմի կենտրոնն էր, տարածաշրջանում հայտնի ուխտատեղի էր: Մինչև 1914 թվականը գործող մյուս վանքերը Սուրբ Կարապետ և Սուրբ Գևորգ վանքերն էին: Սուրբ Կարապետ վանքը գտնվում էր Գոփից հարավ ընկած Խաչլի (Գյոլյանը) գյուղի լճի հարավային ափին: Վանքի կանգուն և գործող ժամանակներից վկայությունները ցույց են տալիս, որ այն մոտակայքում խաչքարեր ունեցող շքեղ կառույց է եղել (Հղում 4):

Ռիսկերի վերլուծության մատրիցա

	Կարևորություն					Խոցելիություն - Սպառնալիքներ						
	Ժառանգության կարևորությունը	Շինության անձեռնմխելիություն	Արտաքինի նշանակալի կառուցվածք	Ինտերիերի նշանակալի կառուցվածք	**Կարևորության վարկանիշ**	Կառուցվածքային անկայունություն	Սեյսմիկ գոտի	Քամու և անձրևաջի էրոզիա	Հեղեղ	Մարդածին	**Խոցելիության վարկանիշ**	**Կարևորություն + Խոցելիության վարկանիշ**
1 - Սուրբ Թադևոս մատուռ	5,00	4,00	3,00	3,00	15,00	5,00	1	5,00	1,00	5,00	16,00	31,00
2 - Սուրբ Առաքելոց վանք	5,00	3,00	3,00	3,00	14,00	5,00	1	5,00	1,00	5,00	16,00	30,00
3 - Մոլլաքյանդի դպրոցն ու գերեզմանատունը	5,00	4,00	3,00	2,00	14,00	4,00	1	5,00	1,00	5,00	15,00	29,00
4 - Սուրբ Կարապետ վանք	5,00	2,00	2,00	2,00	11,00	5,00	1	5,00	2,00	5,00	17,00	28,00
5 - Եղրդուտի Սուրբ Հովհաննես վանք	5,00	3,00	2,00	2,00	12,00	5,00	1	5,00	1,00	5,00	16,00	28,00
6 - Միգրեի բաղնիք	4,00	3,00	1,00	3,00	11,00	5,00	1	5,00	2,00	5,00	17,00	28,00
7 - Հասպետ ամրոց	5,00	3,00	4,00	1,00	13,00	3,00	1	5,00	1,00	5,00	14,00	27,00
8 - Սուրբ Մարինե եկեղեցի	5,00	2,00	2,00	2,00	11,00	5,00	1	5,00	1,00	5,00	16,00	27,00
9 - Քարձորի (Սուվարան) մատուռ	4,00	3,00	1,00	3,00	11,00	5,00	1	5,00	1,00	5,00	16,00	27,00
10 - Սուրբ Սարգիս եկեղեցի	4,00	3,00	1,00	3,00	11,00	4,00	1	5,00	1,00	5,00	15,00	26,00
11 - Սուրբ Թովմաս առաքյալ եկեղեցի	4,00	2,00	2,00	1,00	9,00	5,00	1	5,00	1,00	5,00	16,00	25,00
12 - Էրջան Չեթէի տուն	5,00	4,00	3,00	4,00	16,00	5,00	1	1,00	1,00	2,00	9,00	25,00
13 - Սուրբ Մարիամ մատուռ և արհեստանոցներ	5,00	1,00	1,00	1,00	8,00	5,00	1	5,00	1,00	5,00	16,00	24,00
14 - Սուրբ Գևորգ եկեղեցի	3,00	2,00	2,00	1,00	8,00	5,00	1	5,00	1,00	5,00	16,00	24,00
15 - Սուրբ Սահակ եկեղեցի	5,00	2,00	2,00	3,00	12,00	5,00	1	3,00	1,00	1,00	10,00	22,00
16 - Մոլլաքյանդի առանձնատուն	4,00	3,00	3,00	4,00	14,00	5,00	1	1,00	1,00	1,00	8,00	22,00
17 - Դաղդիբի գյուղի մատուռ	3,00	1,00	1,00	1,00	6,00	5,00	1	5,00	1,00	5,00	16,00	22,00
18 - Սուրբ Կիրակոս եկեղեցի	4,00	3,00	1,00	3,00	11,00	3,00	1	3,00	1,00	3,00	10,00	21,00
19 - Ալադին բեկի մզկիթ	4,00	5,00	5,00	3,00	17,00	1,00	1	1,00	1,00	1,00	4,00	21,00
20 - Հաթունի կամուրջ	4,00	3,00	3,00	3,00	13,00	2,00	1	1,00	2,00	3,00	8,00	21,00
21 - Սուրբ Հակոբ եկեղեցի	3,00	1,00	1,00	1,00	6,00	2,00	1	5,00	1,00	5,00	13,00	19,00
22 - Մեծ Հասքյոյ մզկիթ	5,00	4,00	2,00	3,00	14,00	2,00	1	1,00	1,00	1,00	5,00	19,00
23 - Մոլլաքյանդի մզկիթ	5,00	4,00	2,00	4,00	15,00	1,00	1	1,00	1,00	1,00	4,00	19,00
24 - Օզգյորուր ժայռակերտ դամբարան	4,00	2,00	1,00	2,00	9,00	1,00	1	2,00	1,00	5,00	9,00	18,00
25 - Նորաշենի ջրաղաց	4,00	2,00	1,00	1,00	8,00	3,00	1	1,00	2,00	3,00	9,00	17,00
26 - Քըզ կամուրջ	5,00	2,00	1,00	1,00	9,00	1,00	1	1,00	3,00	3,00	8,00	17,00
27 - Ցըլդըզլը խան/իջևանատուն	5,00	2,00	3,00	1,00	11,00	1,00	1	1,00	1,00	3,00	6,00	17,00
28 - Սուլուխի կամուրջ	3,00	3,00	2,00	2,00	10,00	1,00	1	1,00	2,00	1,00	5,00	15,00

Թվային գնահատականը 1-5 սանդղակով (1- շատ ցածր, 2- ցածր, 3- միջին, 4- բարձր, 5- շատ բարձր) գնահատում է կառույցների պատմական, սոցիալական և մշակութային նշանակությունը, իրական ֆիզիկական վիճակը և պոտենցիալ ռիսկերը: Այսպիսով, կառույցները ռիսկերի վերջնական աղյուսակում իրենց տեղերեն են գտնում՝ մշակութային ժառանգության նշանակության, ինչպես նաև ընթացիկ և հնարավոր սպառնալիքներին համապատասխան: Վերջնական աղյուսակում ավելի բարձր տեղ զբաղեցրած հուշարձանները հրատապ միջամտության կարիք ունեցող կառույցներն են:

Կառույցների գտնվելու վայրը



1- Սուրբ Թադևոս մատուռ
2- Սուրբ Առաքելոց վանք
3- Մոլլաքյանդի դպրոցն ու գերեզմանատունը
4- Սուրբ Կարապետ վանք
5- Եղրդուտի Սուրբ Հովհաննես վանք
6- Միգրեի բաղնիք
7- Հասպետ ամրոց
8- Սուրբ Մարինե եկեղեցի
9- Քարձորի (Սուվարան) մատուռ
10- Սուրբ Սարգիս եկեղեցի
11- Սուրբ Թովմաս առաքյալ եկեղեցի
12- Էրջան Չեթէի տուն
13- Սուրբ Մարիամ մատուռ և արհեստանոցներ
14- Սուրբ Գևորգ եկեղեցի
15- Սուրբ Սահակ եկեղեցի
16- Մոլլաքյանդի առանձնատուն
17- Դաղդիբի գյուղի մատուռ
18- Սուրբ Կիրակոս եկեղեցի
19- Ալադին բեկի մզկիթ
20- Հաթունի կամուրջ
21- Սուրբ Հակոբ եկեղեցի
22- Մեծ Հասքյոյ մզկիթ
23- Մոլլաքյանդի մզկիթ
24- Օզգյորուր ժայռակերտ դամբարան
25- Նորաշենի ջրաղաց
26- Քըզ կամուրջ
27- Յըլդըզլը խան/իջևանատուն
28- Սուլուխի կամուրջ

Սուրբ Առաքելոց վանք

Կենտրոն (Centrum) թաղ, Քեփենեք (Արագ) գյուղ, Քարասու տեղանք	Կառուցման ժամանակաշրջան/տարեթիվ՝ **5–11-րդ դարեր:**
GPS՝ **38°41’44.82”N, 41°31’10.91”E**	Ներկայիս գործառույթ՝ **ավերակ**
Գրանցման տարեթիվ և համար՝ **Վանի Մշակութային ժառանգության պահպանության շրջանային վարչություն, 06.11.2009 – 437**	

Պատմություն

Մինչև Սուրբ Առաքելոց վանքի կառուցումը, դրա տարածքում Անահիտին նվիրված տաճարն էր. Անահիտը հին դարերում հայկական պանթեոնի մայր աստվածուհին էր (ՀՀՇՏԲ 1988, 853): Գագաթը, որտեղ այս երկու կառույցները գտնվում են, հայերին հայտնի է որպես Ծիրինկատար, Ծիրընկատար, Ծիրանակատար (նկ. 2): Սուրբ Առաքելոց վանքը կառուցվել է Անահիտ աստվածուհու տաճարի կործանումից հետո: Ի վերջո այն դարձավ հոգևոր/մշակութային կենտրոն, որը քրիստոնյա հայ համայնքի համար նույնքան կարևոր էր, որքան Սուրբ Կարապետը:

Պատմական արձանագրությունները վկայում են, որ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը վանքը հիմնվել է 312 թվականին՝ մի քանի առաքյալների՝ Հռոմից բերված մասունքները (ոսկորներ/սրբազան մասունքներ) պահելու համար: Վանքը Սուրբ Առաքելոց է կաչվել ի հիշատակ առաքյալների. ի վերջո այն հայտնի դարձավ որպես Մշո Սուրբ Առաքելոց վանք, որն էլ պատմական արձանագրություններում հիշատակված անվանումն է (Ոսկիյան 1953, 23-24; Բալյան 2008, 251; Թիերի 1976 236-237; Մարանչի 2016, 124):

Վանական համալիրի հարավային դուռը Թարքմանչաց գերեզմանատուն է տանում: Հայտնի են այստեղ գտնվող ինը խաչքարերից որոշների անունները. դրանք թվագրված են 11-րդ դարով, փորագրված և նրբորեն զարդարված են բարձրաքանդակներով: Դավիթ

Նկ. 1 Սուրբ Թադևոս մատուռ և Սուրբ Առաքելոց վանք, տեսարան արևելքից



Անհաղթը, Ղազար Փարպեցին, Մամբրե Վերծանողը, Ասողիկը, Պողոս Տարոնեցին և այլք թաղված են Սուրբ Առաքելոց վանքի բակում. նրանցից յուրաքանչյուրի հիշատակին արձանագիր խաչքարեն են կանգնեցվել: Հայր Ոսկիյանը (1953, 24) գրել է, որ հայ պատմիչ Մովսես Խորենացու (Խորենի Մովսես, Մուշի Խորոնք գյուղից) արձանագիր խաչքարի վերաբերյալ ոչ մի հիշատակում չկա, և առաջ է քաշել այն տեսությունը, որ այն Եփրատ գետն է նետվել՝ նրա ոսկորների հետ միասին: Հայ գրական ավանդույթի գրավոր հիմքը Առաքելոց վանքի տանիքի տակ է համախմբվել. համալիրը հայտնի էր նաև որպես Թարգմանչաց վանք՝ ի հիշատակ այս պատմական/գրական ավանդույթը ստեղծած թարգմանիչների: Երբեմն վանքը հիշատակվում էր իր առաջին հոգևոր առաջնորդ Եղիազար Աբբահոր անունով (որպես Սուրբ Ղազարու վանք) (Ոսկիյան 1953, 32-34; Բալյան 2008, 252):

Նկ. 2 Ծիրինկատարի գագաթ և Սուրբ Առաքելոց վանք, մինչև փլուզումը (Բալու-Խարբերդ 1878, V II, 364)

Վանքը հայտնի է դարձել 11-րդ դարում և զգալի զարգացումներ ունեցել 12-րդ դարում: Ըստ խաչքարերից մեկի արձանագրության՝ համալիրը 1125 թվականին վերանորոգվել է: Նշվում է, որ վանքը մեծ փսաս է կրել 14-րդ դարի վերջին՝ Թեմուրի (Լենկթեմուր) արշավանքների ժամանակ, և որ հարթավայրի բնակիչները ապաստանել են համալիրում, որի անվտանգությունն ապաստակությունների ժամանակ ապահովված էր պաշտպանական պարիսպներով (Ոսկիյան 1953, 60; Մկրտչյան 2002, 196):

Առաքելոց վանքի գլխավոր դուռը բաղկացած էր շրջանակից և ընկուզենու փայտից պատրաստված երկու վահանակներից: Սա հայտնի է որպես միջնադարի հայկական արհեստագործության ամենանշանավոր նմուշներից մեկը: Դրա թվագրված արձանագրությունը վկայում է, որ դուռը 1134 թվականին պատրաստել են վարպետներ Ղուկասը, Թորոսը և Գրիգորը: Երկաթագիր արձանագրության մեջ նշվում է. «Գծված է Տեր Թորոսի, Գրիգորի և Ղուկասի կողմից 1134 թվականին» (բնօրինակը՝ «Ի թ. Հ. ՇՁԳ. ԵՍ ՏՐ Թորոս եւ Գրիգոր եւ Ղուկաս ԳԾ.») (Մարանչի, 2016, 129-131; Տեր Ներսեսյան 1977, 205; Բալյան 2008, 252): Դուռը զարդարված էր փայտի վրա փորագրված բուսական, երկրաչափական և ֆիգուրատիվ բարձրաքանդակներով: Այսօր այն պահվում և ցուցադրվում է Երևանում՝ Հայաստանի պատմության թանգարանում (նկ. 3):

Վանքում ուսումնական գործունեությունը սկսվել է հիմադրմանը հաջորդող տարիներին: Ավելին, հայերեն այբուբենի մշակումից հետո (405) այստեղ թարգմանված գրքեր են ստեղծվել Մեսրոպ Մաշտոցի կողմից, ով Մուշի Հացեկաց (Հացիկ) գյուղից էր (ՀՍՀ 1981, 469-470; Օզդաղ-Ուստել-Քարաքաշլը

Նկ. 3 Սուրբ Առաքելոց վանական եկեղեցու փայտե դուռ (Սուրբ Հայաստան 2007, 195)



Նկ. 4 Վանք, հատակագիծ (Տոնապետյան 1987, 559)

2009, 47-48): Մուշում (Տարոն) եղել է պատկերազարդ ձեռագրեր ստեղծելու ավանդույթ՝ նման 11-րդ դարասկզբով թվագրվող Բիթլիսի (Բաղեշ) ավանդույթին, (Մարանչի 2016, 131): Միջնադարում Առաքելոցն իր աստվածաբանական դպրոցով և արժեքավոր ձեռագրերով մշակութային շատ կարևոր հանգույց էր: Այնուհետև այն դարձավ 15-րդ և 16-րդ դարերի ձեռագրական ավանդույթ ունեցող հայտնի և աշխույժ կենտրոն: Մկրտչյանը (2002, 196) ենթադրում է, որ 11-13-րդ դարերում Առաքելոց վանքում աստվածաբանական կենտրոն է եղել:

Սուրբ Առաքելոց վանքը իրավասությունների տեսանկյունից տարածաշրջանի ամենածավալուն և հզոր վանքերից մեկն է եղել: Այն ուխտատեղի, քահանաների համար բազմաթիվ սենյակներ և խցեր, մանկատուն և արհեստանոց ուներ: 1910 թվականին վանական ճեմարանը 25 աշակերտ ուներ: Հայր Սրվանձտյանը գրել է վանքում գյուղատնտեսական դպրոցի առկայության մասին, որը ստեղծվել էր Ավետասիրաց ընկերության կողմից (Սրվանձտյանը, 1884, 363): Վանական համալիրի կառույցները մեծ փսաս են կրել 19-րդ դարի վերջից սկսած, հատկապես՝ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ (Ոսկիյան 1953, 34, 83-4; Գևորգյան-Փաբուջյան 2012, 484-487):

Ճարտարապետություն

Վանքը գտնվում է Մշո գավառային կենտրոնից 8 կմ հարավ-արևելք՝ Աշտիշատ /Յուջեթեփեի հետևում, Քըզըլ Զիյարեթ (Կարմիր այց) լեռան հյուսիսային լանջերին ծովի մակարդակից մոտավորապես 1800 մ բարձրության վրա (նկ. 1): Այն գտնվում է գետի հունից վեր ընկած հարթավայրի վրա՝ դաշտից հովիտ տանող ճանապարհին: Սուրբ Առաքելոց եկեղեցին՝ վանական համալիրի գլխավոր կառույցը, գտնվում է այս ընդարձակ տարածքի արևմտյան լանջին, մինչդեռ Սուրբ Թադեոս մատուռը դեպի արևելք է ընկած:

Վանքի պարիսպներն այնպես են դասավորված, որ եկեղեցու արևելյան ֆասադը մտում է պարսպի շրջագծից դուրս: Եկեղեցին գտնվում է վանքի ներքին բակի հյուսիս-արևելյան կողմում (նկ. 4): Սուրբ Ստեփանոս մատուռը (1663) կցվել է հարավային պարսպին, իսկ ավելի ուշ Սուրբ Գևորգ մատուռը կցվել է հյուսիսային պարսպին (Տոնապետյան, Պ. Թիերի 1957, 559):

Վանքի գլխավոր մուտքը արևմտյան պարսպի միջով է՝ զանգակատանը հարմարեցված: Բակի շուրջը տարբեր չափերի 16 խցեր կան: Պարսպի հարավային պատի արտաքին անկյունների աշտարակներն ուշագրավ են: Հայտնի է, որ ներքին բակում մոտավորապես

Նկ.5 Սուրբ Առաքելոց վանք, տեսարան արևելքից

Նկ. 6 Սուրբ Առաքելոց եկեղեցի, պատերի և կամարների աղյուսե շարվածքը

3-4 մետր բարձրությամբ խաչքարեր են եղել (Քերթմենջյան 2014, 11): Համալիրը բաղկացած է երկու մատուռներից, գլխավոր եկեղեցուց, ժամատնից և զանգաշտարակից (նկ. 4):

Սուրբ Առաքելոց եկեղեցի

Սուրբ Առաքելոց եկեղեցին կառուցվել է 11-րդ դարում. կենտրոնագմբեթ խաչաձև հատակագծով կառույց է (նկ. 5): Քառակուսի հատակագծով գավիթը կցված է եկեղեցու արևմտյան պատին: Զանգակատունը գավիթի արևմտյան կողմում է: Աբսիդի հյուսիսային և հարավային ավանդատներում Աստվածաշունչը շարադրած առաքյալներ Մարկոսի և Ղուկասի կենոտաֆներն են (հղում 5):

Որմնադիր եկեղեցու հատակագիծը արտաքուստ քառակուսի է՝ 10x10 մ չափերով: Արևմուտքում գլխավոր մուտքից հյուսիս և հարավ սրածայր կամարներով բացվածքները տանում են դեպի քառակուսի սենյակներ (1,83x1,83 մ): Կենտրոնական հատվածը, որը նույնպես քառակուսի է, համապատասխանում է գմբեթի ներսի չափերին՝ 4,50x4,50 մ: Աբսիդի խորությունը 3 մ է, իսկ լայնությունը՝ 4,5 մ: Աբսիդի երկու կողմերում գտնվող երկհարկ ավանդատները (1,35x3,00 մ) ծածկված են գլանաձև թաղերով: Ավանդատների՝ դեպի արևմուտք նայող մուտքերը տանում են դեպի կառույցի կողային խաչաթևեր (2,70x3,74 մ):

Եկեղեցում պատի հաստությունը տատանվում է 1,30-1,50 մ միջակայքում: Պատերն ու կամարները աղյուսաշեն են: Առանձին միավորների չափերը աղյուսների համար տատանվում են 5-5,5x27x27 սմ միջև, իսկ կիսաաղյուսների դեպքում՝ 4-4,5x12,5x26 սմ միջև, մինչդեռ միացման կետերի հաստությունը մոտավորապես 2-2,5 սմ է: Շաղախը պարունակում է սպիտակ կրաքարի, քարի ու աղյուսի մանր կտորների խառնուրդ: Ինչպես նկատել ենք դաշտային աշխատանքների ժամանակ, ինտերիերի պատերը երեսպատված էին սվաղով և ներկով (նկ. 6): Կամարակապերը միմյանց կապող ձողերի համար նախատեսված անցքեր են նկատվում: Ութանիստ գմբեթի տրոմպների որոշ հատվածներ դեռ կանգուն են: Բարձր գմբեթն ու դրան ամրացված եռանկյունաձև պրիզմայով տանիքը փլուզվել են:

Քարեպատ տանիքը և թմբուկը վերանորոգվել են պատմական անցյալի տարբեր փուլերում (Քերթմենջյան, 2014, 11): Այս տարրերը չեն պահպանվել:

Նկ.7 Զանգակատան մնացորդները

Նկ.8 Սուրբ Առաքելոց եկեղեցու արևմտյան ճակատը և Սուրբ Ստեփանոս մատուռի կամարը

Ժամատուն և զանգակատուն

Վանական համալիրի ժամատունը կառուցվել է 1555 թվականին վանքի վանահայր Բիթլիսցի Կարապետի (Կարապետ Բաղիշեցի) գլխավորությամբ: Այն կից է գլխավոր եկեղեցու արևմտյան մուտքին: Ուղղանկյուն տարածությունը կազմակերպված է չորս անկախ սյուներով, որոնք ծածկված են կամ թաղով կամ փոքր գմբեթով:

Հովհաննես ավագ քահանա Վարդապետը 1791 թվականին կառուցել է զանգակատունը՝ ժամատնից դեպի արևմուտք: Եռահարկ զանգակատունն ուներ ութանիստ ռոտոնդա (Ոսկիյան 1953, 26-27; Թիերի 1976, 246-7; ՀՍՀ 1981, 658; Մարանչի 2016, 125): Առաջին հարկը պահպանվել է. հատակագծում դրա չափերը մոտավորապես 4,40x4,40 մ են (նկ. 7): Առաստաղը ծածկված է խաչաձև թաղով: Պատերի արտաքին երեսները հղկված էին, իսկ ներսի երեսները՝ խճաքարերով էին մշակված: Որմասյուները գլխավոր մուտքին կից էին: Ֆասադի ամենաբարձր մասում պատի հարթությունից աստիճանաբար դուրս եկած քիվն է արտահայտված:

Նկ.9 Սուրբ Թադևոս մատուռ



Սուրբ Ստեփանոս մատուռ

Այն հարում է Սուրբ Առաքելոց եկեղեցու հարավային պատին: Աղբյուրները վկայում են, որ այն կառուցվել է 1663 թվականին ավելի հին եկեղեցու ավերակների վրա, որը կործանվել էր Թեմուրի ուժերի կողմից 14-րդ դարի վերջում (ՀՍՀ 1981, 658): Մատուռը միանավ է և ծածկված է գլանաձև թաղով (Թիերի 1976, 246-7): Այսօր կառույցի մեծ մասը թաղված է գետնի տակ. տեսանելի է միայն գալարաձև թաղի վերին հատվածը (նկ. 8):

Նկ. 10 Սրբատաշ քարի և աղյուսի որմադրության միավորներ

Նկ. 11 Մուքարնասներով զարդարված տրոմպներ

Սուրբ Գևորգ մատուռ

Այն գտնվում է Սուրբ Առաքելոց եկեղեցուց հյուսիս: Մատուռը հիշատակվում է գրավոր աղբյուրներում, սակայն դրա ավերակները փլված գմբեթի և պատերի տակ են:

Սուրբ Թադևոս մատուռ

Սուրբ Թադևոս մատուռը գտնվում է վանքի պարսպապատից դուրս՝ 300 մ հյուսիս-արևելք: Շինությունը միանավ է և խաչաձև հատակագիծ ունի (նկ. 9): Ենթադրվում է, որ կառույցը կառուցվել է 12-16-րդ դարերում (Թիերի 1976, 251): Դրա տրոմպների վրայի մուքարնասները ենթադրում են կապը ուշ արտուքյան շրջանի ճարտարապետական ոճի հետ (Քերթմենջյան 2014, 12): Գմբեթը արտաքուստ հարդարված է բուսական, խաչային և առյուծների բարձրաքանդակներով: Այն կարող է կառուցված լինել նաև 13-14-րդ դարերում՝ ելնելով այդ ժամանակաշրջանի կառույցների հետ ոճական նմանություններից (Հովհաննիսյան 2016, 126):

Կառույցի հատակագիծը 6,70x6,60 մ է: Ներսի հատվածը գրեթե քառակուսի է (3,60x3,75 մ) և ծածկված է բրգաձև գմբեթով: Հյուսիսից հարավ տարածությունը (մոտ 1,32x3,05 մ) և աբսիդից դեպի մուտքն ընկած առանցքը միանալով ստեղծում են խաչաձեւ հատակագիծ: Արտաքին ճակատներն ամբողջությամբ երեսպատված են մանուշակագույն տուֆով: Ինտերիերում կենտրոնական տարածությունը (բացառությամբ քարե կամարների), տրոմպները և գմբեթը աղյուսաշեն են: Տրոմպները զարդարված են մուքարնասներով: Տրոմպների միջև տարածությունը հարդարված է կամարակապ դեկորատիվ խորշերով (նկ. 10-11):

Նկ. 12 Պատուհան և աղյուսի միահյուսված շարվածք

Գմբեթի վերին մասում պատուհան կա: Պատուհանը վերևից շրջանակող աղյուսի շարվածքը տարբերվում է մնացյալ շարվածքից. այն որոշ մասերում միահյուսվում է (նկ. 12): Գմբեթի արտաքին երեսը ութանիստ է և երեսպատված սրբատաշ քարով: Աբսիդը 3,11 մ լայնություն և 2,05 մ խորություն ունի: Դրա հյուսիսում և հարավում երկու սիմետրիկ խորշեր կան (50x42 սմ): Աբսցիսի աղյուսե շարվածքը սվաղված է:

Սուրբ Թադևոս մատուռի կառուցման համար օգտագործված աղյուսների չափերը տատանվում են 5x20x30 սմ, 5.5x19.5-20x32 սմ և 5.5x14x27 սմ միջև: Հորիզոնական հանգույցների հաստությունը 2-2,5 սմ է, ինչպես Սուրբ Առաքելոց եկեղեցունը: Շաղախը պատրաստված է սպիտակ կրաքարից:

Թմբուկի և բրգաձև գմբեթի արտաքին զարդաքանդակները բավականին ուշագրավ էին. դրանք ներառում էին ծաղկամոտիվներով, վարդյակներով, հյուսվածքներով զարդարված խաչեր, ինչպես նաև առյուծի և թռչունների պատկերներ: Այս մանրամասներն ու զարդանախշերը տեսանելի էին մինչև 20-րդ դարի սկիզբը (Թիերի 1976, 250-253; ՀՍՀ 1981, 658; Մարանչի 2016, 126):

Ներկա վիճակ

Այսօր այս տարածք կարելի է հասնել Քեփենեկ (Արագ/Արակ) գյուղով: Վանքը գտնվում է լայն հարթավայրի վրա՝ զառիթափ լանջի գագաթին: Սուրբ Առաքելոց եկեղեցին գտնվում է տեղավայրի արևմտյան հատվածում (այն փոքր-ինչ թեք է)՝ բլրակի վրա (նկ. 1): Սուրբ Թադևոսը արևելյան հատվածում է, որը համեմատաբար հարթ է. այնտեղից ազդեցիկ տեսարան է բացվում դեպի Մշո դաշտ (նկ. 13):

Սուրբ Առաքելոց վանքի գմբեթը փլուզվել է: Պատերի և ինտերիերի հիմական մասերը պահպանվել են, ուստի ընդհանուր հատակագիծը հասկանալի է: Զանգակատան պատերն ու մուտքի հարկաբաժնի առաստաղը պահպանվել են: Սուրբ Ստեփանոս եկեղեցու բոլոր քարե կամարները, բացառությամբ կամարների վերին հատվածի, թաղված են հողի շերտի տակ: Սուրբ Գևորգ եկեղեցին մակերեսին անտեսանելի է: Տարբեր շենքերի քարերը սփռված են տեղանքում և շրջակայքում:

Սուրբ Թադևոս մատուռը Սուրբ Առաքելոց եկեղեցու և տեղանքում գտնվող մյուս շինությունների համեմատ ավելի լավ վիճակում է: Շինարարական տեխնիկայի հետքերը և օրիգինալ մանրամասներն ավելի տեսանելի են:

Տեղացիների հետ զրույցները հուշում են, որ տեղավայրը մինչ համաճարակը ուխտավորների հաճախակի այցելությունների կանգառ է եղել:

Նկ. 13 Սուրբ Թադևոս մատուռը և շրջապատող հարթավայրերը

Ռիսկերի վերլուծություն և առաջարկություններ

Վանական կառույցները գրանցված են որպես մշակութային արժեքներ, հետևաբար դրանց վերականգնման և պահպանման գրաֆիկական նախագծեր պետք է մշակվեն: Նշված տեղանքը միջնադարում այստեղ կրոնական շինությունների կառուցման մասին անհրաժեշտ տեղեկատվություն է տրամադրում: Բավական արժեքավոր է նաև աղյուսի մանրամասնների ուսումնասիրությունը:

Պահպանման աշխատանքներն անհրաժեշտ են՝ ընդհատելու հնավայրի ամբողջական փլուզման շարունակական գործընթացը: Ճարտարապետական պահպանության ծրագրի շրջանակներում կարելի է գաղափարներ մշակել այցելուների՝ հնավայր ապահով ժամանման և ճանաչողության համար: Տեղանքի հնագիտական արժեքը ևս պետք է գիտակցվի: Մշակույթի և զբոսաշրջության նախարարության վերահսկողության ներքո իրականացված պեղումները հնարավորություն կտան ավելի շատ տեղեկություններ հաղորդել հնավայրի մասին, ինչպես նաև բացահայտել դրա բաղադրիչները, որոնք ներկայումս գտնվում են հողի շերտի տակ են:

Մոլլաքյանդի հիմական դպրոց և գերեզմանատուն

Բուլանըքի գավառ, Մոլլաքյանդ գյուղ	Կառուցման ժամանակաշրջան/տարեթիվ՝ **1818**
GPS՝ **38°57'09.2"N 42°04'09.3"E**	Ներկայիս գործառույթ՝ **լքված**
Գրանցման տարեթիվ և համար՝ Էրզրումի Մշակութային ժառանգության պահպանության շրջանային վարչություն, 27.04.1988 – 46	

Պատմություն

Այսօր Մոլլաքյանդը (Մուլաքենդ, Մենալա Քենդ) գտնվում է Բուլանըք գավառակում՝ Նազիկ լճից 11 կմ հյուսիս-արևմուտք: Բնակավայրը գտնվում է Բլեջան լեռներից արևմուտք և Լիզ գետի ավազանում: Տեղացիներին այն ավելի հայտնի է որպես Մելեքենդ, ոչ թե Մոլլաքյանդ:

Ա–ԴՈ-ն (1912, 106) հայտնում է, որ գյուղում 25 տուն հայ և 40 տուն քուրդ է եղել: Պատրիարքարանի արձանագրությունները նշում են, որ գյուղում ապրում էր 200 հայ՝ 20 տնտեսությունում, ինչպես նաև 780 քուրդ բնակիչ, և այնտեղ եկեղեցի կար (Գևորգյան 2012, 503; ՀՀՇՏԲ 1991, 857): Այս կրոնական կառույցը գրանցվել է որպես Սուրբ Հակոբ եկեղեցի: Եկեղեցին չի պահպանվել, սակայն պահպանվել են բազմաթիվ կառույցներ, որոնք արտացոլում են սելջուկյան դարաշրջանի բնակավայրի ճարտարապետական կերտվածքը:

Մոլլաքյանդը շատ հին բնակավայր է, որը սելջուկյան ժամանակաշրջանում կարևոր կենտրոն է եղել. Այս վայրում է կառուցվել իր ժամանակի ամենամեծ մեդրեսեն (Ասնա 2018, 330): Մեդրեսեի գլխավոր մուտքի վերևի արձանագրությունը վկայում է, որ այն կառուցվել է 1818 թվականին (Հիջրայի օրացույցով՝ 1223 թ.) (Ասնա 2018, 332):

Ճարտարապետություն

Մոլլաքյանդ գյուղի կենտրոնում գտնվող պատմական կառույցների խումբը կարելի է համալիր համարել, որը ներառում է մզկիթ, լվացարան, մեդրեսե, գերեզմանոց, կոթողային դամբարան և պալատական մաս (Էվրեն

Նկ. 1 Մոլլաքյանդի գերեզմանատուն, մուտքի պորտալ և հարակից քարաշեն կառույցներ



1997, 1-22): Յուրաքանչյուր կառույցի շինարարության ժամանակաշրջանները, փոփոխությունները և վիճակը տարբեր է: Գյուղի մնացած հատվածում կան նաև այլ տիպաբանության շինություններ:

Գյուղի կենտրոնում գտնվող պատմական գերեզմանատունը մոտավորապես 20000 քմ տարածք է զբաղեցնում (նկ. 1): Գերեզմանատունն իր շուրջը ոլորված ոչ ասֆալտապատ ճանապարհների համեմատ մի փոքր ավելի բարձր դիրքավորվածություն ունի, հետևաբար տարածքի կողային հատվածները որմնադիր են: Կան հարյուրավոր գերեզմանաքարեր և մի քանի «բաց կոթողային դամբարաններ» կամ մասնավոր, պարփակված տարածքներ, որոնք պարունակում են բազմաթիվ գերեզմաններ՝ հաճախ ականավոր ընտանիքների (Քըլավուզ 2020, 393) (նկ. 2): Ուղղանկյուն գերեզմանաքարերը կոթողային են՝ շնորհիվ քարի հաստության և հարդարանքի: Դրանց մեծ մասը տեղական քարից է, սակայն, վկայությունների համաձայն, մի քանիսը կերտվել են սպիտակ մարմարից: Նաև վկայություններ կան գերեզմանատանը քարարկղային դամբարանների առկայության մասին: Ուղղանկյուն, բաց դամբարանները առանջնանում են մյուս գերեզմանների շարքում , քանի որ շրջանակված են 1-1,5 մ բարձրությամբ որմնապատերով: Այս պատերից մի քանիսը վարպետությամբ են շարված և պսակվում են քիվերով: Պատերի

Նկ. 2 Մոլլաքյանդի գերեզմանատուն

ներսի հատվածներում տեսանելի են փոքր խորշեր:

Տապանատան հյուսիսային կողմում արևմուտքից նրան հարում է միահարկ քարաշեն կառույցով արտահայտված շքամուտքը (նկ. 3): Տարածքի հյուսիսային եզրով շարունակվող ասֆալտապատ ճանապարհը մի խումբ կառույցների և մզկիթի միջև է գտնվում: Շքամուտքը և կառույցը արևմուտքից հարում են ճանապարհին, բայց արևելակողմում ճանապարհից փոքր-ինչ առանձնացած են: Հետևաբար մուտքի դիմաց փոքրիկ գոգավորություն է ձևավորվել:

Շքամուտքը հատվածային կամարակապ բացվածք է՝ ներկառուցված սրածայր կամարակապ խորշի մեջ. այն ուշագրավ է իր

Նկ. 3 Մոլլաքյանդի գերեզմանատուն, շքամուտք և հարակից քարաշեն կառույցներ, հյուսիսային ճակատ

Նկ. 4 Մոլլաքյանդի գերեզմանատան քարաշեն կառույցը, պատի սրբատաշ շարվածքի մեջ խորշերի դասավորությունը

զանգվածով, ձևով, սրբատաշ քարերի շարքերում ակնհայտ վարպետությամբ (լայնությունը՝ 5,20 մ)։ Հնարավոր է, որ սա մեդրեսեի մոնումենտալ դարպասն է եղել, որը չի պահպանվել։ Համեմատելով տարածաշրջանի այլ մոնումենտալ դարպասների հետ՝ դրա ճարտարապետական հարդարանքները կարելի է համեստ համարել։

Շերտավոր դասավորվածության հետքեր, որոնց հաճախ ենք հանդիպում սելջուկյան մոնումենտալ դարպասների կողային հատվածներում, տեսանելի են նաև այս ֆասադի վրա։ Ֆասադի արտաքին մակերեսը (վերին շերտը) անկյուններով բոլորվելով, երկրաչափական և պարզ ակոսով զարդանախշը տարածվում է մինչև միջին շերտը։ Այս շերտի վրա են սրածայր կամարը, նրա վերին եզրով շարունակվող նախշազարդ զարդերիզը և անկյուններում գտնվող վարդյակները։ Թռիչքի մակարդակի վրա զարդանախշ, հորիզոնական հարդարանքը շարունակվում է դեպի ներս՝ հասնելով ներքին շերտին, որտեղ գտնվում է բացվածքը։ Բացվածքը ծածկված է սեգմենտային կամարով, որի քարերի համակցման հատվածները ատամնավոր են։ Կամարի վերին կողմը դուրս եկած ճոխ հարդարանքով զարդերիզ է։ Այս եզրագծի վերևում՝ սրբատաշ խորշի մեջ, տեղակայված է մարմարե արձանագրություն։ Ավելի ցածր մակարդակում բացվածքի երկու կողմերում բարձր հարթակ է։ Շքամուտքի վերնամասը երիզված է սրբատաշ քարից քիվով, որոնք ամրացված են ինը կրոնշտեյններով։

Շքամուտքին արևմուտքից հարող քարաշեն կառույցը (արտաքին չափսերը՝ 8,80x12,25 մ) հողածածկ տանիք է և բաղկացած է երեք մասնաբաժիններից։ Դրա քիվերը շքամուտքի քիվից մոտ մեկ մետր ցածր են։ Համաչափ ճակատայինի ֆասադի կենտրոնում մուտք կա, որի վերևում մեկ փոքրիկ պատուհան և պատուհաններ՝ յուրաքանչյուր կողմում։ Սրբատաշ ֆասադի բոլոր բացվածքները հարթ կամարունքեր ունեն։ Պատուհանների ճակատաքարերը բետոնից են։ Յոթ աստիճաններով ուղիղ սանդուղքը տանում է դեպի մուտքի դիմաց գտնվող հարթակ։ Միափեղկ երկաթյա դուռը տանում է դեպի երկար, ուղղանկյուն դահլիճ (ներքին չափսերը՝ 1,95x7,20 մ), որը կողքային երկու այլ տարածքներ (ներքին չափսերը՝ 3,55x7,20 մ) տանող երկու բացվածքներ ունի։ Շենքի հատակագիծը համաչափ է և հյուսիս-հարավ առանցքի վրա է գտնվում։ Դրա հիմնապատերը 94 սմ են, իսկ բաժանարար պատերի հաստությունը 78 սմ է։ Ներսույթի պատերը կարծես կոպտատաշ քարից են։ Հողածածկ տանիք հենվում է 40-45 սմ ընդմիջումներով արևելք-արևմուտք առանցքի երկայնքով դասավորված փայտե շրջանաձև դասավորությամբ գերանների (տրամագիծը՝ 20 սմ) վրա։ Առաստաղի հեծանների վերնամասը երեսպատված է փայտերով, որին հաջորդում է հողի հաստ շերտը։ Պատերի վրա մի շարք սրածայր կամարակապ, սրբատաշ քարի շարվածքով խորշերի մասցորդներ են նկատվում (նկ. 4)։

Շքամուտքերի և որմնադիր կառույցի արտաքին ճակատները ողորկված են։ Երկու դեպքում էլ անդեզիտով սրբատաշ շար է կիրառված. շքամուտքի շատվածքի վարպետությունն անթերի է։ Սրբատաշ քարերի ձևը, ինչպես նաև հորիզոնական և ուղղահայաց միակցումների նրբությունն ու ճշգրտությունը հեռու են կատարելությունից։ Այս իրավիճակը հուշում

է, որ շինությունները, հավանաբար, տարբեր ժամանակաշրջաններում են կառուցվել: Լուսամուտների բացվածքների վերևում գտնվող երկաթբետոնե ճակատակալները հավանաբար հետագա միջամտությունների արդյունք են:

Ներկա վիճակ

Ցանկացած հուշում, որը կարող էր նպաստել շքամուտքի սկզբնական վիճակի ճշգրիտ գնահատական տալուն, կորսվել է վերջին շրջանի վերանորոգման և միջամտությունների ժամանակ: Կառույցի արևելյան եզրի և հարավային ճակատի որմաշարը և մանրամասները կորցրել են իրենց նախնական ձևը, հետևաբար հնարավոր չէր ճշտել առավել ընդարձակ հատակագիծը, որի մաս եղել է նաև շքամուտքը: Անհնար էր նաև դիտարկումներ անել կառույցի սկզբնական հատակագծի վերաբերյալ, որն այլևս գոյություն չունի, քանի որ շքամուտքից այն կողմ տարածքը ի վերջո լցվեց գերեզմաններով: Մյուս բարդությունն այն է, որ տապանատան և այլ կառույցների մասին գրավոր աղբյուրները խիստ սահմանափակ են: Ներկայումս գերեզմանատան հետ կապված ամենամեծ խնդիրը անվտանգությունն է: Գյուղապետը նշեց, որ նախկինում գերեզմանաքարեր ու արձանագրություններ են գողացվել այդ տեղանքից, և որ այժմ էլ գողություններ տեղի ունենում են:

Շքամուտքի սրբատաշ շարի վրա բորբոս է հայտնվել, հավանաբար, նախորդ վերանորոգումների ժամանակ ոչ պատշաճ նյութերի օգտագործման պատճառով: Նույն խնդիրը նկատվել է ֆասադի շարվածքում: Ենթադրվում էր՝ դրա պատերի մեջ ներթափանցած ջուրը հետևանք է շինության շրջակայքից ոչ պատշաճ ջրահեռացման, ինչպես նաև փլված տանիքի պատճառով: Կառույցների առջևի փլատակների կույտերը մեկ այլ խոչընդոտ են ջրի հեռացման համար, բացի այդ դրանք փսասում են շինության գեղագիտական իսկության ընկալմանը:

Կառույցի փլուզված տանիքն ամենակարևոր խնդիրներից է: Դրա արդյունքում կառույցը բնական աղետների դեմ խոցելի է. ցանկացած վատթարացում և փսաս արագորեն սրում են իրավիճակը: Ներքին տարածությունը լցված է տանիքի փայտե մասացորդներով և հողաթմբերով: Ի հավելումս նշվածների, լուսամուտների շուրջ շրջանակների բացակայությունը անվտանգության խնդիրներ է ստեղծել:

Ռիսկերի վերլուծություն և առաջարկություններ

Հնարավոր է հարստացնել Մոլլաքյանդ գյուղի գերեզմանատան, կառույցների և շքամուտքի մասին տվյալները՝ արխիվային հետազոտությունների վրա հիմված ընդարձակ գրականության միջոցով: Գերեզմանատան անվտանգության բարելավման առաջարկները պետք է քննարկվեն և իրականացվեն գյուղապետի հետ համաձայնեցված: Ավելին, պետք է իրականացվի գերեզմանատան տապանաքարերի համապարփակ գրանցում, ներառյալ եռաչափ փաստագրումը, դրանց զարդանախշերի և արձանագրությունների գնահատում փորձագետների կողմից: Նման ծրագրի արդյունքները պետք է լայնորեն տարածել և ներկայացնել հանրությանը: Բացի այդ, խորհուրդ է տրվում գերեզմանատան համար սահմանել արահետ՝ տապանաքարերը պատահաբար չփսասելու համար: Այս ուղին պետք է մշակվի գերեզմանատան և դրա շրջակայքի յուրահատկությունը պաշտպանելով, ինչպես նաև պահպանման և նախագծման աշխատանքները հաշվի առնելով:

Շքամուտքի վրայի բորբոսի պատճառը պետք է ճիշտ հասկանալ: Այնուհետև, անհրաժեշտության դեպքում, նախկին միջամտությունները պետք է վերացվեն և համապատասխան նյութեր օգտագործվեն կառույցը վերանորոգելու համար՝ առանց հետագա փսասներ պատճառելու: Նախքան նման վերանորոգումներ իրականացնելը, անհրաժեշտ կլինի վերականգնման համալիր ծրագիր մշակել: Կառույցի մասին գիտելիքները հարստացնելու համար ոչ ինվազիվ մեթոդների հնարավոր կիրառումը նույնպես պետք է դիտարկվի այս գործընթացում:

Քարաշեն կառույցը երկար ժամանակ ակնհայտորեն անտեսված է եղել. պահպանության ծրագրի շրջանակներում պետք է պաշտպանիչ տանիք կառուցվի՝ հետագա վատթարացումները դանդաղեցնելու/կասեցնելու համար:

Սուրբ Կարապետի վանք, Գլակավանք, Իննակնյան վանք, Զանգալի եկեղեցի

Կենտրոն (Centrum) թաղ, Չենգիլլի գյուղ (Յուքարը/Վերին Յոնգալը գյուղակ)	Կառուցման ժամանակաշրջան/տարեթիվ՝ **4-րդ դ.**
GPS՝ **38°57'38.28"N 41°11'30.07"E**	Ներկայիս գործառույթ՝ **ավերակ**
Գրանցման տարեթիվ և համար՝ **Էրզրումի Մշակութային ժառանգության պահպանության շրջանային վարչություն, 27.06.1990 – 248**	

Պատմություն

Սուրբ Կարապետ վանքը վաղ քրիստոնեության շրջանում եղել է հայ քրիստոնեական համայնքի ամենահին և կարևորագույն կրոնական կառույցը, այն նաև հարավային Հայաստանի հոգևոր կենտրոնն էր (նկ. 1-2)։ Համաձայն տեղական ավանդազրույցների՝ այստեղ առաջին եկեղեցին՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչն է կառուցել։ Սուրբ Գրիգորը Կեսարիայից բերեց Սուրբ Կարապետի (Սուրբ Հովհաննես Մկրտչի) և Սուրբ Աթանագինե եպիսկոպոսի մասունքները, քանդեց Դեմետրին և Գիսանեին նվիրված տաճարները Քարքե լեռան (Հավատամք) հարավ-արևելյան լանջերին՝ Աշտիշատի ([Դերիկ]Յուջեթեփե) մոտ և 4-րդ դարում կառուցեց առաջին քրիստոնեական սրբավայրը (վկայարան), որն ի վերջո ընդլայնվելու և վերածվելու էր վանքի։ Վանքի առաջին վանահայրը Զենոբ Գլակն էր (302-303 թթ.)։ Նրա մահից հետո վանքը սկսեց կոչվել նաև Գլակավանք՝ ի հիշատակ նրա։ Արձանագրվել է, որ վանքը, 602 թվականին տեղի ունեցած երկրաշարժի ժամանակ ավերվելուց հետո, վերակառուցվել է Մուշեղ Մամիկոնյանի կողմից (Ոսկիյան 1953, 149, 167)։

Վանքը, որտեղ ապրում էր 398 քահանաների հոգևոր միությունը, մինչև 8-րդ դարի վերջը եղել է Տարոնի Մամիկոնյան իշխանների մասնավոր սեփականությունն ու հագստարանը։ Այստեղ թաղված իշխաններից մի քանիսի՝ Գայլ Վահանի, Սմբատի և Վահան

Նկ. 1 Սուրբ Կարապետ վանքը (Բոդիլ Բյորն արխիվ)

Նկ. 2 Սուրբ Կարապետ վանք, տեսարան արևմուտքից (Բալու-Խարբերդ 1878, V. II)

Նկ. 3 Սուրբ Կարապետ վանք, զանգակատուն, Սուրբ Ստեփանոս և Սուրբ Կարապետ եկեղեցիներ (Լինչ 1913)

Մամիկոնյանի տապանաքարերը տեսանելի էին մինչև 20-րդ դարի սկիզբը (Գևորգյան-Փաբուջյան 2012, 484; Վարդանյան-Զարյան 1981, 660; Բալյան 2008, 2008, 250, Թիերի 1987, 123-124): Ըստ Մարանչիի (2016, 126)՝ սա, հավանաբար, կապված է 940-ական թվականների՝ Բագրատունիների օրոք, վանական շարժման վերելքի հետ:

Հայտնի է, որ գյուղացիներից ոմանք 14-րդ դարի վերջին Թեմուրի (Լենկթեմուր) զորքերից պաշտպանվելու նպատակով ապաստանել են ամրացված Սուրբ Կարապետ վանքում: Նշվում է նաև, որ վանքը եղել է մշակութային կենտրոն, որտեղ 14-15-րդ դարերում մանրանկարներ էին ստեղծվում (Մարանչի 2016, 126): 15-րդ դարի երկրորդ կեսից սկսած վանքում մանրամասն վերանորոգումներ են իրականացվել գրեթե ամեն հաջորդ դարում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժերից հետո: 1709 թվականի ավերիչ երկրաշարժը մեծ փսաս հասցրեց վանական կառույցներին, որոնք վերանորոգվեցին վանքում բնակվող երկու հոգևորականների՝ Հովհաննես Կոլոտի և Գրիգոր Շղթայակրի ջանքերով, ովքեր երկուսն էլ հաջորդող տարիներին հայոց պատրիարքներ դարձան (Թիերի 1987, 124; Մարանչի 2016, 126): 18-րդ դարի վերջին (1784 թ.) տեղի ունեցած երկրաշարժը ավերեց գլխավոր եկեղեցին, զանգակատունը, պարիսպները և հնավայրում գտնվող որոշ այլ կառույցներ: Արդյունքում, 1787-88 թվականներին հիմնարար վերակառուցման աշխատանքներ տեղի ունեցան (նկ. 3):

Սուրբ Կարապետ վանքը կարևոր ուխտատեղի և այցելության վայր էր, չնայած բազմիցս թալանվել էր: Էվլիյա Չելեբին՝ հայտնի ճանապարհորդ, ով ապրել է 17-րդ դարում, գրել է, որ վանքը վայելում էր նաև մահմեդական համայնքի հարգանքը, որը տասնյակ հազարավոր մարդկանց թվում միանում էր քրիստոնյա ուխտավորներին, որոնք հավաքվում էին համալիրում՝ նշելու Սբ. Հովհաննես Մկրտչի ամենամյա տոնը, ում անունով էլ

Նկ. 4 Տոնակատարություն վանքում, լարախաղացներ (Գեղունի 1903, 1-10)

ստեղծվել է համալիրը (Գևորգյան-Փաբուջյան 2012, 484): Նա նաև նշում է, որ վանքը և նրա շրջակայքը դարձել են տոնավաճառ, ուր հատուկ առիթներին այցելում էին վաճառականները, լարախաղացները և աշուղները (նկ. 4):

Հայտնի հայ ճանապարհորդ Սիմեոն Լեհացին՝ (1997, 119-120) Էվլիյա Չելեբիի ժամանակակիցը, այդ տարածքում կատարած իր ճանապարհորդությունների ընթացքում այցելել է Սուրբ Կարապետ: Նա գրի է առել տեղացիների պատմած առասպելներից մի քանիսը, նկարագրել վանքն ու շրջակայքը, ինչպես նաև դրա աշխուժությունը. «... գմբեթին կից՝ Իննակյան աղբյուրն էր, իրար մոտիկ [ակունքներով], ազնիվ ու գեղեցիկ ջրեր: Եվ մի գուռ՝ մյուսներից մեծ, ուր, ասացին, Լուսավորիչը մկրտություն է արել: Երբ խմում էինք, [ջրի] սաստիկ սառնությունից չկարողացանք երեք կում անել: Եվ ավելի առաջ գնալով՝ տեսանք հազար ու ավելի թոնիր ու ակութ ուխտավորների համար, որոնք այնտեղ խորովում, պիրյան են եփում, որովհետև ամբողջ աշխարհից գալիս են այստեղ՝ հեռու և օտար երկրներից, Ուռումելից և Լեհաստանից ԲՌ (2000), ԳՌ (3000) հոգի կլինի: Իսկ ուխտը Վարդավառի օրն է»:

Բալյանը (2008, 249) անդրադարձել է վանքի շքեղ գմբեթներով պսակված մայր եկեղեցու գեղեցիկ ճարտարապետությանը և նշել, որ հնարավոր է՝ այն «Չանլը քիլիսե» (նշանակում է «Զանգով եկեղեցի») է կոչվել Մշո դաշտի հարևան քուրդ և թուրք ժողովուրդների կողմից՝ գմբեթների պատճառով: Ոսկիյանը (1953, 150) գրում է, որ կառույցը հայտնի է եղել որպես «Չանլը եկեղեցի» կամ «Չանլը վանք»՝ իր հոյակապ զանգակատան և հարթավայրում հնչող զանգերի ղողանջների պատճառով:
Սուրբ Կարապետ վանքը 20-րդ դարի սկզբին ընդունել է հազարավոր ուխտավորների Ռուսաստանից, Իրանից և Օսմանյան կայսրության տարբեր նահանգներից: Ուխտավորներից ստացված հասույթի ու նվերների շնորհիվ վանքը զգալիորեն հարստացել է մինչև 1915-1916 թվականների ավիրումը: Վանքի կարևորագույն գանձերը փրկվել, պահպանվել և ի վերջո տեղափոխվել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Դրանց թվում էր արծաթազոծ մասնատուփը, որտեղ պահվում էր Սուրբ Հովհաննես Մկրտիչի մասունքակիր աջը (Մառանջի 2016, 127; Թիերի-Տոնապետյան 1987, 445):

19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի բնակչության քանակի մասին հիշատակությունները ցույց են տալիս, որ համալիրը 205 հայ բնակիչներով բնակավայր էր, որտեղ կար 71 աշակերտ ունեցող դպրոց: Չենգիլլի գյուղը, որը հայտնի է նաև որպես Յուքարը/Վերին Յոնգալը գյուղ, հիմվել է այն տարածքում, որտեղ նախկինում վանքն է եղել: Վանական կառույցների սրբատաշ քարերը վերաօգտագործվել են գյուղական տների շինարարության մեջ, որոնք կառուցվել են բարձրորակ քարերով՝ հարդարված բարձրաքանդակներով (նկ. 5-6):

Ճարտարապետություն

Սուրբ Կարապետ վանքը գտնվում է Մուշի կենտրոնական բնակավայրից 50 կմ հյուսիս-արևմուտք՝ 2100 մ բարձրության վրա: Ներկայումս վանքը գտնվում է Չենգիլլի գյուղի (Զանգերով եկեղեցու գյուղ) բնակավայրում, որը Յուքարի Յոնգալը գյուղի գյուղակ է (նկ. 7): Վանքը կոչվում է նաև Իննակնյան վանք՝ Արևելյան Եփրատի հովիտին հարող Իննակնյան («Ինը աղբյուրներ») լեռների անունով:

Նկ. 5 Փլուզված զանգակաշտարակը և Մայր եկեղեցական համալիրի արևմտյան ճակատը 1915 թվականից հետո (Թիերի 1983, 401)



Նկ.6 Սուրբ Կարապետ վանքը 2000-ական թթ.

Նկ.7 Չենգիլլի գյուղ, տեսարան հարավ-արևմուտքից

Կառույցների մեծ մասը փլուզված են, քարերը օգտագործվել են ավերակների վրա գյուղական տներ կառուցելու համար: Մայր եկեղեցու ստորգետնյա հատվածների և դեռևս կանգուն պատերի դժվարամատչելիությունը խանգարում են տարածաշրջանի ամենահայտնի վանական համալիրի մասին տվյալներ հավաքելուն և սահմանափակում մանրամասն ուսումնասիրությունների հնարավորությունները: Համալիրի կառուցվածքը հասկանալու համար առավել վաղ ժամանակների հնավայրի հատակագծեր են օգտագործվել դաշտային աշխատանքների ընթացքում: Դեռևս կանգուն վանք այցելած ճանապարհորդների օրագրությունները, ինչպես նաև դաշտային աշխատանքի ընթացքում կատարված զննությունները դիտարկվել են այս հնավայրն ուսումնասիրած փորձագետների գրառումների հետ միասին:

Վանական համալիրի կառույցներն ու դրանց շրջակայքը

Վանական համալիրի տեղանքը շրջապատված է պարիսպներով: Մայր եկեղեցական համալիրը ունեցել է երկրային կյանքի համար նախատեսված գործառույթներ, ինչպիսիք են քահանաների և վանականների խցեր, ուխտավորների ժամանակավոր կացարաններ, դպրոց, ճաշատուն և սպասարկման այլ երկհարկանի կառույցներ: Արտաքին պատերը շատ հաստ են: Դրանք ամրացված են աշտարակներով անկյուններում կամ կողային պատերի միջնակետերում (նկ. 8):

Վանական համալիրի սկզբնական, ուղղանկյուն հատակագիծը սահմանվում է արևմուտքում մասամբ բաց, արևմուտքից արևելք տարածվող և մայր եկեղեցական համալիրը շրջապատող բակով: Հայտնի է, որ բակում գտնվող Լուսավորչի կրկնակի կամարով բուժիչ աղբյուրը վերականգնվել է 1654 թվականին: Վանքի գլխավոր մուտքը պարսպի հարավ-արևմտյան անկյունում է:



Նկ. 8 Սուրբ Կարապետ վանքի հատակագիծը, ստեղծված մեծապատիվ Տեր Աստվածատուրյանի կողմից (Լուսարարյան, 1912 թ.)

Նկ. 9 Սեղանատան ինտերիերը (Հ), տեսարանը դեպի արևելք

Համալիրի հարավային մասի հիմնական հարկում հենարանով կրակատեղի կար՝ դեպի արևմուտք մեծ սրահով: Այս կառույցն (Հ) օգտագործվել է որպես սեղանատուն (Ոսկիյան 1953, 144-145): Ուղղանկյուն սրահը, որի արևմտյան հատվածը ծառայել է որպես պահեստ/մարագ, ձգվում է արևելք-արևմուտք և ունի 5,58x20,14 մ ներքին չափեր (նկ. 9): Սրահն ամրացված է տասը սյուներով օժանդակ տասը կիսակլոր կամարներով, որոնք ներառում են սրբատաշ քարերով կամար՝ ավելի լայն, դուրս ցցված աղյուսե կամարների տակ, որ հենվում են տասը պիլյաստրների վրա: Տարածքը ծածկված է աղյուսե գլանաձև թաղերով, իսկ պատերը կոպիճ աղյուսից են: Պատի հաստությունը 63 սմ է: Սրահի մուտքը բացվում է դեպի հարավ: Հարավային պատի երկայնքով կանոնավոր հեռավորությամբ տեղակայված լուսամուտները կամարակապ են և սրբատաշ քարերից կողակներ ունեն: Արևմտյան պատի մեջ երեք խորշեր կան: Մեջտեղում գտնվող

Նկ. 10 Սեղանատուն, բարձրաքանդակ եպիսկոպոսի գավազանի պատկերով

ավելի մեծ խորշի կողային հատվածները զարդարված են եպիսկոպոսի գավազանով, որը որմնասյան կառուցվածք ունի (Թիերի 1983, 395): Յուրաքանչյուր գավազանի վերնամասը զարդարված է հորիզոնական տեղադրությամբ երկու հայելային կակաչների մոտիվներով (նկ. 10):

Մայր եկեղեցական համալիր

Մայր եկեղեցական համալիրը գտնվում է վանքի կենտրոնական հատվածում՝ երեք կողմից շրջափակված բակով (նկ. 11): Արևմուտքում՝ բարձրարվեստ զանգակատան առաջին հարկում գտնվող փոքրիկ գավիթը, որը համակցված է ութ սյուն ունեցող ռոտոնդայով (գմբեթավոր կառույց), տանում է դեպի գլխավոր եկեղեցին (և ժամատունը)՝ նվիրված Սուրբ Խաչին (Ոսկիյան 1953, 136): Արևելյան կողմում հաջորդական տեղակայմամբ չորս եկեղեցիներ են, որոնցից յուրաքանչյուրում կան տապաններ: Հյուսիսից հարավ դրանք են՝ Սուրբ Աստվածածին եկեղեցին, Սուրբ Ստեփանոս եկեղեցին իր բարձր գմբեթներով, Սուրբ Կարապետ եկեղեցին և Սուրբ Գևորգ եկեղեցին: Վերջին երկու եկեղեցիների միջև տեղակայված է առանձնասենյակ:

• Զանգակատուն

Երկհարկանի աշտարակը հավասարեցվել է ժամատան նավի հետ և միացվել դրա արևմտյան պատին (նկ. 11): Մուտքը հիմնահարկում էր, իսկ զանգակատունը՝ երկրորդ հարկում: Ժամատունն ընդարձակվել է 18-րդ դարում, երբ վերակառուցվել են նաև Սուրբ Ստեփանոս եկեղեցու գմբեթը, սեղանատունը, պարսպի աշտարակներից շատերն ու հոյակապ զանգակատունը (Թիերի 1983, 394): Զանգակատունը վերանորոգվել է 1900-ական թվականներին: Այն իր մոնումենտալ տեսքով բավականին տպավորիչ էր (նկ. 2-3):

Նկ. 11 Մայր եկեղեցական համալիրի հատակագիծը, գծված Արժանապատիվ Տեր Աստվածադուրյանի կողմից (Լուսարարյան, 1912 թ.)
1 Զանգակատուն / 2 Սասունցի Թոռնիկի տապանաքար / 3 Մամիկոնյանների տապանաքար / 4 Մուշեղ Մամիկոնյանի տապանաքար / 5 Վանահոր նստոց / 6 Սուրբ Խաչ եկեղեցի / գլխավոր խորան / 7 Սուրբ Աստվածածին եկեղեցի / 8 Ստեփանոսի (Վարդ Պատրիկի որդի) տապանաքար / 9 Սուրբ Հակոբի խորան (կողային զոհասեղան) / 10 Սմբատ Մամիկոնյանի տապանաքար / 11 Սուրբ Ստեփանոս եկեղեցի / 12 Գայլ Վահանի տապանաքար / 13 Սուրբ Հովհաննես Մկրտչի հանգստարան / 14 Սուրբ Կարապետ եկեղեցի / 15 Աթանագինե եպիսկոպոսի տապանաքար / 16 Սուրբ Գրիգոր Լուսավորչի խորան (կողային խորան) / 17 Սուրբ Գևորգ եկեղեցի / 18 Առանձնասենյակ

Հիմնահարկը կառուցվել է քառակուսի հատակագծով և կամարով, իսկ վերին հարկը կառուցվել է ռոտոնդայի տեսքով՝ ութ անկանոն սյուներով: Ներսի հատվածում Սուրբ Հոգուն նվիրված փոքրիկ խորան կար: Ռոտոնդայի վերնամասը պսակված էր բրգաձև զանգակիր վեղարով, որը հենվում էր ութ սյուների վրա (1983, 394):

• Սուրբ Խաչ եկեղեցի (Ժամատուն).
Հին ժամատունը այրվել է 1058 թվականին, իսկ կառույցը, որի հատակագիծը մեզ է հայտնի, կառուցվել է 16-17-րդ դարերում (Քերթմենջյան 2014,17-18): Սուրբ Խաչ եկեղեցին ուղղանկյուն շինություն էր՝ հինգ շարքերով, որոնք արևելք-արևմուտք առանցքում ծածկված էին քարե թաղերով, որոնք հենվում էին կամարներով միացված 16 սյուների վրա: Աբսիդը նավի



արևելյան կողմում էր, որտեղ գտնվում էր նաև Սուրբ Խաչին նվիրված խորանը: Առաջին և հինգերորդ սյունաշարերի վերջում խորաններ կային, որոնք նույնպես գտնվում էր նրանց արևելյան կողմում: Հյուսիսային խորանը նվիրված էր Սուրբ Հակոբին, իսկ հարավայինը՝ Գրիգոր Լուսարովչին (Մարանչի 2016, 127; Թիերի 1987, 125-127):

Թեև այս կառույցը կարծես գլխավոր եկեղեցի լինի, դրա հատակագիծն ավելի շատ ժամատներին է բնորոշ, քան հայկական ավանդական կրոնական, հոգևոր ճարտարապետությանը: Հայկական եկեղեցական օրենքներն արգելում են պաշտամունքի վայրերում թաղումները: Գրավոր վկայությունները ցույց են տալիս, որ այս եկեղեցու տակ բազմաթիվ գերեզմաններ կան: Սա թույլ է տալիս ենթադրել, որ Սուրբ Խաչ եկեղեցին ավելի շուտ ծառայել է որպես Ժամատուն, քան որպես եկեղեցի: Այնտեղ են հանգչում բազմաթիվ բարձրաստիճան անձիք, այդ թվում՝ Սասունի իշխան Թոռնիկ Մամիկոնյանը (նկ. 11):

Նկ. 12 Սուրբ Ստեփանոս եկեղեցի, հյուսիսային ավանդատան մնացորդներ

• Սուրբ Աստվածածին (Սուրբ Մարիամ) եկեղեցի.

Սուրբ Աստվածածին եկեղեցին մայր եկեղեցական համալիրի հյուսիսային կողմում է: Այն գլանաձև թաղով միանավ կառույց է: Մուտքի բացվածքը հարավ-արևմուտքից է: Քառակուսի գավիթը արևմտյան կողմում է: Աբսցիսը արևելքում է, կիսաշրջանաձև ուրվագիծը արտաքուստ արտահայտված է: Հարավից աստիճանները դեպի աբսցիսի բեմա են տանում:

Ըստ ավանդության՝ եկեղեցին կառուցել է իշխան Վարդ Պատրիկ Արծրունին՝ որպես իր կնոջ՝ Մարիամի հանգստարան: Նրա որդին՝ Ստեփանոսը դարձել է տեղի վանահայրը և թաղվել այստեղ: Հայտնի էր, որ Սուրբ Աստվածածին եկեղեցին հատկացվել է ասորի հոգևորականներին վանք կատարած ուխտագնացության ժամանակ (Ոսկիյան 1953, 143-144; Թիերի 1987, 126):

• Սուրբ Ստեփանոս եկեղեցի.

Համաձայն տեղական ավանդազրույցների, Սուրբ Ստեփանոս եկեղեցին թվագրվում է 4-րդ դարով, սակայն Թիերին (1987, 126) համարում է, որ կառույցը 10-րդ դարից ավելի վաղ չի կարող լինել: Եկեղեցին իր գոյության ընթացքում բազմիցս վերականգնվել է, իսկ գմբեթը նորոգվել է 18-րդ դարում:

Ավանդատները, որոնք աբսցիսի երկու կողմերում են, դեպի կողային նավեր են բացվում (նկ. 11): Պահպանվել է հյուսիսային ավանդատան մի մասը (նկ. 12): Գլխավոր նավը ներվյուրային թաղերի միջոցով միացված է կողային թևերին և գավթին: Թաղերը անկյուններում միանում են գմբեթը պահող պատերին: Կողային հատվածներից յուրաքանչյուրը ծածկված է գլանաձև թաղերով: Բարձր թմբուկի վերևում տեղադրված է կոնաձև գմբեթ, որը նման է Սուրբ Կարապետի գմբեթին:

• Սուրբ Կարապետ (Սուրբ Հովհաննես/ Հովհաննես Մկրտիչ) եկեղեցի

Սուրբ Կարապետը վանական կառույցների մեջ հայտնի առաջին եկեղեցին է: Համարվում է, որ այն դամբարան-մատուռ է եղել, որը կառուցվել է այլ հոգևոր կառույցի վրա 7-րդ դարի սկզբին: Այնուամենայնիվ, հայտնի է, որ այն ժամանակի ընթացքում փոփոխությունների է ենթարկվել. հետևաբար՝ դժվար է թվագրել (Թիերի 1983, 394):

Եկեղեցին հատակագծում կենտրոնագմբեթ է, բազիլիկատիպ է (6x10 մ): Գավթի հյուսիսային կողմում գտնվող խորշը, որը արևմտյան մուտքի մոտ է, ծածկել է Սուրբ Հովհաննես Մկրտչի կենոտաֆը: Հարավային անկյունում

գտնվող խորշում Աթանագինե եպիսկոպոսի դամբարանն էր գտնվում (նկ. 11):

Հասկանալի է, որ կառույցի վաղ փուլերում աբսցիսի երկու կողմերում ավանդատներ են եղել: Հյուսիսային և հյուսիս-արևելյան պատերն ունեին կրկնակի պատերի հաստություն, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ այստեղ նույնպես խուց է եղել (Քերթմենջյան 2014,16-17): Այս հատվածում ևս բազմաթիվ վերանորոգումներ են իրականացվել:

Սուրբ Գևորգ և Սուրբ Կարապետ եկեղեցիների միջև մութ ու նեղ առանձնասենյակ կար, որը ենթադրաբար պատկանում էր Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եղեկեցուն (նկ. 11): Հայտնի է, որ եկեղեցու պատերն ամբողջությամբ սրբատաշ քարից են կառուցված: Աբսիդը հասանելի էր բեմից հարավային կողմի սանդուղքի միջոցով: Փայտե բեմայի ճակատային հատվածը զարդարված էր խաչքարերով: Քերթմենջյանը (2014, 17) այս չորս մարմարե խաչքարերը թվագրել է 1718 թվականով: Եկեղեցու առաստաղը և տանիքը հավանաբար վերակառուցվել են միջնադարում արդիականացման աշխատանքների շրջանակներում: Երկու շրջանաձև քիվեր կային, որ բարձր թմբուկի ստորին և վերին եզրագծերը արտահայտիչ էին դարձնում: Թմբուկի միջին հատվածը զարդարված էր չորս ուղղություններով պատուհաններ ունեցող կամարներով (Քերթմենջյան 2014, 17): Եկեղեցին ճարտարապետական վերականգնման է ենթարկվել 1460-ական թվականներին, այնուհետև՝ 1481, 1576, 1654 և 1709 թվականներին: Այս գործընթացների ընթացքում գմբեթին ավելացվել է ութանիստ թմբուկ՝ պսակված կամարներով և բրգաձև գագաթով: Այս հատվածները ևս մեկ անգամ նորոգվել են 1902 թվականին (հղում 6):

• Սուրբ Գևորգ եկեղեցի

Այս շենքի կառուցման տարեթիվն անհայտ է: Այն վերականգնվել է Վարդապետ Սիմոնի կողմից 1850 թվականին: Շենքը փակ է եղել հոգևոր գործունեության համար՝ երկրաշարժի ժամանակ կրած վնասների պատճառով: Այն որոշ ժամանակ ծառայել է որպես գրադարան և սարկավագատուն՝ նախատեսված պատարագի իրերը պահելու համար (Թիերի 1983, 394):

Հարավային պատն ամբողջությամբ, արևմտյան պատի մի մասը և աբսիդի հարավային մասը կանգուն են: Երևում է, որ ներքին չափերը մոտավորապես 6x13 մ են եղել: Արևմտյան պատի

Նկ.13 Սուրբ Գևորգ եկեղեցի, հարավային պատ, տեսարան հյուսիս-արևելքից

հաստությունը 95 սմ է: Ներքին մասում երևում է կոպտատաշ քարերի շարը, իսկ պատի ներքին և արտաքին երեսների միջև լիցքը բաղկացած է խճաքարերից և շաղախից: Հարավային պատն ավելի հստակ տեղեկություններ է տալիս պատի շարվածքի տեխնիկայի մասին (նկ. 13): Որմասյուներին են միանում գոգավոր, աղյուսե, սրածայր կամարները: Նախնական հատակագիծը ցույց է տալիս, որ մուտքը դեպի ամբողջովին կորսված Սուրբ Գրիգոր Լուսաբովիչ եկեղեցու առանձնասենյակ եղել է դեպի հյուսիս բացվածքով (նկ. 11):

Ներկա վիճակ

Վանական համալիրի տեսանելի մասնաշենքերը ցրված են գյուղով մեկ և բավականին վնասված են: Հաստատված է, որ տների կառուցման ժամանակ քարերը վերաօգտագործվել են: Ստորգետնյա տարածքները, որոնք այժմ հողի շերտերի տակ են, ինչպես նաև թաղված կառույցները, շարունակում են իրենց գոյությունը: Ներկայում դժվար է հասկանալ վանքի հատակագիծը՝ գյուղի առկայության պատճառով: Վանքից քիչ բան է պահպանվել: Համալիրի վրա տներ և հյուղակներ են կառուցվել: Սակայն Սուրբ Գևորգ եկեղեցու հատակագիծը մասամբ ընթեռնելի է: Տեսանելի են նաև Սուրբ Ստեփանոս եկեղեցու հյուսիսային ավանդատան և հյուսիս-արևմտյան դամբարանի պատերը: Ժամատան սյուներից մեկը կանգուն է, բայց վրան ճաքեր ունի:

Հնավայրի հարավային մասում գտնվող սեղանատունը վանքին կից սպասարկման շենքերից մեկն է եղել: Այն թաղված է գետնի տակ, և արևելքից գյուղական տուն է կցված: Այս կառույցի համար չափագրական գծագիր է

Նկ. 14 Հյուրատան հին շենքը, որը ներկայումս օգտագործվում է որպես գոմ

արվել: Ավելին, հյուրատունը՝ վանքից արևելք գտնվող սպասարկման շենքերից մեկը, դաշտային աշխատանքների ժամանակ օգտագործվել է որպես գոմ (նկ. 14): Այս տարածքը փաստագրվել է լուսանկարների միջոցով, սակայն չափումներ հնարավոր չէր իրականացնել:

Ռիսկերի վերլուծություն և առաջարկություններ

Գյուղական շինություններն անհնար է առանձնացնել գրանցված վանական համալիրի մնացորդներից: Արդյունքում ամբողջ բնակավայրը պետք է դիտարկել որպես պատմական հուշարձան: Պետք է մշակել այնպիսի ամբողջական պահպանման ծրագիր, որը կներառի համալիրը և ժամանակակից բնակավայրը միաժամանակ, և պետք է ջանքեր գործադրվեն գյուղական տների վերականգնման համար:

Վերաօգտագործված քարերը և մակագրված քարերը, որոնք օգտագործվել են տների կառուցման համար, պետք է մանրակրկիտ համարակալվեն: Արձանագրված քարերը կարող են հատկապես օգտակար լինել ինչպես բնակավայրի, այնպես էլ վանքի պատմության վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ հավաքելու համար: Հնավայրի և դրա շրջակայքի ճարտարապետական, հնագիտական և տեղաբանական ուսումնասիրություններ պետք է կազմակերպվեն՝ պատմական համալիրին պատկանող այլ առարկաներ արձանագրելու համար:

Վանական համալիրի փլատակներին կատարված ոչ պատշաճ հավելումները, որոնք դեռ կանգուն են, պետք է հեռացվեն այնպես, որ բացասաբար չանդրադառնան ներկայիս բնակիչների վրա: Ի վերջո, պետք է հրատապ միջամտություններ կատարվեն՝ կանխելու պատմական հուշարձանի վիճակի հետագա վատթարացումը:

Եղրդուտի Սուրբ Հովհաննես վանք

Կենտրոն (Centrum) թաղ, Սուլուջա (Գոմեր, Գավառ) գյուղ	Կառուցման ժամանակաշրջան/տարեթիվ՝ **13-րդ դ.**
GPS՝ **38°45'01.7"N 41°20'25.5"E**	Ներկայիս գործառույթ՝ **ավերակ**
Գրանցման տարեթիվ և համար՝ **Վանի Մշակութային ժառանգության պահպանության շրջանային վարչություն, 27.02.2010 – 561**	

Պատմություն

Օսմանյան ժամանակաշրջանում Գոմերը Բիթլիսի նահանգի Մուշ սանջակի Մշո գավառի գյուղերից էր: Գտնվում է Մուշ քաղաքից 8-9 կմ արևմուտք, Կուրտիկ լեռան հյուսիս նայող անտառապատ հովտի լանջերին: Գոմերը ներկայումս հայտնի է որպես Սուլուջա: Որոշ աղբյուրներ Գոմերը կապում են հին Գոմկունք գյուղի հետ (ՀՀՇՏԲ 1986, 939): Գյուղը 1909-ին ուներ ավելի քան 80 հայ տուն: Հիշատակվում է, որ 1890-ին գյուղում 70 տուն հայ և 38 տուն քուրդ է եղել (հղում 7): 1902-ին արձանագրվել է 452 հայ բնակիչ՝ 63 տուն, ապա 1910-ին անհայտ թվով բնակչություն՝ 60 տուն, այնուհետև 1914-ին՝ 910 հայ բնակիչ՝ 110 տուն: Հայոց պատրիարքարանի արձանագրությունները ցույց են տալիս, որ 600 հայ՝ 60 տուն, բնակվում էր Գոմերում, որն ուներ նաև Սուրբ Մարիամ եկեղեցի և դպրոց՝ 30 աշակերտով (Գևորգյան-Փաբուջյան 2012, 489):

Գոմեր (Սուլուջա) գյուղի սահմաններում գտնվող Եղրդուտի վանքը Մուշ քաղաքից 20 կմ դեպի արևմուտք է՝ Սուրբ Կարապետ վանքի դիմաց, իսկ Սուլուջա գյուղից 3 կմ հեռավորության վրա է: Սիմ լեռան անտառապատ հյուսիսային լանջերին գտնվելու պատճառով այն լայն համայնապատկեր ունի, ներառում է Բինգյոլի լեռները, Սիփան լեռը և Մուշի դաշտը: Այս վանքը երբեմն հիշատակվում էր «Սուրբ Հովհաննես Մկրտիչ», «Արծվաբեր սուրբ Նշան» կամ «Շիշյուղո վանք» անուններով: Վանքի և նրա անվան շուրջ որոշ պատմություններ կային (ՀՀՇՏԲ 1988, 193): Հայր Ոսկեանը (1953, 93) գրում է, որ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը հիմնել է այս եկեղեցին,

Նկ. 1 Վանքի ավերակների այրոլուսանկար



այնուհետև այստեղ տեղադրել Սուրբ Հովհաննես Մկրտիչի և Սուրբ Աթանագինեի մասունքները, և որ արդյունքում վանքը հայտնի է դարձել Սուրբ Հովհաննես անունով:

Ըստ մեկ այլ պատմության՝ Թադեոսը և Բարթուղիմեոսը՝ երկու առաքյալները, որոնք առաջին լուսավորիչներն էին, Հայաստան գալիս բերել են յուղը, որով Մովսեսը օծել է մարգարեներին, Սամուելը՝ Դավթին, Մարիամ Մագդաղենացին օծել է Մեսիային, և Մեսիան օծել է առաքյալներին: Այդ փյունիկյան կանաչ շիշը թաքցրել են ուռենու արմատների տակ: Հետևաբար վանքը հայտնի էր որպես «Շիշ-յուղվանք» (յուղի շիշ) վանք անունով (ՀՀՇՏԲ 1988, 194): Գրավոր վկայությունները նկարագրում են սուրբ խաչի մի մասունքի հրաշագործ երևումը՝ ի հավելումս Մարիամ Մագդաղենացու, Սուրբ Հովսեփի և Հովսեփ Արիմաթիացու մասունքներին, որոնք 22ի հետ միասին ծառի տակ թաքցրել էին առաքյալները: Վանքը կոչվել է «Եղրդուտի վանք»՝ ի պատիվ այս ուռենու, որը, ըստ ավանդազրույցի, այնտեղ տնկվել է արծվի կողմից (Ոսկիյան 1953, 93-96):

Հավատամքը, որ այս ուռենին բուժիչ հատկություններ ունի, ի հայտ է գալիս ժամանակակից տարբեր նկարագրությունների և պատմությունների տեղեկագրերում: Ինչպես նշում է նաև Ոսկեանը (1953, 93-96), ծառի շուրջ առասպելներն ու նկարագրությունները հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու այն շրջանի հասարակական կյանքի մասին, երբ վանքը դեռ գործում էր:

Եղրդուտի Սուրբ Հովհաննես վանքի հիմնադրի անունը և կառուցման ստույգ տարեթիվը հայտնի չէ: Այն վերագրվում էր Սուրբ Վրդանեսին կամ Սուրբ Գրիգոր Լուսավորչին, թեև գրված էր, որ հիմնադիրը Թադեոս առաքյալն է (1953, 104-105): Վանքի մասին առաջին մատենագիտական վկայությունը գրել է Վարդան Արևելցին 13-րդ դարում: Վանքը 15-16-րդ դարերում գրչության կենտրոն է եղել: Համալիրի երեք եկեղեցիների կառուցման ժամկետներն անորոշ են: Ենթադրվում է, որ դրանք ամենաուշը 13-րդ դարում են կառուցվել: 1650-ին վերականգնումը ներառում էր վանքի տանիքները, գմբեթները և ներքին տարածքները, ինչպես նաև վանական խցերի կառուցումը: Վանքը 1707-ին համակողմանի վերանորոգվել է (Թիերի 1983, 130-131): Բիթլիս Շերեֆիյե մզկիթի գլխավոր դարպասի հետ նմանություն ունեցող զանգակատան շինարարությունը կամ վերանորոգումը ավարտվել է 1828 թվականին Պողոս Քալֆա անունով շինարարի կողմից (Ոսկեան 1953, 102-3): Եկեղեցու ներսում և դրսում կային զատ առանձնասենյակներ, բացի մատուռներից և այլ աղոթատեղերից՝ նվիրված Սուրբ Աթանագինեին, Սուրբ Աստվածածնին, Սուրբ Գևորգին և Սուրբ Սարգսին (Բալյան 2008, 254):

Համալիրի մեկ այլ եկեղեցու՝ Սուրբ Ստեփանոսի մոտ գտնվող գերեզմանատանը թաղվել են վանքի նշանավոր հոգևորականներ: Վանական հաստատությունում կրոնական առաջնորդարան, երկհարկանի հյուրատուն՝ ավելի քան երեսուն սենյակներով և



Նկ. 2 Հատակագիծ Թիերիից (1983)

երաժշտական դպրոց կար: Վարդավառի, Աստվածածնի և Խաչվերաց ծիսական տոների ժամանակ մոտակա համայնքներից խանդավառ բազմություն էր այցելում վանք: 20-րդ դարի սկզբին այնտեղ լայն տարածքներ, ընդարձակ մարգագետիններ, անտառներ կային (Ոսկեան 1953, 103, 128-9, Բալյան, 2008, 254): 1910 թվականին համալիրում մանկատուն էր գործում, որը մոտ 40 սան ուներ. այն իր գործունը շարունակեց մինչև Առաջին համաշխարհային պատերազմը (ՀՀՇՏԲ 1988, 194; Գևորգյան-Փաբուջյան 2012, 487-488):

Ճարտարապետություն

Եղրդուտի Սուրբ Հովհաննես վանքը, որը հայտնի է նաև որպես Կարմիր եկեղեցի, Սուլուջա գյուղից մոտավորապես 3 կմ արևմուտքում է գտնվում: Ծովի մակարդակից 1860 մ բարձրության վրա է: Այսօր միայն վանքի ավերակներն են տեսանելի: Համալիրի շինություններում քարի և աղյուսի շարման տարբեր մեթոդների կիրառումն ակնհայտ է:

Դեպի լանջ նայող արևմտյան ճակատի հիմապատերը մասամբ կանգուն են, մնացած բոլոր մնացորդները միայն հիմքի մակարդակում է կարելի նկատել: Ուստի, համալիրի ամբողջական հատակագիծը հասկանալը բավականին դժվար է (նկ. 1):

Արևմտյան պատի երկարությունը 67 մ է և երկու հիմական տարածք է պարփակում: Այս պատին զուգահեռ կարճ պատերը պետք է, որ վանքի կացարանների պատերը լինեն: Այս տարածքները 5 մ երկարություն ունեն; լայնությունները տատանվում են 3-ից 4,5 մ-ի սահմաններում: Արևմտյան պատի հյուսիսային և հարավային անկյունները հատակագծով ունեն շրջանաձև հատվածներ: Պատի ավերակները, որը սկսվում են արևմտյան պատի հարավային եզրից և շարունակվում դեպի արևելք, մոտավորապես 12 մետրից շրջանաձև կառույցի են հասնում: Այնուհետև այս պատը թեքվում է դեպի հարավ-արևելք. դրա երևացող ավերակները այս ուղղությամբ շարունակվում են մոտ 18 մ: Հաստատված վերջնակետից 10 մ դեպի հյուսիս աղեղնաձև պատի մնացորդներ են նկատվում: Այս պատը համեմատաբար տեսանելի է, չնայած որ հնավայրի շրջակայքը ծածկված է հողի շերտով: Թիերիի հողվածում տեղ գտած հատակագծի համաձայն՝ այն, կարծես, կապված է վանական մատուռներից մեկի աբսիդին (1983, 384-386) (նկ. 2): Խիտ հողածածկույթի և մեծ փասների պատճառով հնարավոր չէ մատուռի ամբողջականության կամ սահմանների շուրջ մեկնաբանություն անել:

Վանքի միակ հատվածը, որտեղ առաստաղը/տանիքը դեռ նկատելի է, այն տարածքն է, որտեղ երկու զուգահեռ կամարներ կան, որոնք ձգվում են հյուսիս-հարավ առանցքի երկայնքով: Կամարները կրող սյուների միջև (արևելք-արևմուտք առանցքի վրա) այս կամարների միջև՝ հիմքերի քարերի մակարդակում այլ կամարների հետքեր կան (նկ. 3): Ենթադրվում է, որ այս տարածքը 4,5 մ արտաքին (հատակագիծ) չափսերով անցումային տարածք է եղել: Հարավային սյանը հարող պատը հիմքի մակարդակում շարունակվում է մոտավորապես 16 մ:

Շենքերում օգտագործվել են սրբատաշ քարեր, անտաշ քար և աղյուս՝ տարբեր շինարարական մեթոդներով: Այն, որ նույն պատի բարձրության տարբեր հատվածներում կարելի է տեսնել քարի շարվածքի տարբեր տեխնիկաներ, վկայում է, որ շենքը տարբեր ժամանակաշրջաններում վերանորոգվել է (նկ. 4): Վանքից դեպի հյուսիս

Նկ. 3 Անցումային տարածություն կամարներով

գտնվող մասացորդները՝ հիմնահարկի մակարդակում շարվածքը աղյուսից է, որտեղ պատի երկու երեսների միջև լիցքի համար խճաքար և աղյուս է օգտագործվել: Աղյուսե պատի վերևում կա մեկ այլ, ավելի կարճ շերտ, որը կառուցվել է կոպտատաշ քարից: Հարավից կից կառույցի պատերը կոպտատաշ քարից են. 7-8 շարերից բաղկացած աղյուսե շարվածքի երեսները տեսանելի են երկու հարթություններում: Երկու երեսների միջև հեռավորությունը մոտավորապես 2,5 մ է: Աղյուսե պատերի շարվածքում աղյուսը (հաստությունը՝ 27-28 սմ) օգտագործած է պատի ներքին և արտաքին երեսների համար, մինչդեռ խճաքարերն ու աղյուսի կտորները՝ լիցքի համար (հաստությունը՝ 40-60 սմ):

Ավերակներից անհնար է տեղեկություններ հավաքել ինտերիերի առանձնահատկությունների մասին, բացառությամբ արևմուտքից հարակից կառույցների միջև ընդհանուր կրող պատի հյուսիսային երեսին գտնվող խորշի հաստատված առկայության:

Ներկա վիճակ

Եղրդուտի Սուրբ Հովհաննես վանքը ներկայումս կարելի է բնութագրել որպես մասամբ կանգուն ավերակ: Ընդհանուր պլանը

Նկ. 4 Հյուսիս-հարավ ձգվող արևմտյան թեքությունը, շարվածքի տարբեր մեթոդներ

հնարավոր չէ ընկալել: Փլուզված պատերի/կառույցների մասացորդները սփռված են ամբողջ հնավայրով մեկ. գրեթե բոլոր ներքին և արտաքին տարածքները ծածկված են մանրաքարերով և հողով: Արդյունքում հնարավոր չէ տեսնել բոլոր կառույցների հիմքերը: Պատերի շարվածքի մեծ կորուստ կա: Շինության բոլոր տարրերն ու առանձնահատկությունները անպաշտպան են բնական աղետների դեմ. հետևաբար՝ կարելի է ակնկալել, որ ներկայիս իրավիճակի վատթարացումը կարագանա: Հեռավորության և աշխարհագրական դիրքի պատճառով կառույց հասնելը հեշտ չէ: Ամենամոտ բնակավայրը Սուլուջա գյուղն է՝ 3 կմ հեռավորության վրա: Հնավայրը

ավտոճանապարհից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա է: Գտնվում է լեռնային գոտում, համեմատաբար բարձրադիր է՝ 1860 մ:

Հնավայրի հյուսիս-արևմուտքում հյուղակ կա, որը ենթադրաբար սեզոնային է օգտագործվում. Դաշտային աշխատանքի ընթացքում բնակության հետքեր չեն արձանագրվել: Հնավայրի և դրա շրջակայքի մասին տեղեկություն տրամադրող նկարագրություններ չկան:

Ռիսկերի վերլուծություն և առաջարկություններ

Դաշտային աշխատանքների ընթացքում տեղանքի տարբեր կետերում ապօրինի պեղումների հետքեր և պատերին հենված բահեր են նկատվել: Սա ցույց է տալիս, որ հնավայրը կողոպտիչների կողմից հաճախակի ժսասվել է: Հնավայրի ավերակներն արդեն իսկ շատ վատ վիճակում են՝ շրջակա միջավայրի գործոնների պատճառով, ուստի ակնհայտ է, որ ապօրինի պեղումներն ավելի արագ կործանման և ավելի մեծ ժսասների են հանգեցնելու:

Եղրդուտի Սուրբ Հովհաննես վանքը բազում ժամանակակից կառույցների շարքում շատ կարևոր տեղ ունի իր կոթողային հատկություններով: Մինչ հետագա ուսումնասիրությունները, հնավայրը նախ պետք է պաշտպանված լինի: Այնուհետև Մշակույթի և զբոսաշրջության նախարարության հսկողության ներքո կարելի է հնագիտական պեղումներ իրականացվել՝ կառույցների ճարտարապետական առանձնահատկությունները բացահայտելու և փաստագրելու նպատակով: Հնագիտական հետազոտությունները կարող են նաև հնարավորություն ընձեռել ապագա գրաֆիկական վերականգնողական նախագծերի համար, քանի որ կարելի է թվագրել և ավելի լավ հասկանալ համալիրում իրականացված փոփոխությունները, որոնց ենթարկվել են կառույցները գոյության ողջ ընթացքում:

Միգրե բաղնիք / Դերե բաղնիք

Կենտրոն (Centrum) թաղ, Դերե թաղամաս, Ինջեբել տեղանք	Կառուցման ժամանակաշրջան/տարեթիվ՝ **անհայտ**
GPS՝ **38°43'40.2"N 41°29'11.3"E**	Ներկայիս գործառույթ՝ **ավերակ**
Գրանցման տարեթիվ և համար՝ **Էրզրումի Մշակութային ժառանգության պահպանության շրջանային վարչություն, 27.06.1990 – 248**	

Պատմություն

Միգրե բաղնիքը Մուշ քաղաքի հին Զորի թաղ (Փոքր հովիտ) թաղամասում է գտնվում: Ինչպես նշված է անվան մեջ, Զորի թաղը գտնվում է բլուրների վրա, որոնց միջով հոսում են Սասունի լեռներից եկող գետերը:

Աղբյուրները վկայում են, որ 19-րդ դարի կեսերին Մուշի պատմական կենտրոնում այլ կառույցներից զատ կային հինգ քարե եկեղեցի, 3 մզկիթ, 3 իջևանատուն, բաղնիք, բազմաթիվ ջրաղացներ և 400 խանութներ (Գևորգյան 2012, 489): Այս տեղեկությունների հիման վրա կարող ենք ենթադրել, որ Միգրե բաղնիքը 19-րդ դարում գործուն է եղել, թեև շինության վրա որևէ արձանագրություն կամ պատմության որևէ այլ հիշատակում չկա:

Ճարտարապետություն

Միգրե (Դերե) բաղնիքը, որը գտնվում է Մուշի պատմական կենտրոնում՝ Դերե գետի արևմտյան ափին, կարելի է համարել նման կառույցի տիպաբանության ոչ կանոնիկ օրինակ, քանի որ դրա հատակագծի դասավորությունը և տարածական կազմակերպումը նման չեն այս տարածաշրջանի ավանդական բաղնիքի ճարտարապետությանը (Օզթյուրք 2020, 263): Կառույցը անհարթ տարածքում է գտնվում: Հյուսիսային ճակատն ամբողջությամբ գետնի տակ է, մինչդեռ արևելյան և հարավային կողմերը միայն մասամբ են թաղված: Չնայած տանիքն ամբողջությամբ ծածկված է հողով և բուսականությամբ, շենքը դեռ կանգուն է իր հատակագծով և հիմնական պատերով, որոնք հիմնականում անփոփոխ են (նկ. 2):

Նկ. 1 Միգրե բաղնիք. տեսարան հարավ-արևելքից

Նկ. 2 Տեսարան հյուսիսից. տանիքը՝ ծածկված հողով և բուսականությամբ

Բաղնիքը բաղկացած է արանձին զգեստափոխվելու սրահից (հանդերձարան), որը տանում է դեպի տաք սրահ (ջերմատուն), երկու մասնավոր լոգասենյակներից բաղկացած շոգեսրահից, որոնք բոլորն էլ անմիջական ելք ունեն դեպի դուրս, և ջրի պահեստ: Վառարանը, ամենայն հավանականությամբ, գտնվում է շենքի հյուսիսային հատվածում, սակայն այդ ճակատի ներկայիս անհասանելիության պատճառով անհնար է հավելյալ մեկնաբանություններ անել (նկ. 1):

Ուղղանկյուն բաղնիքի հատակագիծը ձգվում է հյուսիս-հարավ առանցքով և ունի 9,55x19,60 մ չափսեր: Դրա հիմական պատերի հաստությունը 90-93 սմ է: Հիմական նյութերը, որոնք օգտագործվում են որմերի համար, խճաքարն ու աղյուսն են: Պատի ներքին և արտաքին երեսները մանրաքարից են: Հանդերձարանի և շոգեսրահի տանիքը պահող կամարները սև և սպիտակ գույնի սրբատաշ քարից են, իսկ մնացած բոլոր կամարները, դռները և թաղերը աղյուսաշար են (նկ. 3): Մոխրագույն, կրաքարի հիմքով, մանրահատիկ շաղախը, որը նկատվում է ամբողջ կառույցում, բավականին ավանդական է այս տարածքի համար (Օզթյուրք 2020, 273):

Միգրե բաղնիքը բավականին խարխուլ է, բայց դրա ներքին հատված կարելի է հասնել չորս դռների բացվածքներով՝ մեկը հարավային, երեքը արևելյան ճակատում: Դրանցից երեքը տանում են դեպի հանդերձասրահ,

իսկ մեկը բացվում է դեպի ջերմատուն: Հանդերձասրահը բաղկացած է երկու նույնական տարածություններից, որոնք բաժանված են կամարով (լայնությունը՝ 57 սմ) և յուրաքանչյուրը ծածկված է աղյուսե գլանաձև թաղով: Բաղնիքի հատակագծի ընդհանուր մակերեսը 6,02x6,75 մ է: Մեծ չափի փսասի պատճառով հնարավոր չէ որոշել հարավային բացվածքի նախնական չափը: Արևելյան հատվածում երկու բացվածքները դեպի դուրս նեղանում են. դրանց լայնությունները ներսից 1,72 մ է, դրսից՝ 1,28 մ: Այս հատվածի հարավային պատին ուղղանկյուն խորշ կա (խորությունը՝ 50 սմ, լայնությունը՝ 145 սմ): Երկու հանդերձասրահներից հյուսիսում գտնվողը արևմտյան պատին կիսաշրջանաձև խորշ ունի (լայնությունը՝ 1,81 մ, խորությունը՝ 1,50 մ): Երկրորդ խորշի նախնական գործառույթն անհայտ է:

Հանդերձասրահի հյուսիսային պատին գտնվող մի դուռ (լայնությունը՝ 1,22 մ) տանում է դեպի ջերմատուն: Դռնից դեպի արևմուտք պատուհանի բացվածք կա (լայնությունը՝ 1,10 մ): Ջերմատան ուղղանկյուն հատակագիծը (2,08x3,38 մ) ծածկված է գլանաձև թաղով: Դրա հարավ-արևելյան անկյունով միջանցք է, որը տանում է դեպի արևելյան ֆասադ (դեպի գետ), որը ևս գլանաձև թաղ ունի: Այս միջանցքի վերջը (84x282 սմ) ֆասադի վրա շեշտված է կամարակապ բացվածքի տեսքով: Ջերմատան և շոգեսրահի միջև գտնվող դռան բացվածքը (լայնությունը՝ 1,17 մ) միաձույլ ճակատաքար ունի, որը փորագրված է կամարի մեջ: Ուղղահայաց մոնոլիթները (շեմ), որոնք պահում են ճակատաքարը, անհետացել են. արդյունքում բացվածքի լայնությունը մեծացել և հասել է 1,35 մետրի:

Շոգեսրահը բաժանված է երեք հատվածի՝ հյուսիս-հարավ ուղղությամբ ձգվող երկու զուգահեռ սրածայր սրբատաշ քարից կամարներով (լայնությունը՝ 61 սմ): Այս կամարների ձևին հետևելով՝ աղյուսաշեն թաղը նույնպես սրածայր է: Արևելքում երկու բացվածքներ կան, որոնք ենթադրաբար նախատեսված են բնական լուսավորության համար: Բաղնիքներում սա աննախադեպ երևույթ է՝ մեկուսացումը պահպանելու պատճառով , բայց դա կարելի է բացատրել նրանով, որ այդ ճակատի դիմաց Դերե գետն էր հոսում: Շոգեսրահի արևմտյան պատի մեջտեղում գտնվում են որմասյուն և երկու սրածայր կիսակամար, որոնք ուղղահայաց են թաղը պահող կամարներին: Այս

Նկ. 3 Գունավոր քարե և աղյուսե որմաշարվածք

դեկորատիվ և համաչափ դասավորությունը ձևավորվում է որմասյան երկու կողմերում գտնվող երեք նույնական խորշերի միջոցով: Այս կամարների հիմքերը նույն բարձրության վրա է, ինչ ծանրություն կրող կամարներինը: Կամարի կողային հատվածում՝ համաչափության առանցքի վրա ևս կամարակապ խորշ կա (նկ. 4): Այս հատվածի վերևում գտնվող թաղը մի քանի «aks-ı seda» (օսմաներեն՝ ձայնային արձագանք) է պարունակում. դեկորատիվ և ակուստիկ տարր, որը ներառում է ամֆորաներ՝ դասավորված մեկ-երեք-վեց օրինաչափությամբ, որոնց օրինակները կարելի է գտնել մերօրյա Թուրքիայի բազմաթիվ առաստաղների կառուցվածքում (նկ. 5):

Շոգեսրահի հարավային՝ կենտրոնից շեղված բացվածքը (լայնությունը՝ 59 սմ), դեպի մասնավոր լողասենյակ (95x107 սմ) է տանում: Հյուսիսում՝ առաջինի անմիջապես դեմ-դիմաց, երկրորդ լողասենյակն է (1,79x2,11 մ), որտեղ կարելի է մտնել մեկ այլ բացվածքի միջոցով (լայնությունը՝ 64 սմ): Այս երկրորդ սենյակի հյուսիսային պատի վրա խորշ կա (խորությունը՝ 31 սմ, լայնությունը՝ 37 սմ): Արևելյան պատի բացվածքի շնորհիվ երկու սենյակներն էլ բնական լուսավորություն ունեն: Շոգեսրահին կից վերջին սրահը ջրի պահեստավորման տարածքն է, որը հասանելի է հյուսիս-արևմուտքում առկա բացվածքի միջոցով (լայնությունը՝ 68 սմ): Պահեստը (3,71x2,11 մ) ամբողջությամբ աղյուսից է, և արևմտյան պատին խորշ կա: Դաշտային աշխատանքի ժամանակ տարածք հնարավոր չէր մտնել: Նախնական մուտքը, ըստ երևույթին, վերին հարկաբաժնից է եղել: Հավանական է, որ այս սենյակ մուտք գործելու համար աստիճանավանդակ է օգտագործվել, որն այժմ կորսված է:

Նկ. 4 Շոգեսրահի պատկեր

Դաշտային աշխատանքների ժամանակ տանիքի կառուցվածքը դժվար էր ուսումնասիրել՝ խիտ բուսականության պատճառով. այնուամենայնիվ, թվում է, թե առաստաղների ձևերն ուրվագծվել են արտաքինից: Տանիքապատման բնօրինակ տեսքի հետքեր չեն հաստատվել: Թեև հյուսիսային ճակատի վրա մի կետ կար, որը հավանաբար սկզբնապես կոնսոլ է եղել, սակայն, այնուամենայնիվ, դա ճշգրտել չհաջողվեց: Օդափոխիչ ծխնելույզ կար, որը կարծես համապատասխանում էր շոգեսրահին:

Ներկա վիճակ

Միգրե բաղնիքը բավականին խարխուլ վիճակում է: Դրա օգտագործման վերջին տարեթիվն անհայտ է: Ներկայումս այն ավերակ է. տեսանելի են կառուցվածքային ճաքեր, և տանիքը ենթակա է հետագա փսասների: Շենքը խոցելի է շրջակա միջավայրի գործոնների և վանդալության դեմ: Հիմնական պատերի կառուցվածքում առկա են շինանյութի մեծ կորուստ և այլ վատթարացումներ, ներքին պատերի վրա՝ մրի խիտ կուտակումներ: Կառույցը լքված է: Դրա հարաբերակցությունը շրջապատող տեղանքի հետ բավականին անբարենպաստ է:

Ռիսկերի վերլուծություն և առաջարկություններ

Միգրե բաղնիքը զառիվայր տեղում է՝ գետի մոտ. ուստի այն բավականին փսասվել է սողանքների և հեղեղների պատճառով: Երկարաժամկետ լքվածության պատճառով այն բազմիցս փսասվել է վանդալների կողմից: Առաջին քայլերը, որոնք անհրաժեշտ է

Նկ. 5 Ակուստիկ սափորներ ('aks-ı seda')

ձեռնարկել, պետք է լինեն տանիքը ծածկող հողի և բուսականության հաստ շերտի վերացումը, որը, կարելի է ենթադրել, որ զգալի ճնշում կստեղծի ծանրություն կրող համակարգի վրա: Սա պետք է իրականացնել փորձագետների հսկողության ներքո և անհրաժեշտ կառուցվածքային վերլուծություններով. հրատապ միջամտություններ իրականացնել՝ հետագա փլուզումները և շինարարական նյութի կորուստները նվազագույնի հասցնելու համար, տեղադրել պաշտպանիչ տանիք՝ շենքը տարրերքներից պաշտպանելու համար: Հնավայր անվերահսկելի մուտքը պետք է սահմանափակվի շրջակա տարածքում ֆիզիկական արգելքների տեղադրության միջոցով: Լայնածավալ փաստագրման և վերականգնման ծրագրեր պետք է կազմվեն և իրականացվեն՝ հաշվի առնելով Միգրե (Դերե) բաղնիքի անմիջական շրջակայքը, որն ունի զգալի պատմական նշանակություն իր սկզբնական հատակագծի առանձնահատկությունների շնորհիվ: Այնուհետև շենքը պետք է հարմարեցված կերպով վերաօգտագործվի՝ համայնքի համար շահավետ գործառույթով:

Հասպետի բերդ / Աստղաբերդ / Մակունաց բերդ / Մոկաց բերդ

Կենտրոն (Centrum) թաղ, Սողուջակ գյուղ	Կառուցման ժամանակաշրջան/տարեթիվ՝ **5-րդ դար**
GPS՝ **38°42' 47.76'' N, 41°30'52.90'' E**	Ներկայիս գործառույթ՝ **լքված**
Գրանցման տարեթիվ և համար՝ **Էրզրումի Մշակութային ժառանգության պահպանության շրջանային վարչություն, 27.06.1990 – 248**	

Պատմություն

Սողուջակ (նախկինում հայտնի է որպես Մոկունք) գյուղը 1880 թվականին ուներ 497 հայ բնակիչ, իսկ 1914 թվականին՝ ավելի քան 600 (ՀՀՇՏԲ, 1991, 863)։ Ա-ԴՈ-ն (1912, 106) գրում է, որ գյուղացիներն ապրում էին 58 հայկական և 6 քրդական տներում, մինչդեռ Սասունին (1956, 352) նշում է, որն այն 50 հայկական տնից էր բաղկացած։ Հայոց պատրիարքարանի 1913-1914 թթ. արձանագրությունները ցույց են տալիս, որ Մոկունքում ընդհանուր 67 տանը 379 հայ էր ապրում, և գյուղն ուներ եկեղեցի, ինչպես նաև դպրոց՝ 45 աշակերտով (Գևորգյան-Փաբուջյան 2012, 489)։

Մոկունքը գրչության կարևոր կենտրոն էր։ Հայտնի է, որ 1433 թվականին այստեղ Աստվածաշունչ է պատրաստվել (2012, 863)։ Պատմաբան Հովհան Մամիկոնյանն (1989, 99-106) առաջարկել է, որ գյուղը, հնարավոր է, որ 7-րդ դարում նահատակված ու այդ տարածքում թաղված մոգերի պատճառով է Մոկկունք (Մոկունս) կոչվել։ Սակայն այն վայրը, որի մասին պատմում է պատմաբանը, Հաշտենից գավառի Մոկունք գյուղը չէ, այլ Գրիենինը։ Որպես Մոկունք անվանմանն այլընտրանք՝ գյուղը հիշատակվել է Հոկունք, Մակունք և Մակունաց անուններով։ Իրականում, աղբյուրները գյուղից 2 կմ հարավ՝ բլրի վրա գտնվող

Նկ. 1 Հասպետի բերդի նախագիծ



Աստղաբերդը հիշատակել են որպես Մակունաց բերդ (2012, 652)։

«Հուշամատյան»-ի արխիվում Մշո դաշտի հայկական գյուղերի ցանկը, որը հիմված է Հայոց պատրիարքարանի 1878, 1902 և 1913-1914 թվականների մարդահամարների տվյալների վրա, վկայում է, որ այնտեղ եղել են փայտաշեն Սուրբ Ստեփանոս եկեղեցին, քարաշեն Սուրբ Գասպար եկեղեցին, Սուրբ Փրկիչ և Սուրբ Թուխմանուկ ավերակ եկեղեցիները՝ ի լրումս երկու այլ եկեղեցիների մնացորդների, որոնց անուններն անհայտ են։ Ավելին, արձանագրություններում նշվում է, որ գյուղի մոտ եղել է աղոթատեղի, որը հայտնի է որպես Գասպարի վանք (հղում 8)։

Աստղաբերդ կամ Հասպետ բերդը գտնվում է Սողուջակ (Մակունք-Մոկունք) գյուղի մոտ՝ Առաքելոց վանքի հետ նույն գավառում։ Հայկական աղբյուրներում բերդը հիմնականում հիշատակվում է Մոկունաց բերդ (Մագունք/Մոկունք/Մակունց) անունով և այն 5-րդ դարին պատկանող հայկական ամենահայտնի բերդերից է։ Համաձայն առասպելի՝ բերդը Աստղիկ աստվածուհին է կառուցել, և անվանակոչվել նրա անունով։ Մեկ այլ պատումի մեջ ասվում է, որ Աստղիկ աստվածուհին այստեղ էր հյուրընկալում Վահագն աստծուն, որտեղ նա հանգստանում էր վիշապների դեմ մարտերից հետո։ Մամիկոնյանը (1989, 46, 52, 103, 114) բերդից բացի հիշատակում է մի մեծ եկեղեցի, որը հայտնի է Աստեղունք, Աստեղոնք կամ Աստղոնք անուններով։ Աստղաբերդը հետագայում հիշատակվում է որպես Որսորդ Ավոյի բերդ։ Հնագիտական նյութի մնացորդներ կան բերդի շուրջ, որը շրջանի քուրդ բնակչության շրջանում հայտնի է որպես Հասպետ (ՀՀՇՏԲ 1986, 344; ՀՍՀ 1974, 577)։

Ճարտարապետություն

Հասպետի բերդը Մուշ քաղաքի կենտրոնից 4,5 կմ հեռավորության վրա է և Սողուջակ գյուղից 1,5 կմ հարավ-արևելք է (նկ. 1)։ Գյուղից հնավայր հնարավոր է հասնել գրունտային ճանապարհով։ Բերդը հեռվից դժվար է նկատել, քանի որ պատերի շարվածքի մեջ օգտագործված մանրաքարերը լեռան բնական ժայռի նյութից են։ Հնավայրը լեռան հարավային կողմում է գտնվում, որտեղից դեպի դաշտավայր հիանալի տեսարան է բացվում։ Զգալիորեն զառիթափ լանջի դիրքը այն բնական ապաստարան է դարձնում։

Հասպետի բերդը համեմատաբար փոքր է։ Ամբողջ կառույցը մոտավորապես 750 քմ հողատարածք է զբաղեցնում; ներքին՝ բնակության համար նախատեսված տարածքը՝ շրջապատված պաշտպանական պարիսպներով և բաստիոններով, շուրջ 500 քմ է կազմում։ Չորս բաստիոնները և որոշ պաշտպանական պատեր պահպանվել են։ Մեկ ամբողջական

Նկ. 2 Հասպետի բերդում պատի եղլնաձլաձև շարվածք

պարսպապատ անկանոն հնգանկյունու ձև ունեցողը բնակավայրը հարավ-արևմտյան անկյունին է միացնում: Այս պարիսպը շարունակվում է դեպի հյուսիս՝ հանդիպելով բաստիոնի: Հյուսիս-արևելյան անկյունում նկատելի են փոքրիկ մուտք դեպի բնակավայր և մի շարք կից տարածքներ ու պարսպի մատցորդներ:

Կառույցի պատերի քարերը շարված են եղլնաձլաձև (ասեղնագործ)[1] հարդարման մոտիվով[2], որը ձեռք է բերվում քարերի մի շարքը դեպի աջ, իսկ հաջորդը շարքը դեպի ձախ թեքված շարելով (նկ. 2): Հորիզոնական միացումներով քարե շարքերի ուղղվածությունը կարելի է տեսնել միայն պատերի անկյունների մոտ գտնվող մի քանի հատվածներում և բացվածքների կողաեզրերում: Բաստիոնների քարե որմերի հաստությունը մոտավորապես 1,0 մ է, իսկ պաշտպանական պատերինը՝ 1,10-1,30 մ: Միացման կետերում տեսանելի է կրաքարի հիմքով սպիտակ շաղախ: Բաստիոններն ու

Նկ. 3 Հիմական ժայռին միացող պատերը

պաշտպանական պարիսպները միացված են հիմաժայռին (նկ. 3):

Հատման հատվածում բաստիոնները շրջանաձև են՝ կոնաձև (նկ. 2 և նկ. 4): Հարավ-արևելյան բաստիոնը 1,8 մ տրամագիծ ունի: Արևելյան կողմում ինքնատիպ բացվածք կա, որի կողակները անտաշ քարից են՝ հորիզոնական միացումներով: Բացվածքի շուրջ նյութերի կորուստի պատճառով հնարավոր չէ ճշգրիտ հասկանալ շինարարական տեխնիկան. այն, հավանաբար, հարթ ճակատաքար ուներ: Բաստիոնների պատերի վերին հատվածները փլվել են, ուստի դրանց նախնական

1 Որմադրության այս տեսակը հայտնի է նաև որպես opus spicatum: Այն հռոմեական դարաշրջանից հայտնիշարվածքի տեխնիկաներից մեկն է, որը շարունակվել է կիրառվել միջնադարում:

2 Եղլնաձլաձև մոտիվը հայտնաբերվել է նաև Եղրդուտ վանքի (Կարմիր վանք) հարավային և արևմտյան պատերի շարվածքում:



Նկ. 4 Բաստիոնի կոնաձև տեսքը

բարձրությունը կամ տանիքի կառուցվածքը դժվար է պարզել:

Բնակավայրի հյուսիս-արևմտյան կողմում գտնվող բաստիոնի պատերի վրա կան անցքեր, որոնք, հավանաբար, պատկանել են շրջանաձև հատում ունեցող փայտե առարկաների, որոնք տարբեր բարձրություններում մոտավորապես 17-20 սմ տրամագիծ ունեին (նկ. 2): Այս շրջանակ-առարկաները տեղադրվում էին պատի լայնության ուղղությամբ. ուստի, հավանական է, որ դրանք ոչ թե երիզներ, այլ հենակամուրջ էին: Հնարավոր է, որ դրանք օգտագործվել են փայտե հարթակի նախնական կառուցման ժամանակ: Այնուամենայնիվ, տարածքում այլ պաշտպանական կառույցների ուսումնասիրությունը կարող է զարգացնել այս տեսակետը:

Ներկա վիճակ

Հասպետի բերդի բաստիոններն ու պարիսպները մասամբ պահպանվել են: Հնավայրը լի է փլուզված բաստիոնների և պաշտպանական պարիսպներից մնացած մանրաքարերով և հողով: Էքվածության պատճառով հնավայրում պահպանման կամ վերանորոգման բացակայությունը՝ իրավիճակի վատթարացման պատճառ է դառնում: Պահպանված կառուցվածքային առանձնահատկությունների առավել ցայտուն փասներից են նյութի կորուստը, խոռոչները և ճաքերը: Այս տարածաշրջանում կլիմայական պայմանները բավականին դաժան են, հատկապես ձմռանը: Առանց ծածկի, տեղանքն անպաշտպան է և շարունակում է ավիրվել:

Հասպետի բերդը հեռացված է առկա բնակավայրերից, ուստի անվտանգության խնդիրները մեծ մտահոգություն չեն: Բաստիոնի և պաշտպանական պարիսպների վրա ապօրինի պեղումների, ինչպես նաև վանդալության հետքերը տեսանելի են:

Ռիսկերի վերլուծություն և առաջարկություններ

Հասպետի բերդի վերջնական ոչնչացումը կանխելու համար պետք է պահպանության միջոցառումներ ձեռնարկվեն: Հնավայրի հնագիտական արժեքը դրա պահպանմանն առաջնահերթություն տվող ռազմավարություն է պահանջում. վերակառուցման հետ կապված ցանկացած միջամտությունից պետք է խուսափել, և վերանորոգում պետք է իրականացվի միայն այն դեպքում, երբ կան վտանգավոր, կառուցվածքային խնդիրներ:

Մշակույթի և զբոսաշրջության նախարարության հսկողության ներքո իրականացվող համապարփակ հետազոտությունը և հնագիտական պեղումները կհարստացնեն հնավայրի, ինչպես նաև տարածաշրջանի մասին գիտելիքները: Նման աշխատանքները կարող են նաև օգտակար լինել տեղական աղբյուրների և հաստատությունների համար: Հնագիտական պեղումների նպատակով հնավայրից փլատակների և հողի հեռացումը կնպաստի պահպանման ծրագրի մշակմանը:

Այն, որ բերդը Մուշ քաղաքին մոտ է, առավելություն է, քանի որ հնարավորություն կտա զբոսաշրջիկներին մեկօրյա ճամփորդության շրջանակում այցելել այս հնավայր: Պահպանման ծրագրի շրջանակներում կարող են մշակվել ռազմավարություններ՝ վստահ լինելու համար, որ ցանկացած այցելու կարող է ապահով հասնել և տեսնել հնավայրը: Այնուամենայնիվ, տարածաշրջանի այլ պաշտպանական կառույցների հետագա ուսումնասիրությունը թույլ կտա պլանավորել թեմատիկ երթուղիներ և այդ հնավայրերն ավելի լայն մասշտաբով տեսանելիություն կստանան:

Սուրբ Մարինե եկեղեցի

Կենտրոն (Centrum) թաղ, Քալե թաղամաս	Կառուցման ժամանակաշրջան/տարեթիվ՝ **անհայտ**
GPS՝ **38°43'43.41"N, 41°29'15.26"E**	Ներկայիս գործառույթ՝ **ավերակ**
Գրանցման տարեթիվ և համար՝ **Էրզրումի Մշակութային ժառանգության պահպանության շրջանային վարչություն, 28.02.2008 – 852**	

Պատմություն

Մեզ որպես Սուրբ Մարինե եկեղեցի հայտնի կառույցի վերաբերյալ շատ սահմանափակ տեղեկություններ կան (հղում 9):

Սուրբ Մարինե եկեղեցին Մուշի պատմական բնակավայրի ութ եկեղեցիներից մեկն է (Սաֆրաստյան 1965, 183): Այն քաղաքի գլխավոր եկեղեցին է եղել: Եկեղեցին հայտնի էր որպես Մուշի ամենագեղեցիկ եկեղեցի և կենտրոնական եկեղեցին էր համարվում. այն իր գործառույթը պահպանել է մինչև 1915 թվականը: Տարբեր ժամանակներում Մուշ բնակավայրում են եղել նաև հետևյալ եկեղեցիները՝ Սուրբ Կիրակոս, Սուրբ Սարգիս, Սուրբ Փրկիչ, Սուրբ Ավետարանոց, Սուրբ Ստեփանոս, Սուրբ Մարինե, Սուրբ Հարություն: Ամենահին եկեղեցին Սուրբ Փրկիչն է, որը հիշատակվում է 851-852 թթ. իրադարձությունների արձանագրություններում (հղում): 20-րդ դարի սկզբին Մուշի հայկական թաղամասերում գործող եկեղեցիներն էին Սուրբ Հարություն եկեղեցին (Վերին թաղ), Սուրբ Մարինե եկեղեցին և Սուրբ Գևորգ եկեղեցին (Սուրբ Մարինե թաղամաս), Սուրբ Աստվածածին եկեղեցին (Զորի թաղ), Սուրբ Սարգիս եկեղեցին (Բրուտի թաղ) եւ Սուրբ Կիրակոս եկեղեցին (Ջիգրաշենի թաղ) (Սաֆրաստյան1965, 183; Վան-Տոսպ 1916, 8):

Քննարկվող կառույցը նախկին Սուրբ Մարինե թաղամասում է գտնվում և այժմ ավերակ է: Չկան պահպանված ճարտարապետական տարրեր, որոնք կարող են ուղղակիորեն

Նկ. 1 Սուրբ Մարինե, տեսարան արևմուտքից



Նկ. 2 Սուրբ Մարինե, հարավ-արևելյան ճակատ

կապվել եկեղեցու հետ: Այս համատեքստում դժվար է տեղի հիշատակություններում և գրականության մեջ նշվող Սուրբ Մարինե եկեղեցին կապել այս կառույցի հետ: Ենթադրվում է, որ մաացորդները կարող են պատկանել լրացուցիչ կառույցի, որ կից է եկեղեցու համալիրին կամ կրոնական կենտրոնին:

Ճարտարապետություն

Կառույցը գտնվում է Մուշ քաղաքի կենտրոնում: Այն հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան առանցքի վրա է՝ Ֆաբրիկա և Դեիրմենլեր փողոցների միջև ընկած հատվածում՝ Քալե թաղամասից հարավ ընկած նախկին հայկական թաղամասում (Սուրբ Մարինե): Ներսույթի չափերը 15,17x8,00 մ են: Կարող ենք փաստել, որ այն նրբագեղ կառույց է, եթե դիտարկենք դրա քարե շարվածքը, դռների ու պատուհանների աղյուսե կամարները և զարդարված երկաթե պատուհանները (նկ. 1, նկ. 2):

Եկեղեցու պատերը մանրաքարից են, մինչդեռ դռների և պատուհանների շրջանակները՝ սպիտակ սրբատաշ քարից են պատրաստված: Կամարները աղյուսաշեն են: Յուրաքանչյուր աղյուսի չափերը 5x17-18x31սմ է: Հատակի, առաստաղի, տանիքի և դռան վերևի հատվածի համար փայտ է օգտագործվել: Փայտամածի անցքերը տեսանելի են: Հիմական պատերը՝ նույն օրինաչափությունն ու տեխնիկան ունեն՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հատվածում: Պատերին շարվածքին փոփոխական շարքի տեսք է տրվել: Նմանատիպ շինարարական տեխնիկա և նյութերի օգտագործումը հաճախադեպ է ժամանակակից Թուրքիայի մոնումենտալ ճարտարապետականհուշարձաններում, որոնք 6-14-րդ դարերին են պատկանում (Էքինջի-Դենիզ-Գյուռ 2012, 173-184):

Կառույցը ամբողջական հողակտորի վրա է՝ հյուսիս-արևմտյան և հարավ-արևելյան կողմերից ավելի երկար պատերով: Այս պատերից յուրաքանչյուրը կիսասյուների միջև մեկական պատուհան ունի: Յուրաքանչյուր պատուհանի վերնամասում նույն առանցքի երկայնքով երեք պատուհան և երեք սյուն կա (նկ. 3): Ներքին մասում պատուհանները սկսվում են դռան վերևում գտնվող կամարի նույն բարձրությունից և բարձրանում պատի ամբողջ բարձրությամբ: Արտաքուստ պատուհանի բարձրությունը կազմում է ներքին պատերի բարձրության մոտավորապես 2/3-ը: Երկու ֆասադներն էլ հյուսիս-արևելյան պատի մոտ խորշ ունեն: Հյուսիս-արևմտյան պատի խորշը երկու շարք աղյուսով կամարակապ է և ծածկված փոքր, աղյուսե կիսագմբեթով: Նրա ամբողջական բարձրությունը չի նշմարվում, իսկ հիմքը կոտրված է: Հարավ-արևելյան խորշն ավելի փոքր է, բայց նման է շինության մյուս խորշին: Ավելի փոքր խորշի հիմքը ծածկված է միակտոր կրաքարով:

Նկ. 3 Սուրբ Մարինե, ինտերիերի տեսքը հարավ-արևմուտքից

Նկ. 4 Հարավ-արևմտյան մուտք և եզրավորման հետքեր

Մուտքը նշմարելի է մոտակայքում: Պատը երիզող սրբատաշ քարից շրջանակն ատամնավոր է: Դռան բացվածքը ներսից ծածկված է մեկ շարքով աղյուսե կամարով, իսկ արտաքին մասում՝ երկշարք աղյուսե կամարով:

Հարավ-արևմտյան պատի կամարակապ բացվածքները, որոնք մակերեսը բաժանում են երեք հավասար մասերի, հերթական մուտքերն են դեպի տարածք: Դռների կամարները երկշարք աղյուսե շարվածքով են կերտված: Միջին դուռն ավելի բարձր է, քան մյուսները: Այս երեք դռները, որոնց շրջանակները սրբատաշ քարից են, հավանաբար կառույցը միացրել են մեկ այլ շինության հետ, որն այժմ կորսված է: Պատի երկարությամբ աղյուսե կամարների վերին հատվածի վրա հորիզոնական երիզների հետքեր կան: Այս մակերևույթի վրա փլուզված ֆրոնտոնի հետքեր են երևում (նկ. 4):

Հյուսիս-արևելյան պատը, որը գլխավոր մուտքի առանցքի վրա է, մեջտեղում վառարանի և ծխնելույզի հետքեր ունի (նկ. 5): Կողային պատի վրա վառարանի երկու կողմերում օվալաձև պատուհաններ կան՝ շրջանակված սրբատաշ քարով և երկաթե ճաղերով: Այս պատուհանները պահպանել են իրենց ձևը հյուսիսային կողմում: Յուրաքանչյուր պատուհան չորս հորիզոնական և չորս ուղղահայաց երկաթյա ճաղեր ունի, որոնք նրբագեղորեն մշակված են զարդատարերով (նկ. 6):

Ներկա վիճակ

Թաղամասի պատմական կառուցվածքն արտացոլող բնակելի ճարտարապետության օրինակները 2012 թվականից սկսած քանդվել և փոխարինվել են ժամանակակից բնակելի շենքերով: Արդյունքում հնավայրն այժմ ժամանակակից քաղաքային կերպար ունի: Շինությունը ծածկի կոնստրուկցիա չունի: Կառույցի մուտքը չի վերահսկվում: Պատերի որոշ մասեր կորսված են, իսկ ընդհանուր կառույցը՝ ավերակ վիճակում:

Նկ. 5 Ծխնելույզի մաս

Նկ. 6 Պատուհանի երկաթե ճաղավանդակի մաս

Առաջին հայացքից (և գրականության օգնությամբ) հնավայրը միանավ, բազիլիկ տիպի հատակագծով եկեղեցի է հիշեցնում: Սակայն պատերի դիրքավորումը, աբսիդի բացակայությունը և ֆունկցիոնալ հարմարությունների բացակայությունը նվազեցնում են այս կառույցի՝ եկեղեցի լինելու հավանականությունը: Հաշվի առնելով հնավայրին վերաբերվող առկա գրականությունը և հարցումները՝ ենթադրվում է, որ կառույցը Սուրբ Մարինե եկեղեցուն կից միավոր է եղել՝ Մուշի եպիսկոպոսական կենտրոնի թաղային ներկայացուցչություն, համայնքային շենք՝ կապված եկեղեցական համալիրի հետ կամ կցամաս՝ ծառայողական գործառույթներով:

Ռիսկերի վերլուծություն և առաջարկություններ

Շենքը անբարեկարգ վիճակում է և ոչ սեյսմակայուն է: Քանի որ շինությունը գտնվում է երկու խոշոր սեյսմիկ խզումային խախտումների խաչմերուկում, կարելի է ասել, որ շինության ճարտարապետական վիճակը բավականին տուժում է: Հարակից տարածքում շինարարական գործողությունները պետք է, որ նույնպես նպաստած լինեն դրա կառուցվածքային ամբողջականության թուլացմանը:

Որպես առաջին քայլ, խորհուրդ է տրվում սահմանափակել հնավայրի մուտքը: Հնավայրի համար պետք է տեղեկատվական վահանակներ պատրաստվեն, և այցելությունների քանակը պետք է սահմանափակվի: Կառույցը եղանակային պայմաններից պաշտպանելու համար պետք է ավելացվի ծածկի կոնստրուկցիա՝ որպես ժամանակավոր պահպանման միջոցառումների շրջանակներում անհետաձգելի միջամտություն, որպեսզի նվազագույնի հասցվի հետագա փլուզմը և նյութերի կորստի ռիսկը:

Խորհուրդ է տրվում այս գրանցված շինությունը պահպանել գրաֆիկական նախագծերի պատրաստման և վերականգնման միջոցով:

Սուվարանի (Քարձորի) մատուռ

Կենտրոն (Centrum) թաղ, Սուվարան գյուղ, գյուղամեջ	Կառուցման ժամանակաշրջան/տարեթիվ՝
GPS՝ 38°46'3.02"N, 41°24'3.28"E	Ներկայիս գործառույթ՝ անհայտ
Գրանցման տարեթիվ և համար՝ Վանի Մշակութային ժառանգության պահպանության շրջանային վարչություն, 24.02.2015 – 801	

Պատմություն

Սուվարան գյուղը գտնվում է Մշո դաշտում՝ քաղաքից 8 կմ հյուսիս-արևմուտք: Գյուղի հին անվանումն է Կարցոր/Քարսորո/Քասոր: Բնակավայրը, որը նաև հին եկեղեցի է ունեցել, 1889 թվականին ուներ 60 տուն հայ, 10 տուն քուրդ բնակչություն, իսկ 1909 թվականին՝ 40 տուն հայ, 9 տուն քուրդ բնակչություն: Հայտնի է, որ գյուղի բնակչությունը ամբողջովին քրդացել է 1915 թվականից որոշ ժամանակ առաջ (ՀՀՇՏԲ 2001, 329): Պատրիարքարանի արձանագրությունները վկայում են, որ գյուղում 500 հայ՝ 60 տուն և 17 տուն քուրդ է ապրել: Նշվում է, որ հայերը մեկ եկեղեցի և 25 աշակերտով դպրոց են ունեցել (Գևորգյան-Փաբուջյան 2012, 489): «Հուշամատյան»-ի աղբյուրների համաձայն՝ գյուղում են եղել փայտաշեն Սուրբ Մինաս եկեղեցին, ինչպես նաև խարխուլ Սուրբ Թորոս և Սուրբ Թուխմանուկ եկեղեցիները (հղում 11): Կրոնական կառույցը, որը Վանի Մշակութային ժառանգության պահպանության շրջանային վարչության գրանցումներում նշված է որպես «Սուվարան գյուղի եկեղեցի», հավանաբար առնչվում է գրականության մեջ տեղ գտած այս եկեղեցիներից մեկին. սակայն ներկայումս հնարավոր չէ մանրամասն տեղեկություն հայտնել դրա անվան կամ պատմական նշանակության մասին:

Ճարտարապետություն

Կառույցը գտնվում է Չաղ գետակի մոտ՝ Սուվարան գյուղից հարավ (նկ. 1): Այս միանավ,

Նկ. 1 Սուվարան գյուղի մատուռ, արևմտյան ճակատ և մուտք



ուղղանկյուն հատակագծով կառույցը (արտաքին չափերը՝ 6,55 մ x 9,55 մ) ծածկված է գլանաձև թաղով (նկ. 2)։ Աբսիդը (լայնությունը՝ 3,75 մ, բացվածքը՝ 2,50 մ) ինտերիերում կիսակլոր է, սակայն արտաքինից այն չի ուրվագծվում։ Ներսում հյուսիսային և հարավային պատերին երկու կամարաշարեր կան (նկ. 3)։ Կամարների ներքո մոտ 30 սմ խորությամբ փորվածքներ են՝ պատի վրա լայն խորշեր ստեղծելու համար։ Հյուսիս-արևելյան խորշըամենախորն է. դրանում վկայված է ջրի հետ առնչվող ճարտարապետական տարրեր։ Պատի երկու կամարները պահող սյուները միացված են աղյուսե կամարի միջոցով, որն ուղղահայաց է գլանաձև թաղին՝ հյուսիս-հարավային առանցքով։ Այս կամարի ուրվագիծը տեսանելի է նաև հարավային արտաքին ճակատին։ Աբսիդի պատին, ինչպես նաև արևմտյան ճակատի մուտքի վերևում բացվածքներ են փորված. հյուսիսային և հարավային ճակատները հարթ են (նկ. 3)։ Աբսցիսի պատի հատման հատվածում՝ տարբեր մակարդակներում երկու փորվածքներ՝ են երևում (ստորին փորվածքի բարձրությունը՝ 28 սմ և լայնությունը՝ 28 սմ, ստորին փորվածքի



Նկ. 2 Արևելյան և հյուսիսային ճակատներ

Նկ. 3 Աբսիդը

բարձրությունը 29 սմ և լայնությունը՝ 37 սմ է): Վերին փորվածքը տեսանելի է արևելյան ճակատի ֆասված պատի միջով:

Եկեղեցու արևմտյան ճակատը ներառում է ճակատային պատ, որը ծածկում է գլանաձև կամարը՝ ի լրումս իրեն կրող օժանդակ պատի: Թաղի վերնամասի լցքի նյութի մի մասը կորսված է. այսպիսով արտաքին ուրվագծի մակարդակում այս բարձրության վրա ելուստներ կան (նկ. 2): Համաչափ ճակատի միջնամասում մուտքն է՝ հարթ ճակատաքարով և փոքրիկ պատուհանի բացվածքով՝ տանիքի մոտ: Մուտքի վերևում գտնվող միակտոր ճակատաքարը վերաօգտագործված քար է; դրա ստորին հատվածում օձի պատկեր կա: Աղյուսե գլանաձև թաղը տեսանելի է այս ճակատի ավելի բարձր հատվածներում, որտեղ այս ճակատի առավել բարձր մակարդակում խճաքարի կտորները կորսված են: Թաղի կամարի անմիջապես ներքևում գտնվող պատուհանը նույնպես աղյուսե կամար ունի:

Հարավային ֆասադի վրա տեսանելի են թաղը և հյուսիս-հարավ առանցքի վրա ընկած կամարը, քանի որ թաղի վերևում գտնվող լիցքը թափված է (նկ. 4): Հաստատված է, որ արևմտյան պատի և աբսիդի կորնթարդի միջև ընկած հատվածում թաղի և տանիքի միջև լիցքի համար մանրաքարեր և շաղախ է օգտագործվել: Սակայն գմբեթի և դրա շուրջ գտնվող շինարարական տարրերի միջև լիցքի նյութը ավելի բարդ է. այս հատվածում հետազոտված տարրերը տեղեկություն են տրամադրում տեղական արհեստագործության մասին: Փայտե գերանների համար նախատեսված անցքերը (խաչաձև հատումներով էին, սակայն ներկայումս դրանցից շատերը հիմնականում կորսված են), որոնք ձգվում էին տանիքին մոտ հյուսիս-հարավային ուղղությամբ, զգալիորեն նկատելի են: Հայտնի է, որ կողք կողքի փայտե գերանների միջև 4-5 սմ շաղախի շերտ է եղել: Հատկանշական է, որ ամֆորները այս հարթության անմիջապես ներքևում էին գտնվում (նկ. 5): Ավելին, անցքեր կան արևելյան կողմի գմբեթարդի մոտ:

Նկ. 4 Հարավային ճակատ

Արևելյան ճակատի շարը խճաքարերով է, և կառույցը աբսիդի պատուհանի բացվածքից զատ այլ ճարտարապետական առանձնահատկություններ չունի (նկ. 2)։ Բացվածքի շրջանակներն ու ճակատաքարը պրիզմայանման են. դրանք նաև ավելի հաստ են, և քարերը պատի համար օգտագործված քարերից ավելի կոպիտ են տաշված։

Ճակատները շարված են խճաքարերից։ Շարքերում ավելի մեծ և փոքր խճաքարերը օգտագործվել են համատեղ։ Քարերի երկրաչափական առանձնահատկությունները հուշում են, որ դրանք գետակի հունից են բերվել։ Պատերի կողային հատվածները ավելի մեծ քարերով են կառուցվել։ Թաղը, կամարները, Ինտերիերի բացվածքները աղյուսից են կառուցված (6x16x26 սմ), մինչդեռ ներսույթի մասը մանրաքարից է։ Հյուսիսային և հարավային պատերի կամարակալ շարքերի վրա փոքր խորշեր կան, որոնք հավանաբար փայտե գերաններից են մնացել (հատման հատվածը՝ 17x17 սմ), որոնք էլ տեղադրված են եղել պատի հարթության վրա և՛ուղղահայաց, և՛ զուգահեռ։

Ներկա վիճակ

Շինության մնացորդները, որ մոտավորապես 200 մ2 տարածք է զբաղեցրել, կառուցված է խճաքարից և բաղկացած է չորս տարածությունից. այն մատուռից դեպի արևելք է գտնվում։

Նկ. 5 Մանրամասն, աբսիդից վերև գմբեթարդի լիցքը

Այս կառույցը գտնվում է մատուռի աբսիդից ընդամենը 1,50-2,00 մ հեռավորության վրա դրան ամենամոտ կետում։ Վկայություններ կան, որ նմանատիպ ավերակները շարունակվում են մատուռից հյուսիս գտնվող չասֆալտապատ ճանապարհից անմիջապես այն կողմ։

Սուվարանի մատուռը մեծապես փնասված կառույց է, որը երկար ժամանակ անուշադրության է մատնվել։ Տանիքի ամբողջական ծածկի բացակայությունը նշանակում է, որ այն անպաշտպան է բնական տարրերքների դեմ, ուստի վիճակը շարունակում է վատթարանալ։ Հնավայրը և դրա շրջակայքը խոցելի են նաև վանդալիզմի պատճառով։ Արտաքին հատվածում շինարարական նյութերի կորստի վկայություն կա. հատկապես խճաքարով շարված

ճակատներում, և թաղի վերևի լիցքում: Նմանապես, կորուստներ կան ինտերիերի պատերի և սյուների վրա, ինչպես նաև աղյուսե կամարների վրա: Հատակն աստիճանաբար ծածկվել է հողով. ուստի հնարավոր չի եղել իրական հատակի վերաբերյալ դիտարկումներ անել:

Ռիսկերի վերլուծություն և առաջարկություններ

Սուվարանի մատուռը հատուկ[1] կառույց է, որը պատկերացումներ է տալիս այս տարածաշրջանին հատուկ քարաշեն կառույցներին վերաբերող շինարարական մեթոդների մասին: Թեև այն փոքր կառույց է, սակայն դրա շինարարական նյութերում, ինչպես նաև հատակագծի մեջ օգտագործված հատուկ ճարտարապետական և կառուցվածքային լուծումների բազմազանություն է առկա: Այն ունի պատմական նշանակություն և անհրաժեշտ է այն պահպանել: Այդ նպատակով կարելի է մշակել ծրագրեր և իրականացնել գյուղի բնակիչների տարբեր տարիքային խմբերի շրջանակներում՝ մշակութային ժառանգության պահպանմանը նպաստելու համար: Այս կառույցի մասին իրազեկության և սեփականության զգացողության բարձրացման համար չափազանց շահավետ կարող է լինել, եթե հնավայրում պահպանության ծրագրի իրականացման ժամանակ տեղացիների համար սեմինարներ և դասեր իրականացվեն պահպանության-վերանորոգման պրակտիկայի, արհեստագործության, ինչպես նաև դրանց դերի վերաբերյալ: Միևնույն ժամանակ, բնության տարրերքների հետևանքով առաջացած հետագա վատթարացումները կարելի է կանխվել տանիքի պաշտպանիչ կոնստրուկցիայի տեղադրման միջոցով: Մուտքի մոտ դուռ տեղադրելը և դեպի տանիք մուտքի սահմանափակումը ևս կարող է նվազեցնել խախտումների և վանդալիզմի հետևանքով առաջացած վնասները:

1 Նմանատիպ շինարարական մեթոդներ ի հայտ են գալիս Սուրբ Սարգիս եկեղեցում, որի հիմնական պատերը նույնպես մանրաքարից են:

Սուրբ Սարգիս եկեղեցի

Կենտրոն (Centrum) թաղ, Քըրքյոյ (Սիրոնք/Սերոնգ/Ցրոնք)	Կառուցման ժամանակաշրջան/տարեթիվ՝ **1678**
GPS՝ **38°49'45.38"N 41°39'29.92" E**	Ներկայիս գործառույթ՝ **ավերակ**
Գրանցման տարեթիվ և համար՝ **Վանի Մշակութային ժառանգության պահպանության շրջանային վարչություն, 06.01.2011 – 749**	

Պատմություն

Ցրոնքը հայկական ամենահայտնի գյուղերից էր, որը օսմանյան կայսրության շրջանում գտնվում էր Բիթլիս նահանգի, Մուշ գավառում և Մուշի թաղում: Այն Մեղրագետի հովտում էր՝ (Bal [Honey] գետ, Մուրատ [Արածանի] գետի վտակներից մեկը, Քարասու) Հացիկ գյուղի մոտ: Անտիկ ժամանակներում Ցրոնքը Տուրուբերանի տարածքում գտնվող Տարոն շրջանի մասն է եղել:

Գրավոր աղբյուրներում Ցրոնքի մասին մեզ հայտնի առաջին հիշատակումը Մովսես Խորենացունն է (410-490), ով ծնվել է Մուշի Խորոնք գյուղում և հայերի շրջանում հայտնի է որպես պատմահայր: Նա գրում է, որ Տարբանը՝ Նոյի որդի Սեմի կրտսեր որդին, իր 30 որդիների, 15 դուստրերի և նրանց ամուսինների հետ ապրում էր հովտում, որի մեջով Արածանի գետն էր հոսում: Ավանդության համաձայն՝ այս շրջանը սկզբում կոչվել է Տարոն՝ որպես տուրք Տարբանի, սակայն այն հայտնի է դարձել որպես Ցրոնք (ծռվել) այն բանից հետո, երբ Տարբանի որդիները բաժանվել են միմյանցից հենց այնտեղ, որտեղ գյուղն է գտնվում (Խորենացի 1961, 94):

Ցրոնք գյուղը մի քանի անգամ ավերվել և վերակառուցվել է. բնակավայրի վերաբերյալ ժողովրդագրական տվյալները նույնպես տարբեր են: Գյուղի հայկական բնակչությունը, որը 1880 թվականին կազմում էր 300 տուն, իսկ 1890 թվականին՝ 320 ծուխ, 3000 բնակչից էր բաղկացած, որոնք մինչև Առաջին համաշխարհային

Նկ. 1 Արևմտյան (մուտքի) ճակատ, ընդհանուր տեսք



Նկ. 2 Ինտերիեր. տեսարան դեպի արևելք

Նկ. 3 Ինտերիեր. տեսարան դեպի արևմուտք

պատերազմը 300-320 ծուխ էին (կամ, ըստ Սասունի՝ 500 ծուխ)։ Ցրոնքի հայերը գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ, խաղողագործությամբ, ձիթապտղի մշակմամբ, արհեստագործությամբ և առևտրով էին զբաղվում։ Հայտնի էր, որ գյուղում երկու եկեղեցի և 23 աշակերտ ունեցող դպրոց է եղել, որը հիմնադրվել էր (1861 թ.) Հայր Մխիթարի աջակցությամբ (ՀՀՇՏԲ 2001, 165; Սասունի 1956, 353; Ա-ԹՌ 1912, 105)։

Գևորգյանը գրում է (2012, 490), որ, ըստ Հայոց պատրիարքարանի 1913-1914 թթ. տվյալների, Ցրոնք գյուղում 2512 հայեր են ապրել՝ 240 տուն։ Գյուղում եղել է դպրոց՝ 60 աշակերտ ունեցող, եկեղեցիներ՝ Սուրբ Սարգիս և Սուրբ Հակոբ և չորս ուխտատեղի։ Այսօր Սուրբ Սարգիսից ոչ հեռու հին գերեզմանների (ասվում է՝ երկուսն են) հետքեր կան։ Նշվում է, որ Ցրոնքի որոշ բնակիչներ տեղափոխվել են Խասգյուղ (ներկայումս հայտնի է որպես Հասքյոյ) (Գևորգյան-Փարուջյան 2012, 165)։ Այնուամենայնիվ, Ցրոնք գյուղը շարունակել է իր գոյությունը մինչև 1915 թվականը։ Քուրդ բնակիչները գյուղի անունն արտասանել են որպես Սիրոնք։

Ցրոնք գյուղի երկու եկեղեցիներից մեկից՝ Սուրբ Հակոբ եկեղեցուց միայն հիմքերի հետքերն են մնացել։ «Հուշամատյան»-ի տվյալների համաձայն՝ երկու եկեղեցիներն էլ նույն թվականին են կառուցվել (1151)։ Սուրբ Հակոբ եկեղեցու քայքայված որմերը վերանորոգվել է 1664-ին, իսկ Սուրբ Սարգսինը՝ 1678-ին։ Արձանագրվել է, որ մինչ 1915 թվականը ևս երկու եկեղեցիներ են եղել, որոնցից մեկը Սուրբ Գևորգն է։ Նաև նշվում է, որ այդ ժամանակվա

հոգևորականների անուններն էին հայր Մուշեղ Միքայելյան, հայր Հովհաննես Տեր-Հովհաննիսյան և հայր Ներսես Աստվածատուրյան (հղում 12):

Ճարտարապետություն

Սուրբ Սարգիս եկեղեցու արտաքին չափսերը 9,5x19,2 մ են: Այն դեռ կանգուն է՝ ամբողջական է նաև տանիքը (նկ. 1): Եկեղեցին հարթ տարածքի վրա է, սակայն ներքին և արտաքին հատվածում հողի շերտից թմբեր են առաջացել: Հատկապես արտաքին պատերի զգալի մաս ծածկված է հողի շերտով: Դաշտային աշխատանքների ժամանակ հատակի նախնական մակարդակը որևէ հատվածում հնարավոր չեղավ հասկանալ: Գյուղում մեկ այլ եկեղեցի կա՝ նվիրված Սուրբ Հակոբին, որից միայն պատերն են մնացել: Դրանք հիմքից 50-60 սմ բարձրության վրա են գտնվում: Դաշտային աշխատանքի ընթացքում Սուրբ Հակոբ եկեղեցու մասին հավաքագրված տեղեկատվությունները նկարագրված են այս զեկույցի վերջում:

Սուրբ Սարգիս եկեղեցին քարաշեն կառույց է: Նրա ներքին և արտաքին պատերի երեսակալման համար ուղղանկյուն, կոպիտատաշ քարեր են օգտագործվել: Փլուզված հատվածներից ակնհայտ է, որ երեսների միջև եղած լիցքը խճաքարից է: Մուտքի բացվածքը հատվածային կամար ունի, որի վերևում երկար, նեղ լուսամուտ է: Կառույցի ներսի լայնությունը 6,5 մ է: Մուտքի և աբսիդի ամենահեռավոր կետի միջև հեռավորությունը 16,6 մ է, որը ծածկված է գլանաձև թաղով: Մանրաքարերն ու անտաշ քարերը՝ երբեմն աղյուսների հետ միասին, տեսանելի են թաղի շարքերում:

Կողային պատերից յուրաքանչյուրում երեքական խորշ կա (ներքին լայնությունը՝ 3,70 մ)՝ հատվածային կամարներով: Այս կամարներների միացման տեղում, պատի վրա սյուների հետքեր կան, որոնք տանում են դեպի թաղի կամարները: Այս ճարտարապետական տարրերի մեծ մասը կորսված են, բացառությամբ հենաքարերի (նման են պատի հենարաններին), որոնք օժանդակում են կամարակալի քարերը: Վերջիններս երևում են պահպանված (չկոտրված) մակեսներին: Միայն աբսիդը պատին միացնող և կամարից հարավ գտնվող քարերն են տեղում: Պատի և թաղի վրայի հետքերը ցույց են տալիս, որ որմնամույթերն ու կամարները 70 սմ լայնություն են ունեցել:

Հյուսիսային և հարավային պատերի կենտրոնում երկու դեմ հանդիման լուսամուտների բացվածքներ կան: Հյուսիսային պատի լուսամուտի վերնամասի շրջանակն անմիջապես կամարակապ միջին խորշի ներսում է: Բացվածքը մոտավորապես 50x50 սմ է: Պատուհանի ստորին եզրից սկսող թեքությունը շարունակվում է մինչև կամարի կամարակալ գիծը, որտեղ այն հասնում է պատի ներքին երեսին: Այս կետում պատուհանի բացվածքը 90 սմ-ի է հասնում: Հարավային պատի պատուհանը նույն ձևն ու չափերն ունի, սակայն այն փակված է: Դրա վերնամասի շրջանակը դեռ պահպանվել է, բայց անմիջապես վերևում գտնվող կամարի հիմնաքարը կորսված է: Այս հատվածում փլուզումից առաջացած բացվածքը շարունակվում է դեպի վեր՝ մինչև թաղի բարձրության գրեթե կեսը:

Հյուսիսային պատի կամարակապ խորշերի արևելյան մասում ևս մեկ խորշ կա (լայնությունը՝ մոտ 80 սմ): Փոքր խորշը գտնվում է աբսիդին առավել մոտ գտնվող հատվածում: Թեև այս փոքր խորշի երեսպատման որոշ հատվածներ լավ վիճակում են, դրա բաղկացուցիչ տարրերի մեծ մասը կորել է: Դաշտային աշխատանքի ընթացքում այն հնարավոր չէր չափագրել: Այնուամենայնիվ, հատակագծում այս խորշի դիրքի, առանձնահատկությունների և մոտավոր չափերի միջոցով կարելի է ենթադրել, որ այն մկրտության ավազան է եղել (նկ. 4): Այս խորշը շրջանակող քարերի վրա զարդաքանդակի որոշ հետքեր են նկատելի: Արտաքին շրջանակի վրա կա նաև զարդագոտի:

Աբսիդի պատին պայտաձև կամարով պատուհան է տեղադրված: Կամարի միայն հյուսիսային հատվածն է պահպանվել. դրա կողային

Նկ. 4 Հատված, որտեղ, ենթադրաբար, մկրտության ավազանն էր

Նկ. 5 Աբսիդը և դեպի հարավ աստիճանավանդակը

քարերը կորսված են (նկ. 2)։ Ներկա վիճակում դրա ներսի լայնությունը 1,05 մ է։ Պատուհանը հնարավոր չէր չափել, քանի որ արտաքուստ դրա բաղկացուցիչ մասերը կորած են, սակայն քարի առաջին շարքը ցույց է տալիս, որ այն դեպի դուրս նեղացած է։ Այս պատուհանից հյուսիս երեք փոքր խորշեր կան։ Դրանց լայնությունը մոտավորապես 50 սմ է, երկարությունները՝ տարբեր են։ Այս խորշերից հյուսիս պայտաձև կամարի բոլոր քարերը դեռևս պահպանված են (նկ. 2)։ Մեջտեղի փոքր խորշի աջ անկյան վրա վաղ շրջանի խաչի ձևով հարդարանք կա։ Աբսիդի վերևի գմբեթարդի գագաթին շրջանաձև բացվածք կա։ Ենթադրվում է, որ դա փլուզման հետևանք է՝ ելնելով կամարի առանցքի վրա դրա դիրքավորությունից (տեղակայված է կամարի և գմբեթարդի միջև) և շուրջը գտնվող քարերի մակերեսների կոշտությունից։

Աբսիդից հարավ անկյուններով տարածություն կա. այն գտնվում է գմբեթարդի և հիմնական պատի միջև այնպես, որ զուգահեռ է պատի արտաքին երեսին (նկ. 5)։ Այս տարածությունը ձգվում է դեպի աբսիդի պատուհանի վերևը։ Վերևի ձախ անկյունում պահպանվել են բազալտե քարերից երկուսը, որոնք հավանաբար սահմանագծել են դրա շրջանակները։ Այս փոքրիկ սենյակի առաստաղը ծածկված է

Նկ.6 Սուրբ Հակոբ եկեղեցու ավերակները

եղել բարակ քարե սալերով։ Կան ավելի փոքր բարակ սալեր, որոնք հենված են հիմնական պատին. ենթադրվում է, որ դրանք կապ են ունեցել աստիճանների հետ։

Հյուսիսային, արտաքին ճակատի վերին սահմանից դուրս ցցված բարակ սալերը, ամենայն հավանականությամբ, քիվի մնացորդներ են։ Թաղի վերևի հողաշերտը մասամբ պահպանված է, սակայն տանիքից որևէ հետք չի երևում։ Քիվի մնացորդները հուշում են, որ տանիքը նույնպես կարող էր կառուցված լինել նույն սալերից։

Քըրքյոյում (Ցրոնք) մեկ այլ պատմական կառույց կա՝ Սուրբ Հակոբ եկեղեցին, որը գտնվում է Սուրբ Սարգիս եկեղեցուց 300 մ հյուսիս-արևելք՝ կարճ ճանապարհով և Քըրքոյ

մզկիթից 30 մ արևմուտք: Դրա արևելքում մի տուն կա, իսկ հարավից եկեղեցուն մեկ այլ կառույց է հարում: Հիմքի մակարդակից վեր պատերը փլված են: Ավերակները պատերի հիմական դասավորությունը հասկանալու համար բավարար չեն: Հնավայրը լցված է խճաքարով և հողով (նկ. 6):

Ներկա վիճակ

Սուրբ Սարգիս եկեղեցին գյուղի տարածքի հարթ հողատարածքի վրա է գտնվում: Դրան կից կամ հարակից շինություններ չկան: Չնայած շինարարական նյութերի մեծ կորուստներին, եկեղեցու հիմական ճարտարապետական առանձնահատկությունները դեռևս հնարավոր է հասկանալ: Ավելին, կորսված նյութերի հետքերը հիմականում տեսանելի են:

Ներկայումս արտաքին պատերի մեծ մասը ծածկված է հողաթմբերով, իսկ ներսը հողով և աղբով է լցված: Հատակի վրայի հողե թմբերի վրա ապօրինի պեղումների հետքեր են նկատվում: Պատերի որոշ բացվածքների պատճառ հանդիսացող փլուզումները նույնպես ապօրինի պեղումների հետևանք են: Կառույցի հետ կապված ցուցանակներ կամ տեղեկատվական վահանակներ չկան:

Ռիսկերի վերլուծություն և առաջարկություններ

Սուրբ Սարգիս եկեղեցուն ներկայիս կառուցվածքային վիճակը վտանգ է ներկայացնում թե՛ շինության, թե՛ գյուղի բնակիչների համար՝ ի լրումս եկեղեցու շարունակական գոյության վտանգի, որն առաջանում է փլուզված և ճաքված հատվածներից: Շատ հեշտ է կառույց մուտք գործելը, որը, ըստ երևույթին, աղբահանության համար է օգտագործվել՝ գյուղի աղբավայրին մոտ գտնվելու պատճառով: Դաշտային աշխատանքների ընթացքում կառույցի ներսում բազմաթիվ կենդանիների կմախքներ են հայտնաբերվել: Ուստի կառույցն այդ օտար առարկաներից մաքրելը պետք է լինի առաջնահերթություն:

Քիչ հավանական է, որ կառույցի շուրջ հողակույտերը բնական ճանապարհով առաջացած լինեն: Ապագա ուսումնասիրության շրջանակներում այս հողակույտերի հեռացումը թույլ կտա ավելի լավ հասկանալ արտաքին ճակատների առանձնահատկությունները:

Հնավայր մուտքը պետք է սահմանափակվի, և պետք է անմիջապես տեղեկատվական վահանակ պատրաստվի:

Սուրբ Հակոբ եկեղեցուց մնացած հետքերը պետք է հնարավորինս շուտ փաստագրվեն: Դրա ներկայիս վիճակը պահպանելու համար անհետաձգելի միջամտություններ են անհրաժեշտ: Այս երկու եկեղեցիների մասին ցանկացած հետազոտության կամ ուսումնասիրության արդյունքները կբարձրացնեն Քըրքյոյի ամբողջական արժեքը:

Սուրբ Թովմաս եկեղեցի

Հասքյոյ գավառ, Էշմեփընար գյուղ	Կառուցման ժամանակաշրջան/տարեթիվ՝ **1677**
GPS՝ **38°40'23.14"N 41°44'51.54"E**	Ներկայիս գործառույթ՝ **լքված**
Գրանցման տարեթիվ և համար՝ **Վանի Մշակութային ժառանգության պահպանության շրջանային վարչություն, 06.11.2009 – 441**	

Պատմություն

Էշմեփընար (Երշտեր-Էրիշտեր) գյուղը Մեղրագետի ափին է գտնվում (Արածանի – Արևելյան Եփրատ – Մուրատ գետի վտակ)՝ Մուշի կենտրոնից 20-22 կմ հարավ-արևելք: 19-րդ դարի վերջին գյուղը գտնվում էր օսմանյան Բիթլիս նահանգի Մուշ գավառում և ուներ 750 հայ բնակիչ: Տեղացիները զբաղվել են հողագործությամբ, անասնապահությամբ, խեցեգործությամբ: Գյուղն ունեցել է մեկ աղոթատեղի (Սուրբ Թովմաս) և մեկ դպրոց. Սուրբ Կարապետ եկեղեցին տեղակայված էր բնակավայրից հարավ (ՀՀՇՏԲ, 1988, 369):

Եպիսկոպոսարանի տվյալների համաձայն՝ 1890-ին Էրիշտերում 38 տուն հայ է եղել: Մաևսկին նշում է գյուղում 70 տուն քրդական համայնքի մասին, մինչդեռ Տեր-Կարապետյանը գրում է, որ 1902 թվականին գյուղում 570 հայ է եղել՝ 65 տուն: Եպիսկոպոսարանը 1910 թ. գյուղում 27 տուն հայկական և 6 տուն քրդական բնակչություն է արձանագրել, իսկ Մարտիրոսյանը գտել է, որ 1914-ին գյուղում 1160 հայ է եղել՝ 95 տուն: Հայոց պատրիարքարանի տվյալների համաձայն գյուղի հայկական բնակչությունը 855 է եղել՝ 83 տուն: Պատրիարքարանի տվյալները նաև նեռարում են Սուրբ Թովմաս եկեղեցու, երեք ավերակ վանքերի և 30 աշակերտ ունեցող դպրոցի առկայությունը (Գևորգյան-Փաբուջյան 2012, 493):

«Հուշամատյան»-ի տվյալները ցույց են տալիս, որ 1677 թվականին Սուրբ Թովմաս եկեղեցին վերանորոգված փայտաշեն կառույց էր, Սուրբ Կարապետ վանքը՝ ավերակ, և ևս մեկ ավերակ անանուն եկեղեցի կար. տվյալներում

Նկ. 1 Սուրբ Թովմաս եկեղեցու արևելյան տեսք



նաև նշվում է գյուղում նշանակված հովիվներ Կարապետ Հարոյանի և Հարությունի մասին (հղում 13):

Ճարտարապետություն

Էշմեփընար գյուղը Հասքյոյ նահանգի կենտրոնից 7 կմ դեպի արևելք է: Սուրբ Թովմաս եկեղեցին գյուղի տներից արևելք, իսկ գյուղի մզկիթից 200 մ հարավ է գտնվում: Այն դատարկ դաշտում է, փլված հատվածների կտորները ցրված են շրջակայքում և դրա չափսերը 6,40x8,70 մ են (նկ. 1):

Եկեղեցին միանավ բազիլիկատիպ է: Ենթադրվում է, որ արևմտյան պատի փլուզված հատվածում եղել է մուտքը: Հյուսիսային և հարավային պատերի ներսի հատվածում երկու որմնասյուներ կան: Դեպի արևելք կիսաշրջանաձև աբսիդի պատը փլուզվել և կիսվել է (նկ. 2): Կիսաշրջանից հյուսիս և հարավ գտնվող հատվածները կառուցվածքային ծանրաբեռնվածությունը նվազեցնելու համար կեսոնացված են, ինչպես նաև ունեն խորշեր:

Կանգուն պատերի երեսակալ քարերը հեռացվել են: Պատի երկու երեսներն էլ կոպիտ մշակված քարից ու մանրաքարից են: Մանրաքարերի շարքերում հաճախ նշմարվում են

Նկ. 2 Ինտերիերը արևմտյան մուտքից, փլուզված արևմտյան և արևելյան պատերը

Նկ. 3 Հարավային ճակատ

հերձաքարի և ապիտակ կրաքարի շաղախի օգտագործում: Պատի վրայի հետքերը ցույց են տալիս, որ հեռացված արտաքին երեսպատման միավորները 42-55 սմ լայնություն և 40-50 սմ երկարություն են ունեցել (նկ. 3): Հիմնական պատերը տեղադրված են մեծ քարե բլոկների վրա, որոնք դեպի դուրս լայնանում են 30 սմ-ով:

Ներկա վիճակ

Եկեղեցու շուրջը հողաթմբեր ու փլատակներ են: Կառույցի ներքին և արտաքին հատվածի երեսակալ քարերը հեռացված են. դրանք հավանաբար վերաօգտագործվել են մոտակա շինություններում: Արևմտյան և արևելյան ֆասադներն այնպես են փլուզվել, որ պատի բարձրության վրա մեծ ճեղքեր են թողել:

Խորանում տեսանելի են ապօրինի պեղումների փոսերը (նկ. 4): Ընթեռնելի է նաև աբսիդից վերև գտնվող գմբեթարդի մի հատված ևս: Բոլոր պատերը կառուցված են եղել մեծ, քարաբեկորների վրա, որոնք տեսանելի են գետնի մակերեսին. ենթադրվում է, որ դրանք ավելի ցածր մակարդակներում շարունակվել են:

Կառույցը խոցելի է բոլոր տեսակի աղետների նկատմամբ: Տանիքն ամբողջությամբ փլուզված է, հիմնականում փլուզված են նաև երկու կողմերը (արևելյան և արևմտյան) : Սա հանգեցնում է արագ քայքայման, նյութի և տեսքի կորստի:

Նկ. 4 Ապօրինի պեղման հետևանքով առաջացած փոս

Ռիսկերի վերլուծություն և առաջարկություններ

Շինությունը կառուցվածքային շատ վատ վիճակում է և արագ փլուզման վտանգի տակ է գտնվում: Եկեղեցու համար պետք է տեղեկատվական վահանակներ պատրաստվեն այն բանից հետո, երբ մուտքը հնավայր սահմանափակվի: Առաջարկվում է, որ այս գրանցված պատմական կառույցի համար անհապաղ գրաֆիկական վերականգնման և պահպանման նախագծեր մշակվեն: Նախարարության հսկողության ներքո հնավայրում պեղումներ իրականացնելը կնպաստի պահպանման գործընթացին՝ օգնելով բացահայտելու կառույցում և շրջակայքում գտնվող ճարտարապետական այլ շինությունների ավերակներ:

Էրջան Չեթեի տունը

Կենտրոն (Centrum) թաղ, Քալե թաղամաս	Կառուցման ժամանակաշրջան/տարեթիվ՝ **մինչ 1915 թվականները**
GPS՝ **38°43'40.2"N 41°29'11.3"E**	Ներկայիս գործառույթ՝ **բնակելի, պարբերական օգտագործում**
Գրանցման տարեթիվ և համար՝ **հայտնի չէ**	

Պատմություն

«Հին Մուշը» ժամանակակից քաղաքի կենտրոնում է, որտեղ 20-րդ դարի սկզբից պահպանվել են հայկական թաղամասերի հիմնական մասը: «Զորի թաղ» կոչվող հայկական թաղամասը Մուշ գետի հովտի երկու կողմերում էր գտնվում՝ քաղաքից դեպի արևելք: Մշո դաշտը գտնվում է քաղաքի ցածրադիր գոտում, որը ձգվում է դեպի հարավ-արևմուտք: Բնակավայրի մյուս հատվածները խաղողի այգիներով և այլ կանաչապատ տարածքներով են ծածկված: Քաղաքի կենտրոնական հատվածը գտնվում է 1260 մ բարձրության վրա (Քերթմենջյան 2014, 7):

Քաղաքի ավանդական տները շարված են Մշո դաշտի վերջում գտնվող բլրի ստորոտից դեպի գագաթը: Այս տները սովորաբար երկհարկ կամ եռահարկ են, կառուցված են կամ մանրաքարից և աղյուսից կամ քարակերտ են. տները նաև փորագրություններով զարդարված փայտե պատշգամբներ ունեն (նկ. 1): Խաղողի այգիների մեծ մասը, որոնք կախովի այգիներ են, պահպանվում են: Քաղաքի 20000 հոգանոց բնակչությունը 1914 թվականին սփռված էր 12 թաղամասերում: Այս բնակչությունից 7435 հայերը (1146 ծուխ) վեց քրիստոնեական թաղամասերում էին ապրում: Սուրբ Մարինե թաղամասը, որտեղ գտնվում է Էրջան Չեթեի տունը, այս վեց թաղամասերից մեկն է: Տան շրջակայքը ներկայումս հայտնի է որպես Քալե թաղամաս:

Քալե, Դերե և Մինարե թաղամասերում գտնվող հին հայկական տները քանդվել են տարածքում TOKI (Թուրքիայի Զանգվածային բնակարանային վարչություն) շենքերի կառուցման

Նկ. 1 Հին Մուշի տեսարան (Գևորգյան-Փաբուճյան 2012, 486)





Նկ. 2 Դերե և Քալե թաղամասերի համայնապատկերը 1985 թվականին: Լուսանկարը՝ Ջեզմի Յենթյուրք

Նկ. 3 Քալե թաղամասի համայնապատկերը ավերումից և շինարարությունից հետո: Լուսանկարը՝ Բեքիր Ավջը

պատճառով՝ սկսած 2012 թվականից (նկ. 2 և 3): Էրջան Չեթեի տունը Քալե թաղամասում վերջին պատմական հայկական տներից է, որը կանգուն է և համեմատաբար պահպանում է իր նախնական տեսքը:

Ճարտարապետություն

Էրջան Չեթեի տունը Մուշի պատմական քաղաքային կենտրոնում պահպանված ավանդական բնակելի ճարտարապետության հազվագյուտ օրինակ է (նկ. 4): Շենքը Քալե թաղամասի Դեիրմենլեր փողոցում է գտնվում՝ դեպի հարավ-արևելք թեքվող հողակտորի վրա: Սուրբ Մարինե եկեղեցին տնից մոտավորապես 50 մ հյուսիս-արևմուտք է գտնվում:

Երկհարկանի շենքի հիմական պատերը հիմականում խճաքարից և փայտե գերաններից են կառուցված, իսկ անկյուններում կոպիտ հատված, մեծ քարե բլոկներ են տեսանելի: Մանրաքարի շարքերի մեջ աղյուսե բլոկերի տեղ-տեղ օգտագործում է նկատվում: Մյուս պատերը աղյուսից են: Արտաքին պատերն ամբողջությամբ ծածկված են աղյուսե երեսպատմամբ: Այն վայրերում, որտեղ երեսպատումը թափված է, քարերի շարքերը հեշտությամբ տեսնելի են: Կառույցի փսասված մասերը ցույց են տալիս, որ որպես ամրացնող տարր հողային նյութեր են օգտագործվել:

Մուտքը արևելյան ճակատի կենտրոնում է: Դուռը պարուրված է կրկնակի կամարով: Այն հատվածներում, որտեղ երեսպատումն ընկել է, տեսանելի է, որ կամարը աղյուսից է: Դռան երկու կողմերում կան երկու փոքր հարթակներ, որոնց վերնամասերը զարդարված են ձուլվածքով: Հետագա միջամտության ժամանակ մուտքի բացվածքի շուրջ փայտե շրջանակի մեջ մետաղյա դուռ է տեղադրվել: Վերևում փոքրիկ պատուհան կա (նկ. 5):

Կառույցի ամենաշքեղ ճակատն արևելյան ճակատն է: Այն համաչափ է և ունի չորսական պատուհան ստորին և վերևի հարկերում: Այս բոլոր պատուհանները զարդարված էին սրածայր կամարներով, որոնք ենթադրվում է, որ սվաղից են պատրաստված եղել: Վերին հարկի կամարներն ավելի բարձր են, քան առաջին հարկինը: Լուսամուտների շրջանակներն ու կողակները փայտյա են և բոլորը ճաղավանդակներ ունեն: Վերին հարկի հյուսիսային երկու լուսամուտների միջև օսմաներեն արձանագրություն կա (նկ. 6):

Լայն, միաթև դուռը տանում է դեպի առաջին հարկաբաժին, որը բաղկացած է երկու սենյակներից՝ հյուսիսային և հարավային թևերի վրա, որոնք միանում են մուտքին (taşlık): Մուտքը մոտավորապես 2,5x9 մ է և դռան դիմաց սանդուղք է տեղակայված:

Առաջին հարկում նախնական հատակը հնարավոր չէ տեսնել, քանի որ ծածկված են սվաղով: Վերին հարկի հատակը փայտյա է. այն ամրացված է շրջանաձև փայտե հեծանային գերաններով: Հեծանները տեղադրված են հյուսիս-հարավ ուղղությամբ իրարից 50 սմ հեռավորությամբ: Տրամագծերը տատանվում են 15-ից 25 սմ միջև (նկ. 7): Երկու հարկերի բոլոր ներքին տարածքները աղյուսապատ են և ներկված սպիտակ, կապույտ և կանաչ գույներով:

Սենյակները մուտքի ճակատին դեպի արևելք երկու պատուհան ունեն, որոնք մոտավորապես 1 մ լայնություն ունեն: Բացվածքները պատրաստված են փայտե գերաններից. շրջանակներն ու պատյանները նույնպես փայտից են: Պատուհանները զարդարված են բարձր սրածայր կամարներով, որոնք և՛ ներսից, և՛ արտաքինից պատված են սվաղով:

Նկ. 4 Ընդհանուր տեսարան

Նկ. 5 Արևելյան ֆասադը մուտքով

Նկ. 6 Արևելյան ֆասադի օսմանյան արձանագրությունը

Նկ. 7 Շրջանաձև, փայտե հեծանները, որոնք օժանդակում են հատակը





Նկ. 8 Վերին հարկաբաժնի հարավ-արևելյան սենյակի ընդհանուր տեսքը

Նկ. 9 Նախասրահի տեսքը՝ դեպի արևելք

Երկու սենյակների արևմտյան պատերն ունեն պահարաններ՝ 150 մ լայնությամբ, 60 սմ խորությամբ և ծածկված են վարագույրներով:

Առաջին հարկի արևմտակողմի սենյակներն ավելի փոքր են, քան արևելյանինը: Հարավ-արևելյան անկյունում գտնվող սենյակը պատուհան ունի, որը դեպի դուրս նեղանում է. բացվածքը ներսից՝ 120 սմ, իսկ դրսից 95 սմ լայնություն ունի: Հյուսիս-արևմտյան սենյակի արևմտյան պատին օջախի առկայությունը վկայում է, որ այդ տարածքը նախապես խոհանոց է եղել: Օջախի բացվածքը 74 սմ լայնություն ունի և ծածկված է աղյուսե կամարով: Նույն պատի հյուսիսային կողմում կա ևս մեկ նեղացող պատուհան, որի լայնությունը ներսից 130 սմ է, իսկ արտաքինից՝ 80 սմ: Այս սենյակի հյուսիս-արևմտյան անկյունում զուգարանակոնք կա, որը շրջապատված է լաթատիպ վարագույրով, որը, ինչպես ենթադրվում է, լվացարանի գործառույթ ուներ: Նախնական զուգարանի գտնվելու վայրի վերաբերյալ կարծիքներ չկան:

Մուտքի հարավային պատին հավասարեցված երեք աստիճանները տանում են դեպի ներքին սանդուխք: Դեպի այս սանդուխք մեկ այլ ճանապարհ կա՝ հետնամասի երկրորդական մուտքով: Այս մուտքի անմիջապես դիմացի երեք աստիճանները նույնպես դեպի սանդուխք են տանում: Այս սանդուխքի ինը աստիճանները վերևի հարկաբաժին են տանում: Սանդուխքը և ճաղերը փայտյա են:

Վերին հարկի հատակագիծը գրեթե նույնական է առաջին հարկի հատակագծի հետ: Այն բաղկացած է չորս սենյակներից, որոնք բացվում են դեպի կենտրոնական նախասրահ: Ամբողջ հատակը երեսպատված է փայտով: Առաստաղի վրա հյուսիս-հարավ ուղղությամբ կան փայտե գերաններով շրջանաձև հեծաններ, որոնք ունեն նույն չափերն ու հեռավորությունը, ինչ առաջին հարկաբաժնինը:

Վերին հարկի արևելյան սենյակներն ունեն նույն հատկանիշները, ինչ առաջին հարկինը: Երկու սենյակներն էլ ունեն փոքր հարթակներ (լայնությունը՝ 100 սմ), որոնք շարունակվում են պատի երկայնքով, որոնց վրա սրածայր կամարներով լուսամուտներ կան: Հյուսիս-արևելյան սենյակի հարավային և հյուսիսային պատերից յուրաքանչյուրում միանման խորշեր կան (լայնությունը՝ 60 սմ, խորությունը՝ 40 սմ): Հարավ-արևելյան սենյակում երեք խորշ կա: Դրանցից երկուսը գտնվում են հարթակի ավելի կարճ եզրերի մեջտեղում և 40x50 սմ չափսեր ունեն: Երրորդը գտնվում է հյուսիսային պատին և ունի մոտավորապես 50x70 սմ չափեր: Այս սենյակի հարավային պատին նաև նեղացող պատուհան կա, որի լայնությունը ներսից 1,93 մ է, իսկ դրսից՝ 1,06 մ (նկ. 8): Արևմտյան պատի պահարանը 50 սմ խորություն և 153 սմ լայնություն ունի:

Կառույցի ներսում ամենաշատ միջամտությունները վերին հարկի հյուսիս-արևմտյան սենյակում են արվել: Դրա հյուսիս-արևմտյան անկյունում փոքր սենյակ է ավելացվել (ներքին չափսերը՝ 1,43x2,19 մ): Այս փոքրիկ սենյակի բաժանարար պատը արևմտյան պատի պատուհանին է հարում: Պատուհանի դիմաց գետնից 50 սմ բարձրության վրա ջրի տարրա կա, որը ծառայում է որպես լվացարան: Այս լվացարանի և սենյակի հարավային պատի միջև հաշվիչ է տեղադրվել: Հարավ-արևմտյան սենյակում արևմտյան պատի միջնամասում փորված է խորշ (չափերը՝ 36x67 սմ): Եվս մեկ նեղացող պատուհանի բացվածք կա՝ ներսից 131 սմ լայնությամբ, դրսից՝ 70 սմ չափերով:

Վերին հարկի բոլոր սենյակները դեպի նախասրահ տանող դռների վերևում կիսակլոր կամար (հաստությունը՝ 5-6 սմ) ունեն (նկ. 9)։ Նախասրահից դեպի արևմուտք լուսամուտ է ավելացվել (լայնությունը՝ 1,24 մ)։ Նախասրահի արևելյան պատի մեջտեղում գտնվող դուռը դեպի պատշգամբ է տանում։ Ներկայումս պատշգամբից մնացել է միայն փայտյա հատակը՝ 95x325 սմ չափերով։ Ելուստները համապատասխանում են պատշգամբի ձևին։ Տանիքի ձևը հուշում է, որ այս ելուստը հնարավոր է, որ cumba է եղել, բայց արտաքին ճակատին այս տեսությունը հաստատող հետքեր չկան։

Շարունակական փայտե գերանները, որոնց վրա հենվում է տանիքը, քիվերի մակարդակին են։ Բոլոր ծայրերը թեքված տանիքը ներկայումս ծածկված է ալիքվող մետաղական թիթեղներով։

Ներկա վիճակ

Էրջան Չեթեի տունը Մուշի պատմական քաղաքային կենտրոնում պահպանված ավանդական բնակելի ճարտարապետության հազվագյուտ նմուշներից է։ Մինչև մի քանի տարի առաջ տունը շրջապատված էր նմանատիպ կառույցներով, որոնցից շատերը քանդվել են TOKI-ի բնակելի թաղամասերի շինարարության համար։ Էրջան Չեթեի տունը այս նորակառույց շենքերի մեջ շարունակում է կանգուն մնալ, քանի որ դրա սեփականատերը հրաժարվել է այն վաճառել։

Տունը ընդհանուր առմամբ լավ վիճակում է, բայց արևմտյան պատերին խորը ճաքեր են առաջացել։ Ավելին, արտաքինից ճակատների վրա թեքություններ են նկատելի։ Արտաքին ճակատի երեսպատման մեծ մասը կորել է. պատերին շինարարական նյութի կորուստներ կան։

Շենքը ներկայումս չի օգտագործվում որպես տուն, սակայն դրա սեփականատերը պարբերաբար այցելում է և ստուգում շենքի անվտանգությունն ու հարաբերական պահպանվածությունը։ Տան դիմաց ցանկապատերով շրջապատված փոքրիկ այգի կա, որը վերահսկում է անցանկալի անձանց մուտքը։

Ռիսկերի վերլուծություն և առաջարկություններ

Էրջան Չեթեի տունը Մուշի ավանդական բնակելի կառույցի օրինակ է, որը պահպանել է իր նախնական ճարտարապետական հատկանիշների մեծ մասը։ Այն պետք է հնարավորինս շուտ համակողմանիորեն փաստագրել, քանի դեռ դրությունն ավելի չի վատթարացել։ Որպես հրատապ միջամտություն կարելի է ժամանակավորապես ամրակայել շինությունը՝ առկա կառուցվածքային խնդիրների դեմ։ Այնուամենայնիվ, կարևոր է տան ամբողջական փաստագրման իրականացումը, գրաֆիկական վերականգնումը և վերականգնման նախագծեր մշակելը, որի արդյունքում ամբողջական վերանորոգում և վերականգնում կիրականցվի։ Տան ներսի և դրսի հատվածներում ոչ պատշաճ հավելումները պետք է հեռացվեն։

Էրջան Չեթեի տան ամբողջականությանն ուղղված ամենակարևոր սպառնալիքներից մեկը դրա շուրջ կառուցված նոր շենքերն են։ Ամբողջովին փոխվել է այն համատեքստը, որում տունը գտնվում է։ Այժմ այն բարձրահարկ շենքերով է շրջապատված։ Տան սեփականատիրոջ հետ հարցազրույցներից պարզ է դառնում, որ կառուցվածքային խնդիրները, հատկապես՝ ճաքերը հավանաբար առաջացել են վերջին շինարարական աշխատանքների ժամանակ առաջացած ցնցումների պատճառով։ Պետք է արագ գործողություններ ձեռնարկվեն՝ ընդգծելու այս արժեքավոր շենքի կարևորությունը և կանխելու հնարավոր կորուստները։

Սուրբ Մարիամ մատուռ / Սբ. Մարիամ մատուռը և արհեստանոցները

Կենտրոն (Centrum) թաղ, Յուքարը/Վերին Յոնգալը գյուղ	Կառուցման ժամանակաշրջան/տարեթիվ՝ **1749**
GPS՝ **38°57'47.54"N 41°12'25.53"E**	Ներկայիս գործառույթ՝ **ավերակ**
Գրանցման տարեթիվ և համար՝ **Վանի Մշակութային ժառանգության պահպանության շրջանային վարչություն, 29.03.2018 – 1887**	

Պատմություն

Սբ. Մարիամ մատուռը, արհեստանոցի տարածքը (հասարակական շենքերը) և գերեզմանատունը առնչվում են Սուրբ Կարապետ վանքի հետ, սակայն վանքի պատմական հնավայրից, ինչպես նաև գյուղից դուրս են գտնվում: Այս հնավայրի շինությունները կառուցվել են 1749 թվականին (Քերթմենջյան 2014, 19): Բազմաթիվ գիտնականների կողմից կարևորվող այս համալիրում շատ քիչ ուսումնասիրություններ կամ գիտական պեղումներ են կատարվել:

Հնարավոր է, որ սա Սուրբ Կարապետ վանք մեկնող ուխտավորների համար այս բլուր բարձրանալուց առաջ հանգստի կանգառ է եղել:

Ճարտարապետություն

Սբ. Մարիամ մատուռը և արհեստանոցները գտնվում են Վերին Յոնգալը գյուղից 3 կմ արևելք, որտեղ է նաև Սուրբ Կարապետ վանքը: Դեպի լեռները բացվող տպավորիչ տեսարան ունի վանքը: Կառույցների մնացորդները ցրված են. մատուռի աբսիդը մասամբ կանգուն է, մինչդեռ արհեստանոցի պատերից միայն 1-1,5 մետր բարձրությամբ հատվածներ են պահպանվել:

Բոլոր կառույցները քարաշեն են, որոնցում կոպտատաշ քար է օգտագործվել. անկյունների մոտ մի քանի սրբատաշ քարեր են տեսանելի: Արհեստանոցի պատերին, ի լրումս կոպտատաշ քարի, խճաքար է օգտագործվել:

Նկ. 1 Սբ. Մարիամ մատուռ, աբսիդի մնացորդներ

Նկ. 2 Մատուռի և արհեստանոցի պատերի մնացորդներ

Արևելյան պատը և աբսիդը բավականին կանգուն մասեր ունեն. հատակագիծը ուրվագծվում է: Աբսիդի վերևի թաղի սկզբնամասում աղյուսե շարքեր կան, ինչը վկայում է թաղի աղյուսաշեն լինելու մասին(նկ. 1): Աբսիդի կողային պատերից յուրաքանչյուրում խորշ կա, սակայն դրանց չափում հնարավոր չէր իրականացնել՝ շինարարական նյութի մեծաքանակ կորստի պատճառով:

Մատուռը հնավայրի հարավ-արևելյան կողմում է. արհեստանոցները մատուռի համեմատաբար երկար պատին զուգահեռ են դասավորված (նկ. 2): Այս դասավորությունը շարունակվում է մոտավորապես 100 մ: Արհեստանոցների արևելյան պատերը հենապատից վեր են կառուցվել:

Դաշտային աշխատանքի ընթացքում վեց արհեստանոց է ուսումնասիրվել. դրանցից երեքը, որոնք ամենամոտն են մատուռին, երկուական ներքին տարածքներ ունեն (նկ. 3): Հյուսիսում կան ևս երկու շինություններ, որոնցից յուրաքանչյուրը երեքական մասնաբաժին ունի: Բոլորն իրար են հարում: Սակայն եռամաս մեկ այլ արհեստանոցի մնացորդներ 50 մ հեռավորության վրա են: Այս շինությունների պատերին մի քանի բացվածքներ են արձանագրվել, և հաջողվել է պատուհանի բացվածքներից մեկը չափել, սակայն դրանց մեծ մասը ներկայումս գետնի տակ են հայտնվել:



Չափագրված պատուհանը 57 սմ լայնություն և 36 սմ բարձրություն ունի: Դրա կողային շրջանակները 16 սմ են, իսկ գլխամասայինի հաստությունը՝ 13 սմ: Վերջինիս երկարությունը 65 սմ է:

Արհեստանոցներից արևելք մեծ ջրաղացի քարի երկու կտոր կար՝ հենապատի մոտ դասավորված (նկ. 4): Ջրաղացի քարերի

Նկ. 3 Արհեստանոցների մնացորդներ, տեսարան հարավից

Նկ. 4 Հենապատ և ջրաղաց՝ արհեստանոցների մոտ

տրամագիծը մոտավորապես 1,5 մ էր: Դրանց գոյությունը կարող է հաստատել այն տեսությունը, որ այս հնավայրը կանոնավոր արտադրական/կացարանային գործունեություն է ունեցել: Գրավոր աղբյուրներում հիշատակված գերեզմանատան հետքեր չեն հայտնաբերվել:

Ներկա վիճակ

Մատուռի և արհեստանոցների զգալի մասը չի պահպանվել. հնավայրը ավերակ վիճակում է, ինչի պատճառով ընդհանուր հատակագիծը հասկանալ դժվար է: Ավերակները չափազանց անպաշտպան են եղանակային պայմաններից, ինչպես նաև մարդկային անվերահսկելի գործունեության հետևանքով առաջացած վտանգներից: Ուստի կարելի է ասել, որ ցանկացած կառուցվածքային կամ նյութական փսաս արագորեն կվատթարացնի կառույցի վիճակը: Դաշտային աշխատանքի ընթացքում նախկինում կատարված ապօրինի պեղումների բազմաթիվ հետքեր են հայտնաբերվել:

Հնավայրի մոտակայքում երկաթբետոնե չորս շենքեր կան: Դրանք կառուցվել են անցյալ տարի և սեզոնային օգտագործման համար են նախատեսված:

Վերին Յոնգալը և Ներքին Յոնգալը գյուղերի միջև գրունտային ճանապարհը գրեթե հնավայրի հարևանությամբ է գտնվում: Այդ առումով հնավայրը դյուրին կերպով հասանելի է, թեև այն անմիջական կապ չունի շրջակայքի հետ:

Ռիսկերի վերլուծություն և առաջարկություններ

Մատուռի և արհեստանոցների մնացորդների քայքայման տեմպերը կարագանան, քանի դեռ դրանք շարունակում են անտեսվել: Խորհուրդ է տրվում հնավայրում օժանդակ պեղումներ և համապարփակ փաստագրման աշխատանքներ իրականացնել: Հատկապես Մշակույթի և զբոսաշրջության նախարարության կողմից վերահսկվող դաշտային աշխատանքները և պեղումները թույլ կտան ավելի լավ փաստագրել ինչպես ավերակները, այնպես էլ հնավայրը, նաև գտնել գրավոր աղբյուրներում հիշատակված այլ հարակից ճարտարապետական կառույցներ: Այս աշխատանքների արդյունքները նաև տեղեկատվություն կտրամադրեն հնավայրի շուրջ եղած արտադրության և սոցիալական կյանքի վերաբերյալ: Զուգահեռաբար ձեռնարկված համապարփակ ուսումնասիրությամբ կարելի է բացահայտել Սուրբ Մարիամ մատուռի և արհեստանոցի շոշափելի կապը Սուրբ Կարապետ վանքի հետ:

Սուրբ Գևորգ եկեղեցի

Կենտրոն (Centrum) թաղ, Աղաչլիք գյուղ	Կառուցման ժամանակաշրջան/տարեթիվ՝ **անհայտ**
GPS՝ **38°44'42.70"N 41°29'6.62"E**	Ներկայիս գործառույթ՝ **լքված**
Գրանցման տարեթիվ և համար՝ **Վանի Մշակութային ժառանգության պահպանության շրջանային վարչություն, 27.09.2016 - 1336**	

Պատմություն

Գառնին (կամ Գառներ / Գառնեն / Կառնեն) Մշո դաշտի գյուղերից էր, որը օսմանյան ժամանակաշրջանում գտնվում էր Մուշի գավառում և կցված էր Չուքուրի քաղաքապետարանին: 19-րդ դարի վերջին քառորդում 570, իսկ մինչև 1914 թվականը ավելի քան 700 բնակչություն ունեցող հայկական բնակավայր էր: Տնտեսական զբաղմունքներն են եղել հողագործությունը, անասնապահությունը և մեղվաբուծությունը (ՀՀՇՏԲ 1986, 791-792):

Տեր-Կարապետյանը նշում է, որ 1902 թվականին Գառնին 750 հայ բնակիչ ուներ՝ 110 տուն. հնարավոր է, որ Գառնին Մուշ քաղաքին մոտ լինելու պատճառով է Մուշ գավառի մաս համարվել: Մարտիրոսյանը գրում է, որ 1910 թվականին այն ունեցել է 40 հայկական տուն, իսկ 1914 թվականին ունեցել է 125 տուն՝ 1190 բնակիչ (հղում 14): Հայոց պատրիարքարանի տվյալների համաձայն՝ Գառնիում 860 հայ է ապրել՝ 123 տուն, և գյուղը եկեղեցի, երեք վանք և 35 աշակերտով դպրոց է ունեցել (Գևորգյան-Փաբուջյան, 2012, 489): «Հուշամատյան»-ի աղբյուրներում հիշատակվում է, որ եկեղեցին Սուրբ Գևորգ է կոչվել, նաև երեք ավերակ վանքեր են եղել (հղում 15):

Նիշանյանը (հղում 16) գյուղի այլընտրանքային անուններից նշում է նաև Կառնենը, նաև այն, որ 20-րդ դարի սկզբին գյուղն ամբողջությամբ հայաբնակ է եղել: Նա գրում է, որ այժմ գյուղը հայտնի է Աղաչլըք անունով և բնակեցված է սուննի քուրդ բնակչությամբ:

Նկ. 1 Կառույցի և շրջակայքի տեսքն արևելքից



Նկ. 2 Աբսիդը և գլանաձև թաղը արևմուտքից

Նկ. 3 Քարե սալի վրա փորագրված խաչը

Ճարտարապետություն

Աղաչլրքը ներկայումս գյուղ է Մուշի նահանգի Կենտրոն գավառում: Գյուղը գտնվում է նահանգի կենտրոնից 1 կմ հեռավորության վրա՝ դեպի հյուսիս: Սուրբ Գևորգ եկեղեցին գյուղի տներին կցված չէ: Այն, ասեկոսեների համաձայն, գտնվում է նախկինում գերեզմանատուն հանդիսացող տարածքի արևելքում՝ ընկած է արևելյան արևմտյան առանցքի վրա (նկ. 1): Միայն եկեղեցու աբսիդն (մատուռ) է պահպանվել: Կառույցի մնացորդները աբսիդի վերևում գտնվող գլանաձև թաղը և այն պահող պատերն են կազմում, որոնք հողակույտի և մանրաքարերի վրա են (նկ. 2): Եկեղեցու փլուզված հատվածների հիմքերը նկատելի են գետնի մակերեսին: Ուղղանկյուն կառույցի արտաքին չափերը 482x760 սմ են: Պատերը կառուցված են խճաքարից՝ կրաշաղախով, իսկ թաղածածկ առաստաղը ծածկված է հերձաքարով: Պատի հաստությունը 110 սմ է: Աբսիդի հյուսիսային պատի վրա մի խորշ կա, որի լայնությունը 115 սմ է, իսկ հարավային պատի վրա՝ 45 սմ լայնությամբ մեկ այլ խորշ: Աբսիդի վերևում գտնվող թաղի հաստ պատերի մեջ կոտրված շրջանակով պատուհան կա: Դրսում՝ պատուհանի բացվածքի տակ, երկու կողմից խոշոր քարե կտորներ են դրված (նկ. 1): Քարի վրա հարավից շեղ անկյուններով խաչ է փորագրված (նկ. 3): Պատի հաստությունը նվազեցնելու և բեռը թեթևացնելու համար տանիքը կենսոնացված է :

Կառույցի հյուսիսային և հարավային պատերի մի մասը կանգուն է: Այս պատերի ուղղությունն ու շարունակականությունը, ինչպես նաև արևմտյան պատը, որը նկատելի է հատակի մակերեսին, տեսանելի են: Արևելք-արևմուտք ուղղությամբ ձգվող և կառույցի հյուսիսային պատի մոտ գտնվող մեկ այլ պատի հետքերը կարող են կապ ունենալ շենքի շինարարության նախնական փուլի հետ:

Ներկա վիճակ

Եկեղեցու մնացորդները գտնվում են գյուղական մեծ հողատարածքի արևելյան եզրին, որտեղ կարելի է հասնել գյուղի տների մոտակայքով անցնող նեղ ճանապարհով: Տեղի բնակիչները նշեցին, որ այս հողատարածքը

Նկ. 4 Հնավայրի շուրջ ցրված փլատակների մնացորներ

նախկինում գերեզմանատուն է եղել, որտեղ կարելի էր մտնել տների միջև դեպի հարավ գտնվող դռնից:

Քարաշեն կառույցի շուրջ ցրված փլատակները կապված են այս եկեղեցու հետ, որը,սակայն, կորցրել է իր գործառույթը (նկ. 4):

Եկեղեցու հատակագիծը գետնի մակերևույթին նկատելի է, սակայն տարածական առանձնահատկությունները ընթեռնելի չեն: Պատերի և հատակի մեծ մասը ավերակ է: Մակերևույթի քայքայումը և շինարարական նյութերի կորուստը ակնհայտ է պահպանված հատվածների վրա՝ դեպի արևելք: Շենքը արագ քայքայման և պատմական կառուցվածքի կորստի վտանգի տակ է:

Ռիսկերի վերլուծություն և առաջարկություններ

Եկեղեցին կառուցվածքը վատ վիճակում է և փլուզման վտանգի տակ է: Այս գրանցված կառույցի շրջակայքը հնագիտական աշխատանքների միջոցով պետք է ստուգվի՝ այլ կառուցվածքային մնացորդների համար (օրինակ՝ վանք, գերեզմանաքարեր): Եթե բացահայտումներ արվեն, եկեղեցու շրջակայքը պետք է դրա հետ միասին գրանցել:

Կառույցի համար պետք է պատրաստվի տեղեկատվական վահանակ, և հրատապ կանխարգելման միջոցառումների շրջանակում հետագա փսասները կանխելու համար պետք է սահմանափակվի մուտքը հնավայր:

Սուրբ Սահակ եկեղեցի

Կենտրոն (Centrum) թաղ, Յուջեթեփե (Դերիկ) գյուղ, Քըզլար տեղանք	Կառուցման ժամանակաշրջան/տարեթիվ՝ **անհայտ**
GPS՝ **38° 58' 19.81'' N 41°27'03.96'' E**	Ներկայիս գործառույթ՝ **խոստի պահեստ / գոմ**
Գրանցման տարեթիվ և համար՝ **Վանի Մշակութային ժառանգության պահպանության շրջանային վարչություն, 23.02.2016 – 1170**	

Պատմություն

Հայոց պատրիարքարանի արձանագրությունները վկայում են, որ Մուշի գավառում գտնվող Դերիկն ուներ 450 հայ բնակիչ՝ 51 տուն, այնտեղ կային նաև Սուրբ Սահակ եկեղեց և 15 աշակերտ ունեցող դպրոց (Գևորգյան-Փաբուջյան 2012, 489): Ա–ԴՈ-ն (1912, 107) գրում է, որ 40 տուն է եղել, իսկ Սասունին (1956, 352) գյուղում 60 հայ տուն է հիշատակում:

Մինչև քրիստոնեության ընդունումը հեթանոս հայերի համար Աշտիշատը բավականին կարևոր կենտրոն էր՝ որպես սուրբ, գլխավոր պաշտամունքային տարածք: Ենթադրվում է, որ Աշտիշատը, որը տաճարների առատության պատճառով հին ժամանակներում նաև հայտնի էր որպես Հաշտիշատ, գտնվում էր ներկայիս գյուղի մոտ: Այս սուրբ կենտրոնը Սուրբ Կարապետ վանքի մոտ է՝ Քարքե լեռան լանջին (այժմ հայտնի է որպես Մերգեն) և Արածանի (այժմ հայտնի է որպես Մուրատ) գետի աջ ափին: Այստեղ տաճարներ են եղել Վահագն աստծո, Անահիտ և Աստղիկ աստվածուհիների արձաններով (Գևորգյան-Փաբուջյան 2012, 484; Ագաթանգեղոս 1977, 130): Ըստ ավանդության՝ Աշտիշատի հեթանոսական տաճարի հիմնադիրները եղել են քույր-եղբայրներ Դեմետրն և Գիսանեն, որոնք Հնդկաստանից Հայաստան գաղթել են մ.թ.ա. II դարում (ՀՀՇՏԲ 1986, 300):

Հայ պատմիչներ Ագաթանգեղոսը և Մովսես Խորենացին (V.1, 1974, 493) Աշտիշատը հիշատակել են որպես «Հաշտից Տեղիք»: 301

Նկ. 1 Սուրբ Սահակ եկեղեց. Ընդհանուր տեսք

թվականին քրիստոնեությունը որպես Հայաստանի պաշտոնական կրոն ընդունելուց հետո Սուրբ Գրիգոր Լուսավորիչի նախաձեռնությամբ Աշտիշատի հեթանոսական տաճարները ավիրվել են: Դրանց տեղում կառուցվել է վանական եկեղեցի և համալիր, որը դարձել է Աղբիանոսյան եպիսկոպոսների նստավայրը և նույնիսկ համոզմունքներ կան, որ այն եղել է Հայաստանի առաջին քրիստոնեական եկեղեցին/կրոնական հաստատությունը:

Աշտիշատի վանքը, որտեղ թաղված էին Սուրբ Սահակ Կաթողիկոսն ու նրա դուստր Շուշանիկը, փլուզվել է 7-րդ դարում: Դրա տեղում կառուցված նոր եկեղեցին շարունակել է իր գոյությունը մինչև 1915 թվականը: Աշտիշատի եկեղեցին, որն ավելի հայտնի է որպես Սուրբ Սահակ եկեղեցի, ճսասվել է Թեմուրի արշավանքների ժամանակ 14-րդ դարում: Նշվում է, որ եկեղեցու մոտ են գտնվում Սուրբ Հովհաննես Մկրտչի (Հովհաննես Մկրտիչ, Սուրբ Կարապետ, Հովհաննես Պրոդրոմոս) և Սուրբ Աթանագինեի մատուռները (1974, 300):

«Հուշամատյան»-ի աղբյուրները Դերիկի վանքի կամ Աշտիշատի գլխավոր սրբավայրի՝ Սուրբ Սահակ եկեղեցու մոտակայքում հավելյալ հիշատակում են Սուրբ Սահակի և Շուշանիկի գերեզմանների, ավերակ Իխտածորիկ եկեղեցու, ինչպես նաև հայր Սահակ անունով հոգևորականի մասին (հղում 17): 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի սկզբի արձանագրությունները վկայում են, որ վանքը լքված է եղել, իսկ ճարտարապետական կառույցները՝ փլուզված:

Տրդատ եպիսկոպոս Բալյանը (Հայ Վանորայք, 257-258) իր հայկական վանքերը արձանագրող իր գրքում գրում է. «Վանքի պատերի քարե բլոկները ջարդուփշուր են եղել, և հին եկեղեցու տեղում, ավելի ճիշտ՝ կողքից, կառուցվել է մատուռ կամ շինություն, որը կարելի է անվանել փայտե եկեղեցի: Այս կառույցի ներսում է մեր եկեղեցու մեծ մտածող Սուրբ Սահակի գերեզմանը: Սուրբ Սահակի գերեզմանին կից են Սրբուհի Շուշանի և ևս երկու հոգու գերեզմանները: Փլված եկեղեցու մեջտեղում երեք անկախ խորանները կիսավեր են. նրանց կազմած եռանկյունը ցույցում է գլխավոր եկեղեցու խորանի, ինչպես նաև գլխավոր մուտքի և դրան կից մատուռների իրական դիրքը: Ըստ ավանդության՝ այս երեք զոհասեղաններից հարավայինը հայտնի է եղել «Մյուռոնի Խորան» անունով, որի վրայի «Աշտից» փորագրությունը



մատնանշում է համանուն մեկ այլ վանք, սակայն դրա տեղադրությունը հասկանալ չենք կարողացել... Ըստ մեկ այլ ավանդության՝ մեծ ու շքեղ բազիլիկ՝ մեծ, զարդարուն խաչով կանգնած էր գլխավոր եկեղեցու դիմաց: Մկրտության ավազանի կողքի խաչքարը դեռ կանգուն է. այն տեղացիների շրջանում հայտնի է «Քրտնքի քար» անունով և արձանագրությունը հիշատակում է 1581 թվականը:

Ճարտարապետություն

Սուրբ Սահակ եկեղեցին գտնվում է Յուջեթեփե գյուղում՝ Մուշ քաղաքի կենտրոնից 30կմ հեռավորության վրա: Ունի ուղղանկյուն հատակագիծ՝ արևելք-արևմուտք ուղղվածությամբ և 4,42x9,10 մ չափերով: Ներկայումս շինությունը մասնավոր սեփականություն է և օգտագործվում է որպես խոտի պահեստ: Հարավից դրան ժամանակակից կառույց է հարում: Սուրբ Սահակ եկեղեցու հիմնական պաշտամունքային տարածքը 2,84x6,42 մ է, իսկ աբսիդը 3,14 մ լայնություն և 1,37 մ խորություն ունի (նկ. 1):

Մուտքը (լայնությունը՝ 1,04 մ)՝ արևմտյան ֆասադից է: Նկատվում է, որ մուտքի նախնական բացվածքը (լայնությունը՝ 1,90 մ) գտնվում է

այս ճակատի մեջտեղում և ներկայումս մասամբ փակված է: Արևմտյան ճակատի պատի հաստությունը 60 սմ է, մինչդեռ հյուսիսային և հարավային հիմական պատերը մոտավորապես 78 սմ են:

Հիմական պաշտամունքային տարածքը ուղղանկյուն է. դրա լայնությունը աբսիդի լայնությունից փոքր է: Արդյունքում կիսաշրջանաձև աբսիդի պատն ավարտվում է հյուսիսային հիմապատի մի հատվածում: Այս դետալը հստակորեն հայտնի է դառնում հյուսիսային պատի բացվածքի շնորհիվ:

Դրանից ենթադրվում է, որ աբսիդը և հիմապատերը հնարավոր է նույն ժամանակաշրջանում չեն կառուցվել, և որ պատերը կառուցվել են արդեն գոյություն ունեցող աբսիդի դիմաց (նկ. 2):

Հիմական պատերը կառուցվել են երկերես սրբատաշ շարվածքի մեթոդով. դրանց ներքին և արտաքին քարերի շարքը գրեթե ամբողջությամբ ավերված է: Սրբատաշ քարե երեսպատումը միայն հյուսիսային պատի մի մասում է պահպանվել: Այս հատվածի՝ հատակին մոտ գտնվող երկու շարքերի քարերը շատ ավելի մեծ են, քան վերին շարքերինը: Ավելին, հաստատված է, որ այս երկու շարքերը հիմական պատի հարթությունից դուրս են գալիս, ինչը այն նմանեցնում է հարթակի: Այս երկու շարքերը կարող են ցուցիչներ լինել, որ այս բաժինը բազմաշերտ է, և, որ դրանք կարող են տարբեր ժամանակաշրջանների պատկանել: Տեսությունը հաստատում է այն դիտարկումը, որ գետնին մոտ գտնվող քարե սալերի չափերը ավելի մեծ են, քան սովորաբար լինում են այս մասշտաբի կառույցների պարագայում (նկ. 3): Հավանական է, որ այն փոխառվել է այլ կառույցից՝ հատկապես հաշվի առնելով Աշտիշատի բնակավայրի նախաքրիստոնեական տաճարների նշանակությունը և կրոնական համատեքստը:

Ներքին պատերի՝ հատկապես հյուսիսային և հարավային պատերի շարքերի վրա բազմաթիվ խաչաձև նախշեր և զանազան դեկորատիվ

Նկ. 2 Սուրբ Սահակ եկեղեցու ինտերիեր, աբսիդ

Նկ. 3 Սուրբ Սահակ եկեղեցի, հյուսիսային ճակատ

Նկ.4 Սուրբ Սահակ եկեղեցի, դեկորատիվ մանրամասնություն

Նկ. 5 Սուրբ Սահակ եկեղեցի, խաչազարդ

Նկ. 6 Թաղ և ակուստիկ սափորներ

համադրություններ կան: Սա հուշում է, որ այդ քարերը կարող է վերաօգտագործված լինեն (նկ. 4 և 5):

Առաստաղը գլանաձև թաղ է, որը կառուցված է տեղական քարերի փոխկապակցված օգտագործմամբ: Կա «aks-ı seda» (օսմաներեն՝ ձայնային արձագանք) դետալ, որտեղ օգտագործված են վեց կավե սափորներ դեպի գլանաձև թաղի հյուսիսային եզրը՝ աբսիդի մոտ: Սափորները դասավորված են երեք շարքով (3-2-1) և եռանկյունաձև ֆորմա են ստեղծում (նկ. 6): Մուշում, ինչպես նաև Անատոլիայի տարբեր մասերում այս մեթոդը կիրառվում է կոր առաստաղների պարագայում ակուստիկ հսկողություն ստեղծելու համար:

Ներկա վիճակ

Սուրբ Սահակ եկեղեցին ներկայումս մասնավոր սեփականություն է և օգտագործվում է խոտի պահեստավորման համար: Կառույցը տարերքներից պաշտպանված է փայտե երկթեք տանիքով, որը կառուցվել է ներկայիս սեփականատերերի կողմից: Պատերը կառուցված են երկկողմ պատերի տիպաբանությամբ, որտեղ ներսի և դրսի սրբատաշ երեսների միջև ընկած հատվածը լցված է խճաքարերով: Սակայն գրեթե բոլոր սրբատաշ շարքերը ապամոնտաժված են, և խճաքարային լիցքն այժմ տեսանելի է: Արևմուտքի նախնական դուռը լցված է մանրաքարերով, իսկ մուտքը փոքրացվել է: Նախնական դռան վերևում գտնվող ճակատաքարի վրա,

ամենայն հավանականությամբ, նախկինում մակագրություն է եղել, որը կորսված է:

Ռիսկերի վերլուծություն և առաջարկություններ

Դերիկի (Աշտիշատ) բնակավայրը նախաքրիստոնեական հայկական մշակույթի և ժառանգության մասին շատ տեղեկություն է տրամադրում: Բնակավայրի և ավելի լայն տարածաշրջանի պատմական նշանակության համար հրամայական է, որ եկեղեցին դիտարկվի ընդհանուր համատեքստում, ներառյալ այս տարածքում նույն ժամանակաշրջանի այլ կառույցներ, որոնք դիտարկվել են կամ դիտարկվելու են: Կառույցում նկատվող ճարտարապետական որոշ տարրեր արտացոլում են ինչպես Սուրբ Սահակ եկեղեցու, այնպես էլ շրջակայքի բազմաշերտ և բազմաժամանակյա բնույթը: Նման արժեքավոր կառույցը պետք է որպես ավելի ճշգրիտ և ծավալուն ուսումնասիրության մաս ուսումնասիրվի, այնուհետև պահպանման-վերականգնման համար անհրաժեշտ քայլերի արագ իրականացումից հետո հասանելի դառնա այցելուների համար:

Փայտե, պաշտպանիչ տանիքը, որը կառուցվել է սեփականատերերի կողմից՝ խոտի պահեստավորման համար, կանխել է շրջակա միջավայրի պայմանների հետևանքով առաջացած հետագա կարճաժամկետ վատթարացումները: Այնուամենայնիվ շենքը կառուցվածքային վատ վիճակում է:

Կարևոր խնդիր է շենքի նախնական շինարարական նյութերի կորուստը: Դրանց մի զգալի մասը, հավանաբար, վերաօգտագործվում է գյուղի այլ մասերում/շինություններում, որի դեպքում դրանք կարելի է հայտնաբերել: Այս խնդրի լուծմանն ուղղված զգուշավոր ջանքերը կարող են նպաստել կառույցի մասնակի վերաինտեգրմանը՝ պահպանելով դրա պատմաճարտարապետական ամբողջականությունը:

Մոլլաքյանդի առանձնատուն

Բուլանըք գավառ, Մոլլաքյանդ գյուղ	Կառուցման ժամանակաշրջան/տարեթիվ՝ 1878-ից հետո
GPS՝ 38°57'09.2"N 42°04'09.3"E	Ներկայիս գործառույթ՝ բնակելի / կացարան (հյուրատուն)
Գրանցման տարեթիվ և համար՝ Էրզրումի Մշակութային ժառանգության պահպանության շրջանային վարչություն, 15.09.1988 – 46	

Պատմություն

Մոլլաքյանդի առանձնատունը (հյուրատուն) գտնվում է պատմական մզկիթի հյուսիսային կողմում. կան վկայություններ, որ այն պատկանել է մզկիթի հյուսիսում գտնվող *զավիային* (Ասնա 2018, 332)։ Մզկիթի հետ ունեցած կապի պատճառով ենթադրվում է, որ առանձնատունը կառուցվել է 1878 թվականին կամ դրանից հետո։

Ճարտարապետություն

Առանձնատունը գտնվում է Բուլանըք գավառում՝ Մոլլաքյանդ գյուղում, Քյոյ Իչի տեղանքում. այն երկհարկանի քարաշեն կառույց է՝ 132 մ2 մակերեսով։ Շենքն ունի ուղղանկյուն հատակագիծ՝ 13,52x9,40 մ չափերով և տեղակայված է հյուսիս-հարավ առանցքի վրա։ Գլխավոր մուտքը հողամասի հարավ-արևելյան անկյունում է՝ արևելյան ճակատի կոթողային, կամարակապ դռնով (նկ. 1)։ Առաջին հարկում այս մուտքը տանում է դեպի նախասենյակ *(taşlık)*, որը կցված է խոհանոցին, որը հյուսիսում երկու սենյակներ ունի, իսկ արևմուտքում՝ պահեստային տարածքներ։ Մուտքի անմիջապես հարավում վերջերս ավելացված, ժամանակակից ուղիղ սանդուղքը դեպի վերին հարկ մուտքն է ապահովում (նկ. 2)։ Սանդուղքով բարձրանալով հասնում ենք ուղղանկյունաձև նախասրահ, որը կենտրոնական տարածությունն է, որի շուրջ դասավորված են այս հարկի մյուս երեք սենյակները։ Նախասրահի ավելի երկար, արևելյան եզրը բացվածքներ ունի դեպի երկու սենյակ, մինչդեռ ավելի կարճ, հյուսիսային կողմը մուտք ունի դեպի մյուս սենյակ։ Երկու

Նկ. 1 Արևելյան ճակատ, գլխավոր մուտք





սենյակներից հարավայինը արևելյան կողմից հասանելի է չորս սանդղամատ և երեք հարթակով փոքրիկ սանդուղքով: Սա, հավանաբար, շենքի սանդուղքի նախնական բարձրությունը վերակազմավորելու փորձի արդյունք է: Վերին հարկի սենյակները, ի տարբերություն առաջին հարկի սենյակների, բավականին զարդարված ու խնամված են: Հատկապես հյուսիսում գտնվող ավելի մեծ սենյակը տարբեր չափերի և դասավորության խորշեր ունի՝ որպես առանձնատան գլխավոր սենյակ: Ե՛վ հիմական, և՛ բաժանարար պատերը առաջին հարկում ունեն մոտավորապես 1,15 մ հաստություն, իսկ վերին հարկում՝ 90-93 սմ:

Գլխավոր մուտքից անմիջապես հետո եկող *taşlık* տարածությունն ուղղանկյուն հատակագիծ ունի՝ 2,42x3,88 մ չափերով: Ժամանակակից, երկաթբետոնե սանդուղքը, որն անմիջապես հարավային կողմում է, 1,41 մ լայնություն ունի: Սանդուղքի տակ գտնվող տարածքը պատվել է, որպես պահեստ օգտագործման համար: Թաշլրք կոչվող մասից հյուսիս տեղակայված դուռը (լայնություն՝ 1,14 մ) տանում է խոհանոց, որը բաղկացած է իրարից կամարով (լայնություն՝ 94 սմ) բաժանված երկու տարածությունից: Դրանցից արևելյանը էլիպսաձև թոնիր ունի, որի հիմական և փոքր առանցքների չափերը 91x114 սմ են: Այն դեռ լավ վիճակում է և գործուն (նկ. 3): Խոհանոցի հյուսիսային պատին փակված/խցանված դուռ կա (լայնություն՝ 1,01 մ), որի ուրվագիծը դեռ նկատելի է: Այս դռնից այն կողմ գտնվող տարածություններն անհասանելի են:

*Նկ. 2 **Թաշլրք** և ժամանակակից աստիճանավանդակը*

Նկ. 3 Խոհանոցը և թոնիրը, առաջին հարկ

Առաջին հարկի մյուս տարածքը պահեստն է, որտեղ կարելի է հասնել *թաշլիքի* դռան միջոցով (լայնություն՝ 80 սմ): Այն ներառում է հիմական տարածքը (չափերը՝ 1,75x2,12 սմ) և դրան միացված, ավելի փոքր մասերը: Այն առանցքը, որը, կարծես, սահմանազատում է վերջինս, շենքի ընդհանուր հատակագծում համապատասխանում է հիմական պատի

Նկ. 4 Նախասրահի հարավային տեսք, վերին հարկ

Նկ. 5 Գլխավոր սենյակ և խորշեր, վերին հարկ

Նկ.6 Մուտք և արձանագրություն մարմարե սալի վրա, արևելյան ճակատ

արտաքին երեսին: Ուստի այստեղ պատի կառուցումը պետք է, որ կապ ունենա հարևան կառույցի հիմնապատի արտաքին ճակատի հետ: Այս երկու շենքերի շինարարության ժամանակացույցից կախված ենթադրվում է, որ այս տարածության նախնական ծրագիրը անմիջապես դուրս տանող ելք է ներառել: Խոհանոցի առաստաղը աղյուսե գլանաձև թաղ է, մինչդեռ առաջին հարկի երկու այլ սենյակների առաստաղները փայտե հեծաններից են կազմված:

Վերին հարկի նախասրահի արևելակողմում ննջասենյակներն են (նկ. 4): Երկու սենյակներ կարելի է հասնել նախասրահում գտնվող դռների միջոցով (լայնություն՝ 90 սմ), և յուրաքանչյուրն ունի մուտքի ֆասադին նայող ճաղավոր պատուհան, ինչպես նաև պատերին տարբեր խորշեր: Այս հարկի երրորդ սենյակը ուղղանկյունաձև գլխավոր սենյակն է, որի չափերը 4,06x8,14 մ են: Այն հասանելի է նախասրահից բացվող դռան միջոցով (լայնություն՝ 85 սմ): Դրա արևմտյան պատին՝ մի լուսամուտ, իսկ արևելյան պատին երկու լուսամուտներ կան: Սենյակի հյուսիսային և հարավային պատերի վրա ուշագրավ զարդանախշերով խորշեր կան (նկ. 5): Դեկորատիվ ժապավեններով պարուրված արևելյան պատուհանների դիմաց հարթակ կա: Պատերին երկու արձանագրություններ կան մարմարե սալերի վրա: Այս հարկի բոլոր առաստաղները օժանդակվում են փայտե հիմնական հեծաններով և ուղղահայաց, երկրորդական, գերանաձև փայտե տարրերով:

Առանձնատան գլխավոր մուտքը ներկառուցված է հատվածային կամարի մեջ, որը ավարտվում է սրածայր կամարով: Այս երկու կամարների միջև ընկած պատի վրա արձանագրություն կա ագուցված մարմարե սալի վրա (նկ. 6): Զարդարված, գլխիվայր U -ձև ժապավենը շրջապատում է դուռը անմիջապես սրածայր կամարի վերևում, որի վրա տեսանելի են յոթ քարե ամրակներ : Այս դետալը հուշում է, որ ի սկզբանե ելուստ է եղել. այս հատվածի վերևով ընթացող պատի շարը և կառույցի մնացած հատվածների շարի միջև եղած տարբերությունն օժանդակում է այս տեսությունը: Սեգմենտային կամարից վերդռան վերևում, մշակված քարե կաղապար կա: Այս կամարի երկու կողմերում քարի վրա նաև մուքարնաս զարդարանքով խոյակ ու ավազե

Նկ. 7 Երկթեք տանիքը հյուսիս-արևելքից

Նկ. 8 Փայտե գերանների կցումներ

ժամացույցի պատկերներ են փորագրված: Արևելյան ճակատը բավականին պարզ է, բացառությամբ մուտքի. առաջին հարկում կա մեկ պատուհան, իսկ վերին հարկում՝ չորս պատուհաններ, որոնք տեղադրվել են ներսի կառուցվածքին համապատասխան: Առաջին հարկի արևելյան ճակատի զգալի հատվածը սվաղված է ցեմենտով: Ճակատի մնացած մասում սրբատաշ քարով է շարված: Վերին հարկում դեպի հյուսիս երեք սեգմենտային կամարակապ պատուհանները հարդարված են լուսամուտների ձևին համապատասխանող կաղապարներով: Այս ճակատին ելուստային կաղապարներ չկան. այն պսակվում է փայտյա կոր տանիքով: Կողային պատը կառուցվել է ժամանակակից բետոնե շերտով (նկ. 7): Հիմնական ճակատի առաջին հարկում սվաղի տակ փայտե գերանը միանում է ամբողջ ճակատով երևացող, չսվաղված և շարունակական ընթացող փայտե գերանին (նկ. 8): Շենքի հյուսիսային ճակատի վրա ելուստային կաղապար կա, սակայն այն ամբողջ մակերեսով չի շարունակվում: Արևմտյան ճակատը մասամբ տեսանելի և բավականին պարզ է, իսկ հարավային ճակատը տեսանելի չէ, քանի որ մզկիթին կից է:

Ներկա վիճակ

Առանձնատունը բնակելի ճարտարապետության տպավորիչ օրինակ է: Կարող է թվալ, որ այն կորցրել է նախնական առանձնահատկությունները հետագա միջամտությունների պատճառով, սակայն այն ընդհանուր ճարտարապետական յուրօրինակությունը պահպանում է: Կառույցն անկանոն կերպով է օգտագործվում: Հետևաբար ներքին հատվածները պահպանված են և ընդհանուր առմամբ լավ վիճակում են: Սակայն հատկապես արևմտյան ճակատի վրա առաջացած ճաքերը ուշադրություն են հրավիրում շենքի ներսում

որոշակի կառուցվածքային խնդիրների վրա: Տանիքը ավելի ուշ հավելում է, որը նման տեղումսառատ տարածաշրջանում քիվերի գեղագիտական կամ նյութական կարիքներին չի բավարարում:

Խոհանոցի փակ դռնից այն կողմ ընկած առաջին հարկում գտնվող տարածք(ներ)ի ճակատագրի մասին տեղեկություն ստանալ չհաջողվեց:

Ռիսկերի վերլուծություն և առաջարկություններ

Շենքը շարունակում է կատարել իր նախնական գործառույթը, ուստի պահպանությանն ուղղված ցանկացած մոտեցում պետք է հիմնվին կենտրոնանա դրա կանոնավոր-տարեկան պահպանման վրա՝ օգտագործումը երկարացնելու համար: Առաջնահերթությունը պետք է տրվի հիմնարար ուսումնասիրություններին և կառուցվածքի գնահատում-մոդելավորումը կազմելուն՝ պարզելու հրատապություն պահանջող միջամտությունները և ամրապնդելու շինությունը: Արևելյան (մուտքի) ճակատի բնօրինակ առանձնահատկությունների, ներառյալ ելուստի մասին տեղեկություններ հայտնաբերելու համար պետք է իրականացվեն ճարտարապության պատմության հետազոտություններ: Հստակ փաստաթղթավորման և նախագծերի մշակումից հետո պետք է ջանքեր գործադրվեն, որպեսզի կառույցն արագ վերականգնի իր նախնական ինքնությունը այնպես, որ շարունակի ծառայել համայնքի ընթացիկ պահանջներին:

Շվլակի մատուռ

Հասքյոյ գավառ, Շվլակ գյուղ	Կառուցման ժամանակաշրջան/տարեթիվ՝ անհայտ
GPS՝ 38°40'56.79"N, 41°39'9.11"E	Ներկայիս գործառույթ՝ լքված
Գրանցման տարեթիվ և համար՝ Վանի Մշակութային ժառանգության պահպանության շրջանային վարչություն, 25.06.2018 – 1997	

Պատմություն

Գյուղը գտնվում էր Մշո դաշտում՝ Մուշ-Բիթլիս ճանապարհին, և Մուշ քաղաքից 14 կմ հարավ-արևելք է: Բնակավայրը շրջապատում են Գոմշանուտ անտառապատ լեռները: Օսմանյան ժամանակաշրջանում այն հայտնի է եղել Շիմլակ անունով և 1881 թվականին ունեցել է 315 հայ և 30 քուրդ բնակչություն: 20-րդ դարի սկզբին բնակավայրն ուներ 500 հայ բնակչություն՝ 60 ծուխ: Տնտեսական հիմնական գործունեություններն էին երկրագործությունը, անասնապահությունը, խաղողագործություն–այգեգործությունը, տարբեր արհեստները: Բնակավայրն ուներ մեկ դպրոց և Սուրբ Կարապետ եկեղեցին, որը, ավանդազրույցների համաձայն, հիմնադրվել է Սուրբ Գրիգոր Լուսավորչի կողմից: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Եկեղեցին ավերակի է վերածվել (ՀՀՇՏԲ 1998, 117, 122, 140):

«Հուշամատյան»-ի տվյալների համաձայն՝ 1890-1914 թվականներին Շիմլակը (Դաղդիբի) մոտավորապես 300 բնակչություն է ունեցել՝ 42-46 ծուխ: Նաև փոքրաթիվ քրդական բնակչություն է եղել (հղում 18): Ըստ թարմացված ժողովրդագրական տվյալների՝ 1914 թվականին 42 տնտեսություններում 295 հայեր են բնակվել (Գևորգյան-Փաբուջյան, 2012, 493):

Ի հավելումն Սուրբ Կարապետ եկեղեցու՝ Շիմլակում էր գտնվում Սուրբ Սարգիս եկեղեցին, որը քարաշեն էր և ենթադրաբար կառուցվել էր նախքան 19-րդ դարը (2012, 493):

Ճարտարապետություն

Դաղդիբի գյուղի մատուռը քարաշեն կառույց է, որի աբսիդը մասամբ պահպանվել է (նկ. 1): Մատուռը կառուցվել է Դաղդիբի գյուղից դեպի արևմուտք գտնվող հարթավայրին նայող զառիթափ լանջին (նկ. 2):

Նկ. 1. Հասքյոյ, Դաղդիբի գյուղ, մատուռի մնացորդներ

Նկ. 2. Դաղդիբի գյուղի մատուռի հարավ-արևելյան կողմը

Նկ. 3. Աբսիդի պատը և հյուսիսային պատը (Դաղդիբի գյուղի մատուռ)



Ենթադրվում է, որ շինությունն ունեցել է միանավ ուղղանկյուն հատակագիծ (արտաքին չափերը՝ 6,10 x … մ); դրա տանիքի կառուցվածքի մասին տեղեկություններ չկան: Արևմտյան պատը գրունտային ճանապարհի տակ է մնացել, ուստի երկայնքով արտաքին չափը հնարավոր չէ չափել: Ինտերիերում աբսիդի մակերեսը կորացած է. ի տարբերություն տարածաշրջանի մյուս մատուռների և եկեղեցիների՝ այս հատվածը արտաքին ֆասադի վրա դուրս չի ցցվում (բացվածքը՝ 3,89 մ, խորությունը՝ 1,30 մ): Ինտերիերում, որտեղ հյուսիսային և հարավային պատերը միանում են աբսիդի կորի հետ, պատը դուրս է ցցվում մոտավորապես 25 սմ-ով՝ առաջացնելով մույթ: Շատ հավանական է, որ մույթերը նախապես կապված են եղել տանիքի կառուցվածքի տակ գտնվող կամարների միջոցով: Բացի այդ, կորացված պատի հարավային մասում կա ուղղանկյուն խորշ (խորությունը՝ 52 սմ, լայնությունը՝ 55 սմ): Հատակի նախնական բարձրությունը հնարավոր չէ հասկանալ, քանի որ ժամանակի ընթացքում ինտերիերը լցվել է մանրաքարով և հողով. հավանաբար նույն պատճառով աբսիդի խորշի բարձրությունը շատ մոտ է ներկայիս հատակի բարձրությանը (նկ. 4):

Պատերը մանրաքարից եկ կառուցված և 1,05-1,10 սմ հաստություն ունեն (նկ. 2): Աբսիդի վերևում գտնվող կիսակլոր գմբեթը նույնպես

Նկ. 4. Աբսիդի պատը, վերին մակարդակներում բացվածքի հետքեր (Դաղդիբի գյուղի մատուռ)

մանրաքարից է, սակայն այստեղի քարերը պատերում օգտագործված քարերի համեմատությամբ զգալիորեն ավելի բարակ և երկար են: Աբսիդի պատին բացվածքի հետքեր կան (նկ. 3):

Ներկա վիճակ

Մատուռից միայն մի փոքր հատված է պահպանվել: Հասկանալի է, որ կառույցը լքվելուց հետո ոչ օգտագործվել է, ոչ էլ պահպանվել. ենթադրվում էր, որ դրա արևմտյան կողմում գտնվող գրունտային ճանապարհի կառուցումն ու ընդլայնումը ևս լրացուցիչ վնասներ և կորուստներ են պատճառել:

Ռիսկերի վերլուծություն և առաջարկություններ

Դաղդիբի գյուղի մատուռը արագ քայքայման գործընթացի մեջ է: Եթե հրատապ պահպանության միջոցառումներ չձեռնարկվեն, հավանական է, որ առաջիկա տարիներին այն ամբողջությամբ կկործանվի: Անհրաժեշտ է կատարել ամբողջական հետազոտություն և վերականգնման նախագիծ մշակել, քանի դեռ կառույցը կանգուն է պահպանման մեթոդների շնորհիվ: Առաջարկվում է այս տարածք մուտքը սահմանափակել, իսկ միջանկյալ ժամանակահատվածում շինության վերաբերյալ տեղեկատվական վահանակ պատրաստել:

Սուրբ Կիրակոս եկեղեցի

Կենտրոն (Centrum) գավառակ, Քեփենեք (Արագ, Արակ) գյուղ, Քյոյիչի	Կառուցման ժամանակաշրջան/տարեթիվ՝ **1427**
GPS՝ **38° 42' 28.20'' N 41°32'55.00'' E**	Ներկայիս գործառույթ՝ **խոտի պահեստ / պահեստ**
Գրանցման տարեթիվ և համար՝ **Վանի Մշակութային ժառանգության պահպանության շրջանային վարչություն, 15.07.2010 – 664**	

Պատմություն

Արագը գտնվում էր Բիթլիս նահանգի Մուշ սանջակում՝ Մուշի գավառից 4-5 կմ հարավ-արևելք, Բիթլիս տանող ճանապարհի մոտ, իսկ օսմանյան շրջանում՝ Մեղրագետ (այժմ հայտնի է որպես Կարասու) գետի վտակի ափին (ՀՀՇՏԲ 1986, 318)։ Գյուղը, որը ժամանակ առ ժամանակ սահմանվում էր որպես քաղաք, 7-րդ դարի գրանցումներում Արաքս անունով է հիշվել (Մամիկոնյան 1989, 76)։

Մի քանի գիտնականներ տեղեկություն են տրամադրում գյուղի հայ բնակչության վերաբերյալ։ Նշվում է, որ 1881 թվականին Արագում ապրում էր 427 հայ՝ 87 տնտեսություն (ՀՇ 1974, 524), իսկ 20-րդ դարի սկզբին գյուղն ուներ 37 տնտեսություն, որոնց մեծ մասը հայեր էին (ՀՇ 1974, 524)։ 1890-ի եպիսկոպոսարանի տվյալները վկայում են, որ գյուղում 83 տնտեսություն հայ և 4 տնտեսություն քուրդ բնակչություն կար։ Որոշ աղբյուրներ նշում են, որ քուրդ բնակչությունը 4-ից շատ ավելի տնտեսություն է ունեցել։ Սասունին (1956, 352) առաջարկում է, որ 20-րդ դարի սկզբին գյուղն ունեցել է 70 հայկական տնտեսություն։ Ըստ Ա-ԴՌ-ի (1912, 105) և եպիսկոպոսական կենտրոնի տվյալների՝ գյուղի այդ ժամանակվա բնակչությունը բաղկացած է եղել 66 հայ և 15 քրդական տնտեսություններից։ Մարտիրոսյանի կողմից 1910-ին 70 հայ տնտեսության հիշատակումը ևս հուշում է բնակչության թվի անկման մասին։ Գևորգյանը (2012, 489),

Նկ. 1 Սուրբ Կիրակոս եկեղեցի, տեսարան հյուսիս-արևելքից



հիմվելով Պոլսո հայոց պատրիարքարանի 1913-1914 թթ. տվյալների վրա, գրում է, որ գյուղում 1005 հայ է եղել՝ 104 տնտեսություն, գյուղն ունեցել է 40 աշակերտներով դպրոց և եկեղեցի՝ Սուրբ Կիրակոսը: 1914-ին ժողովրդագրական մատյանները թարմացվել են՝ 797 հայ՝ 103 տնտեսությունում (հղում 19):

«Հուշամատյան»-ը (հղում 20) Արագում նշում է երեք եկեղեցիների գոյության մասին, որոնցից երկուսը ավերակ վիճակում էին, իսկ Սուրբ Կիրակիոսի կառուցումը թվագրվում է մոտավորապես 1427-ով: Հիշատակվում է նաև երկու հոգևորականների մասին՝ հայր Մկրտիչ Տեր-Մկրտչյան և հայր Կարապետ Ասմարյան:

Բազմաթիվ մանրակրկտորեն փորագրված քարեր օգտագործվել են գյուղի՝ դեռևս կանգուն տներում: Գյուղում են գտնվում Սուրբ Կիրակոս եկեղեցու ավերակները:

Ճարտարապետություն

Սուրբ Կիրակոս եկեղեցին գտնվում է Մուշի կենտրոն (Centrum) թաղամասում, Քեփենեք գյուղի Քյոյիչի տեղանքում (նկ. 1):

Նկ. 2 Հյուսիսային ֆասադը և ժամանակակից կցակառույցը

Դրա ավերակները ներկայումս գյուղացիների կողմից օգտագործվում են որպես գոմ/խոտի պահեստ: Չնայած անուշադրությանն ու անպատեհ օգտագործմանը՝ եկեղեցին պահպանում է իր ճարտարապետական ամբողջականությունը: Հարավից և արևմուտքից ուշ շրջանում կցակառույցներ են ավելացվել: Հողային ռեգիստրի և կադաստրի գլխավոր վարչության մատյաններում շինությունը նկարագրվում է որպես միահարկ եկեղեցի:

Կառույցն ունի ուղղանկյուն հատակագիծ արևելք-արևմուտք առանցքով, որն ունի 7,90x13,14 մ չափեր: Հյուսիսային ֆասադին ավելացվել է ժամանակակից մուտք/նախասրահ (չափերը՝ 3,05x2,77 մ), որը հիմնականում հողապատ է (նկ. 2): Կառույցի հյուսիսային կողմի դուռը (լայնությունը՝ 1,02 մ) դեպի ինտերիեր է բացվում:

Հիմական չափերը 5,77x8,30 մ է և ծածկված է գլանաձև թաղով: Թաղը հենված է երկու նույնական և զուգահեռ կամարների վրա: Արևելյան կողմում՝ աբսիդի մեջտեղում (լայնությունը՝ 3,60 մ, խորությունը՝ 2,57 մ) փորված է կա: Աբսիդի հյուսիսային և հարավային պատերից յուրաքանչյուրի վրա խորշ կա (լայնությունը՝ 44 սմ, խորությունը՝ 47 սմ): Տարածությունը բաժանված է երկու կամարներով, որոնք ունեն 73 սմ լայնություն; միջին բաժանման հարավային պատին փակված մուտք է տեսանելի: Բացվածքը (լայնությունը՝ 1,02 մ) հավանաբար փակվել է հարակից ժամանակակից կառույցների շինարարությունից հետո:

Կառուցը խճաքարից է: Արտաքին ֆասադը ավելի նուրբ քարերի երկու շարվածքով է, որոնք եղլնաձլաձև (եղևնաձև) նախշ են ստեղծում (նկ. 3): Ոչ ինտերիերի, ոչ էլ արտաքին հատվածի վրա ոչ մի զարդանախշ կամ դեկորատիվ էլեմենտ չի հայտնաբերվել: Սակայն

Նկ. 3 Արևելյան ֆասադը և խճաքարային շարվածքը՝ եղլնաձլաձև(եղևնաձև) նախշով

Նկ. 4 Ինտերիեր., մրի կուտակումներ պատին

ինտերիերի պատերի մակերեսին հայտնաբերվել են սվաղի հետքեր: Հավանական է, որ այդ մակերեսներն ի սկզբանե ծածկված են եղել որմանկարներով, սակայն, կեղտի և մրի կուտակման պատճառով անհնար է պարզել՝ արդյո՞ք շոշափելի հետքեր դեռ կան, թե ոչ:

Եկեղեցու հիմական պատերի հաստությունը 1,07-1,09 մ է: Արևմտյան պատի կենտրոնում երկրորդ պատուհանն է՝ ճաղավանդակներով: Աբսիդի կիսաշրջանաձև կառուցվածքը ընթեռնելի չէ արտաքինից, որտեղ երևում է, որ եկեղեցին պրիզմատիկ է: Բեմի պատը հիմնականում քանդված է, սակայն հետքերը դեռ տեսանելի են: Աբսիդի հատակը բարձրացված է՝ հատակի մացած հատվածից մոտավորապես մեկ աստիճանի չափ բարձր:

Ներկա վիճակ

Սուրբ Կիրակոս եկեղեցին շրջապատված է ժամանակակից շինություններով, որոնցից երկուսը կից են տարբեր կողմերից: Հյուսիսային ֆասադը, որտեղ գտնվում է ներկայիս մուտքը, գրեթե ամբողջությամբ հողածածկ է: Տանիքի մակերեսին նկատելի է խիտ բուսականություն (նկ. 2): Տանիքի վերաբերյալ քիչ բան է ընկալելի:

Շինությունում կրիտիկական կառուցվածքային խնդիրներ չեն նկատվել: Ինտերիերի պատերի մեծ մասում կեղտի և մրի խիտ կուտակում կա (նկ. 4): Հետևաբար հնարավոր չի եղել դիտարկումներ անել պատերի մակերեսին որմանկարների մացորդների հնարավոր հետքերի վերաբերյալ:

Ռիսկերի վերլուծություն և առաջարկություններ

Քեփենեք գյուղը կարևոր բնակավայր էր, որտեղ մինչև 20-րդ դարի սկիզբը բնակչությունը հիմականում հայկական էր: Սուրբ Առաքելոց վանքին մոտ լինելը հնարավորություն է տալիս այս հուշարձանի համար զբոսաշրջային երթուղի սահմանել: Սուրբ Կիրակոս եկեղեցին պետք է դիտարկել որպես գյուղի և շրջակայքի ավելի մեծ լանդշաֆտի մաս, այլ ոչ որպես առանձին կառույց: Պահպանմանն ուղղված ցանկացած մոտեցում պետք է դիտարկվի այս տեսանկյունից:

Կառույցի շուրջ գտնվող հողակույտերը պետք է մաքրվեն, որպեսզի կանգուն պատերն ու տանիքը տեսանելի դառնան: Այս գործընթացին պետք է հետևեն տեխնիկական գնահատումները, որից հետո պետք է շտապ կանխարգելիչ մեթոդներ ձեռնարկել՝ հետագա վատթարացումները կանխելու համար: Շինությունը պետք է ազատել անպատշաճ հավելումներից և բեռներից, ամրացնել և պաշտպանել տարրերքներից: Շենքը փաստաթղթավորելու և վերականգնելու նախագծի մշակման ջանքերը պետք է հանգեցնեն կանոնակարգված և գիտականորեն համակարգված միջամտությունների շարքի:

Օգտակար կլինի, որ գյուղի մուտքի մոտ, ինչպես նաև համապատասխան այլ վայրերում տեղադրվեն տեղեկատվական և կողմնորոշիչ վահանակներ, որպեսզի բոլորը կարողանան գտնել այս շինությունը, ինչպես նաև գյուղի տարբեր մասերում երթուղու այլ հատվածներում գտնվող շինությունները:

Տեղեկատվական և կողմնորոշիչ վահանակների տեղադրումը (գյուղի մուտքի մոտ ինչպես նաև համապատասխան այլ վայրերում, որտեղ այլ շինություններ կարող են բացահայտվել) կնպաստի նաև շինությունների պահպանմանն ու մշակութային տեղեկացվածության զարգացմանը:

Ալադին բեկի մզկիթ

Կենտրոն (Centrum) թաղ, Դերե թաղամաս	Կառուցման ժամանակաշրջան/տարեթիվ՝ **18-րդ դար**
GPS՝ **38°43'51.2"N 41°29'24.4"E**	Ներկայիս գործառույթ՝ **մզկիթ**
Գրանցման տարեթիվ և համար՝ **Էրզրումի Մշակութային ժառանգության պահպանության շրջանային վարչություն, 27.06.1990 – 248**	

Պատմություն

Ալադին բեկի մզկիթը մի համալիրի մաս է, որը պատվիրվել է տարածաշրջանի բեկերից մեկի՝ Ալադիկ բեկի կողմից 18-րդ դարում և գտնվում է Մուշ քաղաքի կենտրոնում (նկ. 1): Հայտնի է, որ համալիրը ներառել է մզկիթ, բաղնիք, մեդրեսե և կողոթային դամբարան/թյուրբե (Բորան - Քուլաղուզ 2000, 56):

Կառույցը երեք օսմաներեն արձանագրություն ունի՝ գլխավոր մուտքի վերևում, արևմտյան ֆասադին և մինարեթի պատվանդանի վրա: Այս արձանագրությունները հրատարակվել են Բորանի և Քուլաղուզի կողմից (2000, 57-60): Մինարեթի վրա կա մեկ այլ արձանագրություն՝ այս անգամ հայերեն. ԵՐԱՆՈՍ ՄԵՄԱՐ (1748 թ.):

Գրությունը շատ կարճ է, բայց վեր է հանում շինության կառուցող վարպետին և պատմությունը: Երանոս անվանը ավելի հաճախ հանդիպում են 14-15-րդ դարերում: «Մեմար» կամ «մեյմար» նշանակում է ճարտարապետ (բառը արաբերեն արմատ ունի, պարսկերենում օգտագործվում է որպես me'mār, իսկ թուրքերենում՝ «mimar» նույն իմաստով): Հայերեն արձանագրություններում «մեյմար» բառը հաճախ է հանդիպում: Օրինակ՝ Մայմար Դիրադուրը 1648 թվականին Վանի մերձակայքում գտնվող Վարագավանքում (օգտագործվում էր որպես Սուրբ Գևորգ եկեղեցի) գավիթ է կառուցել: 1663 թվականին Գևորգ Մայմարը Ռշտունիների իշխանությունում (Վանա լճից հարավ) Էրեմիրա Սուրբ Աստվածածին վանքի պաշտպանական պարիսպներն է կառուցել և պահպանվել են

Նկ. 1 Ալադին բեկի մզկիթի և մասշտաբային սրբավայրի մուտքը





Նկ. 2 Ալադին բեկի մզկիթի հատակագիծը (Բորան - Քուլաղուզ, 2000, 66)

արձանագրություններ, համաձայն որոնց «պաշտպանական պարիսպները կառուցվել են Գևորգ Մեյմարի ձեռամբ (Բարխուդարյան 1963, 111-113)։ Սուրբ Էջմիածնի զանգակատունը և Սուղն եկեղեցին կառուցած ճարտարապետը ծնվել է Վասպուրականում և ապրել Խիզանում և Մուղն գյուղի իր տապանաքարի վրա (1667 թ.) հիշատակվել է որպես ՄԵՅՄԱՐ ԲԵՅ (Ս. Սաղումյան 1976, 30; Մաթևոսյան 2000, 43)։ Սուրբ Կարապետ վանքի արձանագրություններից մեկում հիշատակվում է Ավագ Մեմար անունով մեկը։ Մուշի արձանագրությունները վկայում են, որ Միմար Երանոսը կառուցել է Ալադին բեկի մզկիթի մինարեթը 1748 թվականին։

Պատմական Մուշ քաղաքում կան ևս երկու պահպանված մզկիթներ՝ Մեծ մզկիթը և Հաջը Շերեֆ մզկիթը։ Դրանք ներառված չեն եղել դաշտային աշխատանքների զեկույցներում, սակայն տեղացիների հետ հաղորդագրությունից պարզ է դառնում, որ ի տարբերություն Ալադին բեկի մզկիթի՝ այս երկուսը, հավանական է, փոխակերպվել են մզկիթի եկեղեցիներից։ Դրանք մինչ օրս գործում են որպես պաշտամունքի վայրեր։

Ճարտարապետություն

Ալադին բեկի մզկիթը գտնվում է քաղաքի հին կենտրոնում՝ Աթաթուրք բուլվարի, Գազի և Բիթլիս փողոցների խաչմերուկում։ Քաղաքի

Նկ. 3 Ալադին բեկի մզկիթի եզրային աղոթասրահը

մյուս պատմական մզկիթները՝ Մեծ մզկիթը և Հաջը Շերեֆ մզկիթը, ևս մոտակայքում են գտնվում։ Ալադին բեկի մզկիթը ներառում է սրբազան տարածք (*harim*) և նախկին աղոթասրահ՝ ինտերիերում, ինչպես նաև մինարեթ և կոթողային դամբարան (*türbe*), որը դուրս է ցցված հյուսիս-արևմտյան անկյունում գտնվող հիմնապատերից (նկ. 2)։

Աթաթուրք բուլվարից կոթողային մուտքը տանում է դեպի բակ (նկ. 1)։ Շքամուտքը բաղկացած է ուղղանկյուն շրջանակից (սահմանվում է կիսաշրջանաձև պրոֆիլներով շրջանակի կրկնակի շարքով), որում կա սրածայր կամար՝ զարդարված ավելի շատ շրջանակներով։ Ուղղանկյուն բացվածքն ավարտվում է սրածայր կամարով և հարթ ճակատաքար ներքևում, որը երկու կողմից փոքրիկ հենահարթակ ունի։ Կամարակապ քարե խորշը, որը բոլորված է զարդանախշով , նկատելի է դռան փայտյա ճակատակալի վերևում։ Այս խորշում, հավանաբար, ինչ-որ ժամանակ արձանագրություն է եղել տեղադրված։

Եզրային աղոթասրահի և արևելյան ֆասադի դիմաց գտնվող բակի հատակն ու պատերը վերջերս են վերանորոգվել։ Բակից մի քայլ այն կողմ եզրային աղոթասրահն է, որը ենթադրվում է, որ նախապես եղել է կիսաբաց տարածք (*revak*)՝ իր երեք կամարներով (նկ. 3)։ Ներքին բակի արևմտյան պատը հարթ ճակատաքարով դուռ ունի, որը տանում է դեպի Ալադին բեկի կոթողային սրբավայր։ Կոթողային սրբավայրը կից է եկեղեցուն, սակայն դրա մուտքը եզրային աղոթասրահի ճակատից առանձնացված է շքամուտքով. սրբավայրը որպես ամբողջական կառույց, ընդգծված է փողոցի հետ անմիջական կապի միջոցով (նկ. 1)։ Եզրային աղոթասրահի ֆասադին՝ *revak*-ի

*Նկ. 4 Ալադին բեկ մզկիթի սրբազան տարածքը (**harim**) և միհրաբը*

սրածայր կամարների վերևում, տեղադրված են քարե քիվեր, ելուստներ, տանիքի պարապետ: Այս ֆասադի հետևում տեսանելի են հիմնական տարածքի հիմնապատերը և տանիքը:

Սրածայր կամարով և զարդանախշերով դռան բացվածքը եզրային աղոթասրահից տանում է դեպի սրբավայր (*harim*): Մուտքի կողքին գտնվող կամարակապ խորշի ճակատաքարին նույնպես արձանագրություն կա: Սրբատաշ քարով մուտքի յուրաքանչյուր կողմի դեկորացիաները (դեպի վեր են խոյանում) ներառում են արմավենի, վարդյակ և կիսալուսնով զարդարված նոճի:

Սրբազան տարածքը քառակուսի հատակագիծ և համաչափ դասավորություն ունի. կան չորս սյուներ, որոնց հատման հատվածները նման են խաչի (նկ. 4): Հիմնապատերի և սյուների միջև տեղադրված կամարները տարածությունը բաժանում են ինը թաղածածկ[1] մասնաբաժինների: Կենտրոնական մասը ծածկող թաղն ավելի բարձր է, քան մյուսները, դուրս է խոյանում տանիքից և ավարտվում է կոնաձև տանիքով՝ իր ութանիստ թմբուկով:

Մզկիթի հարավային (*kıble*) պատի մեջտեղում միհրաբի խորշն է; այն դուրս է գալիս հիմնական պատից: Միհրաբի բազմանիստ ծավալումը արտաքին ֆասադին ծածկված է կիսակոն տանիքի կապարապատ ծածկով: Այս պատը բաղկացած է երեք կամարակապ հատվածներից, յուրաքանչյուր հատված վերին մակարդակում երկաթե ճաղերով բացվածք ունի: Չորրորդ բացվածքը արևելյան հիմնապատի հյուսիսային կողմում է: Արտաքին ֆասադների բացվածքները սրածայր կամարներով փորվածքների տեսքով: Կառույցի մյուս չորս պատուհանների բացվածքները հարթ ճակատաքարերով են: Դրանցից երկուսը վերջին աղոթասրահը սրբավայրից բաժանող պատի վրա են՝ մուտքի երկու կողմերից: Մյուս երկուսը արևելյան և արևմտյան հիմնապատերի կենտրոնում են գտնվում: Սրբազան տարածքի հյուսիս-արևելյան անկյունից դեպի մինարեթ տանող մի դուռ կա՝ նույնպես հարթ ճակատաքարով:

1 Կառույցի վերևի տանիքի շարվածքը առագաստային թաղ է: Կամարներով սահմանված ուղանկյունանիստից անցումը շրջանաձև կամ էլիպսաձև թմբուկի, ինչպես նաև դեպի ավելի վեր երկրաչափական և կառուցվածքային շարունակական գործընթաց է: Աղյուսե շարվածքը նույն առանցքով է իրականացված՝ առանց ընդհատումների:

*Նկ. 5 Սրբազան տարածքը (**harim**), կենտրոնական մասնաբաժնիթաղը*

Մինարեթի՝ սրբատաշ որմերը իրենց ձևով և զարդանախշերով բավականին գեղագիտական տեսք ունի: Դրա քառակուսի պատվանդանը բարձր է: Անցումը պատվանդանից դեպի գլանաձև շարունակությունը իրականացված է ութանիստ թմբուկի միջոցով: Թմբուկի և շարունակության վրա դեկորատիվ գոտիներ կան: Պատշգամբից վերև ընկած հատվածը (*petek*) կարճ է:

Հիմնապատերը, սյուները և կամարները սրբատաշ քարից են. շինությունում ակներև են տարբեր գույների հրաբխային քարեր: Կամարի շարվածքում նկատվում է գեղագիտական մոտեցում՝ հատկապես բաց և մուգ գույնի քարերի հերթափոխային օգտագործմամբ: Թաղածածկը ամբողջությամբ աղյուսից է: Կենտրոնական մասնաբաժնի առաստաղին տեսանելի են ամֆորաներ կամ նմանատիպ սնաբեջ կերամիկակատարաներ, որոնք հաճախ նկատվում են տեղական եկեղեցիների և մատուռների աղյուսե թաղերի շարվածքում (նկ. 5): Մյուս օրինակների նմանությամբ, սնամեջ կերամիկական կտորներ տեղադրվել են որմերի մեջ եռանկյունաձև տարածություններ ստեղծելու համար: Մեկ կաղապարը սովորաբար տեղավորում է երեք կամ վեց կտոր: Ի տարբերություն այլ օրինակների, սակայն, վերևում նաև կերամիկական կտորների հորիզոնական շարք կա:

Նկ. 6 ֆասադին և մինարեթի հիմքի վրա արձանագրություններ

Կառույցում հաստատված մեկ այլ կառուցվածքային առանձնահատկություն երկաթյա ճաղերն են: Դժվար է թվագրել սրբավայրում սյուների միջև գտնվող հատվածները (միայն հյուսիս-հարավ առանցքների վրա), ինչպես նաև վերջին աղոթասրահի սյուների և հիմնապատերի միջև առկա հատվածը: Քանի որ մզկիթի կառուցումը համեմատաբար նոր շրջանի է, զարմանալի չի լինի, եթե ճաղավանդակներն օգտագործված լինեն նախնական նախագծման ժամանակ: Այս շրջանը գտնվում է երկու հիմնական խզումային խախտումների խաչմերուկում և անցյալում ենթարկվել է ավերիչ երկրաշարժերի, ուստի հնարավոր է նաև, որ փողկապված ճաղերը տեղադրվել

են նախկին վերանորոգումների[2] ժամանակ՝ կառուցվածքն ամրացնելու համար:

Մզկիթը բազմաթիվ զարդանախշեր ունի, որոնց մեծ մասը բուսական են: Հատկապես ուշագրավ են բացվածքների, սյուների, մինարեթի շուրջ զարդաքանդակները: Եզրային աղոթասրահից դեպի սրբավայր բացվածքի վերևում՝ արևմտյան ֆասադին և մինարեթի հիմքի վրա արձանագրություններ[3] կան (նկ. 6):

Ներկա վիճակ

Ալադին բեկի մզկիթը մեզ հասած պատմական շինություն է, որը պահպանել է նախնական հատկանիշներից շատերը: Վտանգավոր խնդիրներ չկան, բացառությամբ վերջին միջամտությունները, ինչպիսիք են ջեռուցման/հովացման համակարգը (կաթսա, PVC սանտեխնիկա, ռադիատորներ, օդափոխման համակարգեր), փայտե շիրմաները և եզրային աղոթասրահի *revak*-ը ծածկող ապակին: Արտաքին ֆասադների սրբատաշ պատերի մեջ առաջացած բորբոսը պետք է, որ կապված լինի վերջին վերանորոգման ժամանակ ցեմենտի հիմքով շաղախների օգտագործման հետ:

Ալադին բեկի կոթողային սրբավայրը շատ խառնիճաղանճ տեսք ունի՝ խողովակների, բնական գազի համակարգի մասերի, անհարկի ավելացված անձրևաջրերի և ջրուղու խողովակների, բարձրախոսի և մզկիթի նշանի պատճառով: Դրանք փչացնում են շենքի ընդհանուր գեղագիտական առանձնահատկությունը:

Նույն հողակտորի վրա՝ մզկիթից դեպի արևմուտք, թաղածածկ, երկհարկանի քարաշեն կառույց կա, որը որպես դատարանի նախկին շենք է հայտնի: Այն կամարակապ ցայտաղբյուր ունի: Այս քարաշեն շինությունը նմանություններ ունի Ալադին բեկի մզկիթի հետ՝ շինարարական նյութերի և մեթոդների, ինչպես նաև որոշ ճարտարապետական դետալների տեսանկյունից: Սակայն և՛ կառույցը, և՛ ցայտաղբյուրը երկար տարիներ անտեսված են եղել. ակներև են վիճակի վատթարացման նշաններ:

Ռիսկերի վերլուծություն և առաջարկություններ

Խորհուրդ է տրվում հանել Ալադին բեկի մզկիթի ջեռուցման, հովացման և օդափոխության համար նախատեսված սարքավորումների վերջին հավելումները և ներքին հարմարավետության համար ավելի խելացի լուծումներ կիրառել, որպեսզի շենքի գեղագիտական ինքնությունը չվնասվի: Շահավետ կլինի, որ տեղեկատվական վահանակները պատրաստվեն տարբեր լեզուներով և տեղադրվեն տարբեր կետերում՝ շենքի պատմության և ճարտարապետական առանձնահատկությունների վերաբերյալ այցելուներին տեղեկություն տրամադրելու նպատակով: Թաղածածկ կառույցը և դրա ցայտաղբյուրը, որոնք մզկիթի հետ նույն տարածքում են գտնվում, պետք է վերանորոգվեն նախքան վատթարացումը: Առաջարկվում է նաև կոթողային սրբավայրի ֆասադների հավելումները հեռացնել՝ տեսողական աղտոտվածությունը վերացնելու համար, և ենթակառուցվածքային սարքավորումները տեղափոխել ավելի համապատասխան վայրեր:

2 Կարելի է ասել, որ 14-րդ դարով թվագրված Մեծ մզկիթի սյուների և պատերի միջև եղած փողկապված ճաղերն ավելի ուշ շրջանի հավելումներ են:

3 Ալադին բեկի պատվիրած մզկիթների մասին Բորանի և Քուլաղուզի հոդվածները լավ աղբյուր են այս արձանագրությունների թարգմանության համար:

Հաթունի կամուրջ

Մալազկերտի գավառ, Աքսյունգյուր թաղամաս	Կառուցման ժամանակաշրջան/տարեթիվ՝ **անհայտ**
GPS՝ **39°09'06.2"N 42°30'37.8"E**	Ներկայիս գործառույթ՝ **կամուրջ**
Գրանցման տարեթիվ և համար՝ **Էրզրումի Մշակութային ժառանգության պահպանության շրջանային վարչություն, 24.06.1989 – 162**	

Պատմություն

Հաթունի կամուրջը գտնվում է Մալազկերտից հարավ-արևմուտք՝ Արածանի (Մուրատ) գետի Ակներ վտակի վրա՝ Ակներ գյուղի մոտ (Գևորգյան 2012, 500): Կամրջի կառուցման ստույգ տարեթիվն անհայտ է: Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ այն փլուզվել է 19-րդ դարի վերջերին, սակայն կառամատույցները պահպանվել են: Շինությունը վերանորոգելու վերաբերյալ նամակագրության վկայություններ կան, սակայն հայտնի է, որ 20-րդ դարի սկզբին վերանորոգումները դեռևս չեն իրականացվել բավարար ֆինանսավորման բացակայության պատճառով (Շեն 2009, 538):

Ճարտարապետություն

Հաթունի կամուրջը գտնվում է D280 Մուշ-Աղրը մայրուղու վրա՝ Մալազկերտ գավառի կենտրոնից 2,5 կմ հյուսիս-արևմուտք: Այն Մուրատ (Արածանի) գետի փոքր վտակի՝ Շեքերի (Ակներ) վրա է: Կամուրջը մեկ թռիչք ունի՝ սրածայր կամարով (նկ. 1): Բացվածքը մոտավորապես 10,55 մ է: Կամուրջի հատակը հարթ է և 6,70 մ լայնություն ունի:

Վտակի հունը կամրջի մոտ նեղ է. դեպի արևմուտք բավականին զառիթափ և քարքարոտ է, մինչդեռ դեպի արևելք ավելի մեղմ թեքություն ունի (նկ. 2): Այսպիսով, կամարի արևմտյան հենասյունն ավելի կարճ է, արևելյան հենասյունը՝ բարձր: Հենասյուները վտակի հունի հիմքի ժայռից են խոյանում: Սրբատաշ քարից կամարները եռաշերտ է՝ թե՛ վերին և թե՛ ներքևի հոսքերի ուղղությամբ: Շարվածքի առաջին 5-6 սեպաձև կամարաքարերը բազալտից են, մնացածները՝ վարդագույն երանգով հրաբխային քարից: Նյութերի այս տարբերությունը վկայում է արխիվային

Նկ. 1 Հաթունի կամրջի պատկերը հյուսիս-արևմուտքից



Նկ. 2 Հաթունի կամրջը. հոսանքն ի վեր ուղղություն

փաստաթղթերում նշված ճասների մասին. հնարավոր է, որ շարվածքի վերևում գտնվող առաջին մի քանի կամարաքարերը օրիգինալ են, իսկ ճաացածը՝ վերանորոգման արդյունք: Նմանատիպ վերանորոգման հետքեր կան նաև արևմտյան հենասյան վրա: Այնուամենայնիվ, արևելյան հենասյան վրա իրավիճակն ավելի բարդ է. նյութի, բլոկի չափսերի և շարվածքի մեթոդների տարբերություններ կան: Համարվում է, որ կամարի մոտ գտնվող մի փոքր հատված օրիգինալ է. ճաացածը վերանորոգման և միջամտությունների արդյունք են:

Ներկա վիճակ

Հաթունի կամրջի հարևանությամբ մայրուղու մաս կազմող երկաթբետոնե նոր կամուրջ է կառուցվել (նկ. 1): Նոր կամրջի հենասյունները պատմական կամրջի հենասյուներին են հենվում: Այս իրավիճակը ճասակար է մշակութային արժեք հանդիսացող կամրջի և դրա շրջակայքի, ինչպես նաև վտակի հետ կապի համար: Չնայած նոր կամուրջը շահագործվում է, հետիոտները և տրանսպորտային միջոցները դեռևս ակտիվորեն օգտագործում են Հաթունի կամուրջը:

Նկ. 3 Ջրաղացների ավերակները

Քարի մակերեսների վրա բորբոս է հայտնաբերվել, ինչը ցույց է տալիս, որ վերջին վերանորոգման ժամանակ հավանաբար ցեմենտի հիմքով շաղախներ են օգտագործվել: Ակնկալվում է, որ մակերեսների վրա աղային կուտակումները շարունակվելու են: Բացի այդ, նկատվել է, որ արևելյան հենասյան երեսպատման որոշ նյութեր (քար և շաղախ) կորել են և որոշ քարեր տեղահանվել են:

Չորս պատմական ջրաղացների ճաացորդները կամրջից մոտավորապես 70 մ հյուսիս են՝ վտակի արևելյան կողմում (նկ. 3): Խճաքարային շարվածքը, որն ուղղահայաց կապ ունի կամրջի արևելյան հենասյան հետ, հնարավոր է, որ դեպի ջրաղացներ տանող ճանապարհի մի մասն է եղել:

Ռիսկերի վերլուծություն առաջարկություններ

Հաթունի կամուրջը անտեսված կառույց է, որն անցյալում կատարված վերանորոգությունների հետքեր է կրում: Նոր, հարակից կամուրջը պատմական կառույցի երթևեկության ծանրաբեռնվածությունը մասամբ թեթևացրել է, բայց նաև այն պակաս տեսանելի է դարձրել: Խորհուրդ է տրվում, որ երկաթբետոնե կամուրջը հանվի՝ առնվազն օգտագործման ժամկետի ավարտից հետո, և նորը կառուցվի ավելի հեռավոր վայրում: Կամրջի մոտ գտնվող ջրաղացները կարելի է ուսումնասիրել, փաստաթղթավորել և պահպանել: Նման գործընթացից հետո և՛ կամրջի, և՛ ջրաղացների տեսանելիությունը և պահպանումը կարելի է բարելավել համատեղ նախագծի միջոցով՝ հնավայրն այցելելի դարձնելու համար:

Հասքյոյի Մեծ մզկիթ

Հասքյոյ գավառ, Սունայ թաղամաս, 207-րդ փողոց	Կառուցման ժամանակաշրջան/տարեթիվ՝ **մզկիթի համար 1887 / 1950**
GPS՝ **38°40'57.5"N 41°41'16.8"E**	Ներկայիս գործառույթ՝ **օգտագործվում է որպես մզկիթ**
Գրանցման տարեթիվ և համար՝ **Վանի Մշակութային ժառանգության պահպանության շրջանային վարչություն, 06.11.2009 – 440**	

Պատմություն

Հասքյոյը (Խասգյուղ) Մուշի վարչական շրջանում էր և ընդգրկում էր ամբողջ դաշտը, որը օսմանյան շրջանում գտնվում էր Բիթլիսի գավառին (վիլայեթին) կից Մուշի սանջակում: Այս գյուղը գտնվում էր Մեղրագետի (Քարասու) վտակի/գետի աջ կողմում՝ Մուշից 16 կմ դեպի արևմուտք: Գյուղի վերին մասում Սմբատաբերդ անունով մի բերդ կա: Նշվում է, որ Հասքյոյը կոչվել է Խաս (has, նշանակում է «ճշմարիտ»), քանի որ այն Մուշի գավառի ամենահայտնի գյուղն էր և ուներ չորս թաղամասեր՝ Դունչո, Մառաղբյուր, Խաջուռնիկի և Գավառացոց անուններով:

Լինչը (II, 1901) 19-րդ դարի վերջերին այցելել է Հասքյոյ և նշել, որ Մշո դաշտի գյուղերի մեծ մասը հիմնականում հայկական էին, սակայն որոշ հայկական գյուղերում մասնակի քրդական բնակչություն կար: Հասքյոյը (Խասգյուղ) այս գյուղերից ամենամեծն էր, բաց, ընդարձակ հարթավայրի վրա էր, տիպիկ հայկական բնակավայրի օրինակ էր իր շինություններով, որոնք մի շարք մրջնաթմբեր էին հիշեցնում: Բացի հին տաճարների ավերակներից, Հասքյոյում կա նաև ավելի քան 300 տուն և 3 եկեղեցի: Կառավարության հրամանով դպրոցը փակվել է, ինչի արդյունքում բնակիչների միայն մեկ տոկոսն էր գրագետ:

Գյուղը երբեմն որպես գավառ է հիշատակվում. ամենածավալուն շրջանում 700 տնտեսություն է ունեցել: 1880-ին 540 հայ և 10 քուրդ տուն է ունեցել: Ըստ 1890 թվականի գրանցամատյանների՝ գյուղն ուներ 400 տուն հայ բնակիչ, ապա 1909 թվականին՝ 350 հայ և 45 քուրդ

Նկ. 1 Ընդհանուր տեսարան հյուսիս-արևելքից



տուն (ՀՀՇՏԲ 1988, 680)։ Մինչև 1915 թվականը գյուղի՝ մոտ 500 տուն հայերը զբաղվում էին հողագործությամբ, անասնապահությամբ, առևտրով և խեցեգործությամբ, ինչպես նաև տարբեր արհեստներով։ Բնակավայրում 30-ից ավելի խանութներ ընդգրկող շուկա/բազար կար (1988, 680)։ «Հուշամատյան»-ի արխիվների տվյալները (հղում 21) վկայում են, որ գյուղում դպրոց է եղել՝ Սուրբ Ստեփանոս անունով, որ 1901-1902 թվականներին ուներ մեկ ուսուցիչ և 60 աշակերտ (52 տղա, 8 աղջիկ)։ Ըստ Գևորգյանի՝ Հասքյոյում երկու դպրոց կար. Հայոց պատրիարքարանի արձանագրությունները վկայում են, որ գյուղի 340 տնտեսությունում 4113 հայ բնակչություն կար, որոնցից 130-ը երեխաներ էին՝ աշակերտներ (Գևորգյան-Փաբուջյան, 2012, 493)։

Հասքյոյում Սուրբ Ստեփանոս, Սուրբ Թալիլա (Թալիլեոս) և Սուրբ Երրորդություն անուններով եկեղեցիներ են եղել (ՀՀՇՏԲ 1988, 680)։ «Հուշամատյան»-ի արխիվների տվյալների համաձայն՝ Սուրբ Երրորդությունը 1887 թվականին վերակառուցվել է որպես քարաշեն շինություն՝ քանդակային զարդանախշերով։ Սուրբ Ստեփանոսը և Սուրբ Թալիլան ավելի հին կառույցներ են. դրանցից մեկը թվագրվում է 1307 թվականով։ Բացի այդ աղբյուրները վկայում են ավերակ Սուրբ Աստվածածին և Սուրբ Թուխմանուկ եկեղեցիների մասին, ինչպես նաև երկու մատուռի և երեք այլ եկեղեցիների մասին, որոնց վերջին կրոնական սպասավորների անունները մեջբերված են (հղում 22)։ Հասքյոյի Մեծ մզկիթը միացած է այս եկեղեցիներից մեկին. դրա արձանագրությունը վկայում է, որ այն մզկիթի է փոխակերպվել 1950 թվականին։

Ճարտարապետություն

Մզկիթը (նախկինում՝ եկեղեցի) գտնվում է Մուշի Հասքյոյ գավառի կենտրոնում՝ գյուղի հրապարակի արևելք-արևմուտք առանցքի վրա՝ երկու ճանապարհների խաչմերուկում։ Կառույցի հյուսիսային բակում շատրվան կա, իսկ արևմտյան բակում՝ սպասարկման լրացուցիչ շենքեր (նկ. 1)։ Եռանկյունանիստ բազիլիկ հատակագծի հյուսիսում ավելացվել է եզրային աղոթասրահը, իսկ արևմուտքում՝ մինարեթը։ Քարաշեն կառույցի արտաքին պատերը պատված են ցեմենտի հիմքով սվաղով։ Մզկիթի մուտքը սյունասրահի կողմի դռնից է։ Փայտյա սյուներով օժանդակվող սյունասրահի հարկը և ելքի սանդուղքը զբաղեցնում են ամբողջ հյուսիսային թևը։ Մինբարը և միհրաբը մզկիթի բաղկացուցիչ մասերն են համարվում; դրանք նախնական կառույցին չեն պատկանում։ Ինտերիերի պատերը սվաղված են և զարդարված *տրաֆարետային նախշերով*։ Ինտերիերի պատերը սվաղված են։ Կամարները և սյուներից ներս ընկած հատվածը սրբատաշ տուֆից է կառուցված։

Երկու շարքով դասավորված վեց սյուների շնորհիվ ինտերիերի տարածքը բաժանված է երեք թևերի (նկ. 2)։ Եռամաս հատակագիծը (նկ. 3) թույլ է տալիս դեպի նավ և գլխավոր աբսիդ մուտք գործել արևմտյան մուտքից և դեպի ապսիդիոլներ՝ միջանցքներով։ Բարձր առաստաղով ինտերիերի տարածքումո քառակուսի սյուները ուղղորդում են դեպի սրածայր կամարները, որոնք կառուցված

Նկ. 2 Ինտերիեր, սյուներ և եռամաս հատակագիծ

Նկ. 3 Արևելյան պատը՝ երեք աբսիդներով

Նկ. 4 Մինարեթի հիմքը և արևմտյան պատը

են սրբատաշ քարով (բազալտային տուֆ)։ Քառակուսի թմբուկը հենվում է սրածայր կամարների վերևում. այն փոքր-ինչ հաստ է կամարների վերևում գտնվող արտաքին ակոսի պատճառով։ Սյուների խոյակների վերևում գտնվող սրածայր կամարները միմյանց հետ կապող 1x4 սմ պարաններ կան։ Սյուների լիսեռները 75x75 սմ են՝ կլորացված անկյուններով։ Օգտագործված է բազալտային տուֆ։ Սյուների խոյակները քառակուսի են և մի կողմից՝ ակոսավոր։ Սրածայր կամարները հյուսիսային և հարավային պատերի դեմ հանդիման որմասյուներից վեր են տեղակայված։ Ամբողջ տարածքը բաղկացած է տասներկու մասնաբաժիններից։ Դրանցից տասը ծածկված են գլանաձև թաղերով։ Մյուս երկուսից (արևմտյան մուտքի հյուսիսում և հարավում գտնվող թևեր) յուրաքանչյուրը ծածկված է առագաստային թաղով և բացվում է դեպի դուրս՝ դռան և պատուհանի բացվածքներով։ Պատուհանների բացվածքները արտաքին ֆասադներին կամարունքեր ունեն։ Ինտերիերի հատվածում այս բացվածքները թեք կտրվածք ունեն և պսակվում են սեգմենտային կամարով, որը տարածքի լավ լուսավորման հնարավորություն է տալիս։ Պատուհանի բացվացքի արտացոլանքներն ավելի են շատացնում արևի լույսը։ Գլխավոր մուտքի և հյուսիսային ապսիդիոլի պատուհանի վերևում պատուհան կան։Կառույցի պատի հաստությունը 135սմ է, իսկ ինտերիերի չափսերը՝ 12,45x19,36 մ։

Արտաքին ֆասադները պարզ են և ծածկված ցեմենտի հիմքով սվաղով։ Պատերի վերևում փայտե ելուստներ կան։ Ուղղանկյունանիստ կառույցը ծածկված է փայտյա, հեծանային տանիքով։ Պատուհանները կամարակապ են և անզարդ։ Միայն արևմտյան ֆասադը, որտեղ նախնական մուտքն է, արտաքուստ արտահայտված է։ Այս մուտքը պատով փակվել է և կորցրել է որոշակի տեսանելիություն բակի բարձրության աճի պատճառով. սակայն

նախնական բացվածքի շուրջ դեռևս նկատելի են սյուների, խոյակների և կամարների հետքեր:

Հյուսիսային պատին կից սյունասրահը հինգ մասնաբաժին ունի: Այս տարածքը կառուցվել է կրաքարից, և կամարակապ բացվածքները ծածկված են ապակիով: Հիմնական տարածությունը հասանելի է կենտրոնական մասնաբաժնից: Մինարեթի տակ գտնվող հիմքը բարձրանում է սյունասրահից արևմուտք. այն սրբատաշ կրաքարից է և լավ է միաձուլվում միջավայրի հետ: Պատվանդանի դիրքն ու տեսքը հուշում են, որ դա 19-րդ դարի երկրորդ կեսին եկեղեցուն ավելացված զանգակատունն է (նկ. 4): Պատվանդանին կան խուլ կամարակապ լուսամուտներ, իսկ վերին անկյուններում՝ շրջանաձև զարդեր: Պատվանդանի վերին եզրերը կաղապարված են: Մինարեթը աղյուսաշեն է՝ հաստ հանգույցներով:

Մզկիթի մուտքի ցուցանակը վկայում է, որ կառույցում 1950 թվականին վերականգնման նախագիծ է իրականացվել:

Ներկա վիճակ

Կենտրոնական Հասքյոյի Մեծ մզկիթը գլխավոր հրապարակի երկու ճանապարհների խաչմերուկում է գտնվում: Այն գտնվում է քաղաքի համատեքստում, շրջապատված է այլ կառույցներով և ունի բազմաթիվ այցելուներ:

Կառույցին 1950 թվականին ավելացվել են մի շարք կցակառույցներ՝ մինարեթը, սյունասրահը, միհրաբը, մինբարը և ճեմահարկը, որպեսզի հեշտացնեն դրա օգտագործումը որպես մզկիթ: Շինությունը շարունակում է որպես պաշտամունքի վայր օգտագործվել: Շինության՝ որպես եկեղեցի օգտագործման ժամանակներից աբսիդն ու ապսիդիոլներն այժմ կորցրել են իրենց գործառույթը: Նմանապես, շահագործումից հանվել է արևմտյան մուտքը: Հյուսիսային և արևմտյան պատերին մի քանի տեղ ճաքեր կան: Սյուների վրա բորբոս է նկատվում:

Բակի հատակի բարձրանալու աճի պատճառով արևմտյան մուտքը ընկալելի չէ:

Ռիսկերի վերլուծություն և առաջարկություններ

Հասքյոյի Մեծ մզկիթը որպես մշակութային ժառանգություն կարևոր նշանակություն ունի: Այն պահպանել է նախնական հատակագծի հիմնական հատկանիշները: Այնուամենայնիվ, արտաքին ֆասադին օրիգինալ հատկանիշները կորսվել է: Կառուցվածքային տարրերը ինտերիերում անփոփոխ են, սակայն կառույցը համեմատաբար անպաշտպան է հավանական երկրաշարժերից:

Քաղաքում այս կրոնական շինությունը կենտրոնական դիրք ունի: Պատերը ամրացնելու և արտաքին որոշ առանձնահատկություններ վերականգնելու համար ցեմենտի հիմքով սվաղը պետք է հեռացվի: Բակի հարթության բարձրությունը հյուսիսային և արևմտյան պատերի երկայնքով պետք է իջեցվի իր սկզբնական մակարդակին, որպեսզի օրիգինալ բացվածքները տեսանելի լինեն: Կառույցը համալիր վերականգնման նախագծի կարիք ունի: Մզկիթի մշակութային նշանակության վերաբերյալ տեղեկատվական վահանակի տեղադրումը կօգնի մեծացնել այցելուների, ինչպես նաև տեղի համայնքի իրազեկվածությունը:

Մոլլաքյանդի մզկիթ

Բուլանըք գավառ, Մոլաքյանդ գյուղ	Կառուցման ժամանակաշրջան/տարեթիվ՝ **1878 (Հիջրայի օրացույցով՝ 1295)**
GPS՝ **38°57'10.0"N 42°04'09.8"E**	Ներկայիս գործառույթ՝ **մզկիթ**
Գրանցման տարեթիվ և համար՝ **Էրզրումի Մշակութային ժառանգության պահպանության շրջանային վարչություն, 15.09.1988 - 46**	

Պատմություն

Մոլլաքյանդի մզկիթը կառուցվել է 1876-1878 թվականներին՝ փոխարինելու Քարա Աբդալ մզկիթին, որը 1820 թվականի մեծ փսասներից հետո շահագործման ենթակա չէր: Հայերը, որոնք սելջուկյան բազմաթիվ կրոնական և բնակելի կառույցների ճարտարապետներ էին, ակտիվ մասնակցություն են ունեցել Մոլլաքյանդի (Մուլաքենդ, Մենալա քենդ) մզկիթի շինարարությունում: Ասվում է, որ երկու հայ որմնադիրներ մզկիթը կառուցել են երկու տարում (Ասնա 2018, 331):

Ճարտարապետություն

Մոլլաքյանդի մզկիթը գտնվում է Մոլլաքյանդ (նախկինում հայտնի էր որպես Մելեքենդ) գյուղի կենտրոնում՝ Բուլանըք գավառի մոտ: Գտնվում է գավառի կենտրոնից 32 կմ, իսկ Մուշ նահանգի կենտրոնից 97 կմ հեռավորության վրա: Հյուսիսում մզկիթին կից Դիվան Առանձնատուն կոչվող հյուրատունն է: Հարավում մեդրեսե և գերեզմանոց կա: Մզկիթը կառուցվել է 19-րդ դարի երկրորդ կեսին: Այն ունի չորս իրար կից գմբեթ, մեկ սյուն և քառակուսի հատակագիծ: Դրա արևմուտքում եկեղեցու ավերակներն են:

Ինտերիերի պատերի երկարությունը մոտավորապես 8 մ է: Մզկիթի մուտքը արևելյան ֆասադից է բացվում: Այցելության ժամանակ արձանագրվել է ոչ պատշաճ, փայտե հավելում բացվածքին, որն,ըստ երևույթին, օգտագործվում է որպես նախասրահ (նկ. 1): Նախնական մուտքի ձևը արտաքինից

Նկ. 1 Մոլլաքյանդի մզկիթի և Դիվան առանձնատան արևելյան տեսքը



Նկ. 2 Ինտերիերը՝ չորս գմբեթներին օժանդակ սյունով

Նկ. 3 Գմբեթի և դրա առագաստների մանրամասները

ընթեռնելի չէ, սակայն այն, կարծես, ներառված է սրածայր կամարով խոր խորշի մեջ: Այս կամարից ցած առկա քարերի երկրորդ շարվածքի վրա մարմարե արձանագրություն է տեղադրված: Չորս գմբեթները կրող չորս կամարները միացված են շրջանաձև հատումով և ինտերիերում 80 սմ տրամագծով սյանը: Կամարների լայնությունը մոտավորապես 70 սմ է (նկ. 2): Սյան կապիտելը քառակուսի է և մոտավորապես 40 սմ հաստություն ունի: Յուրաքանչյուր կամարի և պատի միջև միացումները իրականացված են քարե բլոկների երկու շարքով, ընդ որում վերին շարքը բաղկացած է մեկ քարից, իսկ ստորին շարքը՝ երկու քարից: Պատերից դեպի գմբեթներ անցումը կատարվում է առագաստների միջոցով (նկ. 3): Սյունը բաղկացած է երեք կլոր թմբուկներից: Դրա պատվանդանը շրջանաձև է և բուն սյան շրջագծից 10 սմ դուրս է գալիս: Գմբեթները հարթ տանիքի տակ են, իսկ արանքում եղած տարածությունը լցված է հողով, սակայն այս ամենը շենքի ներսից տեսանելի չէ (Էվրեն 1997, 7):

Պատերը սրբատաշ բազալտից են՝ միանման հանգույցներով: Տեղական բազալտը հայտնի է նաև որպես Ահլաթի (Ahlat) քար: Ներքին մասում քարե բլոկների մակերեսներն ավելի մուգ գույնի են, իսկ արտաքին ֆասադները՝ համեմատաբար ավելի բաց: Սա վկայում է այն մասին, որ արտաքին ֆասադներին հնարավոր է միջամտություններ են արվել: Հարավային պատին երկու լուսամուտ կա՝ մեկական միհրաբի յուրաքանչյուր կողմում, մեկ պատուհան էլ արևելյան (մուտքի) ֆասադին: Պատուհանների բացվածքների խորությունը դեպի ինտերիեր նեղանում է և ծածկված են սեգմենտային կամարներով: Միհրաբը կիսագլանաձև է և անզարդ: Կողքին հարթ, քարե մինբար կա, որը հասանելի է չորս աստիճանների միջոցով: Մզկիթի հյուսիսային և արևմտյան պատերին երկուական խորշեր կան: Խորշերը մոտավորապես 35 սմ խորություն և 37-52 սմ լայնություն ունեն: Խորշերի վերևում գտնվող ճակտոնները զարդարված են նրբագեղ փորագրությամբ և ձևավորված են որպես եռաթերթ զարդանախշ (նկ. 4):

Մինարեթը մզկիթի հարավ-արևելյան անկյունում է և առանձնանում է: Դաշտային աշխատանքի ժամանակ այն չի փաստագրվել, ուստի շինությունը գծագրում չի երևում: Մինարեթն ունի երկու հասանելի պատշգամբ:

Նկ. 4 Խորշեր

Բակում գտնվող փայտյա հեծանը 35x35 սմ լայնություն և 7 մ երկարություն ունի: Այն ներկայումս օգտագործվում է որպես նստատեղ, սակայն կա կարծիք, որ այն Կուլլետեյնում սյան դեր է կատարել (գրանցված կառույցը, որը գործում է որպես սգո տուն, ինչպես նաև լվացման վայր): Այգու մուտքի երկու կողմերում ևս հսկայական սյուն կա:

Ներկա վիճակ

Մոլլաքյանդի մզկիթը դեռ գործում է որպես հոգևոր կառույց և շատ լավ վիճակում է: Դաշտային աշխատանքի ընթացքում կառուցվածքային վտանգ ներկայացնող խնդիրներ կամ շինանյութերի քայքայում չի հայտնաբերվել: Շենքի յուրօրինակությունը ամենաշատը փչացնող հատկանիշը հարավային ֆասադի մուտքի կողմից ավելացված նախասրահն է: Այս անպատեհ հավելումը կառուցվել է փայտից և ծածկվել բրեզենտով, որը ամրացված է գետնին գտնվող մեծ քարերին: Այս հավելումը խանգարում է ֆասադի նախնական դասավորության ընկալմանը և փսասում կառույցի կոթողային արժեքը: Ավելին, վերանորոգության նպատակով տանիքի վրա երեսպատման նյութ է դրված, որը խոչընդոտում է քիվերի ելուստների ընթեռնելիությունը: Բացի այդ, մալուխները, վահանակները և լուսավորող սարքերը, որոնք տեղադրվել են ներքին և արտաքին մակերեսների վրա՝ որպես մեխանիկական և էլեկտրական համակարգերի մաս, ազդում են շենքի պատմական նշանակության ընկալման վրա:

Ռիսկերի վերլուծություն և առաջարկություններ

Կառույցում կառուցվածքային կամ նյութական կրիտիկական ռիսկ չկա. սակայն կարևոր է վերականգնել դրա յուրօրինակությունը և նախնական հատկանիշների տեսանելիությունը: Այդ նպատակով մուտքի անպատեհ հավելումը պետք է հեռացվի, և տանիքի ծածկը՝ վերանայվի: Այս մուտքին ավելացված նախասրահի նմանությամբ նախասրահներ կան հարակից առանձնատանը, ինչպես նաև մզկիթի հարավում գտնվող մեդրեսեի դռանը կից: Երբ նախասրահը հանվի, երեք շենքերի միջև ինտեգրված կապը շատ ավելի տեսանելի կդառնա: Մզկիթի էլեկտրական և մեխանիկական հարմարանքները նույնպես կարող են բարելավվել՝ կառույցին և դրա նախնական շինարարական նյութերին ավելի համապատասխանելու համար:

Պատմության տարբեր շրջաններում Մոլլաքյանդը կարևոր կրոնական և մշակութային կենտրոն է եղել: Մզկիթը, մեդրեսեն, առանձնատունը, գերեզմանատունը, կոթողային դամբարանը և շրջակա այլ կառույցները որպես մեկ ամբողջություն դիտարկող ավելի լայնածավալ հետազոտությունը բնակավայրի նշանակությունը շատ ավելի ակնհայտ կդարձնի:

Ուզգյորուր ժայռակերտ դամբարան

Բուլանըք գավառ, Ուզգյորուր գյուղ, Մաղարա Դերեսի տեղանք	Կառուցման ժամանակաշրջան/տարեթիվ՝ **անհայտ**
GPS՝ **38°55'54.0"N 42°06'33.0"E**	Ներկայիս գործառույթ՝ **ավերակ**
Գրանցման տարեթիվ և համար՝ **անհայտ**	

Պատմություն

Դամբարանի մասին պատմական տվյալներ հավաքել չի հաջողվել: Տարածքը պետք է գնահատել Ուզգյորուր գյուղի վերաբերյալ Քըլավուզի (2013, 1-17) դիտարկումների հետ միասին, որը նա տեղում իրականացրել է 2008-2010 թվականներին: Հավելյալ հետազոտություն է անհրաժեշտ իրականացնել՝ հասկանալու, թե հնավայրն արդյո՞ք Քըլավուզի կողմից (2013, 4-5) հաստատված Ուզգյորուրի ժայռակերտ եկեղեցու հետ նույն ժամանակաշրջանին է պատկանում:

Ճարտարապետություն

Ուզգյորուրի ժայռակերտ դամբարան Բուլանըք գավառի Ուզգյորուր գյուղից դուրս գտնվող գյուղական տարածքում՝ Մաղարա Դերեսի տեղանքի մոտ է գտնվում և այնտեղ տանող ճանապարհներ չկան (նկ. 1): Դրա ուղղանկյունանիստ, գրեթե քառակուսի հատակագիծը հարավ-արևելք–հյուսիս-արևմուտք առանցքի վրա է գտնվում: Մուտքը հյուսիս-արևմտյան կողմում է, որը 3,50 մ լայնություն ունի: Գյուղական տարածքը, որտեղ ժայռը և դամբարանի մուտքի հատակն են, աստիճանաբար ծածկվել է հողով՝ ջրհեղեղների և սողանքների պատճառով: Ուստի հնարավոր չէ տեղեկություն հավաքել հատակի նախնական մակարդակի կամ շինարարական նյութերի վերաբերյալ: Հաստատվել է, որ մուտքի մոտ տարածքի բարձրությունը նվազել է մինչև 1,10 մ (նկ. 1 և 2): Մենյակը ուղղանկյունանիստ հատակագիծ ունի՝ 3,50x4,10 մ; դրա առաստաղի փորվածքը նմանեցվել է գլանաձև թաղի: Կողային պատերին փորագրության հետքեր են տեսանելի: Որոշ ճաքեր, որոնք,

Նկ. 1 Ուզգյորուր ժայռակերտ դամբարանի խուցը, ընդհանուր տեսարան



կարծես, կառուցվածքային են, հայտնաբերվել են «գլանաձև թաղի» մակերևույթի վրա: Ինտերիերի հարավ-արևելյան անկյունում խորշ կա (մոտ 55 սմ խորությամբ և 80 սմ լայնությամբ): Արևմտյան պատի մակերեսից հասկանալի է, որ կա ևս մեկ խորշ, որը շարունակվում է մսալ հողային կուտակման տակ: Այնուամենայնիվ, այս մասին ավելի մանրամասն տեղեկատվություն հավաքել հնարավոր չէ՝ հողի կույտի և ինտերիերի վրա լույսի սահմանափակ լինելու հետևանքով:

Ներկա վիճակ

Ուզգյորուր ժայռակերտ դամբարանը հավանաբար Մաղարա վտակի մոտ գտնվող հիմնական ժայռի մեջ փորված մի շարք դամբարաններից մեկն է: Դաշտային աշխատանքների ընթացքում եղանակային պայմանները թույլ չեն տվել մուտք գործել այլ խցեր, իսկ վտակից արևելք գտնվողները աննկատ

Նկ. 2 Ուզգյորուր ժայռակերտ դամբարան, մուտքի առջևի լցոնի մակարդակ

են եղել: Կարելի է ենթադրել, որ կան այլ դամբարաններ, որոնք ներկայումս անհասանելի են, քանի որ դաշտի մակերեսի տակ են կամ փսասվել են ապօրինի պեղումների հետևանքով: Ուզգյորուր ժայռակերտ դամբարանի մեծ մասը ևս թաղված է գետնի տակ. այսպիսով դժվար է հասկանալ դրա մշակութային համատեքստը:

Ռիսկերի վերլուծություն և առաջարկություններ

Դամբարանային կառույցի շրջակայքը ծածկված է բավականին փափուկ հողով, իսկ տարածքը զգալիորեն տեղումսառատ է: Դրա արդյունքում տարածք այցելելու դժվարություններին բախվել ենք նաև այս հաշվետվության համար իրականացված դաշտային աշխատանքի ընթացքում: Առաջարկվում է անցյալ դաշտային աշխատանքների տվյալների և այլ արդյունքների հավաքագրում՝ դաշտում այլ դամբարանների գոյությունը հասկանալու, հետազոտելու և փաստելու համար: Պետք է հավաքել գիտական տվյալներ հավանական նեկրոպոլի սահմանների և պոտենցիալի վերաբերյալ :

Նորաշենի ջրաղաց / Պետրոսի ջրաղաց

Կենտրոն (Centrum) թաղ, Սունգու գյուղ (Նորշեն/Նորաշեն), Դեիրմենլեր տեղանք	Կառուցման ժամանակաշրջան/տարեթիվ՝ **անհայտ**
GPS՝ **38°45'01.2"N 41°36'24.0"E**	Ներկայիս գործառույթ՝ **չի օգտագործվում**
Գրանցման տարեթիվ և համար՝ **անհայտ**	

Պատմություն

Նորշեն գյուղը օսմանյան շրջանում եղել է Մուշի Սանջակի Մշո գավառում՝ Բիթլիսի նահանգի վարչական շրջանում: Հայտնի էր նաև Նորշեն Հայ, Ֆրանկ Նորաշեն կամ Ֆրենկ Նորշեն անուններով: Բնակավայրը Մշո դաշտի ամենաբարեկեցիկ գյուղերից էր: Բնակչության խտության տեսանկյունից Հասքյոյից (Խաս–Խասգյուղ) հետո երկրորդն էր: Գյուղի բնակչությունը մինչև 1915 թվականը հայկական կաթոլիկ միաբանության մաս է եղել (ՀՀՇՏԲ 1998, 30):

Հիմնվելով 1913-1914 թվականների Հայոց պատրիարքարանի արձանագրությունների վրա՝ Գևորգյանը (2012, 489) նշում է, որ գյուղը 2150 բնակչություն ուներ՝ 400 հայ տնտեսություն, 80 աշակերտ ունեցող դպրոց, հայկական կաթոլիկ միաբանությանը պատկանող Սուրբ Մարիամ Աստվածածին (Սուրբ Մարինե) և Սուրբ Սոֆյա եկեղեցիներ: Հայտնի է, որ Նորշենը դաշտավայրում հայ կաթոլիկ բնակչություն ունեցող երեք գյուղերից մեկն է (մյուս երկուսը Օղունք ու Առինջ գյուղերն են):

Յոթ հատված ունեցող և ընդարձակ տարածք զբաղեցնող այս մեծ հայկական գյուղում բազում տապանաքարերով գերեզմանատուն, ինչպես նաև մեծ բակով դպրոց կար: Բնակավայրն ուներ նաև ձեռագիր գրքի ավանդույթի կենտրոն; գյուղում կազմված երկու ձեռագրեր պահպանվել են (ՀՀՇՏԲ 1998, 30; Հակոբյան 1982, 384):

Այսօր գյուղից մնացել է միայն համեմատաբար լավ պահպանված ջրաղացը, որը տեղացիների շրջանում հայտնի է որպես «Պետրոսի ջրաղաց»:

Նկ. 1 Նորշեն (Սունգու) գյուղ, Մխիթարյան հրամանով կառուցված դպրոցը և հարակից եկեղեցին («Հուշամատյանի»-ի արխիվ)

Նկ. 2 Պետրոսի ջրաղացը, հյուսիս-արևելյան կողմ՝ ներառյալ առջևի ճահիճը

Ճարտարապետություն

Նորշեն գյուղը գտնվում է Մուշ քաղաքի կենտրոնից 11 կմ դեպի արևելք: Մուշ-Բիթլիս ճանապարհից 3 կմ հեռավորության վրա է: Տեղացիների շրջանում «Պետրոսի ջրաղաց» անվամբ հայտնի շինությունը ջրաղացների միակ պահպանված օրինակն է, որ կառուցվել էին Քարասու գետի հզոր հոսքից օգտվելու համար, որն ամեն գարուն հեղեղվում և այս տարածքում դելտա է ստեղծում: Այն գյուղից մոտավորապես 500 մ հեռավորության վրա գտնվող ճահճուտում է:

Ջրաղացը գործառույթը կորցրել է, քանի որ գետի ջրի ծավալը նվազել է: Հիմնական ինտերիերը այլևս հասանելի չէ: կառույցը մոտավորապես 4 մ բարձրություն և երկու հոր ունի: Հատակի մակերեսը հյուսիս-արևելք – հարավ-արևմուտք առանցքի վար է՝ 5,45x10,80 մ չափսերով: Վտակի վերին հոսանքից ջուր վերցնող ջրաղացի հատվածն՝ այժմ ծածկված է ցեմենտով. այս միջամտությունը թաքցնում է իրական մակերեսները և որմերի մեծ մասը: Այդուհանդերձ, հյուսիսային և հյուսիս-արևելյան կողմերից տեսանելի է, որ կառույցը խճաքարից է կառուցվել (նկ. 2):

Երբ կառույցը գործում էր որպես ջրաղաց, ջուրը հնարավոր է՝ սկզբում մտել է հարթակ (ներկայումս ծածկված է ցեմենտի շերտով), որին հաջորդել են երկու հորերը, որտեղ յուրաքանչյուրը մի անիվ էր պտտում, որն իր հերթին պտտում էր ջրաղացաքարերը, որոնք հավանաբար ավելի ցածր մակարդակում փակ տարածքում էին: Անիվներն ու ջրաղացաքարերը, հավանաբար, միացված են եղել փայտե անվամատով, և հղկման գործընթացը տեղի է ունեցել երկու ջրաղացաքարերի միջև: Հավանական է, որ մակերևույթի հավելյալ ջուրը հոսվել է դուրս պահպանված մետաղական խողովակի միջոցով (նկ. 3):



Նկ. 3 Հարթակը և հորերը

Ժամանակակից Թուրքիայի մնացած հատվածում, հատկապես՝ Սևծովյան տարածաշրջանում կառուցված ջրաղացները գտնվում են հոսող ջրի վրա: Այս դեպքերում ջրաղացաքարին միացված փայտե անվամատի վերջում անիվ կա, որը կախված է անմիջապես հոսող ջրի վերևում: Պետրոսի ջրաղացի դեպքում իրավիճակը ճիշտ հակառակն է:

Նկ. 4 Էլիպսաձև հորը և ծածկված հարթակի մի մասը

Երկու էլիպսաձեւ հորերը ջրաղացից հյուսիս-արևելք են: Մեծը 2.00x1.79 մ է, իսկ փոքրը՝ 1.96x1.66 մ: Դրանց հեռավորությունը 73 սմ է: Այս երկու հորերը գտնվում են մի հատվածում, որը ծածկված է ցեմենտի հիմքով սվաղով (նկ. 4): Հարավում 75 սմ տրամագծով մետաղական խողովակ կա, որը հավանաբար դրվել է, որպեսզի վերին մակարդակում ավելորդ ջուրը հոսի բնական հունով: Ենթադրվում է, որ այս խողովակը թույլ է տվել, որ ավելորդ ջուրը հոսի երկու հարթությունների միջև, որոնց բարձրությունների միջև 4 մ տարբերություն կա (նկ. 5):

Նկ. 5 Դրենաժային խողովակ, տեսարան դեպի արևելք

Շենքի նախնական չափերը, նյութերը և կառուցվածքը նկատելի են միայն հյուսիսային ֆասադից: Այս ֆասադի վրա երևում են շատ փոքր (և տախտակով ծածկված) պատուհանների բացվածքներ, որտեղ խճաքարային շարը ևս տեսանելի է :

Ներկա վիճակ

Ջրի անբավարար հոսքի պատճառով ջրաղացն այլևս չի օգտագործվում: Անհայտ է, թե շինությունը երբ է լքվել, սակայն ցեմենտի հիմքով նյութերի կիրառմամբ ծանր միջամտությունները հուշում են, որ այն գործել է մինչև համեմատաբար վերջին ժամանակները: Ներկայումս կառույցը դժվար է տեսանել և դժվարամատչելի է: Միջամտությունների ժամանակ ցեմենտի հիմքով սվաղների ակտիվ օգտագործումը, կառույցի շուրջ բուսականության անվերահսկելի աճը և ճահճոտ շրջակայքը դժվարացնում են կառույցին մոտենալու պրոցեսը:

Ռիսկերի վերլուծություն և առաջարկություններ

Հայտնի է, որ Սունգու/Նորշեն գյուղը, որը պատմականորեն կարևոր էր գյուղատնտեսության համար, ինչպես նաև բարգավաճ և կոսմոպոլիտ էր, Քարասու գետի հզոր հոսքի շնորհիվ բազմաթիվ ջրաղացներ է ունեցել: «Պետրոսի ջրաղացը» միակ պահպանված օրինակն է, ուստի այն պետք է լինի մաս ուսումնասիրության, որը դրանք կդիտարկի համապարփակ: Առաջարկվում է նաև, որ այս կառույցը, որը կարելի է համարել արդյունաբերական ժառանգություն, ազատել ոչ պատշաճ միջամտություններից, ինչպես նաև հասանելի և տեսանելի դարձնել համապատասխան մաքրման աշխատանքների միջոցով: Պահպանության ծրագիրը պետք է կազմվի՝ համակարգելով տարածքի այլ պատմական ջրաղացներ հայտնաբերելու և պահպանելու ջանքերը. այս ջրաղացը պետք է հարմարեցվի իր նախնական գործառույթն իրականացնելու համար:

Քըզ կամուրջ/ Kızköprü

Մանազկերտի գավառ, Մենգյուչգազի թաղամաս, Քըզքյոփրու տեղանք	Կառուցման ժամանակաշրջան/տարեթիվ՝ **Ուրարտական շրջան**
GPS՝ 3**9°07'47.9"N 42°32'53.0"E**	Ներկայիս գործառույթ՝ **կամուրջ**
Գրանցման տարեթիվ և համար՝ **Էրզրումի Մշակութային ժառանգության պահպանության շրջանային վարչություն, 24.06.1989 – 162**	

Պատմություն

Քըզ կամուրջը գտնվում է Մուշի Մանազկերտ գավառական կենտրոնից 2 կմ հարավ, Արածանի գետի փոքրիկ վտակի վրա՝ գյուղական լանդշաֆտում (նկ. 1): Որոշ աղբյուրներ կամրջի ծագումը հռոմեացիների հետ են կապում, իսկ մյուսները՝ ուրարտացիների անվան հետ: Ըստ ավանդության՝ անվանումը (թուրքերեն «kız» նշանակում է աղջիկ կամ դուստր) գալիս է ուրարտական թագավորի դուստրերից մեկից: Սակայն այս տեղեկությունը հաստատող գիտական աղբյուրներ չկան: Կառույցը վերականգնվել է 2018-2019 թվականներին Ավտոճանապարհների գլխավոր տնօրինության 11-րդ թաղամասային վարչության կողմից: Այս ընթացքում պատրաստված քարե արձանագրության համաձայն՝ այն թվագրվել է ուրարտական շրջանով:

Ճարտարապետություն

Գետի հոսանքը հյուսիս-արևմուտք - հարավ-արևելք ուղղության վրա է և 4,32 մ լայնությունը հատում են երկու բազալտե մեգալիթներ, որոնց հաստությունը 55 սմ է: Քարերի երկարությունը՝ մոտավորապես 4,60 մ է, իսկ լայնությունները՝ 1,26 և 1,14 մ: 2019 թվականի վերականգնման աշխատանքների ընթացքում կամուրջը տեղադրվել է հոսանքի երկու կողմերում մանրաքարից պատրաստված պատերի վրա, և երկու ուղղություններով քարե հարթակ է կառուցվել՝ մոտավորապես 6,00 x 5,50 մ չափերով (նկ. 2): Քարե ճաղերի կիրառմամբ այս հարթակները փակվել են մեքենաների երթևեկությանը: Բազալտե քարերի հանգույցները լցվել են խճաքարով և շաղախով. ցանկացած փորվածք կամ անցքեր ծածկվել են՝ համապատասխանեցնելու կամուրջի քարերի նախնական ձևին:

Նկ. 1 Քըզ կամրջի տեսքը հարավ-արևելքից

Նկ. 2 Քըզ կամրջի տեսքը արևելքից



Նկ.3 Կամուրջը մինչև վերականգնումը՝ 2014 թ.

Ներկա վիճակ

Քըզ կամուրջը եզակի է շինարարական տեխնիկայով և պատմությամբ: Կամուրջը, որը ջրի հոսանքը հատում է մեգալիթներով, վերջերս վերականգնվել և հարդարվել է արձանագրությամբ, որը այցելուներին հակիրճ տեղեկություն է տրամադրում կառուցվածքային առանձնահատկությունների և պատմության մասին: Հոսանքի երկու կողմերում գտնվող և մեգալիթներին օժանդակ մանրաքարային պատերը վերանորոգվել են և այցելուների համար ստեղծվել են քարե հարթակներ: Կառույցը ներկայումս ամբողջական է, սակայն զրկվել է համեմատաբար պարզունակ առանձնահատկություններից:

Ռիսկերի վերլուծություն և առաջարկություններ

Քըզ կամրջի ցանկացած պահպանություն-վերականգնում պետք է նվազագույն միջամտություններով կատարվի՝ հաշվի առնելով կառույցի հնագիտական արժեքը. շինարարական մեթոդներ, առանձնահատկություններ և պատմություն: Կամրջի պարզունակ տեսքը պետք է հնարավորինս պահպանվի, և կառույցը չպետք է ծանրաբեռնվի տրանսպորտային գործառույթով:

Յըլդրզլը խան/իջևանատուն

Կենտրոն (Centrum) թաղ, Մինարե թաղամաս	Կառուցման ժամանակաշրջան/տարեթիվ՝ **1890**
GPS՝ **38°43'50.0"N 41°29'21.8"E**	Ներկայիս գործառույթ՝ **չի օգտագործվում**
Գրանցման տարեթիվ և համար՝ **Էրզրումի Մշակութային ժառանգության պահպանության շրջանային վարչություն, 27.06.1990 - 48**	

Պատմություն
Շինության մուտքի (արևելյան) ֆասադի վրա արձանագրությունը նշում է՝ ՔԱԼԵՄՔԱՐ ԲԵՆԻԱՄԻՆ ՅԸԼԴԸԶԼԱՐ ԽԱՆ 1307[1] թ.: 1307 հիջրեթի թվականը համապատասխանում է 1889-1890 թվականներին:

Մինչ 2015-ին վերականգնողական աշխատանքները, շինությունը տարիներ շարունակ անխնամ վիճակում էր: Սա ներառում էր նաև խանի շրջակայքի խցերի վերակառուցումը:

Ճարտարապետություն
Յըլդրզլը խանը պատմական Մուշ քաղաքի կենտրոնում գտնվող հին շուկայի տարածքում է, որտեղ բազմաթիվ խանութներ և արհեստանոցներ կան (նկ. 1): Հարակից շինությունների մեջ կառույցը նկատելի է՝ հարդարանքի շնորհիվ: Մուտքը երկհարկանի ֆասադից է՝ Գազի փողոցի վրա, որը շուկայի տարածքում ամենաբանուկ փողոցներից է (նկ. 1 և նկ. 2): Խանը բաղկացած է խցերից, որոնք դասավորված են ուղղանկյունաձև բակի շուրջը և հարակից կառուցված մուտքից, որը այն կապում է փողոցին (նկ. 3): Երկփեղկ, փայտե դուռը փողոցից տանում է դեպի փայտե առաստաղով միջանցք: Այս միջանցքն իր հերթին տանում է դեպի ուղղանկյունաձև բակ, որի հատակը ծածկված է քարե սալիկներով: Բակի շրջակայքում ցուցափեղկերով խցեր կան: Խցերը ծածկված են ցեմենտի հիմքով սվաղով, պատուհանների փայտյա շրջանակներ և առաստաղներ ունեն (տարրական ճառագայթներ՝ շրջանաձև հատվածներով): Բակի արևելյան հատվածում փայտյա սանդուղքը տանում է դեպի երկաթբետոնե սալիկներով պատշգամբ: Մուտքի ֆասադը համաչափ է, դրա վրա ռաջին հարկում երեք կամարակապ դռներ են

1 Քուլաղուզի՝ «Մուշում և դրա շրջակայքում թուրքական ճարտարապետական աշխատանքները» վերնագրով դոկտորական ատենախոսության մեջ առձանագրության տառադարձություն է ներկայացվում, որը շինությունը անվանում է «Յոլդյուզլեր հանը»:

Նկ. 1 Զիյա փողոցում Յըլդրզլը խանը և հարակից կառույցները



Նկ. 2 Յըլդըզլը խանը, մուտքի ֆասադի առաջին հարկը

Նկ. 3 Յըլդըզլը խանը, բակից տեսարան դեպի արևելք

բացվում: Գլխավոր մուտքի վերևում գտնվող կամարն ավելի լայն է և բարձր, դռան վերևում հարթ ճակատաքար կա (նկ. 2): Կողքի դռները մուտք են ապահովում դեպի խանութներ, որոնք բացվում են դեպի փողոց և անկախ են խանի մնացած մասից: Կամարների միջև կիսաշրջանաձև որմնասյուներ կան: Դրանք բավականին նկատելի են զարդանախշերի և ուշագրավ կաղապարային նախշերի շնորհիվ: Դրանց խոյակների գագաթները հավասար են կամարների առաջացման կետերին և բաղկացած են կրկնվող գոգավոր ձուլազարդերից: Հյուսիսային եզրի կամարի ճակտակալ քարին տեսանելի է օսմաներեն արձանագրություն, իսկ հարավային եզրի կամարի ճակտակալին՝ հայերեն. վերջինս այնպես է ֆասվել, որ ընդամենը մի քանի տառ է ընթեռնելի (նկ. 2): Երկու արձանագրությունների վերևում փետուր բռնած, փաստաթուղթ ստորագրելու պատրաստ ձեռքի բարձրաքանդակ կա: Միջին կամարի կենտրոնում քառակուսի պատուհան է, որը շրջապատված է երկրաչափական նախշերով շրջանակով (նկ. 4): Շրջանակի երկու կողմերում տեսանելի է ծաղկային մոտիվով բարձրաքանդակ: Շրջանակի վերևում ձեռք սեղմման տեսարանի բարձրաքանդակ է: Ֆասադին օվալաձև զարդանախշեր են, որոնցից յուրաքանչյուրը պարուրում է կիսալուսնի և աստղի բարձրաքանդակ, որը գտնվում է անկյունագծերին համապատասխան տեղադրված քառակուսի, կրկնակի շրջանակում: Աստղը կիսալուսնի մեջ է; կիսալուսնի և օվալաձև բարձրաքանդակի միջև շառավղային գծեր կան:

Մուտքի ֆասադի վերին հատվածը վերջերս վերանորոգվել և սվաղվել է: 2014 թվականի լուսանկարներից երևում է, որ վերին հատվածի երեք ուղղանկյուն, փայտե պատուհանները փայտե ճակատամասեր և աղյուսե շրջանակումներ ունեին (նկ. 5): Նույն լուսանկարները ցույց են տալիս, որ ֆասադի այս հատվածի մեծ մասը, որը անփութորեն

Նկ. 4 Միջին կամարի զարդանախշերը

կառուցվել է աղյուսից և խճաքարից, ծածկված է գիպսով: Պատուհանների վերնամասում աղյուսի երկու շարքերի միջոցով ստեղծված դեկորատիվ ժապավեն կա: Վերին շարքը կանոնավոր դասավորություն ունի, իսկ ստորին շարքի աղյուսների անկյունները ֆասադից դուրս են ցցված: Ամենաբարձր հատվածում փայտե ելուստներ են երևում՝ երկու կողմից քարե ջրատարներով:

Ներկա վիճակ

Հաստատված է, որ մուտքի ֆասադն առաջին հարկում ամբողջությամբ սրբատաշ քարից է կառուցված՝ մշակված զարդանախշերով, մինչդեռ վերին հատվածը կառուցելու համար օգտագործվել է ոչ ճշգրիտ մեթոդ, որը միայն սվաղվել է: Սա ենթադրում է, որ վերին հատվածը հավանաբար ավելի ուշ շրջանի հավելում է: Ուստի նաև հնարավոր է, որ կառույցի մասցած մասը մի քանի պատմական շերտ ունի:

Իրականացված պահպանության նախագիծը հնարավոր չի եղել ուսումնասիրել կամ գնահատել: Այնուամենայնիվ, տարածքում կատարված դիտարկումները ցույց են տալիս, որ հարմարվողական վերաօգտագործմանը հարմարեցվելու

Նկ. 5 Յըլդրզլը խանի մուտքի ֆասադը 2014 թվականին

ճարտարապետական-նախագծային որոշումները հասուն չեն եղել, օգտագործվել են ոչ պատշաճ ճարտարապետական և կառուցապատման տարրեր և նախագծի իրականացման ընթացքում օգտագործված նյութն ու վարպետությունը համապատասխան որակի չեն եղել: Շենքի օրիգինալ մասեր չեն պահպանվել, բացառությամբ մուտքի ֆասադից:

Ռիսկերի վերլուծություն և առաջարկություններ

Յըլդրզլը խանը Մուշի հին շուկայի տարածքում ամենակարևոր մշակութային արժեքներից է և՝ նախնական գործառույթի, և՝ մոնումենտալ ֆասադի շնորհիվ: Թեև կառույցը հիմնականում կորցրել է իր յուրօրինակությունը, այն դեռ կարող է դառնալ գրավիչ վայր, որը կարող է հարստացնել Մուշ քաղաքի մշակութային, գեղարվեստական և առևտրային կյանքը:

Սուլուխի կամուրջ, Մուշիգլխավոր կամուրջ, Արածանի կամուրջ

Կենտրոն (Centrum) թաղ	Կառուցման ժամանակաշրջան/տարեթիվ՝ **13-րդ դար**
GPS՝ **38°51'45.8"N 41°30'45.3"E**	Ներկայիս գործառույթ՝ **կամուրջ, օգտագործվում է հետիոտների կողմից**
Գրանցման տարեթիվ և համար՝ **Էրզրումի Մշակութային ժառանգության պահպանության շրջանային վարչություն, 27.06.1990 – 248**	

Պատմություն

Եփրատի խոշոր վտակներից մեկը, որը հազարամյակների ընթացքում սնուցել է ողջ տարածաշրջանը, Արածանի գետն է: Այն սկիզբ է առնում Ծաղկանց լեռների հյուսիսային մասից՝ 3060 մ բարձրությունից (Վանա լճից հյուսիս՝ Դիյադինի մոտ): Թոնդրակ լեռան հյուսիսում գտնվող հրաբխային հովտում Արածանի գետը ստեղծում է հանքային և ջերմային աղբյուրներ (նաև հայտնի է որպես Վարշակի շերմուկներ): Այն բնական կամուրջներ է առաջացնում՝ երկու հատվածում ջրում հանքանյութեր կուտակելով: Արածանի գետն ունի բազմաթիվ ոլորաններ Դիյադինից մինչև Քարաքիլիսե (նաև հայտնի է որպես Բագարան և Քարաքյոսե) և, մինչև Մանազկերտ և Մշո դաշտ հասնելը, անցնում է լեռնային շրջաններով: Դրան են միանում Մանազկերտի մոտ գտնվող Պատնոս (Մանազկերտ), Հընուս (Վարճառունիք) և Բինգյոլ գետերը, մինչև այն հասնում է հարթավայր, որտեղ միանում է Քարասու (Մեղրագետ) գետին և մի քանի կետերում ստեղծում ջրվեժներ, այնուհետև հոսում է այլ լեռներով՝ շարունակելով ուղին: Գետը ասորիների և բաբելոնացիների շրջանում հայտնի էր Արսանիա անունով, հույների և հռոմեացիների շրջանում՝ Արսանիաս, արաբների շրջանում՝ Արսանաս անունով: Մուրատ գետը, որը հայերը երբեմն անվանում են Եփրատ, ոռոգում է Մշո դաշտի,

Նկ. 1 Սուլուխի կամուրջը հոսանքն ի վար

Նկ. 2 Սուլուխի կամուրջը հոսանքին հակառակ ուղղությամբ

Նկ. 3 Կամրջի ջրապատնեշները հոսանքին հակառակ ուղղությամբ

այլ կերպ ասած՝ Տարոն/Տուրուբերան երկրի կանաչապատ և բերքատու հողերը, որտեղ բազմամարդ ու հարուստ գյուղեր են ձևավորվել (Հյուսեն 2016, 45-46):

Պատմական Մուրատ/Սուլուխի կամուրջը անցնում է Մուրատ/Արածանի գետի վրայով Մուշ քաղաքի կենտրոնից մոտավորապես 14 կմ հյուսիսում՝ Բինգյոլ քաղաքը և Էրզրումը կապող հին մայրուղու վրայով (նկ. 1): Կամրջի կառուցման ստույգ տարեթիվը հայտնի չէ: Հիմնվելով կամրջի ճարտարապետական առանձնահատկությունների վրա՝ Թունչը (1978, 145) ենթադրում է, որ այն սելջուկյան շինություն է, մինչդեռ Քուլաղուզը (1997, 85) առաջարկում է, որ կամուրջը կառուցվել է 13-րդ դարի երկրորդ քառորդում՝ հաշվի առնելով Անատոլիայի սելջուկների ազդեցությունը տարածաշրջանի վրա: Չուլպանը (1973, 190) գրում է, որ 1817 թվականով թվագրված արձանագրությունը, որն այնուհետ կորել է, նախկին վերանորոգման վերաբերյալ է:

Գետի վրայով անցնող մայրուղու վրա նոր, երկաթբետոնե կամրջի կառուցումը կանխել է պատմական կամրջի[1] երթևեկության ծանրաբեռնվածությունը: Նոր կամուրջը Սուլուխի կամուրջից մոտավորապես 1 կմ դեպի արևմուտք է գտնվում, ուստի նոր երթուղու համար մայրուղին փոփոխվել է: Պատմական կամուրջ հանսելու համար մայրուղուց դուրս գալուց հետո պահանջվում է մոտավորապես 2 կմ անցնել դեպի հյուսիս-արևմուտք: Կառույցը վերանորոգվել է Ավտոճանապարհների 11-րդ տարածաշրջանային տնօրինության (Վան) կողմից 1986 և 2002-2009 թվականներին (Քուլաղուզ 1997, 85; Շեն 2019, 533)

1 Քեմալ Ասլանը՝ Մուշի կենտրոնում (Centrum) գտնվող Մուրատգյորենի գյուղապետը, 2004 թվականին ազգային թերթերից մեկին տված հարցազրույցում նշել է, որ նոր կամուրջը կառուցվել է 1975 թվականին: Նույն հոդվածում նշվում է, որ կամուրջը 1992 թվականին պայթուցիկների ազդեցության է ենթարկվել, որի արդյունքում մի քանի կամարակալներ փլասվել են (հղում 23):

Նկ.4 Սուլուխի կամուրջ. հարավ-արևմտյան տեսարան

Ճարտարապետություն

Սուլուխի կամուրջը մոտավորապես 140 մ երկարություն և 4,80 մ լայնություն ունեցող քարաշեն կառույց է՝ ընդհանուր տասներկու կամարային թռիչքներով (նկ. 1 և 2): Դրա տախտակամածը թեք է և ծածկված բազալտե սալիկներով: Հոսանքի ներքին ուղղությամբ՝ որմահեծերի երկու կողմերում, եզրային պատեր կան (նկ. 3): Կամրջի կողմում, տախտակամածում, որմախորշի պատերին և կամարների վրա բազմաթիվ եղծումների և վերանորոգման հետքեր կան: Առաջնային ցուցումն այն է, որ կառամատույցները նախագծին հավասարեցված չեն. կառուցի կողմում աղավաղումներ կան (նկ. 4): Նմանատիպ անկանոնություն կա տախտակամածի վրա, որը հարավ-արևմուտքից թռիչքի հինգերորդ կամարից հետո թեքվում է: Տասներկու բացվածքներից յուրաքանչյուրը տարբերվում է բարձրությամբ և լայնությամբ, որևէ ձևով կանոնակարգված չէ: Կամարների մի մասը սրածայր է, իսկ որոշները՝ կիսակլոր: Թաղերի վերնամասի պատերի շարվածքում տարբեր մեթոդներ և նյութեր են օգտագործված:

Ներկա վիճակ

Վերջին միջամտությունների ընթացքում նորացվել են կամրջի վերին հարթակի հատակը և երիզող պատերը, իսկ պատերի որոշ հանգույցներ վերանորոգվել են: Բացի այդ, կառույցի վրա տեղադրվել է լուսավորության համակարգ՝ այցելուների հոսքը գիշերամուտից հետո խթանելու նպատակով: Կամուրջի շրջակայքում սրճարաններ և ռեստորաններ են բացվել:

Ռիսկերի վերլուծություն և առաջարկություններ

Սուլուխի կամրջի պահպանման ցանկացած մոտեցման ամենակարևոր հարցերից մեկը պետք է լինի այն, որ կառույցը բնական լանդշաֆտի մի մասն է և չպետք է անջատվի իր միջավայրից: Վերջին միջամտությունների շրջանակներում կատարվել է լանդշաֆտի վերակազմավորում՝ գետի երկու կողմերում փոքր ճաշարաններ ստեղծելու համար: Կառույցի տեսանելիության համար սա շահեկան է, սակայն չպետք է թույլ տալ, որ այդ կառույցները տարածվեն կամ հասնեն այնպիսի բարձրության, որ հետագայում փսասեն կամուրջը կամ դրա բնական լանդշաֆտը: Այս լանդշաֆտի յուրօրինակության վրա բացասապես կազդի, եթե նոր առևտրային կառույցներ հիմվեն այս բնական թեքության վրա, որը հյուսիս-արևելյան կողմում գետի հունի մոտ է:

Կարևոր է, որ կամուրջը փակվել է տրանսպորտային միջոցների համար և բաց է միայն հետիոտների համար: Սակայն վերանորոգվել է միայն կամուրջը, իսկ հյուսիսից և հարավից դեպի կամուրջ տանող ճանապարհները անտեսվել են: Այս կապերը կարող են վերականգնվել (սահմանափակ հեռավորության վրա) չփսասելով բնական լանդշաֆտը, որպեսզի այցելուների համար երթուղին փոքր-ինչ երկարացվի: Նման միջամտության համար օգտակար կլինի նաև գետի երկու կողմերում՝ կամրջից ավելի հեռու, որոշ կայանատեղիներ ավելացնել և տրանսպորտային միջոցների մոտեցումը կառույցին սահմանափակել:

Գրականություն

Հրապարակումներ

Ասլան 2019 Ս. Ասլան, *Պատմական տապանաքարեր Մուշի նահանգում և դրա շրջաններում*, Ուշաքի համալսարանի հասարակական գիտությունների ինստիտուտ, չհրատարակված մագիստրոսական թեզ, Ուշաք, 2019 թ.:

Արրք 1989 Արրք, Ռ., «1987թ. Մանազկերտի դաշտային աշխատանք», *Հետազոտության արդյունքների VI. ժողով*, 89-99:

Արրք 2016 Արրք, Ռ *«Մանազկերտի շրջակայքի դաշտային աշխատանք»*,Սելջուկյան քաղաքակրթության ուսումնասիրությունների հանդես՝ 1 (Քոնյա), 252-253:

Ա-ԴՈ 1912 Հ. Տեր-Մարտիրոսյան (Ա-ԴՈ), *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները (Van, Bitlis and Erzurum Provinces)*, Երևան, 1912:

Բալյան 2008 Տ. Բալյան, Հայ վանորայք *(Armenian Monasteries)*, Էջմիածին, 2008:

Բիբեր 2018 Հ. Բիբեր, *Մուշի նահանգի դաշտային աշխատանքներ 2009-2014*, Hiperlink հրատարակչություն, Ստամբուլ, 2018:

Բիբեր –Չավուշօղլու 2013 Հ. Բիբեր – Ռ. Չավուշօղլու, «2011թ. Մուշ-Մանազկերտի դաշտայինաշխատանք» *Հետազոտության արդյունքների 30. ժողով*, II, 307-310:

Գալուստյան 1982 Շ. Գալուստյան, *Հայոց սրբեր*, Ստամբուլ, 1982:

Գրուսե 2005 Ռ. Գրուսե, *Հայոց պատմությունը հին ժամանակներից մինչև 1071 թ.*, թարգ. Սոսի Դոլանսօղլու, Արաս հրատարակչություն, Ստամբուլ, 2005:

Գևորգյան- Փաբուջյան 2012 Ռ. Հ. Գևորգյան – Փ. Բ. Փաբուջյան, «Հայերը օսմանյան կայսրությունում մինչև 1915 թ.», թարգ. Մ. Սարիսի, Արաս հրատարակչություն, Ստամբուլ, 2012, 467-504:

Դիքմեն – Թորուք 2021 Ջ. Բ. Դիքմեն – Ֆ. Թորուք, «Մանազկերտի ամրոցի և շրջակայքի պահպանության առաջարկներ», Social Sciences Studies Journal *(Հասարակական գիտությունների ուսումնասիրության ամսագիր)*, հատոր՝ 7, համար 89 (2021), 4525-4545:

Էյիջե 2001 Ս. Էյիջե, «Kale», *Իսլամի հանրագիտարան*, հ. 24, Թուրքիայի Դիյանեթ հիմնադրամի հրատարակչություն, 236-237:

Էվլիյա Չելեբի 1978 Էվլիյա Չելեբի, *Էվլիյա Չելեբիի*, հատոր՝ 5, թարգ. Թ. Թեմելքուրան– Ն. Աքթաշ, Ուչդալ Նեշրիյաթը, Ստամբուլ, 1978:

Էվրեն 1997 Ա. Էվրեն, «Հետազոտություն Բուլանըք, Ապրի (Esenlik) և Մոլլաքյանդ գյուղերում», *Türk Etnografya Dergisi (Թուրքական ազգագրության ամսագիր)*, 20, 1-22:

Էքինջի – Դենիզ – Գյուռ 2012 Ս. Էքինջի– Օ. Դենիզ – Ն. Գյուռ, «Շինությունների մշակույթի և դիզայնի տվյալների լույսի ներքո «Արտաքին պատերի քարե շարվածքը» պատմական զարգացումը», *Տանիքների և ճակատների 6-րդ ազգային սիմպոզիում, 12 -13 ապրիլի, 2012թ.*, Ուլուդաղի համալսարանի Ճարտարագիտության և ճարտարապետության ֆակուլտետ - Գյորուքլե (Բուրսա), 173-184:

Թեոդիկ 2014 Թեոդիկ, *Գողգոթա թրքահայ հոգևորականության և իր հոտին աղետալի 1915 տարին*, Թեհրան, 2014:

Թիերի 1976 Ջ. Մ. Թիերի, "Le couvent des Saints-Apôtres de Mush", *Հանդես ամսօրյա* (ամսագիր), Վիեննա, 1976, 90 (1-12), 235-256:

Թիերի 1983 Ջ. Մ. Թիերի, "Notes d'un voyage archéologique en Turquie orientale" *Հանդես ամսօրյա* (ամսագիր), Վիեննամ 1983, 97 (7-12), 380-406:

Թիերի 1987 Ջ. Մ. Թիերի, «Արևելյան Թուրքիա կատարած հնագիտական ճանապարհորդության նոթեր», *Հուշարձան-տարեգիրք*, Երևան, 1987, 117-135:

Իշխանյան 1981 Ռ. Իշխանյան, «Մեսրոպ Մաշտոց», Հայկական սովետական հանրագիտարան, հատոր՝ 7, Երևան, 1981, 469-471:

Լինչ 1913 Հ. Ֆ. Բ. Լինչ, *Հայաստան, ճամփորդություններ և ուսումնասիրություններ*, թարգ. Լ. Լարենցի, I-II հատորներ, Ստամբուլ, 1913:

Լինչ – Օսվալդ 1901 Հ. Ֆ. Բ. Լինչ և և Օ. Օսվալդ, *Հայաստանի և հարակից երկրների քարտեզ*, Է. Սթենֆորդ, Լոնդոն, 1901:

Լումա 1897 Լումա, «Մշո աշխարհ», *Edebi*, հատոր՝ 1 (Թբիլիսի, 1897), 137-188:

Լուսարարյան 1912 Կ. Լուսարարյան, *Գավազանագիրք: Հաջորդություն վանահարց ուխտիս Ս. Կարապետի Տարոնա»*, Սրբոց Հակոբյանց վանքի հրատարակչություն, Երուսաղեմ, 1912:

Խորենացի 1961 Մ. Խորենացի, *«Հայոց Պատմություն»*, թարգ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1961:

Կարապետյան 1902 Գ. Կարապետյան, *Ստամբուլի հայոց պատրիարքարանի՝ Մշո դաշտի գյուղերի, քաղաքների և շրջակայքի մարդահամարը*, Ստամբուլ, 1902:

Կարպատ 1985 Ք. Հ. Կարպատ, *Օսմանյան բնակչությունը 1830-1914 թթ. ժողովրդագրական և սոցիալական բնութագրեր*, Վիսկոնսինի համալսարանի հրատարակչություն, Մեդիսոն Վիսկոնսին, 1985 թ.:

Հովհաննիսյան 1970 Մ. Հովհաննիսյան, *Հայաստանի բերդերը*, Վենետիկ – Սուրբ Ղազար 1970:

Հովհաննիսյան 2016 Ռ. Գ. Հովհաննիսյան «Հայկական Բաղեշ/Բիթլիս և Տարոն/Մուշ», խմբ. Ռ. Գ. Հովհաննիսյանի *Պատմական քաղաքներ և հայեր – Բիթլիս և Մուշ* հրատարակությունում, *թարգ.* Զուլալ Քըլըչի, Արաս հրատարակչություն, Ստամբուլ 2016, 7-44:

Հյուսըն 2016 Ռ. Հ. Հյուսըն, «Բաղեշ/Բիթլիս և Տարոն/Մուշի պատմական աշխարհագրությունը», խմբ. Ռ. Գ. Հովհաննիսյանի *Պատմական քաղաքներ և հայեր – Բիթլիս և Մուշ* հրատարակությունում, *թարգ.* Զուլալ Քըլըչի, Արաս հրատարակչություն, Ստամբուլ 2016, 45-64:

Մաթեոս Ուռհայեցի 1987 Մաթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը» (952-1136) և Գրիգոր քահանայի հավելվածը (1136-1162), թարգ. Հրանտ Տեր-Անդրեասյանի, 2. հրատ., Türk Tarih Kurumu (TTK/Թուրքական պատմության ասոցիացիա) հրատարակչություն, Անկարա, 1987:

Մամիկոնյան 1989 Հ. Մամիկոնյան, *Տարոնի պատմություն*, թարգ.. Վարդան Հ. Վարդանյանի, Ս. Ս. Սահակյան, Երևան, 1989:

Մառանչի 2016, Ք. Մառանչի, «Բաղեշ/Բիթլիս և Տարոն/Մուշի արվեստն ու ճարտարապետությունը», այստեղ. խմբ. Ռ. Գ. Հովհաննիսյանի, *Պատմական քաղաքներ և հայերը - Բիթլիս և Մուշ*, թարգ. Զուլալ Քըլըչի, Արաս հրատարակչություն, Ստոմբուլ, 2016, 123-148:

Մկրտչյան 2002 Ի. Մկրտչյան, *Քրիստոնյա Հայաստան, Հայկական հանրագիտարան*, Երևան, 2002, 194-196:

Ոսկիյան 1953 Հ. Ոսկիյան, *Տարոն-Տուրուբերանի վանքերը*, Վիեննա, 1953:

Պարտիզակցի-Նաթանյան-Սրվանձտյանց 2010 Վ. Պարտիզակցի - Բ. Նաթանյան – Գ. Վ. Սրվանձտյանց, *Բալու - Խարբերդ 1878*, V. II, թարգ. Ս. Մալխասյանի, Արսեն Յարմանի, Ստամբուլ, 2010:

Սարգսյան 1982 Գ. Սարգսյան, «Մովսես Խորենացի», *Հայկական սովետական հանրագիտարան*, հատոր՝ 8, Երևան, 1982, 40-41:

Սաֆրաստյան 1965 Ա. Խ. Սաֆրաստյան, *«Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի Արդարադատության և դավանանքների մինիստրության ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիրները» (1912-1913»)*, Սուրբ Էջմիածին կաթողիկոսության պաշտոնական հրատարաչկություն, II-III-IV, Էջմիածին, 1965, 174-187:

Ստրաբոն *Ստրաբոնի «Աշխարհագրությունը»*, թարգ. Հ. Լ. Ջոնս I-VIII, Լոեբ դասական գրադարան, Հարվարդի համալսարանի հրատարակչություն, Լոնդոն, Նյու Յորքու, 1917-1932:
Վան-Տոսպ 1916 *Վան-Տոսպ: Հասարակական, քաղաքական, գրական շաբաթաթերթ*, Համար՝ 12 (1916), Թբիլիսի, s. 7-9.
Տեր-Անդրեասյան 2013 Հ. Տեր-Անդրեասյան, *Սիմեոն Լեհացու ուղեգրությունը (1608-1619)*, Everest հրատարակչություն, Ստանբուլ, 2013:
Տեր-Ներսեսյան 1977 Ս. Տեր-Ներսեսյան, *L'Art Armenien*, Փարիզ, 1977:
Տոնապետյան – Թիերի 1987 Պ. Տոնապետյան – Ժ. Մ. Թիերի, *Les arts arméniens*, Éditions Mazenod, Փարիզ, 1987.
Քերթմենջյան 2014 Դ. Քերթմենջյան, *Մուշ գավառը և դրա որոշ հայկական հուշարձանները*, 2014 (չհրատարակված):
Քերովբեան 1977 Գ. Քերովբեան, *Ագաթանգեղոսի «Հայոց պատմություն»ը*, թարգ. Ա.Տեր – Ղևոնդյանի, Երևան, 1977:
Քըլավուզ 2020 Բ; Քըլավուզ, «Բաց դամբարանները որպես գերեզմանային հուշարձան. Մուշի օրինակներ», *Turkish Studies-Social Sciences*, հատոր՝ 15 (համար՝ I), 389-424:
Քուինե 1891 Վ. Քուինե *La Turquie d'Asie*, V. II, Փարիզ, 1891:
Քունեռ 1988 Փ. Քունեռ, *Architettura Armena*, II հատոր, Հռոմ, 1988:
Օզդաղ-Ուստել-Քարաքաշլը-Քենթել 2009 Գ.Գ. Օզդաղ – Ֆ. Ուստել – Կ. Քարաքաշլը – Ֆ. Քենթել, *Հայերը Թուրքիայում – Համայնք-անհատ-քաղաքացի*, «Tesev» հրատարակչություն, Ստամբուլ, 2009:
Օզթյուրք 2022 Շ. Օզթյուրք, «Մուշ – կենտրոնական Միգրե (Դերե) բաղնիքում պեղումների, նախագծերի և պահպանության ուսումնասիրությունների ակնարկ», *Online Journal of Art and Design*, 3 (2022), 263-279:
Օրմանյան 1913 Մ. Օրմանյան, *Հայոց եկեղեցին*, Ստամբուլ, 1913:

Այլ աղբյուրներ

Հղում 1 https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/kazaofmush/mushlocale/mushdemography.html (վերջին մուտքը՝ 22.06.2022)
Հղում 2 https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/kazaofmalazgirt/manazgirtreligion/churches.html (վերջին մուտքը՝ 03.07.2022)
Հղում 3 https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/kazaofbulanik/locale/kazaofbulanikdemography.html (վերջին մուտքը՝ 15.06.2022)
Հղում 4 https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/kazaofbulanik/bulanikreligion/bulanikchurches.html (վերջին մուտքը՝ 15.06.2022)
Հղում 5 Սուրբ Առաքելոց վանք https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/kazaofmush/mushreligion/mushchurches.html (վերջին մուտքը՝ 15.06.2022)
Հղում 6 Սուրբ Կարապետ վանք https://www.collectif2015.org/tr/100Monuments/Le-Monastere-du-Saint-Precurseur-de-Mouch-ou-Klagavank-/ (վերջին մուտքը՝14.06.2022)
Հղում 7 Կոմեր, Գոմեր, Կոմի, (Սուլուջա գյուղ) https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/kazaofmush/mushlocale/mushdemography.html (վերջին մուտքը՝ 28.05.2022)
Հղում 8 Գասպարի վանք https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/kazaofmush/mushreligion/mushchurches.html (վերջին մուտքը՝ 15.06.2022)
Հղում 9 Սուրբ Մարինե եկեղեցի https://stringfixer.com/tr/Marina_the_Monk (վերջին մուտքը՝ 10.05.2022)
Հղում 10 https://hy.wikipedia.org/wiki/Սուրբ_Մարինե_եկեղեցի_(Մուշ) (վերջին մուտքը՝ 10.05.2022)
Հղում 11 Քարձոր https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/kazaofmush/mushreligion/mushchurches.html (վերջին մուտքը՝ 26.05.2022)
Հղում 12 Ցրոնք https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/kazaofmush/mushreligion/mushchurches.html (վերջին մուտքը՝ 25.05.2022)
Հղում 13 Երեշտեր https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/kazaofmush/mushreligion/mushchurches.html (վերջին մուտքը՝ 25.05.2022)
Հղում 14 Գառնի, Գառնին, Կառնի, Կառնե https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/kazaofmush/mushlocale/mushdemography.html (վերջին մուտքը՝ 25.05.2022)
Հղում 15 Կառնի, Սուրբ Գևորգ եկեղեցի https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/kazaofmush/mushreligion/mushchurches.html (վերջին մուտքը՝ 25.05.2022)
Հղում 16 Կառնի, Կառնե https://nisanyanmap.com/ (վերջին մուտքը՝ 01.07.2022)
Հղում 17 Դերիկ, Աշտիշատ https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/kazaofmush/mushreligion/mushchurches.html (վերջին մուտքը՝ 05.05.2022)
Հղում 18 Շմլակ https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/kazaofmush/mushreligion/mushchurches.html (վերջին մուտքը՝ 08.05.2022)
Հղում 19 Արեգ, Առեբ, Առեգ https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/kazaofmush/mushlocale/mushdemography.html (վերջին մուտքը՝ 08.05.2022)

Հղում 20 Առեգ
https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/kazaofmush/mushreligion/mushchurches.html (վերջին մուտքը՝ 08.06.2022)
Հղում 21 https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/kazaofmush/musheducationandsport/mushschools.html (վերջին մուտքը՝ 09.06.2022)
Հղում 22 Խասգյուղ
https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/kazaofmush/mushreligion/mushchurches.html (վերջին մուտքը՝ 19.05.2022)
Հղում 23 Պատմական կամրջի ողբերգական պատմությունը
https://www.evrensel.net/haber/153036/tarihi-koprunun-trajik-hik-yesi (վերջին մուտքը՝ 19.05.2022)

Հանրագիտարաններ

ՀՀ *Հայկական հարց*, Երևան, 1996։

ՀՀՇՏԲ *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան։ Հ. 1 1986 / Հ. 2 1988 / Հ.3 1991 / Հ.4 1998 / Հ. 5 2001։

ՀՍՀ *Հայկական սովետական հանրագիտարան*, Երևան
Հ. 1 1974 / Հ. 2 1976 / Հ. 3 1977 / Հ.4 1978 / Հ. 5 1979 / Հ. 6 1980 / Հ. 7 1981 / Հ. 8 1982 / Հ.11 1985 / Հ.12 1986։

ՍՀ *Սուրբ Հայաստան*, Հայկական հանրագիտարանի հրատարակչություն, Երևան, 2007։

Հապավումներ և Բառարան

ՀԱԳՀԳԽ	Հնագույն անշարժ գործերի և հուշարձանների գերագույն խորհուրդ
ՀՀ	Հայկական հարց
ՀՀՇՏԲ	Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան
ՀՍՀ	Հայկական սովետական հանրագիտարան
ՄԱՊՄԽ	Մշակութային արժեքների պահպանության մարզային խորհուրդ
ՄԲԱԺԳԽ	Մշակութային և բնական անշարժ ժառանգության գերագույն խորհուրդ
ՄԲԺՊՇԽ	Մշակութային և բնական ռեսուրսների ժառանգության պահպանության շրջանային խորհուրդ
ՄԺՊԱ	Մշակութային ժառանգության պահպանության ասոցիացիա
ՍՀ	Սուրբ Հայաստան

Աբսիդ - Եկեղեցում մեծ, կիսաշրջան կամ նիստավոր մաս՝ կամարակապ կամ գմբեթավոր տանիքով, սովորաբար արևելակողմում, որը սեղան է պարունակում. Աբսիդ

Աղյուսային երիզ - Կանոնավոր ընդմիջումներով շարված աղյուսի շարվածք(ներ)՝ օժանդակելու հորիզոնական շարվածքի երեսպատմանը և մյուս շարվածքները կապելու համար. կապակցող շարվածք

Աճյունակալ/ քարարկղ դամբարան - Քարից կամ փորված ծառից պատրաստված դագաղ, որը մարդկային մնացորդներ է պարունակում, դագաղ պարունակող դամբարան

Ամրակայում - Անհատականացում, որն ապահովում է կառուցվածքային տարրի բեռի ավելացմանը նպաստող անհատականացում. կարող է շինարարության ընթացքում օգտագործվող նյութի մեջ ամրաններ կամ մանրաթելեր ներառել

Ամրան - Բետոնի պատերի մեջ ներկառուցված մետաղական ամրացման տարրեր

Այվան - Տարածքություն, որը պատված է երեք կողմերից և դեպի դուրս բացվում է չորրորդ՝ բաց կողմից

Անջատելի/ուռուցիկ մաս - Ուղղանկյուն պրիզմայով քարե բլոկի առջևի երեսը թեթևակի կորնթարդի տեսք տալով ձևավորելը

Ապսիդիոլա - Փոքր, երկրորդական աբսիդ կամ եռապսիդ եկեղեցու գլխավոր աբսիդի երկու կողմերում գտնվող աբսիդներից մեկը

Առագաստ - Գոգավոր մակերեսով անցումային հատված, որը կիրառվում է գմբեթատակ քառակուսուց դեպի գմբեթ տեղափոխելու համար

Աստիճանի բարձրացող հատված - Աստիճանի ուղղահայաց տարր

Ատամնազարդ - Դեկորատիվ, փոքր, ցցված ուղղանկյուն բլոկների շարք; տե՛ս՝ *ատամնավոր*

Բարձակ - Ճարտարապետական տարր, որն օժանդակում է շինություններում դուրս ցցված հատվածներին. տե՛ս՝ eliböğründe

Բարձաքար - Սյան խոյակի և վերին հատվածների (կամար, թաղ և այլն) միջև տեղադրված քար

Բարձրաքանդակ - Դեկորատիվ տեխնիկա, որտեղ ֆիգուրները հիմքից դուրս են ցցված

Բաղնիք - Շինություն, որը պարունակում է հանրային լոգարաններ, որոնք սովորաբար բաց են հանրության համար՝ վճարի դիմաց: Հռոմեական բաղնիքները (thermae) բաղկացած են այնպիսի միավորներից, ինչպիսիք են՝ հանդերձասրահը (apodyterium), պաղ սրահ (frigidarium), տաք սրահ/ջերմատուն (tepidarium), շոգեսրահը (caldarium), շոգեբաղնիսը (sudatorium): Թուրքական բաղնիքներնը հանդերձասրահներ, ջերմատներ և շոգեբաղնիսներ ունեն: Շինության երկու տեսակներն էլ հատակից ջեռուցում ունեն:

Բաղնիքի մասնավոր խցիկ - Թուրքական բաղնիքում շոգեսրահի ներսում փոքր, անհատական լոգանքի տարածքներ

Բաստիոն - Դուրս ցցված քառանկյուն, բազմանկյուն կամ կիսաշրջանաձև աշտարակ, որը հարում է ամրոցի պարսպին և նույն բարձրությունն ունի

Բեկ - Օսմանյան կայսրության շրջանների/գավառների կառավարիչների և տոհմերի առաջնորդների համար կիրառվող կոչում

Բեմ - Հայկական և հունական ուղղափառ եկեղեցիներում հանդիպող, նառսից մեկ կամ մի քանի քայլ բարձրացված խորանը

Բորբոս - Քայքայման տեսակ. քարի կամ աղյուսի մակերեսների վրա սպիտակավուն, փոշու նմանվող աղային բյուրեղների կուտակում, որն առաջանում է նյութի անցքերի մեջ ջրի ներթափանցումից և այնուհետև, գոլորշիացումից աղային բյուրեղներ թողնելով

Գոտի - Ժամանակավոր ամրակայման/ամրացման մեթոդ՝ երկաթի կամ պողպատի միջոցով սյուների պառակտումը/ճեղքումը կանխելու համար

Գմբեթ - Կլորացված, սովորաբար կիսագնդաձև տանիքի տեսակ

Գյուղապետ/մուխտար - Թուրքիայում գյուղի ընտրված ղեկավար

Գրաֆիկական վերականգնում - Նկարներ, որոնք պատկերում են շինության պատմության տարբեր փուլերը, փորձում հասնել դրա նախնական/կարևոր կրկնումներին՝ համակարգված հետազոտության և գույքագրման վրա հիմնվելով

Գունաթափում - Քայքայման տեսակ. արտաքին գործոնների պատճառով (օրինակ՝ արևի լույս, մուր) , կառույցի շինանյութի նախնական գույնի աստիճանական փոփոխություն

Դամբարան - Մեծ գերեզման, որը կարևոր մարդու թաղման վայրն է խորհրդանշում / Հայ հոգևորականների և բարձրաստիճան անձանց թաղման վայր

Դամբարան/թյուրբե - Օսմանյան կամ մահմեդական թաղումային շինություն, որը սովորաբար հասարակության բարձրաստիճան կամ հարուստ անդամների համար է

Դրանդի/կողափայտ - Բացվածքների կողմերում ուղղահայաց տարր. պատուհանի/դռան շրջանակի մի մասը

Եկեղեցի - Քրիստոնեական պաշտամունքի համար օգտագործվող շենք

Եպիսկոպոսական աթոռ - Եկեղեցու աբսիդում պաշտոնական նստատեղ/գահ եպիսկոպոսի համար

Երիզային կոճղակաղապար - Տես՝ *կաղապար*

Երկաթբետոն - Կառուցվածքային համակարգ, որտեղ բետոնն ամրացվում է պողպատե ամրաններով

Երկկողմանի պատ - Պատ, որն ունի երկու զուգահեռ, ուղղահայաց մակերես՝ լցված խոռոչով

Զավիա - Փոքր tekke (մահմեդական վանք)՝ հաճախ տեղակայված գյուղական վայրերում

Թեմ - Եպիսկոպոսի տարածքային իրավասություն

Ժամատուն - Հայկական կրոնական ճարտարապետության մեջ եկեղեցու արևմտյան մուտքին կից տարածք. գավիթից ավելի մեծ է

Խան/իջևանատուն - Բազմաթիվ խանութներ և արհեստանոցներ ունեցող շինությունը, որը ավանդաբար բակի շուրջն է ձևավորվում. ժամանակավոր իջևանի և կացարանի համար Սելջուկյան/Օսմանյան ժամանակաշրջանում կառուցված շինություններ՝ օթևան

Խաչքար - Հայկական քարաքանդակ խաչ

Խճաքար - Անմշակ քարեր. անկանոն չափի, ձևի և հյուսվածքի բեկորներ. նման քարերով շարված որմեր

Խորան - Եկեղեցում սեղան պարունակող հատված, որտեղ հաղորդության համար հաց-գինու օծումն է տեղի ունենում. հեթանոսական տաճարներում այն հատվածն է, որտեղ զոհեր/ընծաներ են մատուցվել աստվածներին

Խորասանի շաղախ - Վարդագույն շաղախի տեսակ, որը պատրաստվում է մաղված աղյուսի/սալիկի փոշու, կրաքարի և ջրի օգտագործմամբ

Խորշ - Ուղղանկյուն, բազմանկյուն կամ կորացած փորվածք/խուց, որը հաճախ տեղակայված է պատի մեջ. կարող է ծածկված լինել հարթ ճակատակալով, կամարով կամ մուքարնասով

Խուլ պատ - Բացվածքներ չունեցող պատ

Կաթոլիկ - Վատիկանի Հռոմի պապին որպես գերագույն հոգևոր առաջնորդ ճանաչող քրիստոնեական ժողովուրդների համար կիրառվող ընդհանուր անվանում

Կաթողիկոս - Հայ առաքելական եկեղեցու ամենաբարձր հոգևոր առաջնորդը

Կաղապար/ձուլվածք - Հատկապես քիվի մեջ որպես ճարտարապետական հատկանիշ ձևավորված օրնամենտալ ուրվագիծ

Կամար - Բացվածքի վերևում գտնվող կորություն, որը բեռը վերևից տեղափոխում է բացվածքի երկու կողմերում գտնվող սյուներին/հենասյուներին

Կամարակալ շարք - Հորիզոնական շարք, որում կամարը կամ թաղը վեր են խոյանում հենարանից (օրինակ՝ սյուն/հենասյուն/պատ)

Կանանց/տղամարդկանց բաղնիք - Բաղնիքի շինությունը նույն պահին միայն մեկ սեռի կարող է ծառայել. այս շինությունը բաց է կանանց օգտագործմանը օրվա որոշակի ժամերին կամ շաբաթվա որոշակի օրերին

Կանանց և տղամարդկանց բաղնիք - Բաղնիքի մեծ շինություն, որն ունի տարբեր բաժիններ տղամարդկանց և կանանց համար, որոնք կարող են ծառայել երկու սեռին միաժամանակ

Կեսոն - Քառանիստ կամ բազմանիստ արկղաձև խորացում, որը առաստաղի/թաղի մակերեսը հարդարելու համար է: Օգտագործվում է շարքերով՝ տանիքի բեռը նվազեցնելու նպատակով:

Կոպտատաշ քար - Նվազագույնս մշակված քարեր

Կրող (պատ) - Կառուցվածքային տարր. վերադիր ծանրությունները փոխանցում է կառուցվածքային համակարգի այլ մասերին

Կրոնշտեյն - Բաղադրիչ, որը դուրս է ցցվում պատից կամ կախված է պատի վրա՝ օժանդակ բեռը պահելու/կրելու համար

Կցակար - Պատի մեջ քարերի կամ աղյուսների միջև տեսանելի կրաշաղախի շերտ

Համալիր - Տարբեր գործառույթներ կատարող շինությունների խումբ, որը սովորաբար պատվիրվում է նույն անձի կամ խմբի կողմից

Հանդերձարան - Բաղնիքում փոխվելու/հանգվելու սրահ

Հեծան - Հորիզոնական կառուցվածքային տարր, որը կողմային ծանրաբեռնվածությունը փոխանցում է ստորին ուղղահայաց կառուցվածքային տարրերին

Հենասյուն/հենարան - Կամուրջների վերջում ուղղահայաց նեցուկ

Հիմական պատ - Շինության մեջ որևէ կրող պատ

Հիպոկառուստ - Խոռոչավոր, ստորգետնյա խողովակային համակարգ, որը ջերմությունը հնոցից փոխանցում է դեպի լոգանքի տարածքներ

Ճակատաքար - Հորիզոնական սալաքար, որը բացվածքի վերևում տարածում և բաշխում է բեռը

Ճակտոն - Դեկորատիվ տարր, որը ֆասադի/պատուհանի/դռան վերևում է, սովորաբար եռանկյունաձև է և երբեմն ավելի փոքր նախշեր կամ արձանագրություններ ունի

Մակերևույթի կորուստ - Քայքայման տեսակ. երբ կառույցների կամ աշխատանքների շերտերը կորչում են

Մայր տաճար - Եպիսկոպոսական աթոռ ունեցող եկեղեցիներ

Մասունք - Սրբազան արտեֆակտ (ենթադրվում է, որ պատկանում է սրբերի մասունքներին)

Մատուռ - Հայկական կրոնական ճարտարապետության մեջ խորան/ Փոքր եկեղեցի

Մատուռ-վկայարան - Վայր, որը կրում է Հիսուս Քրիստոսի կամ նրա առաքյալներից մեկի հիշատակը կամ քրիստոնյա նահատակի մասունքներ. նման վայրում կառուցված շինություն

Մեդրեսե - Միջնակարգ և ավագ դպրոցին համարժեք մահմեդական դպրոց. այդ դպրոցի շենքը

Մզկիթ - Որպես մահմեդական աղոթատեղի օգտագործվող կառույց

Միհրաբ - Մզկիթի՝ դեպի քիբլա նայող պատի խորշը, որը սահմանում է աղոթքի ուղղությունը

Մինբար - Մահմեդական կրոնական ճարտարապետության մեջ ամբիոն, որն օգտագործվում է իմամի կողմից՝ քարոզ կարդալու համար

Միջկամարային հեռավորություն - Կամրջի վերին հարթակը կրող կամարների միջև գտնվող սինուսաձև պատերը

Մույթ - Մեծ սյուն, որը հաճախ օժանդակ է շենքի մի մասին

Մուքարնաս - Մահմեդական ճարտարապետության մեջ եռաչափ, երկրաչափական հարդարանքի տեսակ

Նախահիմք - Արտաքին պատի ամենաներքևի հատվածը, որը շրջապատում է շենքը, որպեսզի պաշտպանի այս կամ այն արտաքին փասներից, օրինակ՝ հեղեղից

Նախամուտք - Շքամուտք; շինության ծածկով մուտքը

Նախասրահ - Տարածաշրջանին ժողովրդական ճարտարապետության մեջ հյուրասենյակ, հավաքատեղի

Նառս - Եկեղեցու աղոթասրահ

Նավ - Եկեղեցական շինության մեջ կենտրոնական միջանցքը, որը հաճախ տեղավորվում է ժողովրդի մեծամասնությունը/ Երկար տարածություններ, որոնք ուղղահայաց են աբսիդին և եկեղեցու ներսույթը բաժանում են սյուներով կամ մույթերով

Նարտեքս - Եկեղեցու աղոթասրահի և նախագավթի կամ արտաքին տարածության միջև սրահ/ Հայկական կրոնական ճարտարապետոյթան մեջ գավիթ

Նյութի կորուստ - Քայքայման տեսակ. երբ կառույցների կամ աշխատանքների մասերը պոկվում և կորչում են

Շարվածք - Քարից և/կամ աղյուսից կառուցված շինություն

Շարք - Պատի շարվածքի որևէ նյութի շարք

Շոգեսրահ - Բաղնիքում գոլորշու սրահ; թուրքական բաղնիքի ամենաջերմ տարածքն է, որտեղ մաքրումն է տեղի ունենում

Շրջանակ - Դռան կամ պատուհանի շուրջ երիզ, որը բաղկացած է կողակներից (կողափայտ), շեմից և գլխից

Ուղղափառ - Ընդհանուր անվանում քրիստոնեական ուղղության համար, որը որպես իր գերագույն հոգևոր առաջնորդ է ընդունում պատրիարքին

Որմանկար/ֆրեսկո - Նկարազարդ դեկորացիա, որը անտիկ շրջանում, միջնադարյան և օսմանյան ժամանակաշրջաններում կիրառվել է կրասվաղված պատերի վրա: Անտիկ շրջանում և միջնադարում ներկը կիրառվում էր թաց կրասվաղի վրա, որի արդյունքում որմանկարներ էին ստացվում: Միջնադարից սկսած, ինչպես նաև օսմանյան ժամանակաշրջանում որմանկարներն արվել են չորացած կրասվաղի վրա և անվանել «secco»:

Որմանկյուն - Պատի անկյունում գտնվող մեծ քարե բլոկներ, որոնք կարող են օգտագործվել կառուցվածքին աջակցելու համար և/կամ գեղագիտական նպատակներով

Չքթաքարի (Çıtakâri) - Փայտե շերտերով արվող դեկորատիվ տեխնիկա՝ որը հիմնականում առաստաղների վրա է արվում

Պաղ սրահ - Բաղնիքի պաղ սենյակը

Պաշտպանական պարիսպ - Ամրոցի կամ բերդի նման պաշտպանական կառույցի շուրջ ամուր, բարձր պարիսպ

Պատվանդան - Սյան կամ ծխնելույզի նման տարրերի ստորին հիմքը

Ջեռուցման կաթսա/հնոց - Բաղնիքի հատակային ջեռուցման համակարգի մի մասը, որտեղ կրակն է այրվում և ջուրը տաքացվում է կաթսաներում

Ջերմատուն - Բաղնիքում տաք սրահ. թուրքական բաղնիքներում հանդերձարանի և լոգանքի սրահի միջև միջանկյալ տարածություն, որը նաև երկրորդական գործառույթներ ունի, օրինակ՝ մազահեռացման խցերը և զուգարանները

Ջրամբար - Սովորաբար ստորգետնյա շինություն, որը կառուցված է ջուր հավաքելու և պահելու համար

Ջրանցույց/ակվեդուկ - Շինություն, որը նախատեսված է ջուրը երկար հեռավորությունների միջև փոխադրելու համար

Ջրապատնեշ - Կամրջի սյան վրա եռանկյուն, կիսաշրջանաձև կամ բազմանկյուն ելուստներ, որոնք կանխում են հեղեղի ժամանակ վարարումից կամ բեկորներից կառույցի փսասումը

Ռեինտեգրացիա - Ճարտարապետական տարրի բացակայող մասի (մասերի), օրինակ՝ քարե բլոկի վերակառուցում

Ռոտոնդա - Կլոր հատակագծով և գմբեթով կառույցի ընդհանուր անվանումը

Սանջակ - Օսմանյան գավառ. փոքր վարչական առանձնացված միավոր՝ բաժանված թիմարների (ավատ)

Սարկավագատուն - Խորանի հարավային կողմի փոքր սենյակ. գրքերի, արխիվի և եկեղեցու ընծաների պահոց/ Եկեղեցու աբսիդին հարող տարածքներ՝ պատարագի նյութերը և եկեղեցուն նվիրված ընծաները պահելու համար

Սեգմենտային կամար - Կոր, ճկված կամար, որը ոչ ամբողջությամբ է կիսաշրջանաձև

Սեղանատուն - Սովորաբար վանքերում, գիշերօթիկ դպրոցներում կամ համալսարաններում հանդիպող մեծ ճաշասենյակ

Սեմ/շեմ - Պատուհանի շրջանակի ամենաներքևի հորիզոնական մասը

Սյուն - Մույթ, որը բեռը ավելի մեծ շինության վերադիր մասերից տեղափոխում է դեպի ներքևում գտնվող կառուցվածքային տարրերի վրա

Սրածայր կամար - Կամարի տեսակ, որն ավարտվում է է սուր գագաթով՝ երկու S-աձև կորերի համակցման միջոցով

Սրբապատկեր - Հիսուս Քրիստոսի կամ այլ սրբի շարժական պատկերը, սովորաբար արվում է ավանդական ոճով՝ փայտի վրա, որը բյուզանդական և արևելյան այլ եկեղեցիներում մեծարվում և օգտագործվում է որպես նվիրական նշան

Սրբատաշ - Մշակված կամ հղկված քարեր; նման քարերով կառուցված պատեր

Վանական - Մարդ, ով վանական միության անդամ է և ապրում է վանքում

Վանք - Որոշակի կրոնական կարգի վանականներով բնակեցված շինությունների խումբ

Վարդյակ - Հիմնականում ծաղկանման զարդարանք՝ փորագրված փայտի կամ քարի վրա

Վերաօգտագործված քարեր/Սփոլիա - Ճարտարապետական բեկոր, հաճախ քար, որ դուրս է մնացել իր նախնական համատեքստից և վերաօգտագործվել այլ համատեքստում

Վիլայեթ - Օսմանյան գավառ. խոշոր վարչական բաժանման միավոր՝ բաժանված սանջակների

Տախտակամած - Կամուրջի հորիզոնական մակերեսը

Տաշված քար - Հղկված, մշակված քար

Տուֆ - Համեմատաբար փափուկ, ծակոտկեն քար, որը սովորաբար ձևավորվում է հրաբխային մոխրի կամ փոշու խտացման և ցեմենտացման արդյունքում

Փայտամածի բուն - Փոքր անցք պատի մեջ՝ նախատեսված հեծանների կամ փայտամածի ծայրերի տեղադրման համար

Փորակ - Անկյունում արված շեղ կտրվածքից առաջացած մակերես

Փոփոխական շար - Քարի և աղյուսի փոփոխական դասավորությամբ պատի շարվածք

Քալեմիշի (Kalemişi) - Ավանդական նկարչական տեխնիկա, որը կիրառվում է կրասվաղով տախտակի կամ որմադիր մակերեսների վրա

Քիվ - Տանիքի եզր, որը դուրս է ցցվում պատից

Քիվածածկույթ - Պատի վերին շարքը. կարող է լինել կախված, կոր կամ թեք

Ֆասադ - Շինության արտաքին երեսը/կողմերից մեկը

I-ճառագայթ - Մետաղական (հաճախ պողպատե) ճառագայթ, որի հատման հատվածը նման է «I» տառին

TOKI - Թուրքիայի Զանգվածային բնակարանային վարչություն

2014 և 2022 թվականներին «Անադոլու քյուլթուր»-ը և Մշակութային ժառանգության պահպանության ասոցիացիան այցելություններ կատարեցին՝ Մուշի ճարտարապետական ժառանգությունը գույքագրելու և գնահատելու նպատակով: Այս գիրքը ժողովում է այդ այցելությունների արդյունքները տարածաշրջանի պատմության հետ միասին:

Հավատում ենք, որ այս գույքագրումը և ռիսկերի գնահատման ջանքերը մեծապես կնպաստեն տարածաշրջանում մշակութային ժառանգության պահպանմանը:

Կարծում ենք, որ Մուշում ապրած ժողովուրդների ինքնարտահայտման արդյունք հանդիսացող այս ճարտարապետական գործերն ընդունելը և նրանց մշակութային ժառանգությունը, որպես համայն մարդկության մշակութային ժառանգություն, ապագա սերունդներին փոխանցելը բոլորի համատեղ պատասխանատվությունն է:

EUROPEAN UNION
Support to the Armenia-Turkey
Normalization Process